



գրապահարան

Օսկար Ուայլդ

Դորիան Գրեյի դիմանկարը

ԱՐՄԱՆ ՀԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ



ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Իրատարակչություն



ԵՐԵՎԱՆ 2012

ՀՏԴ 820 Ուայլդ
ԳՄԴ 84Մբ
Ու 131

Կազմեց և խմբագրեց Լուսինե Մարգարյանը

Օսկար Ուայլդ

Ու 131 [Ստեղծագործությունների ժողովածու]/ Օսկար Ուայլդ.
- Եր.: Էդիթ Պրինտ, 2012.- 312 էջ.:

«Համաշխարհային գրականություն» մատենաշարի շրջանակներում անդրադարձել ենք համաշխարհային նշանավոր գրող Օսկար Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպին, որն րնդգրկված է բուհական ծրագրերում՝ համապատասխան բաժինների ուսուսանողների ուսումնասիրման համար:

Գիրքը հասցեագրվում է ինչպես բուհի ուսանողներին, ուսուցիչներին, այնպես էլ համաշխարհային գրականությանը հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակին:

ՀՏԴ 820 Ուայլդ
ԳՄԴ 84Մբ

ԲՃՈՒՄ ԳՂՑ ԳՐԱԴԱՐԱՆ

«ԷՃ ԷԴԻՏ ՊՐԻՆՏ», Երասմուսեություն, 2012

ՆԱԽԱԲԱՆ

Օսկար Ուայլդը համաշխարհային գրականության ակնառու ներկայացուցիչներից է: Նրա սյունդազորություններն իրենց գաղափարական բովանդակությամբ և արծարծած թեմաների խորությամբ եղել և մնում են համաշխարհային գրականության զոհարներից: Օ. Ուայլդի «Դորիան Գրեյի դիմանկարը» սյունդազորությունը հեղինակի միակ վեպն է, նրա սյունդազորությունների զլուխգործոցը: Վեպում արծարծված են բազմաթիվ հարցեր, որոնք հիմնականում առնչվում են արվեստին, բարոյագիտության և գեղեցկի փոխադարձ կապին:

Վեպի գլխավոր հերոսը՝ Դորիան Գրեյը, որը հեղոնիզմի հերետիկոս էր, դառնում է գեղեցկության և երիտասարդության պաշտամունքի զոհ:

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԻ

Օսկար Ուայլդը (Օսկար Ֆինգալ Օ' Ֆլաներտի Ուիլս Ուայլդ) 1864-71 թթ-ին սովորել է Պորտորի թագավորական դպրոցում, 1871-74 թթ-ին՝ Դուբլինի Տրինիտի քոլեջում: 1874 թ-ին տեղափոխվել է Լոնդոն: 1879 թ-ին ավարտել է Օքսֆորդի համալսարանը: 1881 թ-ին հրատարակել է առաջին՝ «Բանաստեղծություններ» ժողովածուն: 1882 թ-ին շրջագայել է ԱՄՆ-ում, հանդես եկել գեղագիտության վերաբերյալ դասախոսություններով, հրատարակել խոռվարարական տրամադրություններ արտահայտող «Հավատ կամ նիհիլիստներ» (1882 թ.) մելոդրաման և «Պաղուայի դքսուհին» (1883 թ.) չափածո ողբերգությունը: Վերադառնալով Լոնդոն՝ աշխատակցել է թերթերին և ամսագրերին: 1887-89 թթ-ին խմբագրել է «Կանանց աշխարհ» ամսագիրը:

Ուայլդը 1895 թ-ին դատապարտվել է 2 տարվա բանտարկության՝ անբարոյականության (միասեռականության) մեղադրանքով: Գրողի հոգեկան ընկճվածությունն ու տառապանքն արտացոլվել են «Ռեդինգյան բանտի բալլադը» (1897 թ.) պոեմում և հետմահու լույս տեսած «De profundis» («Անդունդից», 1905 թ.) նամակ-խոստովանության մեջ: Բանտից ազատվելուց հետո տեղափոխվել է Փարիզ և մինչև մահն ապրել Սերաստիան Մելմոտ անվամբ:

Ուայլդը բազմաժանր (բանաստեղծություններ, պատմվածքներ, հեքիաթներ, վեպ, դրամաներ, տեսական-քննադատական հոդվածներ) գրող է: 1887 թ-ին տպագրած «Ջենտրվիլի ուրվականը», «Լույդ Լյուդուր Սնիլի հանցագործությունը», «Միստր Ն-ի դիմանկարը», «Միլիոնատեր բնորդը» պատմվածքներում ծաղրել է գոեհիկ իրականությունն ու քաղաքակրթությունը:

«Դորիան Գրեյի դիմանկարը» (1890 թ.) վեպում հեղինակի գաղափարների կրողը լորդ Հենրի Ուոտոնն է, որի կարծիքով՝ «կյանքի նպատակը մարդու էության բացահայտումն է ու ինքնարտահայտումը»: Հետևելով «չարի գեղագիտության» փիլիսոփայությանը՝ վեպի գլխավոր հերոսը՝ Դորիան Գրեյը, անտեսում է բարոյականության բոլոր կանոնները: Մնալով արտաքնապես գեղեցիկ ու նմայիչ՝ նա ապականվում է հոգեպես, և հոգու արտահայտի խորհրդավոր կերպով դրոշմվում են նրա դիմանկարի վրա:

Ուայլդի «Երջանիկ տարջաղներ», «Եսասեր հսկան», «Վարդը և տխուրը» (բոլորը՝ 1888 թ.), «Նոնաքարե տունը», «Ձկնորսը և իր հոգին», «Աստղային տղան», «Երիտասարդ թագավոր» (բոլորը՝ 1891 թ.) հեքիաթների հերոսները սիրով,

գրասրտությամբ և ինքնագոհաբերությամբ հաղթում են չարին: «Արձակ բանաստեղծություններ» ժողովածուն առանձնանում է մարդասիրության, ազնվության ու նվիրվածության գաղափարներով:

Ուայլդի դրամատուրգիան զարգացել է 2 ուղղությամբ՝ ողբերգություններ և աշխարհիկ կատակերգություններ: «Սալոմե» (սկզբում գրել է ֆրանսերեն, 1893 թ.) և «Ֆլորենտական ողբերգություն» (1895 թ., անավարտ) ողբերգություններում փորձել է վերածնել մեծ կրքերի ու զգացմունքների թեման: «Լեդի Ուինդերմիրի հովհարը» (1892 թ.), «Կինը, որն արժանի չէր ուշադրության» (1895 թ.) կատակերգություններում գրողը ծաղրել է կեղծ բարեպաշտությունն ու ստրկամտությունը: Սոցիալ-քննադատական մոտիվներն ավելի ցայտուն են դրսևորվել նրա «Որբան կարևոր է լուրջ լինել» (1895 թ.) և «Իդեալական ամուսինը» (1895 թ.) պիեսներում:

Ուայլդի գեղագիտական, տեսական և քննադատական հայացքներն արտահայտվել են «Մտահղացումներ» (1891-95 թթ.) հոդվածների ժողովածուում: Նա թեև «արվեստն արվեստի համար» անկումային գաղափարախոսության հետևորդներից էր, սակայն նրա գեղապաշտությունն ուղղված էր քաղքենի ու նյութապաշտ հասարակության դեմ: Ըստ նրա՝ գեղեցիկը «բացարձակ ճշմարտություն» է, իսկ կյանքի միակ իմաստն արվեստն է:

Ուայլդն ուներ սոցիալական անարդարությունների վերաբերյալ իր համոզումը, ըստ որի՝ «աղքատ մարդիկ չպետք է հաշտվեն իրենց գոյության զարհուրելի պայմանների հետ»: «Մարդու հոգին սոցիալիզմի ժամանակ» (1891 թ.) աշխատության մեջ ընդգծել է սոցիալիզմի առավելությունները:

Հոդվածներում Ուայլդը բարձր է գնահատել Վիլյամ Մորիսի, Վալտեր Պատերի, Չամլզ Մոխրեմնի, Օտորե դը Բալզակի, Լև Տոլստոյի, Ֆեոդոր Դոստոևսկու ստեղծագործությունները:

1878 թ.-ին «Դավեննա» պոեմի համար Ուայլդն արժանացել է Օքսֆորդի «Նյուդիզելթ» մրցանակին: Նրա պիեսները բեմադրվել են աշխարհի շատ երկրներում, ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել են գեղարվեստական և մուլտիպլիկացիոն կինոնկարներ:

«Սալոմե» ողբերգության հիման վրա Ռիխարդ Շտրաուսը գրել է համանուն օպերան (1905 թ.):

Ուայլդի ստեղծագործությունները հայերեն թարգմանել են Միսաք Մեծարենցը, Վահան Տերյանը: Կարեն Միքայելյանը, Արտաշես Կարինյանը և ուրիշներ:

ԴՈՐԻԱՆ ԳՐԵՅԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

ԳԼՈՒԽ 1

Արվեստանոցը լցվել էր վարդերի թանձր բուրմունքով, իսկ Նրբ ամառային զեփյուռից սոսափում էին պարտեզի ծառերը, բաց դռնից ներս էր ծորում մերթ Նղրևանու արբեցնող բույրը, մերթ սգնու վարդագույն ծաղիկների նուրբ անուշահոտությունը:

Պարսկական տապալակներով ծածկված բազմոցի վրայից, որտեղ պառկած էր լորդ Հենրի Ուոթթոնը՝ ծխելով, ինչպես միշտ, անթիվ գլանակներ, երևում էր միայն ջրուռու ծառը, նրա մեղրահամ և մեղրագույն ծաղիկները բոցկլտում էին արևի տակ, իսկ դողդոջուն ճյուղերը թվում էր, թե հագիվ են դիմանում այդ ճաճանչափայլ հրաշալիքի ծանրությանը: Դիմացի վիթխարի լուսամուտից կախված հնդկական մետաքսե վարագույրների վրա մերթնդմերթ երևում էին ճախրող թռչունների տարօրինակ ստվերները՝ ստեղծելով ճալոխական ճեպանկարի ակնթարթային տպավորություն, և լորդ Հենրին ակամա մտածում էր Տոկիոյի դեղնամորթ նկարիչների մասին, որոնք ձգտում էին շարժում և խոյանք արտահայտել էությանմբ անշարժ արվեստի միջոցով: Մեղուների պարսը, որ խլրտում էր չինձած բարձր խոտերի մեջ կամ միալար համառությամբ պտտվում գանգրասաղարթ ցալսակեռասի ոսկեգույն փոշոտ մազմզուկների շուրջը, խուլ բզկոցով լռությունը դարձնում էր ավելի ճշուղ: Լոնդոնի խուլ ժխորը այստեղ էր հասնում, ինչպես հեռավոր երգեհոնի

բվվոց:

Սենյակի կենտրոնում՝ նկարակալին, ամրացված էր արտակարգ գեղեցկության տեր մի երիտասարդի դիմանկար, իսկ նկարակալի դիմաց՝ փոքր-ինչ հեռու, նստած էր նաև նկարիչն ինքը՝ այն Բեզիլ Հոլլուորդը, որի հանկարծակի անհայտանալը մի քանի տարի առաջ այնքան հուզմունք պատճառեց հասարակությանը և տեղի տվեց բազմաթիվ արտառոց ենթադրությունների:

Նկարիչը նայում էր սքանչելի պատանուն, որն այնպես վարպետորեն արտացոլվել էր դիմանկարում, և գոհունակության ժպիտը խաղում էր նրա դեմքին: Բայց հանկարծ նա վեր ցատկեց տեղից և, փակելով աչքերը, մատները սեղմեց կուպերին՝ ցանկանալով, կարծես, հիշողության մեջ պահել ինչ-որ զարմանալի երազ, և վախենալով սթափվել:

- Սա քո ամենալավ գործն է, Բեզիլ, ամենալավը, որ նկարել ես երբևէ, - ծուլորեն ասաց լորդ Հենրին: - Եկող տարի անպայման պետք է ուղարկել Գրովենորի պատկերասրահը: Ակադեմիա չարժի: Ակադեմիան չափազանց հանրամատչելի է և չափազանց ընդարձակ: Ահավոր բան է, ինչքան գնացել եմ, այնտեղ այնքան մարդ է եղել, որ չեմ կարողացել նկարները նայել, և կամ այնքան նկարներ, որ չեմ կարողացել մարդկանց տեսնել: Առաջինը տհաճ է, իսկ երկրորդն ավելի վատ է: Գրովենորը, իրոք, միակ հարմար տեղն է:

- Դժվար թե այդ դիմանկարը ես ուղարկեմ ցուցադրելու, - պատասխանեց նա՝ գլուխը ետ գցելով իրեն բնորոշ սովորության համաձայն, որն ընկերների ծիծաղն էր շարժում դեռ Օքսֆորդի համալսարանում: - Ո՛չ, ես ոչ մի տեղ չեմ ցուցադրի:

Լորդ Հենրին զարմացած բարձրացրեց հոնքերը և Բեզիլին նայեց կապույտ ծխի քուլաների միջից, որոնք արտասովոր օղակներով բարձրանում էին նրա՝ ափիոնով ներծծված

սիգարետից:

Ոչ մի տեղ չեմ ցուցադրի: Իսկ ինչո՞ւ, սիրելիս: Ինչ պատճառով: Ռոբան տարօրինակ եք դուք՝ նկարիչներդ: Փառքի տիրանալու համար անում եք ամեն ինչ, իսկ երբ ձեռք եք բերում, սկսում եք, կարծես, նեղվել ու ծանծրանալ այդ փառքից: Դա հիմարություն է: Եթե տիպ է, երբ մարդու մասին չուտ են խոսում, ապա ավելի վատ է, երբ բոլորովին չեն խոսում: Այս դիմանկարը քեզ վեր կբարձրացնի Անգլիայի բոլոր երիտասարդ նկարիչներից և կշարժի ծերերի նախանձը, եթե, իհարկե, նրանք դեռևս ընդունակ են որևէ զգացումի:

‘Ի՞նչո՞ւ կծիծաղես ինձ վրա, - առարկեց նկարիչը, - բայց, ինչո՞ւ, չեմ կարող ցուցադրել... Ես չափազանց շատ բան եմ դրել խնքս ինձնից այդ նկարի մեջ:

Հարմար դիրք ընդունելով բազմոցի վրա՝ լորդ Հենրին իրրջաց:

Այո, ես այդպես էլ գիտեի, որ կծիծաղես: Բայց և այնպես դու խսկական ճշմարտություն է:

Զուտուգանց շատ բան ինքդ քեզանից: Աստված վկա, Բեյլի, չգիտեի, որ դու այդքան մեծ կարծիք ունես քո մասին: Ամենավորք նմանություն անգամ ես չեմ տեսնում քո՝ իմ սևուկուկ և խստադեմ բարեկամ, և այդ երիտասարդ Այսոփսի միջև, որը կարծես փղոսկրից և վարդաթերթերից կերտված լինի: Հասկացիր, սիրելի Բեյլի, նա Նարցիսն է, իսկ դու՝ Իհարկե, դու ոգեշունչ դեմք ունես և նման բաներ: Բայց գեղեցկությունը, իսկական գեղեցկությունը անհետանում է, այնտեղ, որտեղ հայտնվում է ոգեշնչվածությունը: Բանասիրտությունն ինքնին օրինաչափության շեղում է, որ խախտում է, դեմքի ներդաշնակությունը: Հենց որ մարդ սկսում է մտածել, անհամաչափորեն երկարում է նրա քիթը կամ մեծանում ճակատը, և կամ որևէ բան փչացնում է դեմքը:

Նայիր տաղանդավոր գործիչներին. որքան այլանդակ են նրանք: Բացառությունը միայն հոգևորականներն են, իհարկե: Չէ՞ որ նրանք չեն մտածում: Ութսուն տարեկան եպիսկոպոս շարունակում է կրկնել այն, ինչ նրան սովորեցրել են, երբ տասնութ տարեկան պատանի է եղել. բնական է, որ նրա դեմքը պահպանում է իր գեղեցկությունն ու բարետեսությունը: Քո խորհրդավոր երիտասարդը, որի անունը դու համառորեն չես ուզում ասել, բայց որի դիմանկարը սքանչելի է, երբեք ոչնչի մասին չի մտածում: Ես դրանում համոզված եմ: Նա ինչ-որ անուղեղ, գեղեցիկ արարած է, որին մարդ միշտ պետք է իր աչքի առջև ունենա. ծմռանը, երբ ծաղիկների՝ չկան՝ աչք շոյելու, իսկ ամռանը տաքացած ուղեղը զովացնելու համար: Ո՛չ, Բեզիլ, ինքդ քեզ մի խաբիր, ոչնչով նման չես նրան:

- Դու ինձ չես հասկանում, Հայրիկ,- պատասխանեց նկարիչը,- իհարկե, ես նման չեմ նրան: Ես դա հիանալի գիտեմ: Եվ չէի էլ ցանկանա նման լինել: Դու ուսերդ ես թոթվում: Չմե հավատում: Բայց անկեղծ եմ ասում, մարդկանց ճակատագրում, որոնք ֆիզիկապես կամ հոգեպես կատալոյալ են, օրհասական մի բան կա: Ծիշտ այդպիսի մի ճակատագիր. էլ ամբողջ պատմության ընթացքում կարծես ուղղություն է տվել արքաների ոչ ծիշտ քայլերին: Շատ ավելի անվտանգ է ոչնչով ուրիշներից չտարբերվել: Այս աշխարհում միշտ շահում են այլանդակներն ու հիմարները: Նրանք կարող են նստել հանգիստ ու դիտել ուրիշների պայքարը: Նրանց վիճակված չէ զգալ հաղթության բերկրանքը, բայց դրա փոխարեն զերծ են նաև պարտության դառնությունից: Նրանք ապրում են այնպես, ինչպես բոլորս պետք է ապրեինք՝ անվրդով, անտարբեր և հանգիստ: Նրանք երբեք չեն կործանում ուրիշներին և իրենք էլ չեն կործանվում թշնամու ձեռքից... Դու անվանի ես և հարուստ, Հայրիկ, իմ մեջ կա

յանստիւթանքն և տաղանդ, ինչքան էլ փոքր լինի. Դորիանն ունի գեղեցկություն: Եվ աստվածների բոլոր այդ պարգևների համար մենք կրթնէ հատուցելու ենք, հատուցելու ենք ծանր տառապանքներով:

Դորիանն: Այդ նրա անունն է,- հարցրեց լորդ Հենրին՝ մոտենալով Բեզիլին:

Այո, նրա անունն է: Ես մտադիր չէի ասել այդ անունը:

Բայց ինչո՞ւ:

Ինչպե՞ս թացատրեմ... Երբ ես մեկին չափազանց սիրում եմ, կրթնէ չեմ տալիս նրա անունը: Դա միևնույն է, թե ուրիշներին տաս քեզ համար շատ թանկ մարդու ինչպէս մտածելը: Եվ գիտես, ես դարձել եմ գաղտնապահ, ինձ դուր է գալիս մարդկանցից թաքցնել իմ գաղտնիքները: Դա, թվում, միակ բանն է, որ ժամանակակից կյանքը կարող է դարձնել մեզ համար խորհրդավոր և թովիչ: Ամենաանշան բանն անգամ դառնում է զմայլելի, երբ թաքցնում են: Այժմ՝ յոթարկից հեռանալիս, երբեք չեմ ասում ազգականներիս, թե ուր եմ գնում: Իսկ եթե ասեմ, կկորչի ամբողջ հաճույքը: Դժուար բնածուծույթ է, համաձայն եմ, բայց դա իմ կյանքը մի տեսակ դարձնում է ռոմանտիկ: Դու, իհարկե, կմտածես, որ դու տոսկրայի անմտություն է:

Անհունիս,- առարկեց լորդ Հենրին,- ամենևին, սիրելի Բեզիլ՝ Դու մոռանում ես, որ ես ամուսնացած մարդ եմ, իսկ տմուտությունն միակ հրապույրն այն է, որ կեղծիքը դառնում է միտմտամոյն անհրաժեշտ երկու կողմերի համար էլ: Ես կզբոս չգլխեմ՝ որտեղ է լինում կինս, իսկ կինս էլ չգիտե, թե ինչ եմ անում ես: Հանդիպումների ժամանակ, իսկ մենք երբեմն հանդիպում ենք, կոր ճաշի ենք հրավիրվում կամ այցելում ինչորոշին, մենք տմուտայն լրջությամբ միմյանց պատմում ենք տմուտամտեղծեր պատմություններ: Կինս այդ գործում շատ

ավելի հմուտ է, քան ես: Նա երբեք չի շփոթվում, իսկ ես միշտ շփոթվում եմ: Ասենք, եթե պատահում է, որ նա ինձ բռնում է, հանցանքի մեջ, ոչ բարկանում է և ոչ էլ աղմկում: Երբեմն դա ինձ նույն իսկ վշտացնում է: Բայց նա միայն ծիծաղում է ինձ վրա:

- Տանել չեմ կարող, երբ դու այդ ձևով ես խոսում քո ընտանեկան կյանքի մասին, Հարրի,- ասաց Բեզիլը՝ գնալով դեպի պարտեզի դուռը:- Ես համոզված եմ, որ դու հիանալի ամուսին ես, բայց ամաչում ես քո առաքինություններից: Զարմանալի մարդ ես: Երբեք բարոյախոսական բաներ չես ասում, բայց նաև երբեք ոչինչ չես անում, որ անբարոյական լինի: Բոցինիզմը պարզապես կեցվածք է:

- Բնական լինելը, գիտեմ, պարզապես կեցվածք է, և մարդկանց համար՝ ամենաանտանելի կեցվածքը,- բացականչեց լորդ Հենրին՝ ծիծաղելով:

Երիտասարդները դուրս եղան պարտեզ և բարձր դափներփի ստվերում նստեցին բամբուկն նստարանին: Արևի շողերը սահում էին դափնու փայլփլուն, կարծես ջնարակված տերևների վրայով: Խոտերի մեջ մեղմ օրորվում էին սպիտակ մարգարտածաղիկները:

Նրանք լուռ նստած էին որոշ ժամանակ: Ապա լորդ Հենրին հանեց ժամացույցը:

- Ցավոք սրտի, ես պետք է գնամ,- շշնջաց նա,- բայց նախքան գնալս դու պետք է պատասխանես քիչ առաջ տված իմ հարցին:

- Ինչ հարց,- հարցրեց նկարիչը աչքերը գետնին հառած:

- Դու շատ լավ գիտես:

- Ո՛չ, Հարրի, չգիտեմ:

- Լավ, կհիշեցնեմ: Ասա՛, ինչո՞ւ չես ուզում ցուցադրել Դոփան Գրեյի դիմանկարը: Ուզում եմ իմանալ իսկական պատ-

ճառը:

- Իսկական պատճառն ասացի:

- Ո՛հ, դու ասացիր, որ այդ դիմանկարում չափազանց շատ բան կա քեզանից: Բայց դա երեխայություն է:

- Հասկացիր. Հարրի,- Բեզիլ Հոլլուորթը նայեց ուղիղ նրա աչքերին,- յուրաքանչյուր դիմանկար, որ կերտվում է մեծ գգացմունքով, դա իր իսկ՝ նկարչի դիմանկարն է և ոչ թե բնորդինը: Բնորդը սոսկ պատահականություն է, առիթ: Ոչ թե նրան, այլ ինքն իրեն է հայտնաբերում նկարիչը կտավի վրա: Եվ ես վախենում եմ, որ նկարում երևա իմ հոգու գաղտնիքը: Ահա թե ինչու չեմ ուզում ցուցադրել:

Լորդ Հենրին ծիծաղեց:

- Իսկ, դա ի՞նչ գաղտնիք է,- հարցրեց նա:

- Լավ, կպատմեմ,- ասաց նկարիչը մի տեսակ շփոթված:

- Օ՛, ես այրվում եմ հետաքրքրությունից, Բեզիլ,- ասաց նա՝ նկարչին նայելով:

- Ասենք, առանձնապես պատմելու ոչինչ չկա, Հարրի,- պատասխանեց Հոլլուորթը:- Եվ դժվար թե դու հասկանաս ինձ: Վախենում եմ, թերևս, չհավատաս:

Լորդ Հենրին ժպտաց, ապա թեքվելով՝ խոտի միջից քաղեց մի վարդագույն մարգարտածաղիկ:

- Ես համոզված եմ, որ կհասկանամ,- պատասխանեց նա՝ ուշադիր զննելով ծաղկի ոսկեփայլ վարսանդը:- Իսկ ինչ վերաբերում է հավատալուն, ես կարող եմ հավատալ ամեն ինչի, եթե հատկապես երևույթն անհավանական է:

Թևթև քամուց մի քանի ծաղկաթերթեր ընկան ծառից: Աղբյուրանո ծանր, կարծես աստղերից հյուսած ողկույզները մեղմորեն օրորվեցին շոգից քնքշացած քնաբեր անդորրում: Պատի մոտ ճոռաց ծղրիդը: Ինչպես կապույտ թել, շղարշանման դարչնագույն թևերը շարժելով թռավ մի երկար ճպուռ:

Լորդ Հենրիին թվաց, թե ինքը լսում է Բեզիլի սրտի տրոփյունը և փոքրձեց կռահել, թե ինչ է լինելու հետո:

– Ահա, ուրեմն,– սկսեց նկարիչը փոքր դադարից հետո:– Մոտ երկու ամիս առաջ ես գնացի լեդի Բրենդոնի հրավերքին: Դե գիտես, խեղճ նկարիչներս ժամանակ առ ժամանակ պետք է երևանք հասարակությանը՝ պարզապես նրան հիշեցնելու համար, որ մենք վայրենիներ չենք: Ինչպես մի անգամ դու ասացիր, բոլորն էլ ֆրակով և սպիտակ փողկապով կարող են քաղաքակիրթ մարդու տպավորություն թողնել, նույնիսկ բորսայի միջնորդները:

Հյուրասենյակում արդեն մոտ տասը ռուպե էր, ինչ զրուցում էի հարուստ այրիների և տաղտկալի ակադեմիկոսների հետ, երբ հանկարծ ինձ վրա զգացի մեկի հայացքը: Շրջվեցի և առաջին անգամ տեսա Դորիան Գրեյին: Մեր աչքերը հանդիպեցին իրար, զգացի, որ գունատվում եմ: Ինձ համակեց սարսափի տարօրինակ զգացում: Հասկացա՝ ես հանդիպել եմ մեկին այնքան թովիչ, որ, եթե տրվեմ նրա հմայքին, նա կկլանի իմ ամբողջ էությունը, հոգիս և նույնիսկ իմ արվեստը: Իսկ ես երբեք չեմ ցանկացել ոչ մի արտաքին ազդեցություն իմ կյանքի վրա: Դու գիտես, Հարրի, թե իմ քնավորությունը որքան է անկախ: Ես եմ միշտ եղել իմ տերը... այդպես է եղել գոնե մինչև Դորիան Գրեյին հանդիպելը: Իսկ այդ ռուպեին... չգիտեմ նույնիսկ ինչպես բացատրեմ քեզ... ներքին ձայնս ասում էր ինձ, որ ես գտնվում եմ իմ կյանքի սարսափելի բեկման նախօրեին: Ես աղոտ կերպով նախազգում էի, որ ճակատագիրը պատրաստում է ինձ համար արտասովոր մի բերկրանք և նույնքան բացառիկ տվայտանքներ: Ինձ համակեց զարհուրելի սարսափ, և որոշելով հեռանալ՝ ուզում էի շարժվել դեպի դուռը: Եվ այդ անում էի գրեթե անգիտակցորեն, ինչ-որ վախից մղված: Փախուստի դիմելը, իհարկե,

պատիվ չի բերում ինձ: Խղճմրտոտրեն ասած...

– Խիղճն ու վախը փաստորեն նույն բաներն են, Բեգիլ: «Խիղճը» վախկոտության պաշտոնական անվանումն է,– ահա և բոլորը:

– Ես դրան չեմ հավատում, Հանրի, համոզված եմ, որ դու նույնպես չես հավատում: Մի խոսքով, չգիտեմ ինչից դրդված ես այդպես արեցի, գուցե հպարտությունից, չէ՞ որ ես շատ հպարտ եմ: Դեռան մոտ լեդի Բրենդոնն ինձ կանգնեցրեց:

– Չլինի՞ այսքան շուտ ուզում եք փախչել, միստեր Հոլ-լուորդ,– ճչաց նա: Կարծում եմ՝ գիտես, թե նա ինչպիսի սուր ձայն ունի:

– Լիդ էր պակաս չիմանայի: Նա իսկական սիրամարգ է, միայն՝ առանց նրա գեղեցկության,– վրա բերեց լորդ Հենրին՝ երկար ներվային մատներով պոկոտելով մարգարտածաղկի թևերը:

– Ես չկարողացա ազատվել լեդի Բրենդոնից: Նա ներկայացրեց ինձ վերնախավի ներկայացուցիչներին, հետո աստիճանով ու ծնկակալի շքանշաններով մեծատոհմիկներին և ապա վիթխարի՝ ականակուռ ապարոշներով ինչ–որ պառավ լեդիների, որոնք թութակի կեռքեր ունեին: Նա ներկայացնում էր ինձ՝ որպես իր ամենալավ բարեկամի՝ չնայած իր կյանքում ընդամենը երկրորդ անգամ էր, ինչ հանդիպում էր ինձ: Երևի լույի Բրենդինն իր գլուխն էր մտցրել ինձ ևս տեղավորել իր հույսկավոր ծանոթությունների հավաքածուում: Կարծեմ, այդ ժամանակ իմ նկարներից մեկը մեծ հաջողություն էր ունեցել, համևնույն դեպս այդպես էին շաղկերատում գրոշանոց թերթերը, իսկ մեր ժամանակ դա անմահության արտոնագիր է: Եվ համարժեք ես դեմ առ դեմ հանդիպեցի այն արտասովոր պատանուն, որն առաջին իսկ հայացքից այնքան տարօրինակ հուզմունք էր առաջացրել իմ հոգում: Նա այնքան մոտ էր

կանգնած, որ մենք գրեթե իրար կայանք: Մեր աչքերը կրկին հանդիպեցին: Իմ կողմից անխոհեմություն էր, բայց ես խնդրեցի լեդի Բրենդոնին, որ նա մեզ ծանոթացնի: Ասենք, դա, թերևս, այնքան էլ մեծ անխոհեմություն չէր, որովհետև, եթե մեզ նույնիսկ չծանոթացնեին էլ, միևնույն է, մենք անխուսափելիորեն կխոսեինք միմյանց հետ: Ես համոզված էի դրանում: Հետագայում այդ նույն բանն ինձ ասաց նաև ինքը՝ Դորիանը:

Նա նույնպես իսկույն ևեթ զգաց, որ մեզ միացնողը ոչ թե պատահականությունն է, այլ ինքը ճակատագիրը:

- Իսկ ինչպես ներկայացրեց լեդի Բրենդոնը այդ զմայլելի երիտասարդին, - հարցրեց լորդ Հենրին: - Ձե՛ր որ նա սիրում է իր բոլոր հյուրերի մասին շուտափույթ բնութագիր տալ: Հիշում եմ, թե ինչպես նա մի անգամ ինձ ներկայացրեց շքանշաններով ու ժապավեններով ծածկված կարմրադեղն, ահեղ մի ծեր ջենտլմենի, իսկ ճանապարհին ողբերգական շշնջուկով (նրան, ըստ նրա նշանակման, բոլորը հյուրասենյակում լսեցին) հաղորդում էր ինձ նրա կյանքի ամենաապշեցուցիչ մանրամասնությունները: Ես պարզապես փախա նրանից: Սիրում եմ մարդկանց ճանաչել ինքս՝ առանց որևէ մեկի միջնորդության: Իսկ լեդի Բրենդոնը իր հյուրերի հետ վարվում է ժիշտ այնպես, ինչպես աուկցիոներն է վարվում վաճառվող ապրանքի հետ աճուրդի ժամանակ: Նա կամ բացում է նրանց նվիրական գաղտնիքները, կամ պատմում ամեն ինչ, բայց ոչ երբեք այն, ինչ կուզեիք իմանալ:

- Խեղճ լեդի Բրենդոն: Դու չափազանց խիստ ես նրա նկատմամբ, Հարիի, - ցրված ասաց Հոլլուորդը:

Սիրելիս, նա ձգտում էր իր մոտ «Սալոն» ստեղծել, բայց պարզապես ռեստորան ստացվեց: Էլ ինչպես ես կարող եմ հիանալ նրանով: Բայց, տերը նրա հետ, ավելի լավ է պատ-

միր, թե ինչ էր ասում Դորիան Գրեյի մասին:

- Ինչ-որ բան ասաց քթի տակ, կարծեմ՝ «Հիասքանչ տղա է: Նրա խելով մայրը և ես անբաժան էինք... ամբողջովին մոռացել եմ, թե նա ինչ է անում, վախենում եմ՝ ոչնչով չի գրադվում... Ա՛յս, հա, դաշնամուր է նվագում, թե՛ ջութակ, սիրելի միստեր Գրեյ...»: Երկուսս էլ չկարողացանք զսպել մեր ծիծաղը, և դա մեզ անմիջապես մտերմացրեց:

- Վատ չէ, երբ ծիծաղով է սկսվում ընկերությունը, իսկ ավելի լավ է, երբ դրանով էլ վերջանում է, - ասաց երիտասարդ լորդը՝ ևս մի մարգարտածաղիկ պոկելով:

Հոլլուորդը բացասաբար տարուբերեց գլուխը:

- Դու չգիտես, Հարրի, թե ինչ է իսկական ընկերությունը, - կամաց ասաց նա, - ասենք, իսկական թշնամությունը քեզ նույնպես անծանոթ է: Դու բոլորին սիրում ես, իսկ սիրել բոլորին, նշանակում է անտարբեր լինել ամենքի նկատմամբ:

- Որքան անարդար ես իմ հանդեպ, - բացականչեց լորդ Հենրին՝ գլուխը ետ գցելով և նայելով ամպերի ծվեններին, որ լողում էին ամառային թափանցիկ փիրուզե երկնքում, ինչպես սպիտակափայլ մետաքսի խճճված թելի կծիկներ, - այո, սարսափելի անարդար: Ես ամենևին էլ մարդկանց նկատմամբ նույն վերաբերմունքը չունեմ: Որպես բարեկամ՝ ես ընտրում եմ գեղեցիկ մարդկանց, որպես ընկեր՝ լավ համբավ ունեցողներին և որպես թշնամի՝ խելացիներին: Լմենից բծախնդիր պետք է լինել թշնամիների ընտրության մեջ: Իմ հակառակորդներից և ոչ մեկը հիմար չէ: Նրանք բոլորն էլ մտածող մարդիկ են, և բավական ինտելիգենտ, այո՛ պատճառով էլ կարողանում են գնահատել ինձ: Հիմա կմտածես, որ լիմ ընտրության հիմքում ընկած է փառամոլությունը: Ինչ կա որ, թերևս, ճիշտ է:

- Ես էլ եմ այդպես կարծում, Հարրի: Ի միջի այլոց, ըստ քո

դասակարգման, ես միայն ընկեր եմ:

- Իմ սիրելի Բեգիլ, դու ինձ համար շատ ավելին ես, քան «միայն ընկերը»:

- Եվ շատ ավելի պակաս, քան բարեկամ: Նշանակում է՝ եղբոր նման մի բան, ճիշտ է:

- Օ՛, ոչ: Ես ոչ մի քնքուշ զգացմունք չեմ տածում իմ եղբայրների նկատմամբ: Ավագ եղբայրս համառորեն չի ուզում մեռնել¹, իսկ կրտսերները, կարծես, ուրիշ ոչինչ չունեն անելու մեռնելուց բացի:

- Հարրի,- հոնքերը խոժոռած սաստեց Հոլլուորդը:

- Բարեկամս, կատակում եմ: Բայց, խոստովանում եմ, ես իսկապես տանել չեմ կարողանում հարազատներդ: Դա թերևս այն պատճառով է, որ մեզանից ոչ մեկը տանել չի կարողանում այն մարդկանց, որոնք նույն թերություններն ունեն, ինչ որ մենք: Ես խորապես կարեկցում եմ անգլիական դեմոկրատներին, որոնց վրդովմունք է պատճառում այսպես կոչված «բարձր հասարակարգի արատները»: Մտորին դասակարգի մարդիկ բնագծով հասկանում են, որ հարեցողությունը, հիմարությունը և անբարոյականությունն իրենց արտոնություններն են, իսկ եթե մեզանից որևէ մեկը տառապում է այդ արատներով, նշանակում է՝ դրանով նա խլում է նրանց իրավունքները: Երբ խեղճ Սաուսուորկը որոշեց կնոջից բաժանվել, նրանց վրդովմունքն ուղղակի հոյակապ էր: Մինչդեռ ես չեմ երաշխավորի, որ պրուլետարների թեկուզ տասը տոկոսը առաքինի կյանք է վարում:

- Քո ասածներից ոչ մի բանի հետ ես համաձայն չեմ, Հարրի: Դու ինքդ նույնպես չես հավատում դրան:

Լորդ Հենրին շոյեց իր շագանակագույն սուր մորուքը և

¹ Ըստ անգլիական օրենքի, ժառանգությունն ստանում է միայն ավագ որդին:

Լ.Բևեռուսի ծուպավոր սև ձեռնափայտով թխկթխկացրեց լաքե կրճիկի ծայրը:

Կոտորյալ անգլիացի ես, Բեզիլ: Ահա արդեն երկրորդ տնկումն է՝ ես լսում եմ քեզանից այդ նկատողությունը: Փորձիր մի միտք արտահայտել իսկական անգլիացու առաջ (իսկ դա մեծ տնկություն է) նա երբեք չի էլ մտածի հասկանալ՝ այդ միտքը ճիշտ է, թե սխալ: Նրան միայն մի բան է հետաքրքրում. ինքույ՝ համոզված ես արդյոք քո ասածին: Մինչդեռ կարևորը գտնուողն է, անկախ նրանից, թե նա, ով արտահայտել է այդ գտնուողն, որքան անկեղծ է հավատում դրան: Գաղափարի ինքնությունն արժեքը այնքան է ավելի մեծ, որքան ավելի քիչ է, հավատում նրան այն մարդը, որից ծնունդ է առնում ինքը՝ գտնուողը, որովհետև այդ գաղափարը չի արտացոլում նրա ցանկությունները, կարիքները և նախապաշարմունքները... Մեկայն ես մտադիր չեմ քեզ հետ քննարկելու քաղաքական, հասարակագիտական կամ մետաֆիզիկական հարցեր: Ինձ սովելի շատ հետաքրքրում են մարդիկ, քան նրանց սկզբունքները, իսկ ամենից հետաքրքիրը անսկզբունք մարդիկ են: Խոսենք Դորիան Գրեյի մասին: Հաճախ եք հանդիպում:

Ամեն օր: Ես ինձ դժբախտ կզգայի, եթե չտեսնեի նրան սույն օր: Ես առանց նրան ապրել չեմ կարող:

Զարմանալի է: Իսկ ես կարծում էի, թե դու ոչինչ չես սկսելու, քո արվեստից բացի:

Հիմա Դորիանն ինձ համար իմ արվեստն է, - լրջորեն սուսը նկարիչը: - Ես երբեմն մտածում եմ, Հարրի, որ մարդկային ուրույնության մեջ կա միայն երկու կարևոր հանգամանք: Առաջինը՝ արտահայտման նոր միջոցների հայտնվելն է ուրվհասում, երկրորդը՝ նոր կերպարի հայտնվելը: Դորիան Դեյվի դեմքը մի օր ինձ համար կլինի այն, ինչ յուզանների հայտնագործումը եղավ վենետիկյան նկարչության համար

կամ Անտիոնյի դեմքը հունական քանդակագործության մեջ: Իհարկե, ես պատկերում եմ Դորիանին գույներով, նկարում եմ, էսքիզներ եմ անում: Բայց բանը միայն դրանում չէ: Նա ինձ համար շատ ավելին է, քան մոդելն է կամ բնորդը: Ես չեմ ասում, թե գոհ չեմ իմ աշխատանքից, չեմ ուզում քեզ հավատացնել, թե այդպիսի գեղեցկությունն անհնար է պատկերել արվեստի մեջ: Չկա այնպիսի բան, որ արվեստը չկարողանա արտահայտել: Ես գիտեմ, այն նկարը, որ կերտել եմ Դորիան Գրեյին հանդիպելուց հետո, լավ գործ է, ամենալավը՝ իմ կյանքում: Չգիտեմ՝ ինչպես բացատրել քեզ, և կհասկանան արդյոք դու ինձ... Դորիանի հետ հանդիպելը կարծես նկարչության մեջ ինչ-որ նոր բանալի տվեց ինձ, նկարելու նոր մանիերա բացեց իմ առաջ: Ես իրերն արդեն այլ կերպ եմ տեսնում, և ամեն ինչ ընկալում եմ նոր ձևով: Զգում եմ, որ կարող եմ վերստեղծել կյանքն այնպիսի միջոցներով, որոնք մինչ այդ ինձ համար անհայտ էին: «Երազանք ձևի մասին այնպիսի մի ժամանակ, երբ թագավորում է միտքը»: Ո՞վ է այդպես ասել: Չեմ հիշում: Ահա այդպիսի երազանք է Դորիան Գրեյը դարձել ինձ համար: Միայն այդ պատանու ներկայությունը (նա իմ աչքին դեռ պատանի է, չնայած լրացել է քսան տարին), այն, չգիտեմ, կարող ես պատկերացնել, թե ինչ է նշանակում միայն նրա ներկայությունը: Առանց գիտակցելու՝ նա բացահայտում է ինձ համար ինչ-որ նոր դպրոցի առանձնահատկություններ, դպրոց, որն ունենալու է ռոմանտիզմի կիրքը և հելլենիզմի կատարելությունը: Հոգու և մարմնի ներդաշնակություն... Ինչ գեղեցիկ է հնչում: Մեր խելագարության ժամանակ մենք բաժանել ենք նրանց և՛ հայտնագործել գոեհիկ ռեալիզմն ու դատարկ իդեալիզմը:

Հարրի, եթե միայն իմանաս, թե ինչ է Դորիան Գրեյն ինձ համար: Հիշում ես այն բնանկարը, որի համար էգնյուն

տնիւրան խաշոտ գումար էր առաջարկում, իսկ ես չէի ուզում բաժանուիլ նրանից: Դա իմ ամենալավ գործերից մեկն է: Իսկ ինչո՞ւ, գիտե՞ս: Որովհետեւ նկարելիս Դորիան Գլենը կողքիս էր նստած: Ինչ-որ անըմբռնելի ազդեցություն նրանից օգնեց ինձ այդ պարզ անտառային տեսարանում առաջին անգամ տեսնել հրաշք, որը ես միշտ փնտրել էի, սակայն գտնել չէի կարողացել:

Բնվիլ, դա ապշեցուցիչ է: Ես պետք է տեսնեմ Դորիան Գլենին:

Հայտնորդը վեր կացավ նստարանից և սկսեց քայլել պարտեզում: Մի քանի րոպե անց նա վերադարձավ նստարանի մոտ:

Հասկացիր, Հարրի,- ասաց նա,- Դորիան Գլենյն ինձ համար ուղղակի արվեստի մեջ թեմա է: Գուցե նրա մեջ դու ինձ չտեսնես, իսկ ես տեսնում եմ ամեն ինչ: Եվ իմ այն նկարներում, որտեղ Դորիանը չի պատկերված, նրա ազդեցությունն ավելի ուժեղ է զգացվում: Ինչպես ես արդեն ասացի ինձ, նու կարծես նկարելու նոր մանիերա է հուշում ինձ: Ես գտնում եմ նրան, ինչպես հայտնություն կորագծերում, որոշ գույնների երանգների նրբագեղություններում: Ահա և բոլորը:

Բայց ինչո՞ւ այդ դեպքում դու չես ուզում ցուցադրել նրա պատկերը,- հարցրեց լորդ Հենրին:

Որովհետեւ այդ դիմանկարում ես ակամա արտահայտել եմ նկարչի այն անըմբռնելի սիրահարվածությունը, որն, իմարիկ, երբեք չեմ խոստովանել Դորիանին: Նա ոչինչ այդ մասին չգիտե: Եվ երբեք չի իմանա: Բայց ուրիշները կարող էին կռտնել այդ ճշմարտությունը, իսկ ես չեմ ուզում մերկացնել իմ հույլն նրանց հետաքրքրասեր և անհեռատես աչքերի առջև: Ես երբեք նրանց թույլ չեմ տա, որ իմ սիրտը գննեն իրենց մանրույթխոսելով: Հիմա հասկանո՞ւմ ես: Հարրի: Այդ կտավի

մեջ ես չափազանց շատ եմ հոգի դրել. չափազանց շատ եմ դրել ինքս ինձանից, Հա՛րրի:

- Բանաստեղծներն այնքան նրբանկատ չեն, ինչքան դու: Նրանք հիանալի գիտեն, որ սիրո մասին գրելը ձեռնտու է, դրա պահանջը մեծ է: Մեր օրերում խորտակված սիրտը բազմաթիվ հրատարակություններ է ունենում:

- Ես ատում եմ այդպիսի բանաստեղծներին,- գոչեց Հոլլուորդը:- Արվեստագետը պետք է ստեղծի արվեստի սքանչելի գործեր՝ ոչինչ չդնելով նրանց մեջ իր անձնական կյանքից: Մենք ապրում ենք այնպիսի դարաշրջանում, երբ մարդիկ վերաբերվում են արվեստին՝ որպես ինքնակենսագրության ինչ-որ ձևի: Մենք կորցրել ենք գեղեցկության վերացական զգացողությունը: Ես մի օր ցույց կտամ աշխարհին, թե ինչ բան է դա, ահա թե ինչու աշխարհը երբեք չի տեսնի Դորիան Գրեյի դիմանկարը:

- Իմ կարծիքով, դու սխալ ես, Բեգիլ: Բայց չեմ վիճում քեզ հետ: Վիճում են միայն բթամիտները: Ասա՛, շա՛տ է սիրում քեզ Դորիան Գրեյը:

Նկարիչը մի պահ խորհեց:

- Նա սիրում է ինձ,- պատասխանեց Հոլլուորդը փոքր լաղարից հետո,- գիտեմ, սիրում է: Եվ դա հասկանալի է.

Ես չափազանց շատ եմ նրան շոյում: Տարօրինակ հաճույք եմ զգում ասել նրան այնպիսի բաներ, որ կարիք չկա ասելու, թեև գիտեմ, որ հետո փոշմանելու եմ: Ընդհանրապես նա ինձ շատ լավ է վերաբերվում և արվեստանոցում նստած հազար ու մի բան ենք զրուցում: Բայց երբեմն նա լինում է սարսափելի աննրբազգաց. կարծես անսահման հաճույք է, զգում ինձ վշտացնելով: Այն ժամանակ ես զգում եմ, Հա՛րրի, որ ամբողջ հոգիս տվել եմ մեկին, որի համար այդ հոգին նույնն է, ինչպես վերաբերվին ամրացրած ծաղիկը, որն

ինչպես զարդ՝ գոհացնելու է նրա փառամոլությունը միայն տեսնողին մի օր:

Ամռանն օրերը երկար են, Բեգիլ, - շնչաց լորդ Հենրին: - Եվ կրթող է, պատահի դու ավելի շուտ հագնես, քան Դորիանը: Որոտն էլ ցավալի լինի, բայց հանձարն ավելի հարատև է, լոտն գեղեցկությունը: Այդ պատճառով էլ մենք ձգտում ենք տնտեսականորեն զարգացնել մեր միտքը: Գոյության կատաղի սպառարտում մենք ուզում ենք ունենալ հաստատուն մի բան և լցնում ենք մեր գլուխը անպետքություններով, փաստերով, և կյանքում մեր տեղը հաստատելու դատարկ հույսով: Լավ կրթված, ամեն ինչից տեղյակ մարդ, ահա ժամանակակից խելավը: Իսկ այդպիսի կրթված մարդու ուղեղը ահավոր բան է, 'Իսկ նման է հնավաճառքի խանութի՝ լցված ամեն տեսակի փոշոտ հնույտներով, ուր ամեն ինչ գնահատված է արժեքից շուտ ավելի բարձր: Այո, Բեգիլ, ես այնուամենայնիվ կարծում եմ, որ տոռաֆինը դու կհագնես: Մի օր կնայես քո ընկերոջը, և նրա գեղեցկությունը քեզ կթվա պակաս ներդաշնակ, քեզ դուր չի գա նրա մաշկի գույնը կամ այլ բան: Քո հոգու խորքում դու դառնորեն կհանդիմանես նրան և ամենալուրջ ձևով կմտածես, որ նա ինչ-որ բանով մեղավոր է քո առաջ: 'Ոչորդ հանդիպման ժամանակ դու կլինես միանգամայն տոտն ու անտարբեր: Եվ կարելի է միայն շատ ավստոսալ քո մեջ կոտարված ապագա այդ փոփոխության համար: Քո սրտումն ար իսկական սիրավեպ է, արվեստի սիրավեպ, եթե կրթվի է, այդպես անվանել: Իսկ ապրելով իր կյանքի սիրավեպը՝ ավանդ, մարդը դառնում է այնքան պրոգայիկ:

Այդպես մի խոսիր, Հարրի: Քանի դեռ ես ապրում եմ, Դորիան Գրեյը ներգործելու է իմ կյանքի վրա: Դու չես կարող լինել հոտիլոտալ: Դու այնքան անկայուն ես:

Օ հ, սիրելի Բեգիլ, հենց այդ պատճառով էլ ես կարո-

ղանում են հասկանալ զգացմունքներդ: Ովքեր սիրո մեջ իսկ
վատարիմ են, նրանց հասանելի է միայն սիրո սովորական
էությունը: Իսկ սիրո ողբերգությունը ծանաչում են միայն
նրանք, ովքեր դավաճանում են:

Հանելուկ արծաթե նրբագեղ լուցկեմանը, լորդ Հենրին
զլանակ վառեց ինքնագոհ և բավարարված տեսքով. կարծես
մի նախադասությամբ ամփոփել էր կյանքի իմաստությունը:

Բազեղի կանաչափայլ տերևների մեջ թռչկոտում էին
խլվլացող ճնճղուկները: Խոտերի վրա, ինչպես սրընթաց ծի-
ծեռնակների երամներ, տարածվել էին երկնագույն ավալների
ստվերները: Ինչքան հաճելի էր պարտեզում: «Իսկ ինչ հմայիչ
ու հետաքրքիր են մարդկանց զգացմունքները, շատ ավելի
հետաքրքիր, քան իրենց մտքերը, - մտածում էր ինքն իրեն
լորդ Հենրին, - սեփական հոգին և ընկերների կրքերը. ահա
թե ինչն է կյանքում ամենագրավիչը»:

Նա լուռ հաճույքով հիշեց, որ երկար մնալով Բեզիլ Հոլ-
լուորդի մոտ՝ ինքը փրկվեց մորաքրոջ տանը տեղի ունենա-
լիք տաղտկալի նախաճաշից: Անկասկած, այնտեղ կհան-
դիպեր լորդ Գոլդբոդին, և ամբողջ խոսակցությունը
կընթանար օրինակելի ճաշարանների և օթևանների շուր-
ջը, որ անհրաժեշտ էր բացել աղքատների համար: Ընդ
որում՝ յուրաքանչյուր դասակարգ քարոզում է այն առաքի-
նությունները, որոնց ինքը վարժվելու անհրաժեշտություն
չունի: Հարուստները գովաբանում են խնայողությունը, իսկ
անգործները պերճախոս ճառեր են ասում աշխատանքի մեծ
նշանակության մասին: Որքան լավ է, որ ինքն այսօր ազատ-
վեց այդ բոլորից:

Մորաքրոջ մասին մտածելիս հանկարծ լորդ Հենրիի մեջ
մի հիշողություն արթնացավ: Նա շրջվեց դեպի Հոլլուորդը:

- Սիրելիս, հիշեցի:

Ինչ հիշեցիր, Հարրի:

Թե որսուղ եմ լսել Դորիան Գրեյի անունը:

Որտեղ,-թեթևակի մոայլվելով, հարցրեց Հոլլուորդը:

Այդպես բարկացած մի նայիր ինձ, Բեզիլ: Դա իմ մորա-
բույր լեդի Ագաթայի տանն էր: Նա պատմում էր, որ գտել է
մի շատ հաճելի երիտասարդ, և նա խոստացել է օգնել իրեն
Իսթ Լնդոն, երիտասարդի անունը Դորիան Գրեյ է: Պետք է
նշում, որ մորաբույրս ոչ մի խոսք չասաց նրա գեղեցկության
մասին: Կանայք, համենայն դեպս, առաքինի կանայք, չեն
գնահատում գեղեցկությունը: Նա միայն ասաց, որ Դորիանը
յուրջ երիտասարդ է, սքանչելի հոգու տեր, և ես անմիջապես
սկսեցի քննարկել ակնոցով մի անձնավորություն՝ ուղիղ մազե-
րով, դեմքը սարսափելի պեպենոտ և հսկայական ոտքերով:
Այնուհետև, ես այն ժամանակ չգիտեի, որ այդ Դորիանը քո բարե-
կամն է:

Եվ շատ ուրախ եմ, որ չգիտեիր, Հարրի:

Ինչո՞ւ:

Որովհետև չեմ ուզում, որ դուք ծանոթանաք:

Չեմ ուզում, որ ծանոթանանք:

Ո՛չ:

Միտեր Դորիան Գրեյն արվեստանոցում է, սլյւր-
հայտնվելով պարտեզում, ասաց սպասավորը:

Ահա, հիմա դու ուզած-չուզած արդեն կծանոթացնես,-
նկատելով լացականչեց լորդ Հենրին:

Նկատիչը շրջվեց դեպի սպասավորը, որ կանգնած էր
տրեյլի սպրերը կկոցած:

Միտեր Գրեյին խնդրեք, թող սպասի, Պարկեր, ես հենց
հիմա կգամ:

Ոպտավորը խոնարհվեց և գնաց: Նկարիչը նայեց լորդ
Հենրիին,

- Դորիան Գրեյն իմ ամենասիրելի բարեկամն է,- ասաց նա:- Նա պարզ և գեղեցիկ հոգի ունի, մորաքույրդ միանգամայն իրավացի է: Տեն, Հարրի, չփչացնես նրան: Չփորձես ազդեցություն գործել նրա վրա: Քո ազդեցությունը կործանարար կլինի նրա համար: Աշխարհը մեծ է, այնտեղ շատ հետաքրքիր մարդիկ կան: Մի խլիր ինձանից այն միակ մարդուն, որը ներշնչում է իմ արվեստին իր իսկ հմայքը: Նկարչի իմ ամբողջ ապագա կյանքը նրանից է կախված: Հիշիր, Հարրի: Ես քեզ վստահում եմ:

Նա խոսում էր շատ դանդաղ, և կարծես բառերը դուրս էին գալիս հակառակ իր կամքի:

- Ինչ հիմարություն,- ժպտալով ասաց լորդ Հենրին՝ թևանցուկ անելով նկարչին և գրեթե ուժով տարավ տուն:

ԳԼՈՒԽ II

Արվեստանոցում նրանք տեսան Դորիան Գրեյին: Նա նստած էր դաշնամուրի առաջ՝ թիկունքով դեպի դուռը, և թերթում էր Շումանի «Անտառային պատկերները»:

- Ինչ սքանչելի բաներ են: Ես ուզում եմ սովորել,- ասաց Գրեյը՝ առանց նրանք կողմը շրջվելու:- Մի քանի օրով ինձ տվեք, Բեգիլ:

- Դա կախված է նրանից, թե այսօր ինչպես կընտրդեք, Դորիան:

- Ա՛հ, ես հոգնել եմ արդեն, և ամենևին էլ բնական մեծությամբ դիմանկար չեմ ուզում,- կամակոր պատասխանեց պատանին՝ պտտվելով աթոռակի վրա: Հանկարծ հայացքը հանդիպեց լորդ Հենրիին և, մի պահ թեթև շառագունելով, արագ կանգնեց.

- Ներեցե՛ք, Բեգիլ, ես չգիտեի, որ դուք հյուր ունեք:

- Ծանոթացե՛ք, Դորիան, լորդ Հենրի Ուոթթոնն է՝ Օքսֆորդի իմ համալսարանական հին ընկերներից: Ես հենց նոր նրան ասում էի, թե Դուք ինչքան հիանալի եք բնորոգում, և ահա Դուք Ձեր փնթփնթոցով ամեն ինչ փչացրիք:

- Բայց ամենևին չփչացրիք Ձեզ հետ ծանոթանալու իմ հաճույքը, միստեր Գրեյ,- ասաց լորդ Հենրին՝ մոտենալով Դորիանին և ձեռքը մեկնելով նրան,- ես Ձեր մասին հաճախ եմ լսել իմ մորաքրոջից: Դուք նրա սիրելիներից եք և, վախճանում եմ, նաև գոհերից մեկը:

- Բայց հիմա ես լեդի Ագաթայի սև ցուցակի մեջ եմ ընկել,- պատասխանեց Դորիանը՝ զղջացողի զվարճալի տեսքով:- Ես խոստացել էի անցած երեքշաբթի նրա հետ Սլայթչեպելյան ակումբ գնալ և բոլորովին մոռացել էի: Մենք պետք է միասին դուրս ելնեինք, կարծեմ՝ նույնիսկ երեք դուրս: Հիմա չգիտեմ՝ նա ինչպես կընդունի ինձ: Վախճանում եմ

երևալ նրա աչքին:

- Ոչինչ, ես ձեզ կհաշտեցնեմ: Նա Ձեզ շատ է սիրում: Եվ այն, որ Դուք համերգին չեք մասնակցել, հազիվ թե այոյքան կարևոր լինի: Հանդիսատեսը, հավանաբար, կարծել է, թե դուևս է կատարվում, որովհետև մորաքույր Ագաթան դաշնամուր նվագելիս միանգամայն կարող է երկու հոգաչափ: աղմուկ հանել:

- Այդպիսի կարծիքը չափազանց վիրավորական է նրա համար և առանձնապես ոչ շույելի՝ ինձ,- ծիծաղելով պատասխանեց Դորիանը:

Լորդ Հենրին նայեց նրան: Այո՛, նա, իրոք, չափազանց գեղեցիկ էր՝ նրբագեղ գծագրված ալ շուրթեր, երկնագույն ցինջ աչքեր, ոսկեգանգուր մազեր: Նրա դեմքին ինչ-որ բան կար, որ անմիջապես վստահություն էր ներշնչում: Դա նրա պատանեկան անկեղծությունն էր և բուռն խանդավառությունը: Երևում էր, որ կյանքը ոչնչով դեռ չէր կեղտոտել նրա անբիծ հոգին: Իզուր չէր Բեզիլ Հոլլուորդը պաշտում նրան:

- Միթե պատշաճ է, որ Ձեզ նման կախարդանքով լի երիտասարդը բարեգործությամբ զբաղվի: Ո՛չ, բարեգործության համար Դուք չափազանց գեղեցիկ եք, միստեր Գրեյ,- ասաց լորդ Հենրին և, ընկղմվելով բազմոցի մեջ, բացեց ծխախոտատուփը:

Նկարիչն այդ ժամանակվա ընթացքում ներկերը խառնեց և պատրաստեց վրձինները: Նրա մոայլ դեմքին նկատվում էր խիստ անհանգստություն: Լսելով լորդ Հենրիի վերջին խոսքերը՝ արագ նայեց նրան և մի պահ տատանվելուց հետո ասաց.

- Հարրի, ես ուզում եմ այսօր ավարտել դիմանկարը: Ձեռն նշղանա, եթե խնդրեմ, որ դու գնաս:

Լորդ Հենրին ժպտալով նայեց Դորիանին:

- Գնանմ, միստեր Գրեյ:

- Օ՛, ո՛չ, լորդ Հենրի, խնդրում եմ, մի գնացեք: Այսօր Բե-
զիլը, ինչպես տեսնում եմ, կրկին անտրամադիր է, իսկ ես
տանել չեմ կարող, երբ նա մռայլ է: Բացի այդ, Դուք դեռ ինձ
չեք բացատրել, թե ինչո՞ւ ինձ չի կարելի բարեգործությամբ
գրազվել:

- Արժե՞, արդյոք, դա բացատրել, միստեր Գրեյ: Այդպիսի
ծանձրալի նյութի մասին մենք ստիպված կլինեինք լուրջ խո-
սակցություն վարել: Բայց, իհարկե, ես չեմ գնա, եթե Դուք
խնդրում եք մնալ: Դեմ չեմ լինի, Բեզիլ: Չէ՞ որ հաճախ ինքդ
էիր ասում, թե սիրում ես, երբ մեկը զբաղեցնում է քո բնորդին:

Հոլլոլորդը կծեց շրթունքը:

- Իհարկե, մնա, եթե Դորիանն ուզում է, նրա քմահաճույք-
ները օրենք են բոլորի համար, բացի իրենից:

Լորդ Հենրին վերցրեց գլխարկն ու ձեռնոցները:

- Չնայած քո համառումներին, Բեզիլ, ես, դժբախտաբար,
պետք է ձեզ լքեմ: Խոստացել եմ մի մարդու հետ հանդիպել
Օրլենսի ակումբում: Ցտեսություն, միստեր Գրեյ:

Համեցեք ինձ մոտ՝ Քերզոն-Սթրիթ, ժամը 5-ին գրեթե
միշտ տանն եմ: Բայց ավելի լավ է նախապես լուր տաք, թե
կյո՛ր կո ուզում գալ, շատ կափսոսամ, եթե հանկարծ ինձ տա-
նը՝ չգտնեք:

Բեզիլ.- բացականչեց Դորիան Գրեյը,- եթե լորդ Հեն-
րին գնա, ես նույնպես կգնամ: Դուք նկարելիս երբեք չեք
բացում Ձեր բերանը, իսկ ինձ համար սարսափելի ծանձրալի
է, անընդհատ կանգնել հարթակի վրա և աշխատել հաճելի
կրկնող Ինգլիշ նրան, որ չգնա:

Ո՞րո՞ւ, Հոնորի, Դորիանն ուրախ կլինի, և ինձ էլ շատ
կարգադատություններ,- ասաց Հոլլոլորդը՝ հայացքը չհեռացնե-
լով նկարից: Իբրեւ, աշխատելիս ես երբեք չեմ խոսում և ոչ էլ

լսում եմ, իսկ դա պետք է, որ խիստ ծանծրալի լինի իմ խնդր
քնորդների համար: Մնա՛, խնդրում եմ:

- Իսկ իմ ժամադրությունը Օրլեանում:

Նկարիչը քնծիծաղեց:

- Չեմ կարծում, թե դա այդքան կարևոր լինի: Նստի՛ր,
Հա՛րրի: Իսկ Դուք, Դորիան, կանգնեցե՛ք հարթակին և քիչ
շարժվե՛ք: Եվ առանձնապես ուշադրություն մի դարձրե՛ք լորդ
Հենրիի ասածներին: Նա բոլոր ընկերների վրա, բացի ինձա-
նից, թողնում է վատ ազդեցություն:

Ինչպես հույն երիտասարդ նահատակ՝ Դորիան Գրեյը
բարձրացավ հարթակին և դժգոհությամբ նայեց լորդ Հենրիին,
որն իրեն շատ էր դուր եկել: Որքա՛ն էր նա տարբերվում
Բեզիլից, նրանք շատ հետաքրքիր հակադրություն էին կազ-
մում: Եվ ինչպիսի հաճելի ծայր ունեւ: Մի քանի րոպե անց
Դորիանը հարցրեց.

- Լորդ Հենրի, Դուք իրո՞ք այդքան վատ ազդեցություն եք
թողնում ուրիշների վրա:

- Լավ ազդեցություն գոյություն չունի, միստնր Գրեյ,-
ազդեցությունն ինքնին արդեն բարոյագուրկ է, բարոյագուրկ՝
գիտական տեսակետից:

- Իսկ ինչո՞ւ:

- Որովհետև ազդել մեկի վրա, նշանակում է նրան տալ
իր սեփական հոգին: Նա ոչ իր մտքերով է խորհում և ոչ էլ
այրվում իր կրքերով: Նրա և առաքինությունները, և մեղքերը,
եթե ենթադրել, որ դրանք, իրոք, գոյություն ունեն, իրենը չեն,
այլ փոխ են առնված: Նա դառնում է ուրիշի երաժշտության
արձագանք, դերասան մի դերում, որն իր համար չի գրված:
Կյանքի նայատակը ինքնաարտահայտումն է: Դրսևորել իր իսկ
էությունն ամբողջապես. ահա թե ինչու ենք մենք ապրում...
Մինչդեռ մեր դարում մարդիկ վախենում են իրենք իրենցից:

Նյումիր մոռացել են, որ մեծագույն պարտքը դասեփական անձի հունդեպ ունեցած պարտքն է, ինքնըստինքյան հասկանալի է, նյումիր գլխասիրտ են, կերակրում են քաղցածներին, հազցնում տղրատներին: Բայց սեփական հոգիները սովալլուկ են և մկրկ: Խիզախությունը մենք կորցրել ենք: Գուցե դա երբեք էլ չկնիր ունեցել: Հասարակական կարծիքի հանդեպ ունեցած տարտափը բարոյականության հիմքն է, իսկ սարսափը աստծու տառափ դա այն սարսափն է, որի վրա հիմնվում է կրոնը: Ահա բն ինչն է իշխում մեզ վրա: Մինչդեռ...

Վորիան, բարի եղեք փոքր-ինչ աջ թեքել Ձեր գլուխը, - ասուց նկարիչը: Իր գործով խորասուզված՝ նա ոչինչ չէր լսել և պատահաբար ղեմքին այնպիսի արտահայտություն էր նկատել, որ մինչ այդ չէր տեսել երբեք:

ԼՐինչդեռ, - ցածր, երգեցիկ ձայնով շարունակեց լորդ Վեյրին, ձևորի յուրահատուկ սահուն շարժումով, որ նրան ընտրող էր դեռևս իթոնում սովորելիս, - ես կարծում եմ, որ եթե ամեն մարդ կարողանար ապրել լիարժեք կյանքով, ալոխերն՝ ազատություն տար յուրաքանչյուր զգացմունքին, ալոտուսայտություն՝ յուրաքանչյուր մտքին և իրագործեր յուրաքանչյուր երազանք, կարծում եմ, աշխարհը կապրեր ուրախությամբ այնպիսի հզոր պոռթկում, որ մենք կմոռանայինք միջոտույարի բոլոր հիվանդությունները և կվերադառնայինք հեղինակի իդեալներին, իսկ գուցե նաև ավելի գեղեցիկ, տվելի տրվերավոր մի բանի, քան այդ իդեալներն էին: Բայց մեզոտույց ամենաքաջն անգամ վախենում է ինքն իրենից: Ինքնուրուսմարումը, վայրի ժամանակների այդ ողբերգական վերապրուկը, երբ մարդիկ այլանդակում էին իրենք իրենց, մոտոլում է նաև մեր կյանքը: Եվ մենք պատժվում ենք մեր ոտը լոքոտոտիմանափակման համար: Յուրաքանչյուր ցանկություն, որ մենք փորձում ենք խեղդել, թափառում է մեր

հոգում և թունավորում մեզ: Մեղանչելով՝ մարդը ազատվում է, դեպի մեղքը տանող անհաղթահարելի ձգտումից, որովհետև մեղքի կատարումը մաքրման միջոց է: Դրանից հետո ոչինչ չի մնում՝ հաճույքների վերհիշումից կամ զղջման հեշտասիրությունից բացի: Գայթակղումից ազատվելու միակ միջոցը նրան գիջելն է: Փորձիր ընդդիմադրել, և հոգիդ կիյուծվի՝ ձգտելով արգելվածին. մի ձգտում, որը համարվում է անօրեն և հրեշավոր, քո իսկ ստեղծած ճիվաղային օրենքների կողմից: Ինչ-որ մեկն ասել է, որ աշխարհի ամենախոշոր իրադարձությունները կատարվում են ուղեղում: Իսկ եմ՝ կասեմ, որ ուղեղում և միայն ուղեղում են կատարվում նաև աշխարհի ամենամեծ մեղքերը: Չէ՞ որ Դուք նույնպես, միստեր Գրեյ, Ձեր վարդագույն պատանեկության տարիներին ունեցել եք կրքեր, որոնցից վախեցել եք, մտքեր, որոնցից սարսափել եք: Դուք ունեցել եք այնպիսի ցանկություններ, երազներ, որոնց մտաբերելիս անգամ շառագունել են Ձեր այտերը:

- Սպասե՛ք,- կմկմաց Դորիան Գրեյը,- սպասեցե՛ք, Դուք շփոթեցրիք ինձ: Չգիտեմ՝ ի՞նչ ասել... Ձեզ հետ կարելի է վիճել, բայց բառեր չեմ գտնում: Ոչինչ մի՛ ասեք: Թողեք մտածեմ... Ասենք, ավելի լավ է՝ չմտածել:

Մոտ տասը րոպե Դորիանը կանգնել էր անշարժ, բերանը կիսաբաց և աչքերի տարօրինակ փայլով: Նա աղոտ գիտակցում էր, որ իր մեջ արթնանում են ինչ-որ նոր մտքեր ու զգացմունքներ: Թվում էր, թե դրանք ծնվում են հենց իր ներսում: Նա զգում էր, որ այդ մի քանի խոսքերը, որ ասաց Բեզիլի ընկերը, ըստ երևույթին, հենց այնպես, ի միջի այլոց և դիտավորյալ պարադոքսով, դիպել էին նրա մեջ ինչ-որ գաղտնի մի լարի, որին մինչ այդ ոչ ոք չէր դիպել, և այժմ այդ լարը թրթռում էր, տատանվում ուժգին թռիչքներով:

Այդպես նրան մինչև հիմա հուզել էր միայն երաժշտությունը:

Այո, երամշտությունը հաճախ էր ալեկոծել նրա հոգին, բայց դու սննդդ ալեկոծում էր: Չէ՞ որ նա հոգու մեջ ոչ թե նոր ուլխաօրն էր ստեղծում, այլ՝ քառս: Իսկ այստեղ ընդամենը խոսքեր էին, սովորական խոսքեր, բայց որքան սարսափելի, սպառնալից, կենդանի, դաժան: Դրանցից չէր կարելի խուսափել: Ընդ միևնույն ժամանակ ինչպիսի նենգ թովչանք կար նրանց մեջ: Թվում էր, թե նրանք տեսանելի և շոշափելի ձև են տալիս անորոշ անուրջներին, ունեն իրենց սեփական երամշտությունը, որն ավելի քաղցր է, քան սիրո ջուրի կամ ջնարի կլնվածները: Միայն խոսքեր... բայց կամ արդյոք մի բան որ ավելի իրական է, քան խոսքերը...

Այո, վաղ պատանեկության տարիներին կային բաներ, որ ինքը՝ Դորիանը, չէր հասկանում: Այժմ նա հասկացավ: Կյանքը նրա համար հանկարծ փայլատակեց հրավառ գույներով: Նրան թվում էր, թե ինքը քայլում է փոթորկվող կրակի միջով: Եվ ինչո՞ւ նա մինչև հիմա չէր զգացել այդ:

Երբ Հենրին դիտում էր նրան՝ գողտրիկ ժպիտը շուրթերին՝ Նա գիտեր՝ երբ պետք է լռել: Դորիանը նրա մեջ բուռն նետադրություն էր առաջացրել, և նա հիմա ինքն էր զարմանում պատճառ վրա թողած իր խոսքերի հանկարծակի ազդեցությունից: Նա հիշեց մի գիրք, որ կարդացել էր տասնվեց տարեկան հասակում: Այդ գիրքը շատ գաղտնիքներ էր բացահայտել, որոնց մասին ինքը չգիտեր առաջ: Դորիանն էլ նույն տպավորության մեջ էր: Միթե հենց այնպես, օդում արձակած նետը դիպել էր նշանակետին: Որքան հմայիչ էր այդ պատմությունը...

Դուրսուրդը նկարում էր հափշտակված, հրաշալի, համարձակ վրձնահարվածներով, այնպիսի կատարյալ նրբագեղություն, որը գոնե արվեստի մեջ հզոր տաղանդի նշան է համարվում: Նա չէր զգում նույնիսկ լռությունը:

- Բեգիլ, ես հոգնեցի կանգնելուց,- բացականչեց հանկարծ Դորիան Գրեյը:- Ուզում եմ դուրս գալ պարտեզ, այստեղ շատ տոթ է:

- Օ՛, ներեցե՞ք ինձ, սիրելիս: Երբ ես նկարում եմ, մոռանում եմ ամեն ինչ: Բայց դուք երբեք այնքան լավ չէիք բնորոշել, որքան այսօր: Ոչ մի շարժում չարիք: Եվ ես որսացի այն արտահայտությունը, որ միշտ որոնում էի՝ կիսաբաց շուրթեր և պայծառ աչքեր: Ես չգիտեմ, թե Հարրին ինչ էր ասում, բայց, իհարկե, նա էր Ձեր դեմքին առաջացրել այդ զարմանալի արտահայտությունը: Հավանաբար, նա Ձեզ համար հաճույսխոսություններ էր անում: Բայց մի հավատացե՞ք նրա ոչ մի խոսքին:

- Ո՛չ, նա ամենևին ինձ չէր հաճույսխոսում: Այդ պատճառով էլ ես հակված չեմ հավատալու նրա ասածներին:

- Շատ լավ էլ հավատում եք,- ասաց լորդ Հենրին և նայեց նրան մտախոհ, թախծագործով աչքերով:- Ես էլ Ձեզ հետ պարտեզ կգնամ: Այստեղ անտանելի շոգ է: Բեգիլ, սառույցով ոլոն է խմելու բան պատվիրիր, թող բերեն, լավ կլինի՝ մորուսիսը:

- Սիրով, Հարրի: Զանգ տուր, թող Պարկերը գա, ես կաւում ինչ բերի: Ես մի քիչ ուշ կգամ պարտեզ: Ֆոնը դեռ պետք է, մշակվի: Բայց Դորիանին երկար մի՛ պահիր: Ոչ մի անգամ նկարելու այնպիսի ցանկություն չեմ ունեցել, ինչպես այսօր: Այս դիմանկարը իմ գլուխգործոցն է լինելու: Նույնիսկ այս վիճակում էլ կարծես հրաշք լինի:

Դուրս գալով պարտեզ՝ լորդ Հենրին Դորիանին գտավ ելուստանու թփի մոտ: Դեմքը թաղած գով ծաղիկների մեջ՝ նա ըմբռնված էր այդ բուրմունքը, ինչպես ծարավ մարդը՝ վինին: Լորդ Հենրին մոտեցավ նրան և ձեռքը դրեց ուսին:

- Այ, սա ճիշտ եք անում,- ասաց նա կամաց ձայնով,-

հոգին ամենից լավ բուժում են զգացումները, իսկ զգացումները՝ հոգին:

Պատանին ցնցվեց ու ետ ընկրկեց: Նա զլխաբաց էր, ճյուղերը դիպչում էին նրա անհնազանդ գանգուրներին և խառնում ոսկեթել մազերը: Աչքերը վախվորած էին ինչպես հանկարծապի արթնացրած մարդու խշքերը: Նուրբ ցծագրված քթանցքները ջղայնորեն թրթռում էին, դողում էին ալ շրթունքները ինչ-որ թաքուն հուզմունքից:

- Այո՛, շարունակեց լորդ Հենրին,- դա կյանքի մեծ գալտնիրներից մեկն է՝ հոգին բուժել զգացումներով, իսկ զգացումները՝ հոգով: Դուք զարմանալի մարդ եք, միստեր Գրեյ: Կիտև ավելին, քան Ձեզ թվում է, բայց ավելի քիչ, քան կուզեիր իմանալ:

Դորիան Գրեյը մոայլվեց և շրջեց հայացքը: Նա չէր կարող չիմանալ կողքին կանգնած բարձրահասակ, վայելչակազմ կրիստաաքողով: Լորդ Հենրիի ռոմանտիկ, թուխ դեմքը և հուզնած արտահայտությունը հետաքրքրություն էր առաջացնում: Նրա ցածր ու երգեցիկ ծայնի մեջ անսքող դյուրիչ ինչ որ բան կար: Նույնիսկ սառը, սպիտակ ու ծաղկի նման նուրբ ձևերն ունեին զարմանալի հմայք: Այդ ձևերի յուրմոմների մեջ, ինչպես և ծայնում, երաժշտություն կար, և թվում էր, թե այդ ձևերը իրենց սեփական լեզվով են խոսում: Դորիանն զգում էր, որ վախենում է այդ մարդուց, և սուսչում էր իր վախի համար: Ինչո՞ւ թողեց, որ օտարը սովորեցնի իրեն ճանաչել սեփական հոգին: Չէ՞ որ ինքը ձանուդ էր, Բեզիլին ամիսներ ի վեր, բայց այդ ընկերությունը նրա մեջ ոչինչ չէր փոխել: Եվ ահա իր կյանքի ճանապարհին հանկարծ հայտնվում է այդ անծանոթը և կարծես բացում կրտսի գաղտնիքներն իր առաջ: Բայց և այնպես՝ ինչ ուներ նա վախճալու: Ինքը ոչ դպրոցական էր և ոչ էլ՝ աղջիկ:

Պարզապես հիմարություն էր լորդ Հենրիից վախենալը:

- Եկեք նստենք որևէ տեղ ստվերում,- ասաց լորդ Հեն-
րին:- Ահա Պարկերն արդեն մեզ համար խմիչք է բերում:
Իսկ եթե Դուք մի քիչ էլ երկար մնաք արևի տակ, բոլորովին
լրիչացնեք Ձեր դեմքը, և Բեզիլն այլևս չի ուզի Ձեզ նկարել:
Դուք կսևանաք, և դա Ձեզ չի սազի:

- Ինչ նշանակություն ունի,- ծիծաղելով ասաց Դորիան
Պերեյը՝ նստելով պարտեզի ծայրի նստարանին:

- Ձեզ համար դա շատ կարևոր է, միստեր Գրեյ:

- Ինչո՞ւ:

- Որովհետև Ձեզ սրված է երիտասարդական հիանալի
վեղեցկություն, իսկ երիտասարդությունը միակ գանձն է, որ
ալքեն պահպանել:

- Ես այդ կարծիքին չեմ, լորդ Հենրի:

- Դե, իհարկե, այժմ, այդ կարծիքին չեք լինի: Սակայն մի
օր, երբ դուք ծերանաք և այլանդակվեք, երբ խոհերը կնճիռ-
նևրով ակոսեն Ձեր ճակատը, և կրքերն իրենց կործանիչ հրով
չորացնեն Ձեր շուրթերը, այն ժամանակ Դուք անողորմ պար-
զությամբ դա կհասկանաք: Այժմամենուրեք բոլորին գերում եք:
Իայց միթե միշտ այդպես կլինի: Դուք սքանչելի գեղեցկություն
ունեք, միստեր Գրեյ: Մի մոայլվեք, դա ճշմարտություն է: Իսկ
վեղեցկությունը հանճարի ձևերից մեկն է, նույնիսկ ավելի
լարժր, քան հանճարը, որովհետև բացատրման կարիք չունի:
Դա աշխարհի ամենամեծ երևույթներից է, ինչպես արևի
լույսը, գարունը կամ արծաթյա մահիկի արտացոլումը մութ
ջրերում, որ կոչվում է լուսին: Գեղեցկությունն անհերքելի
է: Նա իշխանության գերագույն իրավունքն ունի և արքա է
վարձնում նրանց, ովքեր օժտված են նրանով: Դուք ժպտում
եք: Օ՛հ, երբ կորցնեք Ձեր գեղեցկությունը, այլևս չեք ժպտա-
ումանք ասում են, թե գեղեցկությունը երկրային ունայնություն

է: Գուցե և այդպէս է: Բայց համենայն դեպս, այնքան ունայն չէ, ինչքան միտքը:

Ինձ համար գեղեցկությունը հրաշքների հրաշքն է: Միայն դատարկ, սահմանափակ մարդիկ չեն դատում արտաքինով: Աշխարհի իսկական գաղտնիքը տեսանելին է, ոչ թե անտեսանելին... Այո՛, միստեր Գրեյ, աստվածները Ձեր նկատմամբ բարի են եղել: Բայց ինչ տալիս են աստվածները, այնպէս էլ արագ խլում են: Իսկական, կատարյալ և լիարժեք կյանքով ապրելու քիչ տարիներ են Ձեզ մնացել: Երիտասարդությունն անցնում է, նրա հետ անցնում է նաև գեղեցկությունը, և հանկարծ Դուք պարզորոշ հասկանում եք, որ ձեզ համար այլևս հաղթանակներ չկան, կամ ստիպված բավարարվում եք միայն խղճով հաղթանակներով, և այն ժամանակ անցյալի հուշերը Ձեզ վշտացնում են ավելի, քան պարտությունները: Յուրաքանչյուր անցնող ամիս մոտեցնում է Ձեզ այդ ահավոր գալիքին: Ժամանակը խանդոտ է, նա պայքարում է այն շուշանների և վարդերի դեմ, որոնք աստվածները պարգևել են Ձեզ: Ձեր այտերը կդալկանան ու փոս կրնկնեն, Ձեր աչքերի հուրը կմարի: Դուք կսկսեք սարսափելի տանջվել... Օգտվեք, ուրեմն, Ձեր երիտասարդությունից, քանի դեռ ուշ չէ: Մի վատնե՛ք ապարդյուն Ձեր ոսկե օրերը՝ լսելով տաղտուկ բայրնալաշտներին, մի փորձեք ուղղել անուղղելին, Ձեր կյանքը մի սովեր տղետներին, գռեհիկներին և ոչնչություններին՝ հետևելով մեր դարի կեղծ գաղափարներին և հիվանդագին ձգտումներին: Ապրեք, ապրեք այն հրաշալի կյանքով, որը թաքնված է Ձեր մեջ: Ոչինչ բաց մի թողեք: Անվերջ փնտրեցե՛ք նոր զգայություններ: Ոչնչից մի վախեցե՛ք... Նոր Հեղոնիզմ, ահա, թե ինչ է պետք մեր սերնդին: Եվ Դուք կարող եք լինել նրա տեսանելի խորհրդանիշը: Ձեզ նման անձնավորության համար անկարելի ոչինչ չկա: Կարճ ժամանակով է աշխարհը

պատկանում Ձեզ... Ես առաջին իսկ հայացքից զգացի, որ 'Դուք Ձեզ դեռ չեք ճանաչում, չգիտեք, թե ինչ կարող էիք լինել: Շատ րան Ձեր մեջ ինձ գերեց, և ես զգացի, որ պետք է, օգնեմ, որպեսզի ինքներդ ճանաչեք Ձեզ: Մոռածեցի, թե ինչ ողբերգական բան կլինի, եթե Ձեր կյանքը ապարոյյուն կորչի: Ձե՛, որ ժամանակը շատ կարճ է, և Ձեր երիտասարդությունը՝ այնքան փութանցիկ: Դաշտի հասարակ ծաղիկները թառամում են, բայց և ծաղկում են կրկին: Ջրուղը եկող տարի հունիսին նորից կլինի ոսկեփայլ, ինչպես այժմ: Մեկ ամիս հետո մամրիչները նորից կփթթեն ալ աստղիկներով, և ամեն տարի նրանց տերևների կանաչ գիշերներում կփայլվեն ծիրանավառ նոր աստղեր: Սակայն մեր երիտասարդությունն այլևս չի վերադառնա, ուրախության զարկերակը, որ քսան տարեկանում բաբախում է այնպես ուժգին, հետզհետե թուլանում է, մարմինը տկարանում է, զգացմունքները՝ հանգչում: Մենք դառնում ենք նողկալի տիկնիկ - կամակատարներ՝ հետապնդված հիշողություններով այն կրքերի, որոնցից մենք չափազանց վախենում էինք, և այն գայթակղությունների, որոնց անձնատուր լինելու համարձակությունը չունեինք: Երիտասարդություն, երիտասարդություն: Ինչ կա արդյոք աշխարհում դրան հավասար:

Դորիան Գրեյը լսում էր մեծ հափշտակությամբ՝ աչքերը լայն բացած: Եղրևանու ճյուղը ընկավ նրա ձեռքից մանրախճի վրա: Մի թավամազ մեղու մոտեցավ, բզզաց շուրջը, հետո սկսեց մագլցել մի աստղաձև ծաղկագնդիկից մյուսը: 'Դորիանը հետևում էր մեղվին այնպիսի տարօրինակ հետաքրքրությամբ, ինչպիսի հետաքրքրությամբ մենք երբեմն՝ կենտրոնացնում ենք մեր ուշադրությունը աննշան դեպքերի վրա երբ սարսափելի է մտածել ամենակարևորի մասին, կամ կոր հուզում է մեզ դեռ անհասկանալի մի նոր զգացում, կամ

ինչ–որ սարսափելի միտք, որ հանկարծ պաշարում է ուղեղը և ստիպում հանձնվել։ Քիչ հետո մեղուն թռավ։ Դորիանը տեսնում էր, թե ինչպես է նա սուզվում պատատուկի խողովակածև ծաղկաբաժակի մեջ։ Ծաղիկը, կարծես, ցնցվեց և մեղմիկ տարուբերվեց ցողունի վրա։

Արվեստանոցի դռան մոտ անսպասելի հայտնվեց նկարիչը և եռանդուն շարժումներով նրանց ներս կանչեց։ Լորդ Հենրին և Դորիանը նայեցին միմյանց ու ժպտացին։

– Սպասում եմ,– կանչեց նա,– դե եկեք, նկարելու համար լույսը հիմա շատ հարմար է։ Խմել կարող եք նաև այստեղ։

Նրանք ելան և հանդարտ քայլեցին ծանապարհով։ Բաց կանաչ գույնի երկու թիթեռ թռան նրանց մոտով։ Պարտեզի ծայրին տանձենու վրա երգեց կենդեխը։

– Միստեր Գրեյ, իհարկե, դուք ուրախ եք ինձ հետ ծանոթանալու համար, ճիշտ է,– ասաց լորդ Հենրին՝ նայելով Դորիանին։

– Այո՛, հիմա ուրախ եմ։ Միայն չգիտեմ՝ արդյոք միշտ էլ ուրախ կլինեմ։

– Միշտ... Ինչ սարսափելի բառ է։ Ես ցնցվում եմ այդ բառը լսելիս։ Կանայք են շատ սիրում օգտագործել այդ բառը։ Նրանք փչացնում են ամեն սիրավեպ՝ ձգտելով, որ դա հարատևի։ Ընդ որում՝ «միշտը» անիմաստ բառ է։ Քմահաճույքի և հարատև սիրո միակ տարբերությունն այն է, որ քմահաճույքը փոքր–ինչ ավելի երկար է տևում։

Նրանք արդեն մտնում էին արվեստանոց։ Դորիան Գրեյը ձեռքը դրեց լորդ Հենրիի ուսին։

– Այդ դեպքում թող մեր ընկերությունը քմահաճույք լինի,– շնջաց նա՝ շառագունելով իր համարձակությունից։ Հետո բարձրացավ հարթակին և կանգնեց նախկին դիրքով։

Լորդ Հենրին, ծղոտե մեծ բազմոցում տեղավորվելով,

հետևում էր նրան: Թեթև վրձնահարվածներն ու վրձնի շրշյունը կտավի վրա միակ ձայներն էին, որ խախտում էին սենյակի լռությունը: Ժամանակ առ ժամանակ այդ ձայները նույնպես ընդհատվում էին, երբ Հոլլուորդը հեռանում էր նկարակալից՝ իր աշխատանքը հեռվից դիտելու համար: Դռնից ներս թափանցող արևի շեղ ճառագայթների մեջ խայթում էին ոսկեգույն փոշեհատիկներ: Վարդերի ուժեղ բուրմունքն էր կանգնած ամենուր:

Անցավ մոտ քառորդ ժամ: Հոլլուորդը դադարեց նկարել: Նա երկար նայում էր Դորիան Գրեյին, ապա՝ նկարի՜ն, հետո, մոայլվելով ու կծելով վրձնի կոթը, բացակասեց.

- Ավարտեցի,- բացականչեց նա և, խոնարհվելով, կտավի ձախ անկյունում կարմիր տառերով գրեց իր անունը: Լորդ Հենրին մոտեցավ և ուշադիր նայեց նկարին: Անկասկած, դա արվեստի հրաշալի մի գործ էր, նմանությունը նույնպես ապշեցուցիչ էր:

- Իմ սիրելի Բեգիլ, շնորհավորում եմ քեզ ամբողջ սրտով,- ասաց նա,- դա մեր օրերի ամենահիանալի դիմանկարն է: Լիտեցեք, միստեր Գրեյ, և ինքներդ դատեցեք:

Պատասխն կարծես ինչ-որ երազից սթափվեց:

- Իրո՞ք ավարտեցիք,- հարցրեց նա՝ իջնելով հարթակից:

- Այո՛: Լրիվ,- ասաց նկարիչը,- այսօր Դուք հիանալի բնոր-
յեցիք: Ես շատ շնորհակալ եմ Ձեզ:

- Դու ինձանից պետք է շնորհակալ լինես,- մեջ մտավ լորդ Հենրին,- ձիշտ չէ՞, միստեր Գրեյ:

Դորիանը, առանց պատասխանելու, ցրված տեսքով ան-
ցավ նկարակալի կողքով և ապա շրջվեց նկարի կողմը: Երբ
հայացքը հանդիպեց նկարին, նա ակամա քայլը ետ գցեց,
և հաճույքից շառագունեցին այտերը: Նրա աչքերն ուրա-
խությունից այնպես սկսեցին շողալ, կարծես առաջին անգամ

տեսավ ինքն իրեն. նա կանգնած էր անշարժ, մտասույզ և աղոտ գիտակցում էր, որ Հոլլուորդը խոսում է իր հետ, բայց չէր լսմբոնում լառերի իմաստը: Իր գեղեցկության գիտակցությունը հանկարծ նրա դեմ փայլեց, ինչպես հայտնություն: Մինչև հիմա ինքը այդ չէր նկատել, և Բեզիլ Հոլլուորդի հիացմունքը նրան թվում էր բարեկամական հուզիչ կուրության: Նա լսում էր նրա հաճոյախոսությունները, ծիծաղում նրանց վրա և մոռանում իսկույն: Այդ գովեստները ոչ մի տպավորություն չէին թողնում նրա վրա: Բայց ակա հայտնվեց լորդ Հենրին, ինչեցին երիտասարդությանը վերաբերող նրա հիացական հիմնը, և ահեղ նախազգուշացումը այն մասին, թե որքան է վաղանցիկ այդ գեղեցկությունը: Դա հուզել էր Դորիանին, և հիմա, երբ նա հայացքը սևեռել էր իր գեղեցկության արտացոլմանը, հանկարծ նրա դեմ ապշեցուցիչ պարզությամբ հառնեց այն գալիքը, որի մասին խոսում էր լորդ Հենրին: Այո, կգա մի ժամանակ, երբ նրա դեմքը կթառամի ու կպատվի կնճիռներով, աչքերը կխամրեն, կկորանա սլացիկ իրանը և կսկսի այլանդակվել, տարիները կտանեն շուրթերի ալ կարմիրը և մազերի ոսկին, կյանքը, ձևավորելով նրա հոգին, կսկսի քայքայել մարմինը: Եվ նա կլլառնա ահավոր տհաժ, խղճուկ և զարհուրելի:

Այդ մտքից սուր ցավը դանակի պես խոցեց Դորիանին, և յուրաքանչյուր ջիղը թրթռաց: Աչքերը մթնեցին՝ երկնագույնից օլառնալով մեղեսիկե և լցվեցին արցունքով: Նրան թվաց, թե սառցե ծանր մի ձեռք իջավ իր սրտին:

- Միթե նկարը Ձեզ դուր չի գալիս,- վերջապես բացականչեց Հոլլուորդը՝ փոքր-ինչ վիրավորված Դորիանի անմեկնելի լռությունից:

- Դե, իհարկե, դուր է գալիս,- պատասխանեց լորդ Հենրին Դորիանի փոխարեն,- իսկ ղում կարող էր դուր չգալ:

Պա ժամանակակից նկարչության գլուխգործոցներից է: Ես պատրաստ եմ վճարելու դրա դիմաց, ինչ ցանկանաս: Այս դիմանկարը ինձ պետք է պատկանա:

- Ես չեմ կարող վաճառել, Հարրի, դա իմը չէ:

- Իսկ ումն է:

- Իհարկե, Դորիանինը,- պատասխանեց նկարիչը,- ինչ երջանիկ մարդ է:

- Որքան վշտալի է,- շնջաց Դորիան Գրեյը՝ աչքերը սևեռած իր դիմանկարին,- որքան վշտալի... Ես կծերանամ, կդառնամ գարշելի մի այլանդակ, իսկ իմ դիմանկարը կմնա հավիտյան երիտասարդ: Նկարն այդ երբեք, երբեք չի ծերանա, ինչպես հունիսյան այս օրը... Ա՛խ, երանի լիներ ճիշտ հակառակը... Ես հավիտյան մնայի երիտասարդ, իսկ նկարը ծերանար... Դրա համար... դրա համար կտայի ամեն ինչ աշխարհում... կտայի հոգիս:

- Դժվար թե համաձայնես նման իրողության հետ, - ծիծաղելով բացականչեց լորդ Հենրին,- ծանր կլիներ այդ դեպքում նկարչի վիճակը:

- Այո, ես խիստ կառարկեի դրա դեմ, Հարրի,- ասաց Հոլլուորդը:

Դորիան Գրեյը շրջվեց և ակնդետ նայեց նրան:

- Չեմ կասկածում, Բեզիլ, Դուք Ձեր արվեստը սիրում եք ավելի, քան ընկերներին: Ես Ձեզ համար ավելի թանկ եմ, քան հնացած կանաչավուն բրոնզե արձանիկը: Ո՛չ, թերևս, այն ավելի թանկ է Ձեզ համար:

Զարմացած նկարիչը ակնապիշ նայում էր նրան: Զարմանալի էր, որ Դորիանն այդպես էր խոսում: Ինչ էր պատահել: Հավանաբար, նա խիստ բորբոքված էր, դեմքը շառագունել էր, այտերն այրվում էին:

- Այո, այո,- շարունակեց Դորիանը,- ես Ձեզ համար

ավելի քիչ արժեմ, քան Ձեր փղոսկրե Հերմեսը կամ արծաթե Ֆավնը: Դուք միշտ կսիրեք նրանց: Իսկ ինձ որքան ժամանակ պետք է սիրեք... թերևս, մինչև դեմքիս առաջին կնճռի հայտնվելը: Այժմ ես գիտեմ, երբ մարդ գրկվում է գեղեցկությունից, կորցնում է ամեն ինչ: Դա Ձեր նկարն ինձ ասաց: Լորդ Հենրին միանգամայն իրավացի է. միակ թանկ բանը երիտասարդությունն է: Երբ ես զգամ, որ ծերանում եմ, ինքնասպանություն կգործեմ:

Հոլլուորդը գունատված բռնեց նրա ձեռքը:

- Դորիան, Դորիան,- բացականչեց նա,- այդ ինչ եք ասում: Ես երբեք Ձեզ նման բարեկամ չեմ ունեցել և չեմ էլ ունենա: Միթե նախանձում եք անշունչ առարկաներին, չէ՞ որ դուք նրանցից գեղեցիկ եք:

- Ես նախանձում եմ ամեն ինչի, որի գեղեցկությունն անմահ է: Նախանձում եմ նույնիսկ իմ այս դիմանկարին: Ինչո՞ւ նա պետք է պահպանի այն, ինչ ինձ վիճակված է կորցնել: Յուրաքանչյուր անցնող ակնթարթ խլում է ինձանից ինչ-որ բան և տալիս նրան: Օ՛, եթե լինեիր ճիշտ հակառակը, եթե փոխվեր նկարը, իսկ ես մնայի միշտ նույնը, ինչպես հիմա: Ինչո՞ւ նկարեցիք: Կգա մի օր, երբ այդ նկարը կծաղրի ինձ, կծաղրի դաժանորեն:

Տաք արցունքները հորդեցին Դորիանի աչքերից: Նա ետ քաշեց ձեռքը Հոլլուորդի ափից և, ընկնելով բազմոցին, դեմքը թաղեց թարծերի մեջ:

- Դա քո արած բաներն են, Հարրի,- դառնորեն ասաց նկարիչը:

Լորդ Հենրին թոթվեց ուսերը:

- Սա իսկական Դորիան Գրեյն է, ահա թե ինչ:

- Ո՛չ:

- Իսկ եթե ոչ, ես ինչ մեղք ունեմ:

- Երբ ես խնդրեցի, դու պետք է գնայիր,- քրթմնջաց նա:

- Չէ՞ որ հենց քո խնդրանքով մնացի,- առարկեց լուրդ Հենրիին:

- Հարրի, ես չեմ ուզում կռվել իմ երկու ամենալավ բարեկամների հետ: Բայց Դուք երկուսդ էլ ստիպեցիք ինձ ատել իմ ամենալավ կտավը: Ես կոչնչացնեմ այն: Էհ, ի՞նչ կա որ, չէ՞ որ դա ընդամենը կտավ, և գույներ են միայն: Ես թույլ չեմ տա, որ նկարը մթագնի մեր երեքի կյանքը:

Դորիան Գրեյը բարձրացրեց ոսկեհեր գլուխը բարձից և գունատ, արցունքակալած աչքերով հետևեց նկարչին, որ մոտենում էր վարագույրով ծածկված բարձր լուսամուտի մոտ դրած աշխատասեղանին: Ինչ էր անում այնտեղ: Թափթփված թիթեղյա ներկանոթների և չորացած վրձինների մեջ նրա մատներն ինչ-որ բան էին փնտրում: Փնտրում էր նուրբ և ճկուն պողպատե սուր բերանով երկար շպատելը: Եվ վերջապես գտավ: Ուզում էր պատռել դիմանկարը:

Խեղդված հեծկլտանքով՝ պատանին ցատկեց բազմոցից, նետվեց դեպի Հոլլուորդը և, խլելով շպատելը, դեն նետեց:

- Չհամարձակվե՞ք, Բեճիլ, չհամարձակվե՞ք: Դա գրեթե մարդասպանություն է:

- Ա՛խ, վերջապես գնահատեցի՞ք իմ աշխատանքը, շատ ուրախ եմ, Դորիան,- սառնությամբ ասաց նկարիչը՝ զարմանքն անցնելուց հետո,- Երբեք չէի սպասում:

- Գնահատել: Ես սիրահարված եմ այդ նկարին, Բեճիլ: Կնարձես թե դա իմ մի մասը լինի:

- Հիանալի է: Հենց որ չորանաք, Ձեզ կծածկեն լաքով, կլյնեն շրջանակի մեջ և կուղարկեն տուն: Այն ժամանակ ինչ ուզեք, կարող եք անել ինքներդ ձեզ:

Անցնելով սենյակի միջով՝ Հոլլուորդը զանգը տվեց:

- Դուք, իհարկե, չե՞ք հրաժարվի թեյից, Դորիան: Իսկ դու,

Հարրի, թե՛ դեմ ես այդպիսի պարզ հաճույքներին:

- Ես պաշտում եմ պարզ հաճույքները,- ասաց Լորդ Հենրին: Դրանք լարդ բնավորությունների վերջին հանգրվաններն են: Դրամատիկական տեսարաններ սիրում եմ միայն բնահարթակի վրա: Որքան անհեթեթ մարդ եք երկուսդ էլ: Հետաքրքիր է՝ ո՞վ է մարդուն համարել ամենաբանական կենդանին: Դա ամենահապճեպ բնորոշումն է: Մարդն ամեն ինչ է, միայն թե ոչ բանական: Եվ ուրախ եմ, ի վերջո, որ այդպիսի է: Սակայն ես չեմ ուզում, որ դուք նկարի համար վիճեք: Ավելի լավ կլիներ, եթե այդ նկարը ինձ տայիր, Բեզիլ: Այո, հիմար տղան ամեննին էլ չի ցանկանում, իսկ ես այնքան եմ ուզում:

- Բեզիլ, եթե Դուք դիմանկարն ինձ չտաք, երբևէ Ձեզ չեմ ների,- բացականչեց Դորիան Գրեյը,- և ոչ մեկին թույլ չեմ տա, որ ինձ «հիմար տղա» անվանի:

- Ես արդեն ասացի, որ նկարը Ձեզ եմ նվիրում, Դորիան: Այդպես որոշել եմ դեռ նախքան նկարելն սկսելը:

Իսկ ինձանից մի՞ նեղացեք, միստեր Գրեյ,- ասաց լորդ Հենրին:- Դուք ինքներդ էլ գիտեք, որ բավական հիմար վարվեցիր: Եվ այնքան էլ Ձեզ համար տհաճ չէ, երբ Ձեզ հիմարություն են, որ Դուք դեռ երեխա եք:

Քեռ այսօր առավոտյան ինձ համար դա շատ տհաճ կլինի, բայց Հենրի:

Այս այսօր առավոտյան: Բայց այն ժամանակից մինչև հիմա դուք շատ ապրումներ ունեցաք:

Քեռը լավսեցին: Ներս մտավ սպասավորը՝ թեյի սկուտուլը ձեռքին և դրեց ծապոնական փոքրիկ սեղանի վրա: Լորդի գալուստների, պնակների չխկնկոց և հին, մեծ թեյնիկի խլիպիլիպը: Սպասավորի ետևից մի ծառա ներս բերեց ձն-նոսրակա երկու մեծ գնդաձև աման:

Դորիան Գրեյը մոտեցավ սեղանին և սկսեց թեյ լցնել։ Առանց շտապելու Բեգիլն ու լորդ Հենրին նույնպես մոտեցան և լուրջությամբ կալիարիչները, նայեցին, թե ինչ կա ամանների մեջ։

- Երկույան չգնանք թատրոն,- առաջարկեց լորդ Հենրին,-
կրնի, որևէ տեղ, հետաքրքիր ներկայացում է գնում։ Ժիշտ
է՝ մեկին խոստացել եմ իր հետ ճաշել Ուայթում, բայց նա
իմ հին ընկերն է, կարելի է նրան հեռագրել, որ հիվանդ եմ,
կամ ուրիշ կարևոր հանդիպում խանգարեց։ Թերևս, նրան
այդպիսի պատճառաբանությունը ավելի դուր գալիս է ան-
ուպասելի անկեղծությամբ։

- Օհ, ֆրանկ հագնել։ Ինչքան է ծանծաղի,- տրտնջաց
Հոլլուորդը,- տանել չեմ կարող այդ ֆրակները։

- Այո՛, ծուլորեն համաձայնեց լորդ Հենրին։- Ժամանա-
կակից կոստյումները սոսկալի բաներ են, մոայլ են, ճշող։
Մեր կյանքում ոչինչ չի մնացել գեղեցիկ, բացի արատից։

- Հարրի, այդպիսի բաներ մի խոսիր Դորիանի մոտ։

- Ո՛ր Դորիանի։ Այն, որ թեյ է լցնում մեզ համար, թե ուր
յիմանկարում է։

- Երկուսի մոտ էլ։

- Ես Ձեզ հետ մեծ ուրախությամբ թատրոն կգայի, լորդ
Հենրի,- ասաց պատանին։

- Հիանալի է։ Ուրեմն, գնում ենք։ Դու նույնպես կգաս,
Բեգիլ։

- Չեմ կարող, ազնիվ խոսք։ Շատ գործ ունեմ։

- Ուրեմն երկուսով կգնանք, միստեր Գրեյ, Դուք և ես։

- Օ՛, որքան ուրախ եմ։

Նկարիչը, շրթունքը կրծոտելով, գավաթը ձեռքին, մոտե-
ցավ նկարին։

- Իսկ ես կմնամ իսկական Դորիանի հետ,- տխուր ասաց

նա:

- Դա միթե իսկական Դորիանն է,- հարցրեց Դորիան Գրեյը՝ մոտենալով կտավին:- Միթե ես իսկապես այսպիսին եմ:

- Ճիշտ և ճիշտ նույնը:

- Ինչ հրաշալի է, Բեզիլ:

- Գոնե արտաքինով Դուք այդպիսին եք: Դիմանկարում այդպիսին էլ կմնաք,- հառաչեց Հոլլուորդը:- Իսկ դա քիչ բան չէ:

- Օ՛, ինչպես են մարդիկ կառչում հավատարմությունից,- բացականչեց լորդ Հենրիին: - Չէ՞ որ նույնիսկ սերն ամբողջովին կենսաբանական խնդիր է: Դա ոչնչով կախված չէ մեր կամից: Նրիտասարդները ցանկանում են հավատարիմ մնալ: չեն կարողանում, ծերերը փորձում են դավաճանել, բայց ի վիճակի չեն: Ուրիշ ոչինչ:

- Դորիան, այսօր թատրոն մի գնացեք,- ասաց Հոլլուորդը:- Ռուսներ ինձ մոտ ճաշելու:

Չեմ կարող, Բեզիլ:

Ինչո՞ւ:

Չի՞ որ խոստացա լորդ Հենրիին՝ գնալ նրա հետ:

Կարծում եք՝ նա Ձեզ ավելի քիչ կսիրի, եթե Ձեր խոստումը չկատարեք: Ինքը երբեք չի կատարում իր խոստումները: Շատ եմ խնդրում, մի գնացեք:

Դորիան Գրեյը, ծիծաղելով, տարուբերեց գլուխը:

Այսպե՜ս եմ:

Դուռնովին անվճռական նայեց լորդ Հենրիին, որը, թեյի սեղանի մոտ նստած, ժպիտը երեսին լսում էր նրանց խոսակցությունը:

Ի՛նչ, ես պետք է գնամ, Բեզիլ:

Դուր գլխե՞ք,- Հոլլուորդը մոտեցավ սեղանին և գավաթը դրեց սկոտեղի վրա,- արդեն ուշ է, դեռ պետք է հագնվեք,

ավելի լավ է ժամանակ չկորցնեք: Ցտեսություն, Հա՛րրի:
Ցտեսություն, Դո՛րիան: Շուտ եկեք ինձ մոտ, թեկուզ՝ վաղը:

- Անպայման:

- Չե՞ք մոռանա:

- Դե իհարկե՝ ոչ,- հավաստիացրեց Դորիանը:

- Հա, նաև... Հա՛րրի:

- Բնչ, Բե՛զիլ,

- Հիշեցե՛ք, թե ինչ ասացի այս առավոտ պարտեզում:

- Արդեն մոռացել եմ:

- Տես հա՛, քեզ վստահում եմ:

- Կուզե՛ի, որ ես ինքս ինձ վստահե՛ի,- ասաց լորդ Հենրին՝
ծլծաղելով,- գնանք, միստեր Գրեյ: Իմ կաբրիոլետը դրսում է:
Լ:ս կարող եմ Ձեզ տուն հասցնել: Ցտեսություն, Բե՛զիլ: Մենք
այսօր շատ հետաքրքիր անցկացրինք մեր օրը:

Երբ դուռը հյուրերի հետևից փակվեց, նկարիչը ծանրորեն
րնկավ բազմոցին: Նրա դեմքից երևում էր, թե ինչպես է
ուանջվում:

ԳԼՈՒԽ III

Հաջորդ օրը տասներկուսն անց կես լորդ Հենրին Քերզոն փողոցի վրա գտնվող իր տնից դուրս եկավ և գնաց Օլբենի՝ այցելելու իր մորեղբորը՝ լորդ Ֆերմորին: Մորեղբայրը բարեհոգի, բայց կոպիտ շարժումներով մի տարեց ամուրի էր, որին բարձրաշխարհիկ կյանքի շրջաններից դուրս գտնվող միջավայրերում եսասեր էին համարում, որովհետև մարդկանց առանձնապես որևէ օգուտ չէր տվել, իսկ բարձրաշխարհիկ շրջաններում մեծահոգի, առատաձեռն, քանի որ մեծ սիրով հյուրասիրում էր նրանց, ովքեր զվարճացնում էին իրեն: Լորդ Ֆերմորի հայրը եղել էր անգլիական դեսպան Մադրիդում, երբ Իզաբելլա թագուհին դեռ երիտասարդ էր, իսկ Պրինց դևո չկար էլ: Քմահաճ թուպեի ազդեցությամբ նա հեռացել էր դիվանագիտական ծառայությունից՝ զայրացած, որ իրեն չառաջարկեցին Փարիզում դեսպանի պաշտոն, թեև այդ դիրքի համար նրան լրիվ իրավունք էին տալիս իր ծագումը, թեթև ապրելակերպը, դիվանագիտական զնկույցների ընտիր լեզուն և դեպի հաճույքներն ունեցած անսահման կիրքը: Որդին, որն իր հոր քարտուղարն էր, հեռացավ նրա հետ, մի քայլ, որ այն ժամանակ շատերը համարեցին հիմարություն, իսկ մի քանի ամիս անց, ժառանգելով լորդի տիտղոս, լրջորեն սկսեց ուսումնասիրել արիստոկրատիայի մեծ արվեստը՝ անբանությունը: Նա Լոնդոնում ուներ երկու ընդարձակ տուն, բայց գերադասում էր ապրել ամուրուն հատուկ կահավորված բնակարանում՝ հաշվելով, որ հոգսն այդպես ավելի քիչ է, իսկ մեծ մասամբ նախաճաշում և ճաշում էր ակումբում: Լորդ Ֆերմորը որոշ ուշադրություն էր նվիրում կենտրոնական կոմսությունների՝ իր ածխահորերին՝ արդարացնելով այդ ինվանդագին հետաքրքրությունը նրանով, որ քարածուխ ունենալը հնարավորություն է տալիս նրան, ինչ-

ույն ջենտլմենի՝ փայտով տաքացնել բուխարին: Քաղաքա-
կուն համոզմունքով նա պահպանողական էր, միայն թե ոչ
այն ժամանակ, երբ իշխանության գլուխ էին անցնում պահ-
պանողականները: Այդ ժամանակ նա եռանդով հայհոյում էր
ույսիպանողականներին՝ անվանելով նրանց ռադիկալների
ուլազակախումբ: Նա հերոսաբար պայքարում էր իր սենեկա-
ուպասավորի դեմ, որը խիստ ճնշում էր իրեն և ի սարսափ իր
շուտ ազգականների՝ ինքն էլ իր հերթին էր դաժան վարվում
նրանց հետ: Նրան կարող էր ծնել միայն Անգլիան, մինչդեռ
ինքը դժգոհ էր Անգլիայից՝ և միշտ կրկնում էր, թե երկիրը
ուկայի կործանում է գնում: Նրա սկզբունքները հնացած էին,
բայց շատ բան կարելի էր ասել՝ ի պաշտպանություն նրա
նախապաշարմունքների:

Երբ լորդ Հենրին սենյակ մտավ, նրա քեռին նստած էր
ուրտորդական հաստ բաժկոնով, սիգարը բերանին և կարդում
է, թ «Թայմսը»՝ դժողո՛ւ փնթփնթալով թերթի վրա:

- Ա՛, Հարրի, - ասաց ծեր ջենտլմենը, - ինչն է քեզ այդպես
վաղ ոտքի հանել: Ես կարծում էի, թե Դուք երկուսից շուտ չեք
ուրթնանում, իսկ տնից դուրս եք գալիս հինգից հետո միայն:

- Քեռի՛ Ջորջ, ազգակցական բացառիկ զգացմունքները,
հսկատացնում եմ Ձեզ, ինձ բերին այստեղ: Ինձ մի բան է
հարկավոր:

- Փող, հավանաբար, - ասաց լորդ Ֆերմորը՝ թթու դեմ-
քով, - դե՛, նստիր, պատմիր, տեսնենք: Ժամանակակից երի-
ուսապրդությունը կարծում է, թե փողն ամեն ինչ է:

- Այո՛, - համաձայնեց լորդ Հենրին՝ ուղղելով մերակի ծա-
լիկը, - իսկ ծերանալով՝ համոզվում են այդ բանում: Բայց
ևս փող չեմ ուզում, քեռի՛ Ջորջ: Փողը նրանց է պետք, ով-
քեր պարտքը վճարելու սովորություն ունեն, իսկ ես երբեք
չեմ վճարում իմ պարտքատերերին: Ապառիկը ընտանիքի

կրտսեր որդու միակ կապիտալն է, և դրանով կարելի է հիանալի ապրել: Բացի դրանից, ես միշտ գործ եմ ունենում Դալլամուրի առևտրականների հետ, հետևաբար նրանք ինձ չեն անհանգստացնում: Իսկ իմ ուզածը Ձեզանից ոչ թե փող է, այլ տեղեկություն և, իհարկե, ոչ օգտակար, այլ անօգուտ տեղեկություն:

- Խնդրեմ, Հարրի, ես կարող եմ քեզ պատմել այն ամենը, ինչ դու կգտնես Անգլիայի ուզածդ Կապույտ գրքում՝ չնայած հիմա շատ անհեթեթություններ են այդ գրքերում գրվում: Այն ժամանակ երբ ես դիվանագետ էի, ամեն ինչ ավելի լավ էր: Իսկ այժմ, ասում են, դիվանագետներն ընդունվում են միայն քննությամբ: Էլ ի՞նչ կարելի է սպասել նրանցից: Քննությունը, սըր, զուտ բարբաջանք է՝ սկզբից մինչև վերջը: Եթե դու ջանտլմեն ես, ապա ինչ գիտես, լրիվ բավական է՝ եթե ջանտլմեն չես, իմացածդ քեզ կարող է միայն վնաս բերել:

- Միստեր Դորիան Գրեյը Կապույտ գրքում չի հիշատակվում, թե՛ Զորք.- անփույթ պատասխանեց լորդ Հենրին:

Միստեր Դորիան Գրեյը: Ո՞վ է նա.- հարցրեց լորդ Ֆերմորը, խոժոռելով թավ, սպիտակ հոնքերը:

Ահա հենց դա էլ եկել եմ իմանալու, քեո՞ղ Զորք, իհարկե, ես գիտեմ, թե ով է: Նա վերջին լորդ Քելսոյի թոռն է: Մոր տպագմուհի Դենրե է, լեդի Մարգարետ Դենրե: Պատմեք նրա մոր մասին: Ինչպիսին էր նա: Ո՞ւմ հետ էր ամուսնացել: Ժամանակին Դուք գիտեիք Լոնդոնի բոլոր բարձրաշխարհիկ մարդկանց, ուրեմն, գուցե և նրան էլ ճանաչեք: Ես նոր եմ ծանոթացել միստեր Գրեյի հետ, և նա ինձ շատ է հետաքրքրում:

Քեզապի թո՛ռ, արձագանքեց ծեր ջենտլմենը.- Քելսոյի թոռը ... Իհարկե... Ես շատ լավ գիտեի նրա մորը: Կարծեմ, նրան կնքելիս ներկա եմ եղել: Արտակարգ գեղեցկուհի էր Մարգարետ Դենրեն, և բոլոր սոլամարդիկ կատաղել էին, երբ

նուս փախա՞վ մի երիտասարդի հետ, որը գրայանում ոչ մի գրող չունէր, պարզապէս ոչնչություն էր, սըր, ինչ-որ հետևակային փոմարտակի ենթասայա էր, թե նման մի բան: Այո՛, այո՛, ամեն ինչ հիշում եմ, կարծես երեկ էր: Ամուսնությունից մի քանի ամիս անց խեղճը սպանվեց Սփայում՝ մենամարտի ժամանակ: Անախորժ լուրեր էին շրջում: Ասում էին, թե Քելսոն ուղարկել է բեզիացի մի սրիկա արկածախնդրի, որ հրապարակորեն վիրավորի նրա փեսային... Պատկերացնում եմ, սյր, կաշառել էր նրան, վճարել էր այս ստորին և մենամարտելիս սրախոխող էր արել երիտասարդին, ինչպես սովորվում են խրում շամփուրի վրա: Գործը կոծկեցին, բայց, սուսված վկա, դրանից հետո երկար ժամանակ Քելսոն ավումբում իր բիֆշտեքսը բոլորովին մենակ էր ուտում: Ինձ պատմեցին, որ նա իր աղջկան տուն բերեց, բայց աղջիկը դրանից հետո երբեք այլևս չխոսեց հոր հետ մինչև մահը: Այո՛, սուսխորժ պատմություն էր: Եվ շուտով, դեռ մեկ տարի էլ չանցած, աղջիկը մահացավ: Ուրեմն, ասում ես, նրանից մի տղա է մնացել: Ես մոռացել էի այդ մասին: Ինչպիսի տղա է: Կրն մորն է նման, պետք է որ գեղեցիկ լինի:

Այո՛, շատ գեղեցիկ է.- հաստատեց լորդ Հենրին:

- Համոզված եմ, որ հուսալի ձեռքերում է,- շարունակեց ծեր լորդը.- եթե Քելսոն նրան չի գրկել կտակից, նա պապից պետք է, որ մեծ գումար ժառանգած լինի: Մայրը նույնպես ուներ իր կարողությունը: Նա ժառանգել էր Սելբիի ողջ կալվածքը, նրա պապը ատում էր Քելսոյին համարելով նրան ժլատ: Նա խուլապես էլ շատ գծում էր: Հիշում եմ՝ մի անգամ նա եկավ Սուոյրիդ, երբ ես այնտեղ էի ապրում: Ասոված վկա, կարմրում էի նրա փոխարեն: Թագուհին մի թանի անգամ ինձ հարցրեց, թե ով է այդ անգլիացի ազնվականը, որ միշտ սակարկում է կուռասլանների հետ: Զվարճալի անեկտոդներ էին պատմում

այդ մասին: Մի ամբողջ ամիս ես չէի համարձակվում երևալ պալատում: Հույսով եմ, որ նա թողան նկատմամբ ավելի առատաձեռն գտնվեց, քան մադրիդցի կառապանները:

- Ես այդ չգիտեմ,- պատասխանեց լորդ Հենրին, - նա դեռ անչափահաս է: Բայց կարծում եմ, որ հարուստ կլինի: Սելբիի կավածքն իրեն է անցել, այդ նա ինքն է ինձ ասել... ուրեմն, սյսում եք. շատ գեղեցիկ էր մայրը:

- Մարգարետ Դներեն ամենաչքնաղ էակն էր, որին ես երբևէ տեսել եմ: Այդպես էլ ես չհասկացա, թե ինչը ստիպեց նրան այդ քայլին դիմել: Նա կարող էր ամուսնանալ ցանկացածի հետ: Քարլինգտոնը խելագարվում էր նրա համար, բայց դժբախտությունն այն էր, որ Մարգարետ Դներեն ռոմանտիկ էր: Նրանց տոհմում բոլոր կանայք էլ ռոմանտիկ էին: Աննշան էին միայն տղամարդիկ... կանայք, աստված վկա, սքանչելի էին: Քարլինգտոնը ծնկի էր գալիս Մարգարետի առաջ, դա Քարլինգտոնն ինքն է ինձ պատմել: Մինչդեռ Լոնդոնի բոլոր աղջիկներն այն ժամանակ սիրահարված էին նրան: Միայն Մարգարետն էր, որ ծիծաղում էր նրա վրա: Ի դեպ, հիմար ամուսնությունների մասին, այդ ինչ է բարբաջում հայրդ Դարթմուրի վերաբերյալ՝ իբր թե նա ուզում է ամուսնանալ ամերիկուհու հետ: Միթե անգլուհիները բավականաչափ լավը չեն:

Վեռլի Ջորջ, այժմ ընդունված է ամուսնանալ ամերիկուհիների հետ:

Ես անգլուհիների կողմնակից եմ և պատրաստ եմ գրագրով ամբողջ աշխարհի հետ,- ասաց լորդ Ֆերմորը- բռունցքը խփելով սեղանին:

Բոլորը հիմա ամերիկուհիներին են ձգտում:

Ես լսել եմ, որ նրանք երկար չեն դիմանում,- քրթմնջաց մորեղբայր:

- Նրկար վազարշավը ուժասպառ է անում նրանց, իսկ

ուրվելքներով կարճ ձիարշավում անգերազանցելի են: Չևս կսարծում, թե Դարթմուրի վերջը լավ լինի:

Իսկ ովքեր են նրա ծնողները.- փնթփնթաց ծեր լորդը,- կրտսեր, իհարկե, այդպիսիներն ունի:

Լորդ Հենրիին տարութերեց գլուխը:

Ամերիկացի աղջիկները նույնքան ճարպկորեն են թուրքնում իրենց ծնողներին, որքան անգլիացի կանայք՝ իրենց անցյալը.- ասաց նա՝ ոտքի ելնելով:

- Ինչպես երևում է, նրա հայրը խոզի միս արտահանող է:

- Հանուն Դարթմուրի կցանկանայի՝ այդպես լինելու, քեռի՛ Ջորջ: Ասում են՝ դա Ամերիկայում քաղաքականությունից հեռու ամենանեկամտալեր գործն է:

- Իսկ նրա ամերիկուիին գոնե լավիկն է:

Ինչպես ամերիկուիիների մեծամասնությունը, նա իրեն գիտեցկուհի է պատկերացնում: Դա նրանց հաջողության գլուխքն է:

- Ինչո՞ւ նրանք չեն մնում իրենց հայրենի երկրում: Չէ՞ որ միշտ հավատացնում են մեզ, որ կանանց համար այնտեղ դյուրյալ է:

- Այո՛, դրախտ է, հենց այդ պատճառով էլ Եվայի նման նյուսք ձգտում են դուրս գալ դրախտից,- ասաց լորդ Հենրի: - Դե՛, ցտեսություն, քեռի՛ Ջորջ: Ես պետք է գնամ, այլասիկա կուշանամ նախաճաշից: Ծնորհակալություն Դորիանի մասին տված տեղեկությունների համար: Ես միշտ սիրում եմ լիմ ուր ընկերների մասին ամեն ինչ իմանալ, իսկ հների մասին՝ ոչինչ:

- Այսօր որտե՞ղ ես նախաճաշում, Հարրի:

- Մորաքույր Ագաթայի մոտ: Ես ինքս եմ խնդրել նրան, ու հյուավիրել եմ նաև միևնույն Գրեյին: Նա մորաքույր Ագաթայի նույն հովանավորյալն է:

Հիմ, տես թե ինչ, Հարրի, ասա քո մորաքույր Ագաթային. որ տղևու չստիանգստացնի ինձ իր բարեգործական կոչերով: Այդին ձանձրացել եմ: Ինչ է, այդ բարի կինը կարծում է, թե ես բուրեղությունների համար չեք գրելուց բացի ուրիշ սոսկյա չունեմ:

Հառ լավ, քեռի՛ Ջորջ, կասեմ: Բայց իզուր է, որովհետև բուրեղությունը կորցնում են մարդասիրական բոլոր զգացումները: Դա նրանց բնորոշ առանձնահատկությունն է:

Ներ ջեմայմենը, հավանություն տալով, փնջացրեց և կանչեց տպաստիորին, որպեսզի հյուրին ուղեկցի:

Լորդ Հենրին ապակեպատ ցածրադիր վաճառասրահով դուրս եկավ Բերլինգթոն սթրիթ և քայլեց դեպի Բերկլեյի երապարակը:

Նա մտաբերում էր Դորիան Գրեյի ծնողների ողբերգությունը, որ լսել էր քեռուց: Նույնիսկ ընդհանուր գծերով արված սուր պատմությունը հուզում էր նրան իր արտասովորությամբ, գրեթե ժամանակակից ռոմանտիկայով: Սքանչելի մի աղջիկ, որը ումեն ինչ զուարեերել էր հանուն անսահման սիրո: Անչափ բերկրանքի մի քանի շաբաթներ՝ ընդհատված զագրելի ուճով: Լուռ տառապանքի ամիսներ, ապա տանջանքի մեջ ձուլած երկխա: Մայր, որ անցել է մահվան գիրկը, երեխա, որի ճակատագիրը որբությունն է, և անխիղճ ծերունու դաժան լույսառությունը: Այո, դա հետաքրքիր ֆոն է, որն ավելի վառ է կրանդավորում պատանու կերպարը, նրան դարձնում է ավելի կրուարյալ: Գեղեցիկի ետևում միշտ ինչ-որ ողբերգական բան է թաքնված: Որպեսզի փթթի ամենափոքր ծաղիկը, ալիսարևակա պետք է տանեն երկունքի տառապանքը...]

Այստեղ դյուրին էր Դորիանը անցած երեկո, երբ երկուսով միասին ճաշում էին ակումբում դեմ դիմաց: Նրա շփոթված հարսացրի և կիսարաց շուրթերի մեջ նկատվում էր հուզմունք

և վնեցրոտ ուրախություն: Իսկ կարմիր լուսամուկի ստվերում դեմքն ավելի վարդագույն էր, և փթթող հմայիչ գեղեցկությունն ավելի էր ընդգծվում: Նրա հետ խոսելը նման էր հազվագյուտ ջութակի վրա նվագելուն: Նա արձագանքում էր աղեղի ամեն մի հպմանը, յուրաքանչյուր թրթիռին...

Մի, որքան սքանչելի է ստուգել սեփական ազդեցության ուժը ուրիշի վրա: Ոչինչ չի կարող հավասարվել դրան: Լցնել սևփական հոգին ուրիշի մեջ, թողնել, որ այդ հոգին մի պահ լիակամ լինի: Լսել սեփական մտքերի արձագանքը, որն ուժեղանում է երիտասարդության և կրքի երաժշտությամբ: Հաղորդել ուրիշին քո խառնվածքը, ինչպես նուրբ հոգեկոսանք կամ յուրահատուկ բուրմունք: Դա իսկական բավականություն է, թերևս՝ ամենամեծ հաճույքը, որ մնացել է մարդուն մեր սահմանափակ և ճղճիմ դարում՝ իր գոեհիկ զգայական հաճույքներով և գոհիկ, հասարակ ձգտումներով: Բացի դրանից, այդ պատանին, որին երջանիկ մի դիպվածով նա հանդիպել էր Բեգիլի արվեստանոցում, հիանալի տիպ էր... կամ, համենայն դեպս, նրանից կարելի է հրաշալի բան ուսուցնել, նրա մեջ ամեն ինչ կա՝ թովչանք, պատանեկության ձյունաթույր մաքրություն և գեղեցկություն, այնպիսի գեղեցկություն, ինչպիսին հին հույներն են քանդակել մարմարների վրա: Նրանից կարելի է կերտել ամեն ինչ՝ Տիտան և կամ... յուրաքանչյուր: Որքան ցավալի է, որ այդպիսի գեղեցկությունը յուրաքանչյուրով է ոչնչացման:

Իսկ Բեգիլը: Հոգեբանական տեսակետից որքան հետաքրքիր էր նրա ասածը: Նոր ձև նկարչության մեջ, իրականության նոր ընկալում, որն անսպասելիորեն հայտնվել էր, շնորհիվ մի մարդու ներկայության, որի մտքով դա չի եղել... Բնության հոգին, որը բնակվում էր մթին անտառներում, և մինչև այդ անտեսանելի լուռ թափառում էր

բաց դաշտերի մեջ, հանկարծ, ինչպես Դրիադան, հայտնվեց նկարչին՝ առանց որևէ սարսափի, քանի որ նկարչի հոգում, որ վաղուց էր փնտրում հոգին բնության, արբնացել էր այն ոգեշնչված խորաթափանցությունը, որի հիշոցով բացվում են հրաշալի գաղտնիքները և պարզ ձևերը, իրերի կերպարանքը, երբ ձեռք բերեցին բարձր կատարելություն և ինչ-որ խորհրդանշական իմաստ՝ կարծես նկարչին ներկայացնելով մի այլ, ավելի կատարյալ ձև, որ աղոտ երազանքից դարձավ իրականություն... Որքան արտասովոր էր այս ամենը:

Նման բան եղել է նաև անցյալ դարերում: Պլատոնը, որի համար մտածողությունը արվեստ էր, առաջինը խորհեց այդ հրաշքի մասին: Իսկ Բուոնարոտտին՝ Միլթեն նա չէր, որ դա արտահայտեց իր սոնետների շարքում, որոնք կերտված էին գունավոր մարմարի մեջ: Բայց մեր դարում դա զարմանալի է...

Եվ լորդ Հենրին որոշեց Դորիանի համար դառնալ այն, ինչ Դորիանը, ինքն այդ չիմանալով, դարձավ նրա սքանչելի դիմանկարը ստեղծող նկարչի համար: Նա կփորձի նվաճել Դորիանին, ասեսք՝ նա գրեթե կիսով չափ, հասել է դրան, և հիանալի պատանու հոգին կպատկանի իրեն, որքան շոայլորեն է ճակատագիրը շնորհներով օժտել Միրո և Մահվան այդ մանկանր:

Լորդ Հենրին հանկարծ կանգ առավ և հայացքը գցեց հարևան շենքերի վրա: Տեսնելով, որ անցել ու բավականին ինտացել է մորաքրոջ տնից, նա, ծիծաղելով ինքն իր վրա, ետ վերադարձավ: Երբ նա մտավ կիսամութ նախասենյակը, ծառայապետը նրան զեկուցեց, որ բոլորն արդեն ճաշասենյակում են: Լորդ Հենրին սպասավորներից մեկին տվեց գլխարկն ու ձեռնափայտը և ներս մտավ:

- Ինչպես միշտ, դու ուշանում ես, Հարրի,- բացականչեց

1 Միքելանջելո - Բուոնարոտտի:

մութաբույրը՝ հանդիմանությամբ տարուբերելով գլուխը:

Լորդ Հենրին ներողություն խնդրեց՝ հենց նույն րոպեին մի պատճառ հորինելով և, նստելով մորաքրոջ կողքի սուգատ աթոռին, հայացքը սահեցրեց հյուրերի վրայով: Սեղանի մյուս ծայրից Դորիանն ամոթխածաբար գլուխ տվեց՝ շառագունելով հաճույքից: Նրա դիմաց նստած էր բոլորի կողմից սիրված դքսուհի Հարլին՝ վերին աստիճանի հեզահամբույր, ուրախ բնավորության տեր և ճաշատարապետական այն համաչափությամբ, որ ժամանակակից պատմաբանները կոչում են գիրություն, (երբ խոսքը դքսուհիներին չի վերաբերում): Դքսուհու աջ կողքին նստած էր սըր Թոմաս Բերդոնը, որը պառլամենտի ռադիկալ անդամ էր: Հասարակական կյանքում նա իր ղեկավարի հավատարիմ կողմնակիցն էր, անձնական կյանքում՝ լավ խոհանույցի՝ հետևելով այն հայտնի և իմաստուն կանոնին, որն ասում է. «Մտածիր լիբերալների հետ, բայց ճաշիր պահպանողականների հետ»: Դքսուհու ձախ կողմը տեղ էր գրավել միստեր Էրսքինը՝ Թրեդլիից՝ հասակն առած մի ջենտլմեն, որը բավականին հաճելի էր և քաղաքավարի, բայց մի վատ սովորություն ուներ՝ հասարակության մեջ միշտ լռում էր, թանի որ, ինչպես մի անգամ բացատրել էր լեդի Ագաթային, ովտ մինչև երեսուն տարեկան հասակը իր ասելիքը ասել վերջացրել էր:

Սեղանի մոտ լորդ Հենրիի հարևանուհին միսսիս Վանդլին էր՝ նրա մորաքրոջ ամենահին ընկերուհիներից մեկը, որը կատարյալ մի սուրբ կին էր, բայց հագնված այնքան անճաշակ և ճշան, որ կարծես գարշելի և անփույթ կազմով սուրճագիրք լիներ: Բարեբախտաբար, միսսիս Վանդլերի կողքին տեղավորված էր լորդ Ֆաուդելը՝ մեծ խելքի տեր, բայց միջին կարողություններով, միջին տարիքի մարդ, ուր

գրոշ էր և ծանծրալի, ինչպես համայնքների պալատ ներկայացրած միսիստրի հաշվետվությունը: Միսսիս Վանդելերի և նրա միջև զրույցն ընթանում էր այնպիսի լրջությամբ, ինչպիսի լրջությամբ, հենց լորդ Հենրիի խոսքերով ասած, աններելի մեղք են գործում բոլոր առաքինի մարդիկ, որից և ոչ մեկը խուսափել ոչ մի կերպ չի կարողանում:

- Մենք խոսում ենք խեղճ Դարթմուրի մասին, լորդ Հենրի,- սեղանի մյուս ծայրից բարձրաձայն ասաց դքսուհին՝ գլխի հաճելի ողջույնով,- ինչ եք կարծում, նա իսկապես կամուսնանա այդ հմայիչ ամերիկուհու հետ:

- Այո, դքսուհի: Կարծեմ, ամերիկուհին որոշել է առաջարկություն անել Բարթմուրին:

- Ինչ սարսափելի բան է,- բացականչեց լեդի Ագաթան:- Իսկապես, հարկավոր է խանգարել:

- Ամենահավաստի աղբյուրներից լսել եմ, որ նրա հայրը Ամերիկայում զբաղվում է արդուզարդի կամ ինչ-որ մի նման խղճուկ ապրանքի առևտրով,- արհամարհական տոնով հայտարարեց սըր Թոմաս Բերդոնը:

- Իսկ իմ քեռին պնդում է, թե խոզի մսի առևտրով, սըր Թոմաս:

- Խղճուկ ապրանք, որո՞նք են ամերիկյան խղճուկ ապրանքները,- զարմացած հետաքրքրվեց դքսուհին՝ բարձրացնելով լիքը ձեռքերը:

- Ամերիկյան վեպերը,- բացատրեց լորդ Հենրին, լորի միս վերցնելով:

Դքսուհին մտքի մեջ ընկավ:

- Նյուա վրա ուշադրություն մի՛ դարձրեք, սիրելիս,- շնչաց լեդի Ագաթան,- նա երբեք լուրջ չի խոսում:

- Երբ Ամերիկյան հայտնագործվեց...- սկսեց ռադիկալը, և իսկույն հետնեցին մի քանի ծանծրալի տեղեկություններ:

Ինչպես բոլոր հոռետորները, որ ջանում են սպառնալ նյութը, նաև սպառնեց ունկնդիրի համբերությունը: Դքսուհին բառաչեց և օլտվեց ուրիշներին ընդհատելու իր իրավունքից:

- Երանի չհայտնագործվե՛ր այդ Ամերիկան,- բացականչեց նա:- Ձե՛ որ ամերկուհիները խլում են մեր աղջիկներից բոլոր փեսացուներին: Դա խայտառակություն է:

- Ես, թերևս, կասեի, որ Ամերիկան բոլորովին էլ չի հայտնագործված,- ասաց միստեր Էրսքինը:- Ամերիկան նոր է, միայն հայտնաբերվում:

- Օ՛, ես տեսել եմ Ամերիկայի ներկայացուցիչ կանանց,- ասորոշ եղանակով արձագանքեց դքսուհին,- և նկատե՛ք է խոստովանեմ՝ նյանցից շատերը անսահման լավն են և հազնվում են հիանալի: Նրանք բոլորն իրենց զգեստներն ու արդուզարդերը պատվիրում են Փարիզում: Ես, յլլո՛քախաաբար, հնարավորություն չունեմ այդ անելու:

- Ասացվածք կա, թե լավ ամերիկացիները մահից հետո ուղևորվում են Փարիզ,- քթի տակ ծիծաղելով՝ ասաց սըր Թոմասը, որը մաշված սրախոսությունների մեծ պաշար ուներ:

- Մի՞թե: Իսկ ո՛ր են գնում վատ ամերիկացիները մահից հետո,- հետաքրքրվեց դքսուհին:

- Ամերիկա,- քրթմնջաց լորդ Հենրին:

Սըր Թոմասը կուտակեց հոնքերը:

- Վախենում եմ, թե Ձեր զարմիկը նախապես վատ է տրամադրված այդ մեծ երկրի նկատմամբ,- ասաց նա լեդի Լգաթաքին,- ես ճանապարհորդել եմ ամբողջ Ամերիկայում, ոլլրեկսարները ինձ միշտ տրամադրում էին հատուկ վագոն, նյուանք չափազանց սիրալիր են, հավատացնում եմ Ձեզ՛, ուղևորությունն Ամերիկա ունի կրթական մեծ նշանակություն:

- Բայց մի՞թե իրոք կրթված մարդ լինելու համար պետք

է, անպայման տեսնել Չիկագոն,- առարկելով՝ հարցրեց միստեր Էրսքինը:- Ես այդքան ուժ չունեմ նման ուղևորություն կատարելու:

Սըր Թոմասը թափահարեց ձեռքը:

- Միստեր Էրսքինը ամբողջ աշխարհը կենտրոնացրել է իր գրադարակներում: Մենք՝ գործունյա մարդիկս, սիրում ենք աչքով տեսնել ամեն ինչ և ոչ թե կարդալ: Ամերիկացիները առողջ բանականությամբ օժտված շատ հետաքրքիր ժողովուրդ են: Ես դա համարում եմ նրանց բնորոշ առանձնահատկությունը: Այո՛, միստեր Էրսքին, նրանք ողջամիտ մարդիկ են: Հավատացնում եմ ձեզ, որ ամերիկացին երբեք հիմարություն չի անում:

- Ինչպիսի՛ սարսափ,- գոռաց լորդ Հենրին,- ես դեռևս կարող եմ հաշտվել կոպիտ ուժի հետ, բայց կոպիտ և բութ դատողությունը անտանելի է միանգամայն: Այն օգտագործվում է անազնիվ ձևով, դա նշանակում է դավաճանել բանականությանը:

- Ես Ձեզ չեմ հասկանում,- կարմրատակելով՝ ասաց սըր Թոմասը:

- Իսկ ես Ձեզ հասկանում եմ, լորդ Հենրի,- ժպտալով՝ քրթմնջաց միստեր Էրսքինը:

- Պարադոքսներն ունեն իրենց հրապույրը, սակայն...,- սկսեց դքսուհին:

- Դա միթե պարադոքս էր,- հարցրեց միստեր Էրսքինը,- իսկ ես չհակառակեցի... Ասենք, գուցե և Դուք ճիշտ եք: Բայց հետո ի՞նչ, կյանքի ճշմարտությունները բացահայտվում են պարադոքսների միջոցով: Իրականությունն ստուգելու համար պետք է տեսնել, թե ինչպես է նա հավասարակշռվում պարանի վրա: Եվ տեսնելուց հետո միայն, թե ճշմարտությունն ինչպիսի ակրուրատիկ համարներ է կատարում, կարելի է

Վիշտ դատել նրա մասին:

- Աստված իմ,- ասաց լեդի Ագաթան,- տղամարդիկ ինչքան
ևն սիրում վիճել: Ոչ մի կերպ չեմ հասկանում, թե ինչի մասին
կը խոսում: Իսկ քեզ վրա, Հարրի, սաստիկ բարկացած եմ:
Ինչո՞ւ ես մեր սիրելի միստեր Գրեյին ետ պահում ինձ հետ
Իսթ-Էնդում աշխատելու մտադրությունից: Հասկացիր, նա
կարող է մեզ մեծ ծառայության մատուցել, նրա խաղը դուր
կլա բոլորին:

- Իսկ ես ուզում եմ, որ նա խաղա ինձ համար,- ժպտալով՝
ասարկեց լորդ Հենրին և, նայելով Դորիանին, որսպես նրա
ուլատասխան ուրախ հայացքը:

- Բայց Ուայթչեյլում այնքան մարդկային վիշտ կա,- շա-
լունակեց լեդի Ագաթան:

- Ես կարեկցում եմ ամեն ինչի, բացի մարդկային վշտից,-
ասաց լորդ Հենրին՝ թոթովելով ուսերը:- Վշտից կարեկցել ես
չեմ կարող: Դա սաստիկ տգեղ է, սաստիկ ահավոր և սաս-
տիկ ճնշող: Վշտի նկատմամբ ընդհանուր կարեկցանքի մեջ
ինչ-որ սարսափնլի հիվանդագին բան կա: Կարեկցանքը
պետք է լինի գույնի, գեղեցկության, կյանքի ուրախության
նկատմամբ... Եվ որքան հնարավոր է, պետք է քիչ խոսվի
կյանքի ցավերի մասին:

- Բայց Իսթ-Էնդի խնդիրը շատ կարևոր է,- լրջորեն նկա-
տեց սըր Թոմասը՝ տարուբերելով գլուխը:

- Անկասկած,- համաձայնեց երիտասարդ լորդը:- Չէ
որ ստրկության հարցն է, և մենք փորձում ենք վճռել դա
ստրուկներին զվարճացնելով:

Քաղաքագետը խուզարկու հայացքով նայեց նրան:

- Իսկ փոխարենը ի՞նչ կառաջարկեիք,- հարցրեց նա:

Լորդ Հենրին ծիծաղեց:

- Անգլիայում ես ոչինչ չեի ցանկանա փոխել, եղանակից

բացի.- պատասխանեց նա,- և միանգամայն բավականանում եմ վիլիխովայական խորհրդածություններով: Բայց, քսնի որ տասնիններորդ դարը սնանկացել է կարեկցանքի գերածախսից, ես կառաջարկեի դիմել գիտությանը, որ մեզ սովորեցնի ճշմարտության ուղին: Զգացմունքները լավ են նրանով, որ շեղում են մեզ այդ ուղուց, իսկ գիտությունը՝ նրանով, որ չի ճանաչում ոչ մի զգացմունք:

- Բայց մեզ վրա դրված են այնպիսի ծանր պարտականություններ,- երկչոտությամբ միջամտեց միսսիս Վանդերլը:

- Սարսափելի ծանր,- արծազանքեց լեդի Ագաթան:

Լորդ Հենրին նայեց միստեր Էրսքինին:

- Մարդկությունն իր դերը չափազանցնում է: Դա նրա նախածին մեղքն է: Եթե քարանձավաբնակները կարողանային ծիծաղել, պատմությունն այլ ընթացք կունենար:

- Դուք ինձ շատ մխիթարեցիք,- երգեցիկ ձայնով ասաց դքսուհին,- ամեն անգամ, երբ այցելում եմ Ձեր սիրելի մորաքրոջը, միշտ մեղավոր եմ զգում, որ նրբեր չեմ հետաքրքրվել Իսթ-Էնդով: Այժմ ես կարող եմ նայել նրա աչքյուն առանց կարմրելու:

- Բայց շիկնելը կանանց շատ է սագում, դքսուհի,- նկատեց լորդ Հենրին:

- Միայն երիտասարդ ժամանակ,- առարկեց նա,- իսկ երբ կարմրում է այնպիսի ծեր կինը, ինչպիսին ես եմ, դա արդեն վատ նշան է: Այս, լորդ Հենրի, գուցե դուք ինձ խորհուրդ տայիք՝ ինչպես երիտասարդանալ կրկին:

Լորդ Հենրին մի պահ մտածեց:

- Կարո՞ղ եք, դքսուհի, հիշել որևէ մեծ սխալ, որ գործել եք ձեր երիտասարդ տարիներին,- հարցրեց նա:

- Ավա՛րդ, շա՛տ,- պատասխանեց նա:

- Այն դեպքում կրկնե՞ք բոլորը,- լրջորեն ասաց լորդը,-

Երկուստարդությունը վերադարձնելու համար պետք է միայն կյանքի բոլոր խելահեղությունները:

Հոյակապ տեսություն է,- բացականչեց Դքսուհին,-
սուսապաղ կփորձեմ:

Վտանգավոր տեսություն է,- լսվեց սըր Թոմասի ամուր
սկզբած շրթերից:

Լեդի Ագաթան դժգոհ տարուբերեց գլուխը, բայց չկարո-
ւույթով զսպել ծիծաղը: Միստեր Էրսքինը լուռ լսում էր:

Այո,- շարունակեց լորդ Հենրին,- դա կյանքի ամենա-
մեծ վաղտնիքներից մեկն է: Մեր օրերում մարդկանց մեծա-
մասնությունը մեռնում է ստրկական խելամտության սողա-
լույթ ձևից՝ չափազանց ուշ ըմբռնելով, որ միակ բանը, որի
համար երբեք մարդ չպետք է զղջա, դա մեր սխալներն ու
ուղիղություններն են:

Մեղանի շուրջը բոլորը քրքջացին: Իսկ լորդ Հենրին սկսեց
բուսական խաղալ այդ մտքի հետ. վեր ու վար նետեց օդում,
կեղծարանափոխեց, թողեց որ խոյս տա իրենից. ապա կրկին
բռնեց: Ջարդարեց՝ Երևակայության ծիծառնանման ցլոթնելով
և թևավորեց պարադոքսներով: Այդ գովերգը խելահեղորեն
տալանեց դեպի փիլիսոփայության բարձունքները, իսկ փի-
լիսոփայությունն ինքը դարձավ երիտասարդ և հրապուրվեց
հուճույքի խենթ երաժշտությամբ: Հագցրեց նրան գինուոված
փրկատ, գլխին դրեց բաղեղի պսակ, և ինչպես Բաքոսի
յուրուհի սկսեց պարել կյանքի բլուրների վրա՝ ծաղրելով
դանդաղաշարժ Միլենին ողջախոհության համար: Փաստերը
կուս առաջ մի կողմ էին քաշվում, ինչպես անտառային վա-
խույթած ոգիներ: Նրա ճերմակ ոտքերը հենված էին հնձանի,
հսկայական քարին, որի վրա նստած էր Օմարը, և հանկարծ
խաղողի թշնամուկ հյութը սկսեց եռալ՝ բարձրանալով չինչև
մկրկ ոտքերը, ալ շիթերի կարմիր փրփուրը ալիք առ ալիք

հուսեց մեծ գուռի սև, թեք պատերով:

Դա յուրօրինակ հանպատրաստի ստեղծագործություն էր: Լորդ Հենրին զգում էր, որ Դորիան Գրեյը հայացքը չի կտրում իրենից, և այն գիտակցությունը, որ ունկնդիրների մեջ կա մեկը, որին ուզում էր գերել ինքը, ավելի սուր էր դարձնում միտքը և գունեղություն տալիս նրա կայությանը: Այն, ինչ նա ասում էր, հմայիչ էր, անպատասխանատու, հավաստում էր տրամաբանությանն ու բանականությանը: Լսողները ծիծաղում էին, բայց ակամա դյուրված լսում էին նրան, ինչպես երեխաներն են ականջ դնում կախարդական սրինգին: Դորիան Գրեյը հմայված հայացքը չէր հեռացնում նյանից, նրա շուրթերի վրա խաղում էր ժպիտը, իսկ մթագնող աչքերում զմայլանքը փոխվում էր մտախոհության:

Վերջապես իրականությունը մեր դարի հագուստով ներս մտավ սպասավորի կերպարանքով և զեկուցեց դքսուհուն, որ նրա կառքը սպասում է դրսում: Դքսուհին զվարճալի հուսահատությամբ կոտրատեց ձեռքերը:

- Ափսոս,- բացականչեց նա,- ես ստիպված եմ զնալ: «Ուտոյ է անցնեմ ակումբ՝ ամուսնուս մոտ և նրան տանեմ Ռոլլիս, որտեղ նա նախագահելու է մի անհեթեթ ժողովում: Եթե ուշանամ, նա անպայման կգայրանա, ես ստիպված եմ խուսափել տեսարաններից, գլխարկս չափազանց եթերային է, մի կոպիտ խոսքից անգամ այն կկործանվի: Ո՛չ, ո՛չ, թուրքի զնամ, սիրելի՛ Ագաթա: Ցտեսություն, լորդ Հենրի, Դուք սրտուշկի եք, բայց և իսկական գայթակղեցնող դե: Ես դրա-կամորեն չգիտեմ՝ ինչ մտածեմ Ձեր տեսությունների մասին: Մոլորյման եկեք մեզ մոտ ճաշի: Թեկուզ երեքշաբթի: Երեք-շաբթի Դուք հրավիրված չեք որևէ տեղ:

Չեղ համար, դքսուհի, ես պատրաստ եմ դավաճանել բոլորին,- խոնարհվելով՝ ասաց լորդ Հենրին:

- Օ՛հ, Դուք շատ սիրալիր եք, բայց և՛ շատ վատը,- բացա
կառնեց նա,- ուրեմն, հիշեք, Ձեզ սպասում ենք:

Եվ նա լեղի Ագաթայի ու մյուս տիկիհների ուղեկցությամբ
վիճապանծորեն դուրս սահեց սենյակից:

Երբ լորդ Հենրին կրկին նստեց, միստեր Էրսքինը աթոռը
մոտեցրեց նրան և ձեռքը գրեց ուսին:

Ձեր խոսքերը բոլոր գրքերից հետաքրքիր են,- սկսեց
նա, ինչո՞ւ չեք գրում:

Ես գրքեր կարդալ չափազանց շատ եմ սիրում, միստեր
Լյուրին, այդ պատճառով էլ չեմ գրում: Իհարկե, լավ կլիներ
մի վկա գրել, այնքան հրաշալի, ինչպես պարսկական գորգն
է, նույնքան և՛ հեքիաթային: Բայց մեզ մոտ՝ Անգլիայում,
թվերցող չկա: Կարդում են միայն լրագրեր, հանրագիտա-
յուններ և այբբենարաններ: Անգլիացիները աշխարհի բոլոր
մուսուլմուդներից գրականության գեղեցկությունը ամենից
թիյ են հասկանում:

Ավանդ, Դուք, թերևս, ճիշտ եք,- պատասխանեց միստեր
Լյուրինը:- Ես ինքս մի ժամանակ երազում էի գրող դառնալ,
յուրյ Վադուց եմ հրաժարվել այդ մտքից... Իսկ այժմ, իմ սի-
րելի երիտասարդ բարեկամ, եթե թույլ կտաք Ձեզ այդպես
կոչել, ուզում եմ մի հարց տալ. Դուք իրոք հավատո՞ւմ եք այն
յուրյին, որ ասացիք նախաձաշի ժամանակ:

Ես արդեն բոլորովին մոռացել եմ, թե ինչ եմ ասել,-
ուրախաց լորդ Հենրին,- ինչ է՝ անմիտ բաներ եմ ասել:

- Իհարկե, շատ անմիտ: Իմ կարծիքով, Դուք չափազանց
ուսանգավոր մարդ եք, և եթե մեր սիրելի դքսուհուն բան
ուսուողի, մենք բոլորս Ձեզ կհամարենք հիմնական մեղա-
ւոր... Բայց ես կուզեի Ձեզ հետ զրուցել կյանքի մասին: Իմ
մոմանակի սերունդը ձանձրալի էր: Եթե Լոնդոնը երբևէ
Ձեզ ձանձրացնի, եկեք ինձ մոտ՝ Թրեդլի: Այնտեղ Դուք կշա-

րադրեք Ձեր մեծ հաճույքի փիլիսոփայությունը՝ լամելով բարզունգյան հրաշալի գինի, որ բարեբախտաբար դեռ ես րավականին ունեմ:

- Մեծ ուրախությամբ: Ես ինձ համար պատիվ կհամարեմ այցելել Թրեդլի, որտեղ այդպիսի հյուրասեր տանտեր և հիանալի գրադարան կա:

- Դուք այդ գրադարանը կգարդարեք Ձեր ներկայությամբ,- պատասխանեց ծեր ջենտլմենը՝ քաղաքավարի խոնարհվելով,- իսկ հիմա գնամ՝ հրաժեշտ տալու Ձեր անչափ բարի մորաքրոջը: Ժամանակն է գնալ Աթեններում՝, այդ ժամին մենք սովորաբար ննջում ենք այնտեղ:

- Բոլորդ էլ, միստեր Էրսքին:

- Այո՛, քառասուն հոգի՝ քառասուն բազկաթոռներում: Այսպիսով պատրաստվում ենք դառնալ Անգլիական գրականության ակադեմիայի անդամ:

Լորդ Հենրին ծիծաղեց:

- Իսկ ես Հայդ պարկ եմ գնում,- ասաց նա՝ բարձրանալով:

Դռան մոտ Դորիան Գրեյը զգուշությամբ հավելեց նրա ձեռքին:

- Ես էլ կարող եմ Ձեզ հետ գալ,- շնչաց նա:

- Բայց Դուք, կարծեմ, խոստացել եք Բեզիլ Հոլլուորդին այցելել:

- Ես ավելի շատ Ձեզ հետ կուզեի լինել: Այո՛, այո՛, ուզում եմ Ձեզ հետ գալ: Թույլ կտամք: Եվ կխոստանամք ամբողջ ժամանակ խոսել ինձ հետ: Ոչ ոք այնպես հետաքրքիր չի խոսում, ինչպես Դուք:

- Օ՛հ, այսօր ես բավականին շատ եմ խոսել արդեն, - ժպտալով ասաց լորդ Հենրին,- իսկ այժմ միայն ուզում եմ դիտել կյանքը: Եթե ուզում եք, գնանք միասին դիտենք:

1 Իրական ակումբ:

ԳԼՈՒԽ IV

Մեկ ամիս անց՝ մի օր, Դորիան Գրեյը ընկղմված էր լորդ Վեյլինգի՝ Մեյֆերում գտնվող տան փոքրիկ գրադարանի շքեղ լուսվոցի մեջ։ Դա մի գեղեցիկ սենյակ էր՝ կաղնու՝ ձիթապտղի կոսնաչավուն գույնի բարձր տախտակադրվագներով՝ զարդարված բաց դեղին և առաստաղը ծեփածո։ Հատակին փռված աղյուսագույն կարմիր կապերտի վրա ցիրուցան օլլված էին մետաքսե երկարածոպ պարսկական փոքրիկ փորվեր։ Ատլասափայլ փոքրիկ սեղանին դրված էր Կոդիոնի լուսնոլակներից մեկը, իսկ նրա կողքին՝ Մարգարիտա Վալուայի՝ «Zes Cent Nouvelles»-ի² մի օրինակը, որի կազմը Քլովիս Լվի աշխատանքն էր։ Գրքի կազմը ծածկված էր ոսկեգօծ մարգարտածաղիկներով. այդ ծաղիկը թագուհին ընտրել էր՝ որպես իր խորհրդանիշ։ Բուխարու վրա դրված էին երփնեկանց վարդակակաչներով չինական ծենապակյա երկնափայլ սկահակներ։ Կապարապատված լուսամատից ներս էր թափանցում Լոնդոնի ամառային օրվա ծիրանագույն լույսը։

Լորդ Հենրին դեռ չկար։ Նա միշտ սկզբունքորեն ուշանում էր, բայց նրա՝ ճշտապահությունը ժամանակի գողն է։ Դորիանը փոփոխորեն մոռալված էր ու մտացրիվ թերթում էր «Մանոն Լեսկոյի» հիանալի պատկերազարդ մի հրատարակություն, որի գտել էր գրապահարաններից մեկում։ Լյուդովիկոս XIV-ի ժամացույցի միալար, համաչափ թխկթխկոցն անգամ պայտում էր Դորիանին։ Նա մի քանի անգամ նույնիսկ ուզեց փնտրել՝ առանց տանտիրոջն սպասելու։ Վերջապես դրսից լուրջ ոտնաձայն։ Դուռը բացվեց։

Շանո եք ուշանում, Հարրի, - քրթմնջաց Դորիանը։

1 Լուսվորսայի թագուհի (1499-1549), հուժանիստ գրող, «Հարյուր նովելի» կամ «Լեպտամերոնի» հեղինակը։

2 «Հարյուր նովելի»

- Ցավոք սրտի, Հարրին չէ, միստեր Գրեյ, պատասխանեց մի սուր ձայն:

Դորիանն արագ շրջվեց և ոտքի ելավ:

- Ներեցնք: Ես կարծում էի...

- Դուք կարծում էիք, թե ամուսինս է, այնինչ՝ միայն նրա կինն է: Թույլ տվեք ներկայանալ: Ես Ձեզ շատ լավ գիտեմ Ձեր լուսանկարներից: Ամուսինս, կարծեմ, դրանցից տասնյոթ հատ ունի:

- Այնպես եք ասում, կարծես հենց տասնյոթ հատ էլ լինի, լեդի Հենրի:

- Է, տասնյոթ չլինի, թող տասնուրեք լինի: Բացի այդ, անցած գիշեր Ձեզ տեսա օպերայում նրա հետ:

Այդ ասելիս նա անհանգիստ ծիծաղում էր և իր ցրված հայացքով ու անմոռուկ հիշեցնող աչքերով նայում Դորիանին: Այլ տարօրինակ կնոջ ողջ արդուզարդն այնպիսի տեսք ուներ, որ կարծես մտահղացված էր մոլուցքի ժամանակ և հագնված՝ փոթորկին: Լեդի Հենրին միշտ սիրահարված էր որևէ մեկին, և միշտ՝ անհույս. այդ պատճառով էլ պահել էր իր բոլոր պատրանքները: Նա ջանում էր երևալ վայելուչ, բայց միշտ թափափված տեսք էր ունենում: Նրա անունը Վիկտորիա էր. նա կրքոտորեն սիրում էր եկեղեցի գնալ: Դա նրա մոտ դարձել էր մոլուցք:

- Կարծեմ «Լեոնգրինն էր», լեդի Հենրի:

- Այո, իմ սիրած «Լեոնգրինն էր»: Ես Վագների երաժշտությունն ավելի շատ եմ սիրում, քան մեկ ուրիշինը, նրա երաժշտությունն այնքան է աղմկոտ, որ օպերայում կարելի է ամբողջ ժամանակ խոսել՝ առանց վախենալու, թե մարդիկ կարող են քեզ լսել. դա մեծ առավելության է. այդպես չեմ կարծում, միստեր Գրեյ:

Նրա լայակ շուրթերից կրկին հնչեց նույն անհանգիստ,

յնդիատվող ծիծաղը, և նա սկսեց մատնների մեջ պտտել կրիայի ոսկրից պատրաստած թուղթ կտրելու երկարակոթ պանակը: Դորիանը ժպտալով տարուրերեց գլուխը:

- Ներեցե՞ք, չեմ կարող Ձեզ հետ համաձայնել, լեդի Հենրի, երաժշտության ժամանակ ես երբեք չեմ խոսում համենայն պակս՝ լավ երաժշտության: Իսկ երբ վատն է, իհարկե, պետք է, խոսակցությամբ լռեցնել այդ երաժշտությունը:

- Ըհ՛ը, դա Հարրիի կարծիքն է, ծի՛շտ է, միստեր Գրեյ: Ես միշտ Հարրիի կարծիքները լսում եմ նրա ընկերներից: Միայն այս կերպ եմ իմանում նրանց մասին: Սակայն չկարծեք: Թե ես չեմ սիրում լավ երաժշտությունը: Ես դա պաշտում եմ, բայց և վախենում նրանից: Լավ երաժշտությունն ինձ դարձնում է, չափազանց ռոմանտիկ: Ես պարզապես պաշտում եմ դաշնամուսիկներին, իսկ երբեմն էլ երկուսին միաժամանակ եմ սիրում, այդպես է հավատացնում Հարրին: Չգիտեմ, թե ինչն է, նրանց մեջ ինձ այդքան հրապուրամ: Գուցե այն, որ նրանք օտարական են: Բայց չէ՞ որ նրանք բոլորն էլ օտարական են: Խոյնիսկ նրանք, ովքեր ծնվում են Անգլիայում, որոշ ժամանակ ունի դառնում են օտարական: Նրանց կողմից դա խելացի է, և լավ համբավ է ստեղծում իրենց արվեստի համար, դա երաժշտությունը դարձնում է աշխարհաքաղաքացիական, սպիտակ չէ՞, Գրեյ: Դուք, կարծեմ, երբեք չեք եղել իմ ոչ մի երեկույթին: Անպայման եկեք: Խոլորձներ չեմ պատվիրում, պար իմ կարողությունից վեր է, բայց օտարականների համար չեմ գլանում ծախսեր նրանք այնպիսի գեղեցիկ տեսք են տալիս հյուրասենյակին: Ահա և Հարրին: Հարրի, ես եկա քեզ մոտ ինչ-որ բան հարցնելու, հիմա մոռացել եմ, թե՛ ինչ և ում ու այստեղ հանդիպեցի միստեր Դորիանին: Մենք շատ երկար ժամանակ զրույց ունեցանք երաժշտության մասին: Մենք ունենալով բոլորովին նույն գաղափարները: Ասենք՝ ոչ, մնա

գաղափարները լրիվ տարբեր են: Բայց նա շատ հաճելի զրուցակից է, ևս ուրախ եմ ծանոթանալուս համար:

- Ես նույնպես ուրախ եմ, սիրելի՛ն, շատ ուրախ,- ասաց լորդ Հենրին՝ բարձրացնելով թուխ, կեռ հոնքերը, ուրախ ժպիտը երեսին՝ նայելով մերթ կնոջը, մերթ Դորիանին:- Ներեցեք, Դորիան, որ այդքան ուշացա: Գնացել էի Ուորդոր սթրիթ՝ հինավուրց դիպակի կտոր դնելու և ստիպված էի սակարկել ժամերով: Մեր օրերի մարդիկ գիտեն ամեն ինչի գլխը, բայց ոչ մի բանի արժեքը չգիտեն:

- Ցավում եմ, բայց ես պետք է գնամ,- բացականչեց լեդի Հենրին՝ խզելով սկսվող անհարմար լուրջությունն իր հանկարծակի հիմար ծիծաղով,- խոստացել եմ դքսուհուն՝ իլլիետ կառքով զբոսնել: Ցտեսության, միստեր Գրեյ, ցտեսություն, Հարրի: Դու, երևի, այսօր ճաշի ես հրավիրված: Ես նույնպես: Գուցե հանդիպենք լեդի Թորնթերիլի մոտ:

- Շատ հնարավոր է, սիրելի՛ն,- ասաց լորդ Հենրին՝ փակելով դուռը նրա ետևից: Կինը, որ նման էր ողջ գիշեր անձրևի տակ մնացած դրախտի թռչնակի, դուրս ճախրեց սենյակից՝ իր ետևից թողնելով հասմիկի մեղմ բույր: Հարրին վառեց ծխախոտը և ընկղմվեց բազկաթոռի մեջ:

- Երբեք չամուսնանաք հարդագույն մազերով կնոջ հետ,- ասաց նա՝ մի քանի անգամ ծուխը ներս քաշելուց հետո:

- Ինչո՞ւ, Հարրի:

- Սրանք ահավոր դյուրագգաց են:

- Բայց ես սիրում եմ դյուրագգաց մարդկանց:

- Ընդհանրապես երբեք մի՛ ամուսնացեք, Դորիան: Տղամարդիկ ամուսնանում են հոգնածությունից, իսկ կանայք՝ հետաքրքրասիրությունից: Հետո երկուսն էլ հիասթափվում են:

- Դժվար թե՛ երբեք ամուսնանամ: Ես խիստ սիրահարված եմ: Սա նույնպես Ձեր ասույթներից մեկն է, որ իրագործում եմ

կրտսիրում, ինչպես ամեն ինչ, որ Դուք եք ասում:

Ո՛ւմ եք սիրահարված,- փոքր դադարից հետո հարցրեց թոյլ Հենրին:

Մի դերասանուհու,- կարմրելով՝ պատասխանեց Դոփամս Դրեյը:

Լուրդ Հենրին թոթվեց ուսերը:

Դա բավական տափակ սկիզբ է:

Հարրի, եթե տեսնեք նրան, այդպես չեք ասի:

Ո՛վ է նա:

Սրա անունը Սիբիլ Վեյն է:

Երբեք չեմ լսել:

Ոչ ոք չի լսել: Բայց մի օր, այնուամենայնիվ, կլսեն բոլորը՝ Դու հանճար է:

Տղան, կանանցից հանճար չի լինում: Սրանք զարդարող մոտեն: Նրանք աշխարհին ասելիք չունեն, բայց ասում են շատ թույլոր ձևով: Կանայք մարմնավորում են նյութի հաղթանակը մարմնի հանդեպ, իսկ տղամարդիկ՝ մտքի հաղթանակը բարոյականության նկատմամբ:

Ի՞նչ եք ասում, Հարրի...

Իմ սիրելի Դորիան, հավատացեք, որ դա սուրբ ճշմարտություն է: Ես այժմ ուսումնասիրում եմ կանանց, ինչպես կալույթով կամ չիմանալ: Մանավանդ, որ դա անհասկանալի հարց չէ, ինչպես կարծում էի առաջ: Ես եկել եմ այն եզրակացության, որ կան միայն երկու տեսակի կանայք՝ անշաղար և շպարված: Միջավայր կանայք շատ օգտակար են: Եթե ուզում եք ձեռք բերել լավ համբավ, բավական է նրանց հրավիրեք Ձեզ հետ ընդունելու: Կանանց մյուս տեսակը շատ հրապուրիչ է: Բայց նրանք թույլ են տալիս մի սխալ՝ շպարվում են, որպեսզի նրանց սարք երևան: Մեր տատերը շպարվում էին, որպեսզի համարվեին սրամիտ և փայլուն գրուցակիցներ: Այն ժամա-

նակներում «rouge»¹ և «esprit»² հասկացողությունները անբաժան էին: Այժմ այդպես չէ: Եթե կինը կարողանում է տասը տարով ավելի ելիտասարդ երևալ իր աղջկանից, դրանով նա լրիվ բավարարվում է: Լոնդոնում կա միայն հինգ կին, որոնց հետ արժև խոսել, այն էլ նրանցից երկուսը տեղ չունեն բարեկիրթ հասարակության մեջ: Այնուամենայնիվ, պատմեցնք Ձեր հանճարի մասին: Դուք վաղուց եք ծանոթ նրա հետ.

– Ա՛յս, Հա՛րրի, Ձեր դատողությունները սարսափեցնում են ինձ:

– Դատարկ բան է: Երբ եք ծանոթացել նրա հետ:

– Մի երեք շաբաթ առաջ:

– Որտե՞ղ:

– Հիմա կալատմեմ: Բայց մտքներովդ չանցնի՝ սիրտս կոտրեք, Հա՛րրի: Փաստորեն, եթե Ձեզ չհանդիպեի, ոչինչ չէր պատահի: Դուք իմ մեջ ներարկեցիք կյանքի մասին ամեն ինչ իմանալու մոլեգին ցանկություն: Այն օրվանից, երբ հանդիպեցի Ձեզ, ինչ-որ բան սկսեց ուժգին տրոփել իմ երակներում: Երբ թափառում էի Պարկում կամ Պիկադիլլում, ևս սովորության ունեի նայել ամենքին, ով անցնում էր կողքովս և խելահեղ հետաքրքրությամբ ուզում էի իմանալ, թե ինչպիսի կյանք է վարում յուրաքանչյուրը: Նրանցից մի քանիսը հրապուրում էին ինձ, մյուսները՝ սարսափ ներշնչում: Օդում կարծես տարածված էր հաճելի մի թույն: Զգայացունց տպավորությունների մոլուցքն էր ինձ համակել: Եվ ահա մի երեկո, մոտ ժամը յոթին, որոշեցի դուրս ելնել նոր տպավորություններ փնտրելու: Զգում էի, որ մեր մոայլ, վիթխարի Լոնդոնը՝ իր բյուր մարդկանցով, նողկալի մեղսագործներով և զմայլիչ արատներով, Դուք այդպես

1 Շայսոբ

2 Մրամտություն (ֆր.):

Լիք այն մի անգամ նկարագրում, ինչ-որ բան ունի ինձ համար պահած: Հազար ու մի բան էի երևակայում: Նույնիսկ վտանգի զգացումից հիանում էի: Հիշում եմ Ձեր խոսքերը այն հիանալի երեկոյին, երբ առաջին անգամ ծաշեցին միասին. «Երջանկության իսկական գաղտնիքը գեղեցիկի ոլորման մեջ է»: Ինքս չգիտեի, թե ինչ եմ փնտրում, բայց դուրս ելա տնից և քայլեցի Իսթ-Էնդի ուղղությամբ: Շուտով ճանապարհս կորցրեցի կեղտոտ փողոցների և կանաչազուրկ սփռակների լաբիրինթոսում: Մոտ ութն անց կես անցա մեծ վտու ջահերով լուսավորված աննշան, փոքրիկ թափուրնի մոտով՝ աղաղակող ազդերով ծածկված: Մուտքի մոտ կանգնած էր մի զգվելի իրեմա՝ խիստ ծիծաղելի բաժկոնով, ինչ-պիսին ես երբևէ տեսել եմ, և անտանելի սիգար էր ծխում: Նյութ մագերը ծարպոտ էին, իսկ կեղտոտ վերնաշապկի վրա մի խոշոր ադամանդ էր փայլում:

- Օթյակ կկամենայի՞ր, միլո՛րդ,- ասաց նա՝ ինձ տեսնելով և հոսնեց գլխարկը՝ ծառայելու բուռն պատրաստակամությամբ:

Ինչ-որ բան կար, Հարրի, այդ ճիվաղի մեջ, որ հետաքրքրում էր ինձ: Դուք, իհարկե, կծիծաղեք ինձ վրա, բայց ես իսկապես ինքս մտա և մի ամբողջ գիենա վճարեցի բեմի մոտ գտնվող օթյակի համար: Մինչև հիմա չեմ հասկանում, թե ինչպես կառավարվեց դա: Իսկ եթե ես չգնայի, սիրելի Հարրի, եթե չգնայի, կկորցնեի իմ կյանքի ամենամեծ սիրավեպը: Ծիծաղում եք: Իս ուղղակի վրդովեցուցի՞չ է:

- Ես չեմ ծիծաղում, Դորիան: Համենայն դեպս, Ձեզ վրա չեմ ծիծաղում: Բայց չպետք է ասեք, որ դա Ձեր կյանքի ամենամեծ սիրավեպն է: Ավելի լավ է՝ ասեք՝ «առաջին»: Ձեզ միշտ, սիրահարվելու են, և Դուք միշտ սիրահարվելու եք սիրուն: Grande passion¹-ը այն մարդկանց արտոնությունն է, որոնք

¹ Մեծ կիրք (ֆր.):

պարապ-սարապ կյանք ենք վարում: Դա յուրաքանչյուր երկրի անբան խավի միակ անելիքն է: Մի վախճեցեք, դեռ շատ հաճելի սպասելիքներ ունեք: Դա դեռ սկիզբն է:

- Միթե Դուք ինձ այդքան թեթևամիտ եք համարում, բարկությամբ գոռաց Դորիանը:

- Ո՛հ, չափազանց դյուրագգաց եք Դուք:

- Այսինքն:

- Տղան, ովքեր իրենց ամբողջ կյանքի ընթացքում մեկ անգամ են սիրում, իրոք թեթևամիտ են: Նրանց, այսպես կոչված, հավատարմությունն ու հաստատակամությունը ես համարում եմ սովորույթի լեթարգիա կամ երևակայության բացակայություն: Սիրո հավատարմությունը, ինչպես և մտքերի հետևողականությունն ու անփոփոխությունը, պարզապես անգործության խոստովանություն է... Հավատարմություն: Մի օր ես կգրադվեմ դրա վերլուծությամբ: Նրա մեջ սեփականատիրական անգուսպ տենչ կա: Շատ բաներ մենք դեն կնետեինք, եթե չվախենայինք, որ ուրիշները կվերցնեն: Բայց չեմ ուզում ընդհատել Ձեզ: Շարունակեցեք պատմել:

- Այսպես, ուրեմն, ես ընկա բեմի մոտ գտնվող մի փոքրիկ, կեղտոտ օթյակ: Իմ դիմաց անձաշակորեն նախշած մի վարագույր էր: Ես զննեցի սրահը, որը կահավորված էր կեղծ պերճանքներով՝ ամենուրեք հրեշտակիկներ էին և առատության լոջուրներ, ինչպես էժանագին, հարսանեկան տորթը: Վերստին և վերջին շարքերը լի էին մարդկանցով: Բայց հնամաշ բազկաթոռների առաջին երկու շարքերը բոլորովին դատարկ էին: Մարդ չկար նաև այն տեղերում, որն այստեղ, կարծեմ, դստիկոն են անվանում: Շարքերի միջով անցնում էին նարինջ և իմբիբի գարեջուր վաճառող կանայք: Սրահում լսվում էր ջարդվող ընկույզների սարսափելի ճտճտոց:

- Ճիշտ՝ ինչպես բրիտանական դրամայի ծաղկման օրե-

լին:

Այո՛, իսկապես որ: Շատ ճնշող կահավորանք է: Արդեն մոտածում էի, թե ինչպես դուրս գամ, երբ հանկարծ հայացքս կուռզ առավ ազդի վրա: Ինչ եք կարծում, Հարրի, ինչ ներկայություն կլիներ:

Հավանաբար՝ «Ապուշ տղան» կամ «Անմեղ խուլը»: Մեր պատկերը սիրում էին այդպիսի ներկայացումներ: Որքան շատ եմ տեսնում, Դորիան, այնքան պարզ եմ տեսնում, որ ինչ դուր է, դալիս մեր պապերին, բավականաչափ դուր չի գալիս մեզ: Այլևստում, ինչպես և քաղաքականության մեջ Les grands-pères ont toujours tort¹

Այդ ներկայացումը մեզ համար նույնպես բավական լավն է, Հարրի: «Ռոմեո և Ջուլիետտա»-ն էր: Պետք է խոստովանեմ՝ սկզբում ես Շեքսպիրի համար վիրավորված էի, ուրիշ ներկայացում են այդպիսի խղճուկ վայրում: Բայց միևնույն ժամանակ դա ինձ մի քիչ հետաքրքրեց: Ինչևիցե, ես որոշեցի նայել առաջին գործողությունը: Նվագախմբի կառավարումը ահավոր էր: Զարդված դաշնամուրի մոտ նստած մի երիտասարդ, հրեա ղեկավարում էր նվագախումբը: Քիչ էլ մնում՝ դուրս փախչեի: Բայց վերջապես վարագույրը լուսործացավ, և ներկայացումը սկսվեց: Ռոմեոն գեր, տարեց մուրդ էր՝ այրած խցանով հաստացրած հոնքերով, խոպոտ, ուրբերգական ձայնով: Մարմինը նման էր գարեջրի տակաո՛ղի: Մորկուցիոն քիչ բանով էր նրանից տարբերվում: Խաղում էր ինչ-որ զավեշտաբար: Նա տեքստի մեջ մտցրել էր ինքնահինար խոսքեր և վերջին շարքերում նստածների հետ ամենամտերիմ հալածությունների մեջ էր: Այդ երկու դերասանն էլ նույն-յուրն անհեթեթ էին, ինչպես և բեմագարդարանքը, և բոլորը միասին հիշեցնում էին տոնավաճառի թատերախաղ: Իսկ

¹ "Պապերը միշտ սխալվում են: (Ֆր.)

Ջուլիետտան... Պատկերացրեք, Հարրի, հազիվ տասնյոթ տարեկան մի աղջիկ՝ ծաղկանման նուրբ դեմքով, հունական փոքր գլխով, մուգ շագանակագույն հյուսքերով: Աչքերը կրթյալ մանուշակագույն լճեր էին, շուրթերը՝ վարդի թերթեր: Նա աշխարհի ամենագեղեցիկ արարածն էր, որ ես երբևէ տեսել եմ: Մի անգամ Դուք ինձ ասացիք, որ վիշտը չի հուզում, բայց գեղեցկությունը, միայն գեղեցկությունը կարող է լցնել Ձեր աչքերը արցունքով: Լսում եմ, Հարրի, հազիվ էի կարողանում տեսնել այդ աղջկան, որովհետև արցունքի մշուշը փակել էր աչքերս, իսկ ծայնը... Երբեք այդպիսի ծայն չեմ լսել: Սկզբում շատ ցածր էր, բայց ամեն մի թանձր, կրծքային հնչյունը, թվում էր, հատ-հատ հասնում է ականջիդ: Հետո բարձրացավ, ինչպես սրինգ կամ հեռավոր եղջերափող: Պարտեզի տեսարանում այդ ծայնի մեջ կար այն հուզումնալից գմայլանքը, որ լսվում է սոխակների գեղգեղանքի մեջ արշալույսից առաջ: Հետո լինում էին վայրկյաններ, երբ ծայնը հասնում էր ջութակի բուռն և կրքոտ հնչեղության: Դուք գիտեք, թե ինչպես կարող է որևէ մեկի ծայնը հուզել: Ձեր ծայնը և Սիրիլ Վեյնի ծայնը ես երբեք չեմ մոռանա: Բավական է՝ փակեմ աչքերս՝ իսկույն այդ ծայներն եմ լսում: մեկը մի բան է ասում, մյուսը՝ այլ: Եվ չգիտեմ՝ որին հետևեմ: Ինչո՞ւ չպետք է սիրեմ նրան, Հարրի: Ես պետք է սիրեմ նրան, նա ինձ համար ամեն ինչ է: Ամեն երեկո ես դիտում եմ նրա խաղը: Մի երեկո նա Ռոզալինդա է, մյուս օրը՝ Իմոջենա: Ես տեսել եմ նրան մեռնելիս Իտալիայի մի մոռյալ դամբարանում, տեսել եմ սիրեցյալի թանոտ շուրթերն համբուրելիս: Ես հետևել եմ նրան, երբ, պատանու նման հագնված, թափառում էր Արդենյան անտառներում՝ ծպտված թիկնոցով, նեղ տաբատը հագին և նրբագեղ գլխարկ դրած: Խելակորոյս նա գալիս էր հանցագործ թագավորի մոտ՝ տալով նրան սա-

ուպ և դառը խոտեր: Նա եղել է անմեղ Դեզդեմոնա, բայց խանդի սև ձեռքերը խեղդել են նրա՝ եղեգի նման բարալիկ ուարանոցը: Ես տեսել եմ նրան բոլոր դարերում, ամեն առավելի զգեստներով: Սովորական կանայք երբեք չեն հուզում մեր երևակայությունը: Նրանք սահմանափակված են իրենց ուարաշրջանով և ընդունակ չեն կախարդանքով կերպարանափոխվել: Նրանց հոգին մեզ ծանոթ է, ինչպես իրենց պարկերը: Գաղտնիքներ չունեն: Ոչ մեկի մեջ խորհրդավորություն չկա:

Առավոտյան նրանք կառքով զբոսնում են Պարկում, ցերեկը՝ զրուցում թեյասեղանների մոտ: Ժպտում են անքնական և ունեն շնորհալի շարժումներ: Նրանք բոլորն էլ մեզ համար լուրերգված գիրք են: Իսկ դերասանուհին... դերասանուհին լուրորովին ուրիշ է: Հարրի, ինչո՞ւ չեք ասել, որ աշխարհում սիրո արժանի միակ մարդը դերասանուհին է:

- Որովհետև ես շատ դերասանուհիներ եմ սիրել, Դորիան:

- Օ՛, գիտեմ ինչպիսիներին՝ ներկած մազերով, շպարված դեմքերով սարսափելի կանանց:

- Մի՞ արհամարհեք ներկած մազերը և շպարված դեմքերը: Երբեմն զարմանալի հրապույր կա նրանց մեջ, - ասաց լորդ Էնրին:

- Արդարև, ասխտում եմ, որ պատմեցի Ձեզ Սիրիլ Վեյնի մասին:

- Ձեիք կարող չպատմել, Դորիան: Ձեր ամբողջ կյանքում Դուք պետք է վստահեք ինձ Ձեր գաղտնիքները:

- Այո՛, Հարրի, թերևս Դուք ճիշտ եք: Ձեմ կարող Ձեզանից ուրե՛ք բան թաքցնել: Դուք ինձ վրա ինչ-որ անբացատրելի ուղեցություն ունեք: Եթե ես նույնիսկ երբևէ ոճիր գործեմ, կլամ և կխոստովանեմ Ձեզ: Դուք ինձ կհասկանաք:

- Մեզ նմանները, Դորիան, ինչպես արևի քմահաճ ճառա-

գաղթներ, լուսավորում են կյանքը, նրանք ոճիր չեն գործում. խոկիսածոյալսոսության համար շնորհակալ եմ: Դե՛, պատմեցե՛ք: Տվե՛ր լույց կին, խնդրեմ: Շնորհակալություն: Ասացե՛ք, տեսնենք՝ մինչև ուր հասան Ձեր հարաբերությունները Սիբիլ Վեյնի հետ:

Դոյիան Գրեյը ոտքի ցատկեց շառագունած, բոցավառ տպերով:

Հարրի. Սիբիլ Վեյնը սրբություն է ինձ համար:

Հենց սրբությանն էլ պետք է դիպչել՝ ասաց լորդ Հեն-րիսը՝ տարօրինակ ոգևորությամբ, - իսկ ինչո՞ւ բարկացար: Չե՞ որ վաղ թե ուշ, ինչպես ենթադրում եմ, նա Ձերը կլինի: Սիրա-... Խորվածությունը սկսվում է նրանից, որ մարդ խաբում է ինքն իրեն, իսկ վերջանում է նրանով, որ նա խաբում է ուրիշին: Ահա հենց դա էլ աշխարհը կոչում է սիրավեպ: Համենայն դեպս, կարծում եմ, որ Դուք արդեն ճանաչեցիք նրան:

- Իհարկե, հենց առաջին գիշերը այս նողկալի ծեր հրեան ներկայացումից հետո մտավ օթյակ և առաջարկեց ինձ գնալ Խոնարեմ՝ Զուլխետտայի հետ ծանոթանալու համար: Ես զայ-րուցա և ասացի, որ Զուլխետտան մահացել է հարյուրավոր տարիներ առաջ, և աճյունը հանգչում է Վերոնայի մարմարյա գերեզմանում: Նա ինձ նայում էր մեծագույն զարմանքով, լուռ երևույթին մտածեց, որ ես չափազանց շատ շամպայն եմ խմել:

• Շատ հավանական է:

Հետո հարցրեց, թե արդյոք թերթերում հոդվածներ չեն գրում: Ես ասացի, որ նույնիսկ թերթ չեմ կարդում: Ըստ երևույթին, խիստ հիասթափվեց և հաղորդեց ինձ, որ բոլոր բուռնության քննադատները դավադրություն են սարքել իր դև և ուրորն էլ ծախու մարդիկ են:

Այո՛, հարցում թերևս նա շատ ճիշտ է: Ասենք, դատելով

նրանց տեսքից, քննադատների մեծամասնությունը ծախվում է, ոչ թանկ գնով:

Իսկ նա, ըստ երևույթին, կարծում է, որ դա իր կարողությունից վեր է,– ծիծաղեց Դորիանը,– մինչ մենք զրուցում էինք, թատրոնի լույսերն սկսեցին մարել, և ես պետք է գնայի: Դիտան, ձիգ ու ջանք չխնայելով, ինչ–որ սիգարներ էր գոլում և համառորեն առաջարկում ինձ, բայց ես դրանք նույնպես մերժեցի: Հաջորդ երեկո, իհարկե, ես կրկին եկա թատրոն: Ինձ տեսնելով՝ հրեան խոնարհ ողջույն տվեց և ասաց, որ ես արվեստի առատաձեռն հովանավորող եմ: Նա աշխարհի ումնատեղի առարածն էր՝ չնայած Շեքսպիրի նկատմամբ ուսած իր արտակարգ սիրուն: Մի անգամ նա հպարտությամբ պատմեց ինձ, որ ինքը հինգ անգամ սնանկացել է «լուրդի» հանդեպ ունեցած սիրո պատճառով (նա միշտ այդպիսի էր մեծարում Շեքսպիրին): Թվում էր, թե նա այդ համայուն է իր ամենամեծ ծառայությունը:

Դա իսկապես դր ծառայությունն է, սիրելի Դորիան, մեծ հոռապություն: Մարդկանց մեծ մասը սնանկանում է ոչ թե հիսպայի հանդեպ ունեցած չափազանց մեծ հակումների համար, այլ կյանքի պրոզայի հանդեպ: Իսկ կործանել հարստությունը հանուն պոեզիայի մեծ պատիվ է: Հա, ուրեմն, նրբ կը առաջին անգամ խոսել միսս Սիբիլ Վեյնի հետ:

– Երեկ չէ, մյուս օրը՝ երեկոյան: Նա խաղում էր Ռոզալինայի: Ես չդիմացա և գնացի ետնաբեմ: Մինչ այդ ես ծաղիկներ նետեցի նրան, իսկ ինքը նայեց իմ կողմը: Գոնե ինձ այդպես թվաց: Ծեր հրեան համառորեն ինձանից ձեռք չէր քաշում. ըստ երևույթին, որոշել էր ինձ տանել նրա մոտ: Ես համաձայնեցի: Զուրմանալի չէ, որ չէի ուզում ծանոթանալ նրա հետ:

– Բոլորովին:

– Իսկ ինչո՞ւ, սիրելի Հարրի:

Հևտո կրացատրեն: Այժմ ես ուզում եմ լսել այդ աղջկա մուսին, շարունակիր:

Սիբիլը, ճ, նա այնքան ամոթխած է, այնքան հաճելի: Նրա մեջ ինչ-որ երեխայական բան կա: Երբ ես սկսեցի հի-ուցմունքս արտահայտել նրա խաղի մասին, նա հմայիչ գալմանքով լայն բացեց աչքերը: Երևի բոլորովին անտեղյակ է, իր տաղանդի մեծությանը: Երկուսս էլ այդ երեկո կարծես շփոթված էինք: Ծեր հրեան, ինքնաբավական ժպիտը դեմքին, կոնսկնած էր փոշոտ բեմամուտքի առաջ և բարձր-բարձր հաճոյախոսում էր մեզ վերամբարձ ոճով: Մենք նայում էինք միմյանց, ինչպես երեխաներ: Հրեան համառորեն «միլորդ» էլ անվանում ինձ, բայց ես շտապեցի հավատացնել Սիբիլին, որ բոլորովին էլ լորդ չեմ: Նա պարզամտորեն ասաց. «Դուք տոկոկ շուտ արքայազնի եք նման: Ես Ձեզ կանվանեմ Հմայիչ Արայազն»:

Երդվում եմ, Դորիան, միսս Սիբիլը գիտե հաճոյախոսել:

Ո՛չ, Հարրի: Դուք չեք հասկանում: Նրա համար ես ըն-դամներ որևէ պիեսի հերոս եմ: Նա ամեննին կյանքը չգիտե: Ապրում է մոր հետ՝ մի թոշնած, տանջված կին, որն իմ այցե-լության առաջին գիշերը, ընծյուղավոր կարմիր թիկնոցը հա-զիմ, խաղում էր լեդի Կապուլետտի: Երևում է՝ այդ կինը լավ օրկո Լ, տեսել:

Դիտեմ այդպիսի կանանց, նրանք ինձ թախիծ են պատ-ճառում, - քրթմնջաց լորդ Հենրին՝ գննելով մատանիները:

Հրեան ուզում էր ինձ պատմել նրա կյանքի պատմու-թյունը, բայց ես ասացի, որ դա ինձ չի հետաքրքրում:

Շատ ճիշտ եք վարվել: Ուրիշների ողբերգության մեջ ինչ որ անսահման ողորմելի բան կա:

Ինձ միայն Սիբիլն է հետաքրքրում: Իմ ինչ գործն է, թե նա ինչ լուսանկարից է: Սկսած փոքրիկ ոտքերից մինչև գեղեցիկ

զլուխը՝ բացարձակ և կատարելապես աստվածածին է: Ամեն
կրեկո գնում եմ նայելու նրա խաղը, և ամեն երեկո նա ինձ
բախում է, ավելի հրաշալի:

Անա թե ինչու երբեք ինձ հետ չեք ճաշում: Ես այդպես էլ
զլուխով, որ Դուք հիմա հրապուրիչ սիրավեպ կունենաք: Բայց
դու ամեննին էլ այն չէ, ինչ սպասում էի:

Հարրի, սիրելիս, չէ՞ որ մենք ամեն օր միասին նախաճա-
շում ենք կամ ընթրում: Մի քանի անգամ էլ օպերայում ենք
կույլ: ասաց Դորիանը՝ զարմանքից լայն բացելով երկնա-
ստիկ աչքերը:

Այո, բայց Դուք միշտ անխիղճ կերպով ուշանում եք:

Ինչ արած: Ես ամեն երեկո պետք է տեսնեմ Սիրիլին, -
բույսականչեց նա, - թեկուզ մեկ գործողություն: Ես առանց
կրու չեմ կարող ապրել: Եվ երբ մտածում եմ այն հրաշալի հո-
լու մասին, որը պարփակված է փղոսկրե փոքրիկ մարմնում,
իմ իմամկում է քաղցր մի դող:

Իսկ այսօր, Դորիան, կարող եք ճաշել ինձ հետ:

Ուա զլուխն օրորեց:

Այսօր նա Խմոջենա է, իսկ վաղը՝ Ջուլիետտա:

Իսկ երբ է լինելու Սիրիլ Վեյն:

- Երբեք:

- Ուրեմն՝ Ձեզ կարելի է շնորհավորել:

Ա՛յ, Հարրի, որքան եք անտանելի: Հասկացեք, նրա մեջ
ևն ապրում աշխարհի բոլոր մեծ հերոսուհիները: Նա ավե-
լիս է, քան մի էակը: Ծիծաղում եք, իսկ ես Ձեզ ասում եմ՝
նույն հանձար է: Ես սիրում եմ նրան, և ամեն ինչ պետք է
տուն, որ նա էլ ինձ սիրի: Դուք արդեն գիտեք կյանքի բոլոր
զուտունիքները, ասեք, ինչպես հրապուրեմ Սիրիլ Վեյնին: Ես
ուզում եմ, որ Ռոմեոն խանդի: Ուզում եմ աշխարհի մահացած
բոլոր սիրահարները լսեն մեր ծիծաղը և տխրեն, ուզում

եմ մեր կրթի հունչը շարժի նրանց աճյունը և ուշքի բերի. արթնացնի, որ նրանք ցավ զգան: Աստված իմ, Հայրի, եթե միայն պատկերացներ, թե ինչպես եմ պաշտում նրան:

Այդ ասելիս Դորիանը հուզմունքից ետ ու առաջ էր քայլում սենյակում: Տենդագին շիկանքից բոցավառվել էին նրա այտերը: Նա չափազանց հուզված էր:

Լորդ Հենրին ներքին հրճվանքով նայում էր նրան: Որքան էր տարբերվում այժմ Դորիանը այն ամոթխած, երկչոտ պատանուց, որին ինքը հանդիպել էր Բեզիլ Հոլլոուորդի արվեստանոցում: Նա ամբողջ էությամբ նման էր ծաղկի, որ բացվել էր ալ հրագույն կոկոններով: Հոգին դուրս էր եկել իր թաքստոցից, իսկ ցանկությունը շտապում էր նրան ընդառաջ:

- Իսկ ի՞նչ եք մտադիր անելու, - վերջապես հարցրեց լորդ Հենրին:

- Ուզում եմ, որ Դուք և Բեզիլը մի անգամ գաք նրա խաղր նայելու: Չեմ կասկածում, որ Դուք նույնպես կգնահատեք նրա տաղանդը: Հետո նրան պետք է փրկել այդ հրեայի ձեռքից, որի հետ նա երեք տարվա պայմանագրով կապված է: Այժմ արյուն երկու տարի ութ ամիս է մնացել: Անշուշտ, ես մի բան կվճարեմ նրան: Իսկ երբ այդ բոլորը կկարգավորվի, Վեստ-Էնդում կվարձեմ որևէ թատրոն և նրան իր ամբողջ փայլով ցույց կտամ մարդկանց: Եվ նա կխենթացնի աշխարհն այնպես, ինչպես ինձ խենթացրեց:

- Հագիվ թե, սիրելիս:

- Այ, կտեսնեք: Նրա մեջ ոչ միայն դերասանական հիանալի զգացողություն կա, այլև ընդգծված անհատականություն: Իսկ Դուք հաճախ եք ինձ ասել, որ մեր ժամանակներում աշխարհը ղեկավարում են անհատականությունները և ոչ թե գաղափարները:

- Լավ, իսկ նրբ ենք գնալու թատրոն:

Մի րոպե մտածեմ... Այսօր երեքշաբթի է: Եկե՛ք վաղը
դուռնի: Նա վաղը խաղալու է Ջուլիետտա:

Հատ լավ, կհանդիպենք «Բրիստոլում»՝ ժամը ութին: Ես
Բիլլիին կբերեմ:

Միայն ոչ թե ութին, Հարրի, այլ՝ վեցն անց կես: Մենք
սկսում է այնտեղ լինենք նախքան վարագույրի բարձրանալը:
Ես ուզում եմ, որ Դուք նրան տեսնեք առաջին գործողու-
թյանում, երբ հանդիպում է Ռոմեոյին:

Վեցն անց կես: Այդքան շուտ: Դա նույնն է, թե ստորանալ
առաջինական վեպ կարդալու աստիճանի: Թող յոթին լինի: Ոչ
մի ցնտրված յոթից շուտ չի ծաշում: Իսկ մինչ այդ կարող եք
ստանալ Բեզիլին, թե ես գրեմ նրան:

Սիրելի Բեզիլ: Ահա մի ամբողջ շաբաթ, ինչ չեմ երևացել
կյուս աչքին: Դա անսամբոթություն է իմ կողմից: Չէ՞ որ նա ինձ
առաջին անգամ է իմ դիմանկարը՝ իր ճաշակով պատվիրած հոյա-
կապ շրջանակի մեջ: Չնայած ես մի փոքր նախանձում եմ
այդ դիմանկարին, որը մի ամբողջ ամսով երիտասարդ է ին-
ձունից, բայց պետք է խոստովանեմ, որ հիացած եմ: Գուցե
առաջին լավ լինի, եթե Դուք գրեք նրան: Ես չեմ ուզում դեմ առ
դիմ հանդիպել նրան: Բեզիլի ասածներից ես ձանձրանում
եմ՝ ես միշտ բարի խորհուրդներ է տալիս ինձ:

Ի որդ Հենրին ժպտաց:

Որոշ մարդիկ մեծ սիրով ուրիշներին են տալիս այն, ինչ
կենդանի իրենց է անհրաժեշտ: Ահա թե ինչն եմ ես համարում
առաջինական մեծահոգություն:

Բեզիլը շատ բարեհոգի մարդ է, բայց, իմ կարծիքով,
փոքր-ինչ ֆիլիստեր է: Ես դա նկատել եմ, Հարրի, Ձեզ
համալուրդ հետո:

Հասկանո՞ւմ եք, սիրելիս, Բեզիլը ինչ լավ բան որ ինքն
ուրիշ, ներդնում է իր գործի մեջ: Այդպիսով կյանքի համար

նրան մնում են միայն նախապաշարմունքները, բարոյական սկզբունքները և առողջ դատողությունը: Իմ ճանաչած բոլոր արվեստագետներից միայն անտաղանդներն են հրաշալի մարդիկ: Տաղանդավոր արվեստագետները ապրում են իրենց ստեղծագործություններով, և այդ պատճառով, իրենք որպես այդպիսին, անհետաքրքիր մարդիկ են: Մեծ լանաստեղծուհին իսկապես մեծ է, միշտ ամենաապրոզայիկ մարդն է, իսկ երկրորդականները հմայիչ են: Որքան ավելի թույլ են նրանց բանաստեղծությունները, այնքան տալավորիչ և վառ են իրենք: Եթե մարդ հրատարակում է վատ սոնետների մի ժողովածու, կարելի է նախօրոք ասել, որ այդ բանաստեղծուհի պարզապես ան իմադրելի է:

Նա իր կյանքի մեջ է մտցնում այն պոեզիան, որն ընդունակ չի եղել մտցնել բանաստեղծությունների մեջ: Իսկ մյուս կայգի պոետները թղթի վրա են թողնում պոեզիան, որի համարձակություն չունեն մտցնելու իրենց կյանքի մեջ:

- Զգիտե՛մ արդյո՞ք այդպես է, Հարրի,- ասաց Դորիան Գրեյը՝ սեղանին դրած ոսկեխցան շշից թաշկինակի վրա օծանելիք լցնելով:- Եթե ասում եք, պետք է որ ճիշտ լինի: Դեհ, ես գնում եմ, Իմոջենան ինձ է սպասում: Չմոռանաք վաղվա հանդիպման մասին: Ցտեսություն:

Մենակ մնալով՝ լորդ Հենրին ծանր կոպերը փակեց ու մտքի մեջ ընկավ: Իհարկե, քիչ մարդիկ են հետաքրքրել նրան այնպես, ինչպես Դորիան Գրեյը, սակայն պատանու խենթ սերը ուրիշի նկատմամբ լորդ Հենրիի մեջ չառաջացրեց անգամ անհանգստություն կամ խանդ: Ընդհակառակը, նա նույնիսկ գոհ էր դրանից: Հիմա Դորիանը դառնում էր ավելի հետաքրքիր ուսումնասիրության առարկա: Լորդ Հենրին միշտ խոնարհվել էր բնագետների գիտական մեթոդների առաջ, բայց նրանց հետազոտությունների բնագավառը ծանծրալի և

տնույն էր համարում: Իր սեփական հետազոտություննայս
 ևս սկսել էր իր վրա կատարած կենդանահերժումներով,
 ևսուտ սկսել էր նույնը անել ուրիշների վրա: Մարդկային
 կյանք... ահա թե ինչն էր նրան թվում ուսումնասիրության
 միակ արժանի նյութը: Դրանից արժեքավոր բան նրա համար
 ոչինչ գոյություն չունեք: Ինքնըստինքյան հասկանալի է՝ այն
 մարդը, որն ուսումնասիրում է եռացող կյանքը տանջանքների
 և լերկրանքների առանձնահատուկ քուրայում, չի կարող
 ուրախվանել դեմքը ապակե դիմակով և ոչ էլ փրկվել հեղձուցիչ
 դուրջուց, որ թմրեցնում է ուղեղն ու երևակայությունը հրե-
 լային պատկերներով ու սարսափելի մղձավանջներով: Այդ
 լուրջում առաջանում են այնպիսի աննշմար թույներ, որոնց
 հատկությունն իմանալու համար պետք է թունավորվել, այն-
 պիսի տարօրինակ հիվանդություններ, որոնց բնույթն զգալու
 համար պետք է հիվանդանալ: Բայց և այնպես՝ ինչպիսի մեծ
 ուրախ է՝ սպասում համարձակ հետազոտողին: Որքան ար-
 աստավոր է դառնում աշխարհը նրա համար: Ըմբռնել կրքի
 դարմանալի դաժան տրամաբանությունը և հույզերով զար-
 դարված բանականության կյանքը, իմանալ, թե երբ են միա-
 ևսում նրանք, երբ են բաժանվում իրարից, ինչում են նրանք
 միասնական, և երբ է վրա հասնում տարածայնությունը,
 ինչ կրանություն է... Միթե միևնույնը չէ, թե ինչ գնով է դա
 նվաճվում: Ամեն մի նոր, անծանոթ զգացումի համար արժե
 վճարել ամեն ինչ:

Լորդ Հենրին գիտեր (և այդ մտքից հաճույքի շող երևաց
 նրա թուխ աչքերում), որ միայն իր խոսքերի, երգեցիկ ծայնով
 ուսուարեբաժ այդ խոսքերի երաժշտության շնորհիվ էր, որ
 'Լորիան Գրեյի հոգին հակվեց դեպի այդ շուշանանման
 ուրջիկը և սկսեց խոնարհվել նրա առաջ: Այո, պատանին
 ուսուակալից կերպով իր ստեղծագործությունն էր և վաղաժամ

գալթոնը էր ապրում իր շնորհիվ: Միթե դա նվաճում չէ, ինչպես մարդիկ սպասում են, որ կյանքն ինքը բացի նյութից առաջ իր գաղտնիքն էր: Բայց որոշ ընտրյալներն համար կյանքի գաղտնիքները բացահայտվում են նախքան վարազույթի բացվելը: Երբեմն դրան նպաստում է արվեստը (գլխավորապես՝ գրականությունը)՝ անմիջականորեն ներ գործնելով մարդկային մտքի և զգացմունքների վրա: Բայց սխալահամ է, որ արվեստի դերը ստանձնում է բարդ հոգու տևի մի անձնավորություն, որը հենց ինքն է հանդիսանում արվեստի իսկական ստեղծագործություն, որովհետև կյանքը նույնպես ստեղծում է գլուխգործոցներ, ճիշտ այնպես, ինչպես սկզբնական, քանդակագործությունը կամ նկարչությունը:

Այո, Դորիանը շուտ էր հասունացել: Նրա գարունը դեռ չէր անցել, բայց բերքն արդեն հավաքում էր: Նրա մեջ տարրուղջովին պատանեկան ավյուն ու կիրք էր, բայց արդեն հասկանում էր ինքն իրեն: Նրան դիտելը կատարյալ հաճույք էր: Փեղծեցիկ դեմքով և գեղեցիկ հոգով այդ պատանին կենդանի հետաքրքրություն էր առաջացնում իր հանդեպ: Փոքր չէ, թե ինչով կվերջանար, թե ինչպիսի ճակատագիր էր նախասահմանված իր համար: Դա նման էր միստերիայի կամ դրամայի այն հիանալի հերոսներին, որոնց բերկրանքը օտար է մեզ համար, սակայն որոնց տանջանքները արթնացնում են մեր մեջ գեղեցիկի զգացում: Նրանց վերքերը կարմիր վարդեր են:

Կռոկի և մարմին, մարմին և հոգի... Ինչ հանելուկ է դա: Հոգու մեջ թաքնված են կենդանական բնագոյներ, իսկ մարմնում զգացվում են շնչավորող պահեր: Զգացմունքային լուսավորմանը կարող են նրբանալ, իսկ բանականությունը՝ լրջանալ: Ո՞վ կարող է ասել՝ երբ է լուր մարմինը և երբ է սկսում խոսել հոգին: Որքան մակերեսային են սովորական

հուզերանների անհամոզիչ բնորոշումները: Եվ միևնույն ժամանակ որքան դժվար է որոշել, թե տարբեր դպրոցներից ուրն է ավելի մոտ ճշմարտությանը. իսկապես մարդու հուզին իսկ ստվեր է՝ ամփոփված մեղսագործ պատյանի մեջ, թե մարմինն է ամփոփված հոգու մեջ, ինչպես ենթադրում էր Խորյանո Բրունոն: Հոգու անջատումը մարմնից նույնքան անհասկանալի հանելուկ է, որքան հոգու և մարմնի միաձուլումը:

Լորդ Հենրին իրեն հարց էր տալիս, թե կարո՞ղ է այդոք կրկնել հոգեբանությունը դառնալ այնպիսի բացարձակ ճշիլիտ մի գիտություն, որ բացահայտի մեր ներքին կյանքի յուրաքանչյուր նվիրական գիծ: Մենք դեռևս միշտ չէ, որ հասկանում ենք ինքներս մեզ, իսկ ուրիշներին՝ ավելի հուզվադեպ: Փորձը չունի բարոյագիտական ոչ մի նշանակություն: Փորձ անունը մարդիկ տվել են իրենց սլալներին: Իսկոյագետները, որպես կանոն, փորձի մեջ միշտ նախադրուշացման միջոց են տեսել և համարել են, որ դա ազդում է յնավորության ձևավորման վրա: Նրանք փառաբանում էին փորձը, քանի որ փորձը մեզ սովորեցնում է՝ ինչին հետևել և ինչից խուսափել: Բայց փորձը շարժիչ ուժ չունի: Նրա մեջ գործնականը նույնքան քիչ է, որքան և մարդկային գիտակցության մեջ: Իրականում նա միայն ապացուցում է, որ մեր գուլիքը սովորաբար նման է մեր անցյալին, և եթե մի անգամ մոլանչել ենք դժկամությամբ, դա կրկնում ենք կյանքում բուզմաթիվ անգամ, բայց արդեն՝ բավականությամբ:

Լորդ Հենրիի համար պարզ էր, որ միայն փորձնական մեթոդի միջոցով կարելի է կատարել կրքերի գիտական վերլուծություն: Իսկ Դորիան Գրեյը միշտ իր ձեռքի տակ էր, նա մի հարմար առարկա էր, որի ուսումնասիրությունը խուստանում էր շատ հարուստ արդյունքներ տալ: Նրա հան-

կարծակի բռնկված խելահեղ սերը Սիրիլ Վեյնի նկատմամբ չափս հետաքրքիր հոգեբանական երևույթ էր: Իհարկե, այստեղ թիչ դեր չի խաղացել հետաքրքրությունը, այո՛, հետաքրքրությունը և նոր զգացությունների բուռն տենչը: Սակայն այդ սերը ոչ թե պարզ, այլ բավական բարդ զգացում է: Այն, ինչ նրա մեջ ստեղծվել է պատանեկության գուռ զգայական լիազոյներով, իրեն՝ Դորիանին ներկայանում է որպես վեհ մի բան՝ զգայականությունից հեռու, որի պատճառով և՛ ավելի վուսնգավոր: Ահա հենց այդ կրքերը, որոնց էությունը մենք ճիշտ չենք հասկանում, բոլորից ուժեղ են իշխում մեզ վրա: Իսկ ամենաթույլ զգացումները այն զգացումներն են, որոնց ծուղումը մեզ համար հասկանելի է: Հաճախ մարդ կարծում է, թե ինքը ուրիշի վրա է փորձ կատարում, մինչդեռ իրականում փորձը կատարում է հենց իր վրա:

Այդ խորհրդածությունների մեջ էր լորդ Հենրին, երբ դուռը բոլսեցին: Ներս մտավ սպասավորը և հիշեցրեց, որ ճաշի ժամն է:

Լորդ Հենրին բարձրացավ և նայեց փողոց:

Անյր մտնող արևը ներկել էր դիմացի տան բարձր լուսամուտները ալ ոսկերանգ գույնով: Ապակիները փայլվում էին, ինչպես շիկացած մետաղի շերտեր: Տների վերևում տարածվել էր գունատ վարդագույն երկինքը: Իսկ լորդ Հենրին մտածում էր իր նոր ընկերոջ բոցավառ երիտասարդության մասին և փորձում էր կռահել, թե ինչ ճակատագիր է սպասվում Դորիան Գրեյին:

Տուն վերադառնալով տասներկուսն անց կես՝ նախասրահի սեղանին նա տեսավ հեռագիր: Դորիան Գրեյից էր: Նա հայտնում էր Սիրիլ Վեյնի հետ իր նշանադրության մասին:

ԳԼՈՒԽ V

- Մայրիկ, մայրիկ, ես այնպես երջանիկ եմ,- շնչում և, սուղիկը՝ երեսը թաղելով հոգնած, թառամած դեմքով կնոջ հուկների մեջ, որ նստած էր կեղտակորույս աղքատիկ հյու- յասենյակի միակ բազկաթոռին՝ թիկունքով շրջված դեպի ուռնը լույսը,- ես այնպես երջանիկ եմ,- կրկնում էր Սիբիլը:- Եւ դու նույնպես պետք է երջանիկ լինես:

Միսիս Վեյնը ջղաձգորեն գրկեց դստեր գլուխը բիսմութի սլա սպիտակ, բարակ ձեռքերով:

- Երջանիկ,- արձագանքեց նա,- ես միայն երջանիկ եմ քո խաղը դիտելիս: Դու քո խաղից բացի ուրիշ ոչնչի մասին չպետք է մտածես: Միստեր Այզենքը մեր նկատմամբ շատ լուրյացակամ է եղել: Մենք նրան նաև փող ենք պարտք:

Աղջիկը բարձրացրեց գլուխը և դժգոհ ծամածոց դեմքը:

- Փող,- բացականչեց նա,- ինչ է փողը, սերն ավելի կա- յուր է, քան փողը:

- Միստեր Այզենքը մեզ 50 ֆունտ կանխիկ դրամ է տվել, որպեսզի վճարենք պարտքերը և, ինչպես հարկն է, հունապարիի համար ավելի լավ հանդերձանք գնենք Ջեյմ- յին: Մի մոռացիր, Սիբիլ, հիստոն ֆունտը մեծ գումար է: Միստեր Այզենքը շատ ուշադիր է մեր նկատմամբ:

- Նա ջենտլմենն չէ, մամա՛, ես տանել չեմ կարողանում ինձ մտ խոսելու նրա ձևը,- տեղից կանգնելով՝ ասաց աղջիկը և խոտեցավ լուսամուտին:

- Ես չգիտեմ, թե մենք ինչ կանեինք, եթե նա չլիներ,- լուրի փնթփնթաց մայրը:

Սիբիլ Վեյնը ծիծաղելով ետ գցեց գլուխը:

- Նա մեզ այնս պետք չէ, մամա՛: Հիմա մեր կյանքը ուսորինելու է Հմայիչ Արքայազնը:

Նա հանկարծ լռեց: Արյունը խփեց երեսին, այտերը շառա-

գունեցին: Արագ շնչառությունից բացվեցին ծաղկաթերթի-
շուրթերը և սկսեցին թրթռալ: Նրա մոտով սլացավ կրքի այ-
րով բամբին և, կարծես, նույնիսկ շարժեց զգեստի նուրբ ծալ-
իկը:

Էս նրան սիրում եմ,- առանց սեթևեթանքի ասաց Սի-
րիլը:

Հիմա՞ր աղջիկ: Հիմա՞ր աղջիկ,- ի պատասխան դստեր՝
թուրակի պես կրկնում էր մայրը: Եվ կեղծ աղամանդե մատա-
նվներով զարդարուն կեռ մատների շարժումները մի տեսակ
անմեղեկություն հաղորդեցին այդ խոսքերին:

Աղջիկը կրկին ծիծաղեց: Բայց ծիծաղը նման էր վանդա-
կում զերված թռչնի ուրախության: Այդ ուրախությունը ար-
տաճուկեց նրա աչքերում. Սիրիլը մի պահ փակեց աչքերը.
կայծենա ուզում էր թաքցնել իր գաղտնիքը: Իսկ երբ կրկին
բացեց, նրանք արդեն մշուշված էին անուրջով:

Բարակաշուրթ իմաստությանը կոչ էր անում նրան իյր
մուշված բազկաթոռից՝ քարոզելով ողջամտություն և զգու-
շություն, ասությաներ բերելով վախկոտության գրքից, ուրն
լյուև ներկայացնում է որպես առողջ դատողություն: Սիրիլը
չէր լսում: Սիրո կամավոր գերին մենակ չէր այդ պահին: Նրա
հետ էր իր արքայազնը՝ Հմայիչ Արքայազնը: Նա կոչ արեց
հիշողությանը, և հիշողությունը վերստեղծեց նրա կերպարը:
Ուղարկեց իր հոգուն նրան որոնելու, և հոգին գտավ ու բերեց
Դորիանին: Սիրիլի շուրթերը դեռ այրվում էին համբույրից,
նրա կոպերը դեռ ջերմացած էին Դորիանի շնչառությունից:

Իմաստությունը մինչ այդ փոխեց իր տակտիկան և սկսեց
խուսկ ստուգելու, տեղեկություններ ստանալու անհրաժեշ-
տության մասին: Այդ երիտասարդը պետք է որ հարուստ
լինի: Եթե այդպես է, հարկավոր է մտածել ամուսնության
մասին: Բայց կյանքի խորամանկության ալիքները զայնվում

Լին Սիրիլի ականջներին, խարդավանքի նետերը սուրում Լին կողքով: Նա տեսնում էր միայն, թե ինչպես էին շարժվում յուրակ շուրթերը, և ժպտում էր:

Հանկարծ խոսելու անհրաժեշտություն զգաց: Բազմախոս յուրությունը տանջում էր նրան:

Մայրիկ, մայրիկ,– բացականչեց Սիրիլը, – ինչո՞ւ է նա լնձ աղբյան սիրում: Ես գիտեմ, թե ինչու սիրեցի նրան: Նա սրանչելի է, ինչպես Սերն ինքը: Բայց ի՞նչ է նա գտել իմ մեջ: Լու նրան արժանի չեմ: Սակայն... չգիտեմ ինչու, չնայած նա լնձանից բարձր է, բայց ես ամենևին չեմ ամաչում: Ես հպարտունում եմ, շատ-շատ եմ հպարտանում իմ սիրով: Մայրիկ, դու նոյնպես սիրում էիր իմ հորն այնպես, ինչպես ես եմ սիրում հմայիչ Արքայազնին:

Տարեց կնոջ դեմքը դիմափոշու հաստ շերտի տակ գուլուտովեց: Չոր շրթունքները ծոմովեցին ջղաձիգ ցավից: Սիրիլը վազեց դեպի մայրը, գրկեց պարանոցը և համբուրեց:

Ներիր, մայրիկ, գիտեմ՝ քեզ համար դժվար է հիշել հորս, որովհետև դու շատ ես սիրել նրան: Բայց այդպես մի տխրիր: Այսօր ես այնքան եմ երջանիկ, ինչքան դու երջանիկ ես ևդել քսան տարի առաջ: Ա՛խ, մի խանգարիր, թող որ ես հուովիտյան երջանիկ լինեմ:

– Սիրիլ, դու դեռ երեխա ես սիրահարվելու համար: Բացի այդ, ի՞նչ գիտես, թե ով է այդ երիտասարդը: Դու նույնիսկ նրա ունունը չգիտես: Մի խոսքով, այդ բոլորը շատ անպատշաճ է, մոռավանդ հիմա, երբ Ջեյմսը մեկնում է Ավստրալիա, և ես այնքան հոգսեր ունեմ... Դու պետք է շատ ավելի ուշադիր լինես... ինչևէ, եթե պարզվի, որ նա հարուստ է...

– Ախ, մայրիկ, մայրիկ, մի խանգարիր իմ երջանկությանը:

Միսսիս Վեյնը նայեց դստերը և թատերական կեղծ շարժումով, որ հաճախ դերասանի մոտ դառնում է «երկրորդ

րնտախորություն», դասերը առավ գիրկը:

Այդ յոպենինդուռը բացվեց, և սենյակ մտավ շագանակագույն կոշտ մագերով մի պատանի: Նա ամրակազմ էր, ուներ խոշոր ձեռքեր, ոտքեր և փոքր-ինչ անվարժ շարժումներ: Պատանին չունկը քրոջ նրբագեղությունը: Դժվար էր հավատալ, որ նրանից այդքան մոտիկ հարազատներ են:

Միասին Վեյնը հայացքը գցեց որդու վրա, և ավելի լայն ժպտաց: Որդին այդ րոպեին նրա համար հանդիսատեսի պիտի լի կատարում, և նա զգում էր, որ ինքը դստեր հետ հետադարձորդ տեսարան է ներկայացնում:

Կուցեց ինձ համար էլ մի քանի համբույր թողնեիր, Սիբիլ,-
ուսուց պատանին՝ բարեհոգի հանդիմանանքով:

Բայց չէ՞ որ դու համբուրվել չես սիրում, Ջիմ,- բացականչեց Սիբիլը,- դու ահավոր ծեր արջ ես,- և տեղից ցատկելով՝ սուտը գրկեց եղբորը:

Ջեյմս Վեյնը քնքշությամբ նայեց քրոջը:

Սիբիլ, արի գնանք մի քիչ զբոսնենք: Հավանաբար, ես կրկին այնս չեմ վերադառնա այս գարշելի Լոնդոնը: Եվ բոլորովին չեմ ամստում դրա համար:

Ուրդին, այդպիսի սարսափելի բաներ մի՛ ասա,- հառաչելով՝ քրոջն առաջ միասին Վեյնը և, վերցնելով կեղծ ոսկեհյուս բառերով մի զգեստ, սկսեց վերանորոգել: Նա փոքր-ինչ կոտորակվեց, որ որդին չմասնակցեց հուզիչ խաղին: Չէ՞ որ սուր տեսարանը այն ժամանակ ավելի տպավորիչ կլիներ:

Իսկ ինչո՞ւ չասեմ, մամմ, եթե այդպես է:

Կու վշտացնում ես ինձ, տղան: Ես հույսով եմ, որ Ավստրոլիայից հարստացած կվերադառնաս: Համոզված եմ, որ գոյություն ունի լավ հասարակություն չես գտնի, այնպիսին, որ լսարկիրթ հասարակություն կոչվի: Այնպես որ, երբ հասնում ես, վերադարձիր և տեղավորվիր Լոնդոնում:

Լավ հասարակություն,- փնթփնթաց պատանին,- շատ
Լ. Խարկավոր: Միայն թե փող աշխատեմ, որպեսզի դու և
Սյրիլը թեմից հեռանաք: Ատում եմ բեմը:

Օհ, Ջիմ, ինչ փնթփնթա՞նս ես,- ծիծաղելով ասաց Սյրիլը-
բայց իսկապե՞ս ուզում ես զբոսնել ինձ հետ: Հիանալի է: Իսկ
ևս վախենում էի, թե կգնաս ընկերներիդ հրաժեշտ տալու՝
Իմ Հարիին, որ քեզ նվիրել է այդ այլանդակ ծխամորձը,
կամ Նեդ Լենգթոնին, որ ծիծաղում է վրադ, երբ դրանով
ծխում ես: Շատ հաճելի է, որ որոշել ես վերջին օրն ինձ հետ
անույկացնել: Իսկ ո՞ր գնանք: Եկ գնանք Հայդ Պարկ:

Ոչ, ես շատ վատ եմ հագնված,- մոայլվելով՝ սլատաս-
խունեց տղան,- պարկում զբոսնում են միայն շքեղ հագնված-
ները:

Հիմարություն մի՛ ասա, Ջիմ,- ասաց Սիրիլը՝ ուղղելով
կոյրը վերարկուի թևքը:

Մի պահ պատանին տատանվեց:

- Դե լավ,- ասաց նա վերջապես,- միայն շուտ հագնվիր:

Սյրիլը ցատկեց դեպի դուռը և, երգելով, բարձրացավ աս-
տիճաններն ի վեր: Վերևում լավում էր նրա փոքրիկ ոտքերի
թխթխկոցը:

Ջեյմսը մի քանի անգամ ետ ու առաջ քայլեց սենյակում:
Հետո շրջվեց դեպի բազկաթոռում նստած անշարժ կերպա-
րանքը:

- Մայրիկ, իրերս արդեն պատրաստ են, - հարցրեց նա:

- Ամեն ինչ պատրաստ է, Ջեյմս,- պատասխանեց մայրը՝
ուսքը չկտրելով ձեռքի աշխատանքից: Վերջին ամիսներին
միսսիս Վեյնը մի տեսակ վատ էր զգում, երբ մենակ էր մնում
իր մոայլ և կոպիտ որդու հետ: Սահմանափակ և ծածկամիտ
կյանը շփոթվում էր, երբ նրանց աչքերը հանդիպում էին:
Հաճախ նա հարցնում էր ինքն իրեն, թե արդյոք որդին ոյրև,

բուն չի կասկածում:

Ջեյմսն այլևս ոչ մի բառ չէր խոսում, և այդ լռությունը մոր համար անտանելի էր: Մայրն սկսեց իր հանդիմանություններն ու բողոքները: Կանայք միշտ պաշտպանվում են հարձակումով: Եւ՛ր նրանց այդ հարձակումները հաճախ վերջանում են համվարձակի և անհասկանալի հանձնվելով: :

Հույսով եմ, որ գոհ կմնաս քո ծովային ճանապարհորդությունից, Ջեյմս,- սկսեց միսսիա Վեյնը,- մի՛ մոռացիր, որ լնդիլ ցանկացար: Դու կարող էիր աշխատանքի ընդունվել պատմական հիմնարկում: Փաստաբանները շատ հարգարժան մուլդիկ են, զավառում հաճախ են նրանց ամենալավ ընտանիքների ճաշի հրավիրում:

Ատում եմ հիմնարկներն ու նրանց պաշտոնյաներին,- պոտոտսխանեց Ջեյմսը:- Բայց դու միանգամայն ճիշտ ես, եւ եմ ընտրել այդ ուղին: Իմ կյանքը ես կապեմ այնպես, ինչպես ինքս եմ ուզում: Իսկ քեզ, ահա թե ինչ պետք է ասեմ, մայրիկ, ուշադիր եղիր Սիբիլի համար: Հետևիր, որ նրան դժբախտություն չպատահի: Դու պետք է պահպանես նրան:

Չգիտեմ՝ ինչու ես այդ ասում, Ջեյմս, իհարկե պետք է պոտխանեմ:

Էսկ եմ, որ ամեն երեկո ինչ-որ ջենտլմեն է գալիս թատրոն և գնում ետնաբեմ՝ Սիբիլի մոտ: Ճիշտ է: Ինչ կասես այդ մասին:

Ջեյմս, այդ բաները դու երբեք չես հասկանա: Մենք՝ դերասաններս, սովոր ենք, որ մեզ ցույց տան սիրալիր վերաբերմունք: Ինձ նույնպես մի ժամանակ շատ ծաղիկներ էին նվիրում: Այն ժամանակ մարդիկ կարողանում էին գնահատել մեր արվեստը: Իսկ ինչ վերաբերում է Սիբիլին... Ես դեռ չգիտեմ՝ լնդջ են նրա զգացմունքները, թե ոչ: Բայց, սովորական, այդ երիտասարդը իսկական ջենտլմեն է: Նա

ուստ քաղաքավարի է ինձ հետ: Բացի այդ, երևում է, որ ուրուստ է: Հրաշալի ծաղիկներ է ուղարկում Սիրիլին:

Բայց չէ՞ որ դու նույնիսկ նրա անունը չգիտես,- կտրուկ լուսս տղան:

Այո՛, չգիտեմ,- պատասխանեց նա հանգիստ արտահայտությամբ:- Նա դեռ մեզ չի ասել իր իսկական անունը: Դա ուստ ռոմանտիկ է: Հավանաբար, նա արիստոկրատական տալից է:

Ջեյմս Վեյնը կծեց շրթունքը:

Զգուշացիր Սիրիլի համար, մամա՛,- ասաց նա նույն հա-
մուտությամբ,- զգուշացիր:

Զավակս, դու ինձ շատ ես վշտացնում: Սիրիլը միշտ էլ եղել է իմ հոգատարության առարկան: Իհարկե, եթե այդ թնտղմենը հարուստ է, ինչո՞ւ չամուսնանա նրա հետ: Ես համոզված եմ, որ նա արիստոկրատ է: Դա երևում է նրա ուրուաքինից: Ամենափայլուն ամուսնությունը կլինի Սիրիլի համար: Նրանք հրաշալի զույգ կկազմեն, նա գեղեցիկ է, այդ փոխկցությունը աչքի է ընկնում:

Ջեյմսը ինչ-որ բան քրթմնջաց ինքն իրեն և մատներով քիսկթկացրեց լուսամտի ապակուն: Հետո շրջվեց դեպի մույրը՝ ինչ-որ բան ասելու, բայց այդ պահին դուռը բացվեց և վազելով ներս մտավ Սիրիլը:

Օ՛, ի՞նչ լուրջ եք երկուսդ էլ,- բացականչեց նա,- ի՞նչ է պատահել:

- Ոչինչ,- պատասխանեց Ջեյմսը,- հո միշտ չի կարելի ծի-
հաղել, պետք է երբեմն էլ լուրջ լինել: Ցտեսություն, մայրիկ, ճաշելու կգամ ժամը 9-ին: Ամեն ինչ կապված, պատրաստ է, բացի վերնաշապիկից, այնպես որ, մի անհանգստացիր:

- Ցտեսություն, տղաս,- պատասխանեց մայրը,- գլխի
կիսաքանչ, բայց բռնազբոսիկ խոնարհումով: Նա չափազանց

վատ էր զգում, երբ որդին այդ ձևով էր խոսում իր հետ: Նրա հայացքում ինչ-որ բան կար, որ վախեցնում էր մորը:

- Համբուրիր ինձ, մայրիկ,- ասաց Սիրիլը: Նրա ծաղկաթերթ նուրբ շուրթերը դիպան մոր թառամած այտերին և ջերմացրին:

- Օ՛, աղջիկս, աղջիկս,- բացականչեց միսսիս Վեյները՝ նախելով առաստաղին ու փնտրելով երևակայական հանդիսա տեսին:

- 'Ին գնանք, Սիրիլ,- անհամբեր ասաց եղբայրը: Նա տանել չէր կարողանում մոր քնքշանքները:

Քույր ու եղբայր դուրս ելան փողոց, որտեղ արևի լույսը կովում էր քամու հետ, և քայլեցին մոայլ Յուսթուն-Ռուդով: Անցորդները զարմացած նայում էին վատ հագնված, խստադեմ, թիկնեղ երիտասարդին, որն ընկերակցում էր մի նրբագեղ և չյնաղ աղջկա: Նա հիշեցնում էր գեղջուկ պարտիզպանին, որն զբոսնում է՝ սքանչելի վարդը ձեռքին:

Ջիմը մերթ ընդ մերթ մոայլվում էր՝ որսալով մեկնումեկի հետաքրքրասեր հայացքը: Նա չէր սիրում, երբ նայում էին իրեն. մի զգացում, որ ծանոթ է հանճարներին միայն իրենց կյանքի մայրամուտին, սակայն սովորական մարդկանց երբևէ չի լքում: Սիրիլը բոլորովին չէր նկատում, որ իրենով զմայլվում են: Սերը զրնգում էր նրա ծիծաղի մեջ, թրթռում շուրթերի վրա: Նա մտածում էր հմայիչ Արքայազնի մասին և, որպեսզի ոչ ոք չկտրի նրան իր մտքերի հաճույքից, շատախոսում էր միայն նավի մասին, որով մեկնելու էր Ջիմը, ոսկու մասին, որը նա անպայման պետք է գտներ Ավստրալիայում, երևակայական հարուստ և հիասքանչ աղջկա մասին, որի կյանքը պետք է փրկեր Ջիմը՝ վերնաշապիկ հագած ավագակներից: Սիրիլի մտքով չէր էլ անցնում, թե Ջիմն ամբողջ կյանքի ընթացքում կմնա հասարակ նավաստի

կում կապիտանի երրորդ օգնական կամ նման մի բան: Մ', ոյ, նա վաստու կյանքը սարսափելի է: Պատկերացրեք՝ միշտ մոռոլ ահավոր նավի մեջ, փակված, որ ամեն բույս փորձում է ու ներս խուժել ահեղամոռնչ սապատավոր ալիքները, իսկ լուսման քամին ճկում է կայմը և պատառոտում առագաստները կրկնա սվսվացող ծվենների: Հենց որ նավը հասնի Մելբուռն, Քիմսը պետք է քաղաքավարությամբ հրաժեշտ տա նավա- ուկոտին և անմիջապես հեռանա դեպի ոսկու հանքերը: 'Հունցած մեկ շաբաթ՝ նա կգտնի մաքուր ոսկու մի բնակտոր և, ձիավոր վեց ոստիկանների հսկողությամբ, ծածկակառքով կուղղափոխի ափ: Թփուտներում ծալոված ավազակները կրկն անգամ կհարձակվեն նրանց վրա և պարտված կնա- հունջեն՝ անհամար զոհերով: Կամ՝ ոչ, բոլորովին էլ չի գնա ուսկու հանքերը: Այնտեղ սարսափելի բաներ են տեղի ունե- նում: Մարդիկ թունավորում են միմյանց, բարերում կրակում են իրար վրա, հայհոյում: Ավելի լավ է՝ Ջեյմսը դառնա խաղաղասեր ֆերմեր, զբաղվի ոչխարաբուծությամբ: Եվ մի վեպեցիկ երեկո, երբ ձի նստած տուն վերադառնա, հանկարծ կուռսնի, թե մի ավազակ, սև ձիու վրա, ինչպես է փախցնում չրնաղ և տոհմիկ մի աղջկա: Նա կհարձակվի այդ ավազակի վրա և կփրկի աղջկան, իսկ հետո, պարզ է, կսիրահարվեն, կուռնունանան և, վերադառնալով Լոնդոն, կապրեն մի հուկայական տան մեջ: Այո, Ջեյմսին սպասում են հրաշալի ուրկածներ, միայն թե նա պետք է խելոք լինի և չկորցնի համբերությունը կամ հիմարաբար վատնի փողերը:

- Դու պետք է ինձ լսես, Ջեյմս, թեև ես ընդամենը մեկ ուսրով եմ քեզանից մեծ, բայց կյանքն ավելի լավ եմ ճա- նաչում: Իմացիր, որ ինձ պետք է միշտ նամակ գրես, ամեն փոստում, և աղոթես քնելուց առաջ: Ես նույնպես կաղոթեմ յուզ համար, Աստված շատ բարի է և կպահպանի քեզ: Իսկ մի

քանի տարուց հետո դու կվերադառնաս հայրենիս և կըջանիկ:

Ջեյմսը մոռալված լսում էր բոլոր և ոչինչ չէր որոտոտխանում: Նա տխուր սրտով էր հեռանում տալիս Բուդ միայն այդ պատճառով չէր թախծում նրա սիրտը: "Պատճառ իր անխորժությանը՝ նա, այնուամենայնիվ, գգում էր, որ Սիբիլին վտանգ է սպառնում: Այդ բարձրաշխարհիկ երկաստակույ պճնամուլից, որը սիրահետում էր բոլոր, թու՛ր թան չէր տպասում: Նա արհեստակրատ էր, այդ պատճառով էլ Չերտը տառում էր նրան, ատում էր ինչ-որ դասակարգային բնույթով, որն իրեն անհասկանալի էր և այդ պատճառով էլ՝ տալիս տխրական: Բացի այդ, նրան քաջ հայտնի էր մեր բեկմանիս բնավորությունն ու սին փառամոլությունը, որի մեջ ինքը տուկալի վտանգ էր տեսնում Սիբիլի ու նրա եղբայրների համար: Մանկության տարիներին երեխաները սիրում էին իրենց ծնողներին, բայց երբ մեծանում էին, բնույթապես էին նրանց: Իսկ երբեմն էլ՝ ներում:

Մայր... Ջեյմսը վաղուց էր ուզում մի հարց տալ մորը, հարց, որ տանջում էր իրեն երկար ու ճիշդ տվյալներ: Մի նախադասություն, որ պատահմամբ ինքը լսել էր բառարանում, ծաղրական մի քչից, որ հասել էր տխմելին մի գիշեր ետնաբեմի մուտքի մոտ մորն սպասելիս, նրա մեջ ծնել էր սարսափելի կասկածներ: Այդ հիշողությունը տպում էր նրան, ինչպես երեսին իջած մտրակի հարված: Մեղտնի ակոսի նման խոժոռվել էին հոնքերը, ցավի կակիծով նա կծեց ներքին շրթունքը:

- Դու ինձ բոլորովին չես լսում, Ջիմ, համկարծ բացականչեց Սիբիլը: Իսկ ես քո ապագայի համար հիստուպի հեռանկարներ եմ նախագծում: Դե, մի բան տուս

- Ի՞նչ ասեմ:

- Թեկուզ ասա, որ խելոք տղա կլինես և մեկ չես մոռա-

նա,- ժպտալով ասաց Սիրիլը:

Ջեյմսը թոթվեց ուսերը:

- Ավելի շուտ դու կմոռանաս ինձ, քան ես՝ քեզ, Սիրիլ:

Աղջիկը շառագունեց:

- Ինչո՞ւ ես այդպես կարծում, Ջիմ,- հարցրեց նա:

- Լսել եմ՝ նոր ընկեր ունես: Ո՞վ է նա, ինչո՞ւ նրա մասին ինձ ոչինչ չես պատմել: Այդ ծանոթությունը լավ բանի չի հանգեցնի:

- Սպասիր, Ջիմ,- բացականչեց աղջիկը,- նրա մասին վատ բան չասես: Ես սիրում եմ նրան:

- Բայց չէ՞ որ դու նույնիսկ նրա անունը չգիտես,- պատասխանեց Ջեյմսը,- ո՞վ է նա: Ես կարծում եմ, որ իրավունք ունեմ իմանալու:

- Նրա անունը Հմայիչ Արքայագն է: Քեզ դուր չի՞ գալիս: Օ՛, հիմա՛ր տղա, լավ հիշիր այդ անունը: Եթե դու տեսնեիր իմ Արքայագնին, կհասկանայիր, որ աշխարհում նրանից լավը չկա: Երբ վերադառնաս Ավստրալիայից, ես ձեզ կծանոթացնեմ. նա քեզ շատ փութ կգա, Ջիմ: Նա բոլորին դուր է գալիս, իսկ ես... Ես սիրում եմ նրան: Ափսոս որ այս երեկո դու չես կարող գալ թատրոն: Նա պետք է այնտեղ լինի: Ես այսօր Ջուլիետտա եմ խաղում: Ինչպե՞ս եմ խաղալու: Պատկերացրու, Ջիմ, խաղալ Ջուլիետտա, երբ սիրահարված ես, և երբ նա նստած է քո առաջ: Խաղալ նրան հիացնելու համար: Ես նույնիսկ վախեցնում եմ, թե կահաբեկեմ հանդիսատեսին, կահաբեկեմ կամ հիացմունք կպատճառեմ: Սերը վեհացնում է մարդուն: Պատկերացնում եմ, թե ինչպես է այդ խեղճ այլանդակը՝ միստեր Այգեքսը, բազում բաժակակիցներին հայտարարելու, որ ես՝ հանճար եմ: Նա հավատում է ինձ, իսկ այսօր աղոթելու է իմ առաջ: Եվ այդ բոլորը արել է նա՝ իմ Հմայիչ Արքայագնը՝ իմ հրաշալի սերը, գեղեցկության աստվածը: Բայց ես այնքան եմ

խղճուկ նրա համեմատությամբ: Խղճուկ... Փույթ չէ: Առածն ասում է. երբ աղքատությունը ներս է սողում դռնից, սերը ներս է թռչում լուսամուտից¹: Այսպես պետք է վերափոխվեն առածները: Նրանք գրվել են ձմռանը, իսկ հիմա ամառ է... Ոչ, ինձ համար այժմ գարուն է՝ իսկական ծաղկունքի պարահանդես կապույտ երկնքի տակ:

- Նա տոհմիկ մարդ է,- մռայլ ասաց Ջեյմսը:

- Նա արքայազն է,- երգեցիկ ձայնով ասաց Սիրիլը,- Ուրիշ էլ ինչ ես ուզում:

- Նա ուզում է քեզ դարձնել իր սրտկուհին:

- Իսկ ես դողում եմ ազատության մտքից:

- Ջգուշացիր նրանից, Սիրիլ:

- Նրան տեսնել, նշանակում է պաշտել նրան, ճանաչել, նշանակում է հավատալ նրան:

- Սիրիլ, նա քեզ լրիվ խելքահան է արել:

Աղջիկը ծիծաղեց՝ թևանցուկ անելով եղբորը:

- Ջիմ, սիրելիս, դու այնպես ես խոսում, կարծես հարյուր տարեկան լինես: Մի օր էլ ինքդ կսիրահարվես, այն ժամանակ կհասկանաս, թե ինչ է սերը: Դե, մի՛ մռայլվիր: Դու պեսք է ուրախանաս, որ, մեկնելով այստեղից, ինձ այսպես երջանիկ ես թողնում: Կյանքը մեր երկուսի համար էլ ծանր է եղել, սարսափելի ծանր և դժվար: Իսկ այժմ բոլորովին այլ կերպ կլինի: Դու գնում ես, որպեսզի նոր աշխարհ տեսնես, իսկ ես այդ աշխարհը հայտնագործել եմ այստեղ՝ Լոնդոնում... Ահա, երկու ազատ տեղ, եկ նստենք և նայենք այս հագած-կապած հասարակությանը:

Նրանք նստեցին անցուղարձ անողների ղիտող բազմության մեջ:

¹ Երբ աղքատությունը ներս է սողոսկում դռնից, սերը դուրս է թռչում պատուհանից: Այս ասացվածքի փոխված ձևն է:

Ծաղկաթմբերի երկայնքով կրակի կայծկլտող օղակների նման հուրհրատում էին վարդակակաչները: Սպիտակ փոշին կախված էր հեղծուցիչ օդում, ինչպես մանուշակարույր դիմափոշու լողացող ամպ: Խայտաբղետ հովանոցները հսկայական թիթեղների նման խայտում և օրորվում էին օդում:

Սիրիլը համառորեն հարցուփորձ էր անում եղբորը՝ ցանկանալով, որ նա իր հետ բաժանի ծրագրերն ու հույսերը: Ջեյմսը պատասխանում էր դանդաղ և դժկամությամբ. նրանք բառերը այնպես էին փոխանակում, ինչպես խաղացողներն իրենց խաղանիշերը: Սիրիլն ընկճված էր: Նա չէր կարողանում եղբորն իր ուրախությամբ համակել: Մնայլ դեմքին հայտնված թեթև ժպիտը միակ արձագանքն էր, որ Սիրիլը կարողացավ կորզել եղբորից: Հանկարծ նա իր առաջ ոսկեփայլ մազեր տեսավ և ծանոթ ժպտացող շուրթեր: Նրանց մոտով մի բաց կառք անցավ, որի մեջ երկու տիկինների հետ նստած էր Դորիան Գրեյը:

Սիրիլը վեր ցատկեց:

- Նա է:

- Ո՞վ,- հարցրեց Ջիմը:

- Հմայիչ Արքայազնը,- պատասխանեց քույրը՝ հայացքը չկտրելով կառքից:

Պատանին վեր ցատկեց և ամուր բռնեց նրա ձեռքը:

- Ո՞ր է: Ո՞րը: Դե ցույց տուր: Ես պետք է նրան տեսնեմ:

Բայց այդ րոպեին դուքս Բերվիքի քառածի կառքը իր հետևում փակեց ամեն ինչ, իսկ երբ անցավ, Դորիանն արդեն հեռացել էր:

- Գնաց,-տխուր շնչաց Սիրիլը,- ափսոս, չտեսար նրան:

- Այո, ափսոս: Որովհետև եթե քեզ խաբի, երգվում եմ աստծով, ես կգտնեմ ու կսպանեմ, նրան:

Սիրիլը սարսափած նայեց եղբորը: Իսկ նա նորից կրկնեց

իր խոսքերը, որոնք դաշույնի պես թրատեցին օդը: Կողքի մարդիկ նայեցին Ջեյմսին: Նրանց մոտ կանգնած մի տիկին սկսեց քրքջալ:

- Գնանք այստեղից, Ջիմ, գնանք,- շնչաց Սիրիլը: Նա քայլեց ամբոխի միջով, իսկ Ջիմը, իր ասածից գոհ, լուռ հետևում էր նրան:

Երբ հասան Աքիլլեսի արձանին, աղջիկը շրջվեց: Նա ափսոսանքով գլուխն օրորեց, նայեց եղբորը, որի շուրթերին թրթռում էր ժպիտը:

- Դու հիմար ես, Ջիմ, կատարյալ հիմար և վատ տղա, ուրիշ ոչինչ: Ինչպե՞ս կարող ես այդպիսի սարսավելի բաներ ասել: Ինքդ էլ չես հասկանում, թե ինչ ես ասում: Դու պարզապես խանդում ես, ահա թե ինչու այդքան անբարյաղակամ ես: Ա՛յս, երանի թե ինքդ էլ սիրահարվես: Մերը բարի է դարձնում մարդկանց, իսկ դու չար բաներ ասացիր:

- Ես արդեն տասնվեց տարեկան եմ,- պատասխանեց Ջիմը,- և գիտեմ, թե ինչ եմ ասում: Մայրիկը քեզ այդ հարցում չի օգնի: Նա չի կարող պաշտպանել քեզ: Ավսո՛ւս՝ զնում եմ Ավստրալիա: Եթե ստորագրած չլինեի պայմանագիրը, սատանայի ծոցը կուղարկեի Ավստրալիան և կմնայի այստեղ:

- Օ՛, այդպես լուրջ մի՛ եղիր, Ջիմ: Դու նման ես այն անհեթեթ մելոդրամաների հերոսներին, որոնց մեջ մայրիկն այնքան սիրում է խաղալ: Բայց ես չեմ ուզում քեզ հետ վիճել: Չէ՞ որ ես հենց նոր նրան տեսա, իսկ նրան տեսնելը կատարյալ երջանկություն է ինձ համար: Չվիճենք: Գիտեմ՝ դու երբեք չես վնասի մեկին, որին ես եմ սիրում: Ճիշտ չէ՞, Ջիմ:

- Դանի օրեո սիրում ես, գուցե,- մոայլ պատասխանեց տղան:

- Ես նրան սիրելու եմ հավիտյան,- բացականչեց Սիրիլը:

- Իսկ նա՞:

- Նույնպես հավիտյան:

- Որ այդպես է, լավ է:

Սիրիլն ակամա ետ քաշվեց եղբորից: Ապա ծիծաղեց և ձեռքը դրեց նրա ուսին: Չէ որ Ջիմը նրա համար դեռ երեխա էր:

Մարմարե կամարի մոտ նրանք հանրակառոք նստեցին և գնացին իրենց խարխուլ տունը, որ Յուսթոն-Ռոդում էր: Ժամը արդեն հինգն անց էր, իսկ Սիրիլը խաղից առաջ պետք է մի երկու ժամ պառկեր հանգստանալու: Ջիմն ստիպեց, որ քույրը հանգստանա, նա ասաց, որ չի ուզում հրաժեշտ տալ մոր ներկայությամբ, թե չէ մայրն անպայման տեսարաններ կսարքեր, իսկ նա ոչ մի տեսարան տանել չէր կարող:

Սիրիլի սենյակում նրանք բաժանվեցին: Պատանու սրտում գալարվում էր խանդը և մոլեգին սպանիչ ատելությունը այն օտարի նկատմամբ, որը, ինչպես նրան թվում, էր, կանգնել էր իր և բոլոր միջև: Բայց երբ Սիրիլը գրկեց եղբորն ու մատներով խառնեց նրա մազերը, Ջիմը մեղմացավ և համբուրեց քյոռն անկեղծ քնքշանքով: Աստիճաններով իջնելիս նրա աչքերը լի էին արցունքներով: Ներքևում սպասում էր մայրը: Նա կշտամբեց որդուն ուշանալու համար: Ջիմը ոչինչ չպատասխանեց և նստեց աղքատիկ սեղանի մոտ ճաշելու: Սեղանի վրա դրվում էին ճանճերը, ման էին գալիս կեղտոտ սփռոցի վրայով: Հանրակառքերի և կեբերի դղրդոցի միջից Ջիմը լսում էր մոր միապաղաղ ձայնը, որ թունավորում էր իր վերջին թուլեաները:

Քիչ անց նա մի կողմ հրեց ափսեն և գլուխն առավ ափերի մեջ: Ջիմն իրավունք ուներ ամեն ինչ իմանալու: Եթե ճիշտ է իր կասկածանքը, ապա մայրը վաղուց պետք է իրեն պատմած լիներ: Սարսափից քար կտրած մայրը դիտում էր որդուն: Խոսքերը մեքենաբար դուրս էին թոչում նրա շուրթերից:

մատների մեջ ճմրթում էր ժանյակներիզ թաշկինակը: Երբ արդեն ժամը վեցն էր, Զիմը տեղից ելավ և գնաց դեպի դուռը, հետո շրջվեց և նայեց մորը: Նրանց հայացքները հանդիպեցին միմյանց, մոր աչքերում տղան նկատեց ներման թախանձագին աղերս: Դա ավելի բորբոքեց պատանու զայրույթը:

- Մամա՛, ես մի հարց եմ ուզում տալ քեզ,- սկսեց նա:

Մայրը լուռ էր, նրա հայացքն անորոշ թափառում էր սենյակում:

- Ինձ ճշմարիտն ասա, ես իրավունք ունեմ իմանալու: Դու ամուսնացած էիր հորս հետ:

Միսսիս Վեյնը խոր հառաչեց: Դա թեթևության հառաչանք էր: Սարսափելի պահը, որին նա տագնապով էր սպասել գիշեր ու ցերեկ, շաբաթներ և ամիսներ, եկել էր վերջապես, սակայն ինքը չսարսափեց: Իհարկե, որոշ չափով հիասթափվեց: Հարցի կոպիտ անմիջականությունը պահանջում էր նույնքան անմիջական պատասխան: Կացությունն աստիճանաբար չէր հասունացել: Դա մի տեսակ աններդաշնակ էր և վատ խաղափորձ էր հիշեցնում:

- Ո՛չ,- պատասխանեց մայրը՝ զարմանալով կյանքի կոպիտ պարզության վրա:

- Ուրեմն, հայրս սրիկա՛մ է եղել,- գոռաց պատանին՝ սեղմելով բռունցքները:

Մայրը տարութերեց գլուխը:

- Ո՛չ: Ես գիտեի, որ նա ազատ չէ: Բայց մենք շատ էինք սիրում միմյանց: Եթե նա կենդանի լիներ, մեզ կապահովեր: Նրան մի՛ մեղադրիր, զավակս, նա քո հայրն էր և ջենտլմեն էր: Այո՛, նա իրոք ազնվական տոհմից էր:

- Նզո՞վք,- դուրս թռավ պատանու շուրթերից:- Ինձ համար դա միևնույնն է,- բացականչեց նա,- բայց տե՛ս՝ նույնը

յուլատառիկ և Սիբիլի հետ: Չէ՞ որ նա նույնպես քննադատում է, նա, որ սիրահարված է Սիբիլին, կամ ձևացնում է, թե սիրահարված է. հավանաբար նա նույնպես... «ջենտլմեն է՝ սուսվական տոհմից»:

Մի պահ ամոթի նվաստացուցիչ զգացում համակեց մորը: Նա կախեց գլուխը: Դողդոջուն ձեռքերով սրբեց աչքերը:

– Սիբիլը մայր ունի,– շշտաց նա,– իսկ ես ոչ ոք չունեի:

Պատանին զգացվեց: Մոտեցավ մորը և խոնարհվելով՝ համբուրեց նրան:

– Ներիր, մամմ, որ վշտացրի քեզ՝ հորս մասին հարցնելով,– ասաց նա,– բայց ես այլ կերպ չէի կարող: Իսկ այժմ մամանակն է գնալու: Մնաս բարով, հիշիր, որ դու իմա հուզալու ես Սիբիլի մասին: Հավատա՛ ինձ, եթե այդ մարդը վշտացնի քրոջս, ես կիմանամ՝ ով է նա, կգտնեմ և շան նման կսպանեմ նրան: Երդվում եմ:

Սպառնալիքի չափազանցրած մոլեգնությունը, մելոդրամատիկ ցասկոտ խոսքերը, որոնք ուղեկցվում էին կրքոտ շարժումներով, կյանքը դարձրին մոր համար ավելի վառ և կենդանի: Նրան ծանոթ էր այդ մթնոլորտը: Նա ավելի ազատ շունչ քաշեց: Երկար ու ձիգ ամիսների ընթացքում առաջին անգամ նա հիացավ որդով: Նա այնպես կուզեր, որ այդ հուզիչ տեսարանը երկարեր, բայց Ջիմը կարճ կտրեց: Հարկավոր էր ճամպրուկները ներքև իջեցնել և փնտրել տաք շարժը: Կահավորված սենյակների սպասավորը, որտեղ նրանք ապրում էին, դեսուդեն ընկած, մերթ ներս էր վազում, մերթ դուրս: Պետք է սակարկեր նաև կառապանի հետ: Պահը լեցուն էր մանրություններով, կրկնակի հիասթափությամբ: Մայրը լուսամուտից թափահարում էր ժանյակներիզ ճմրթված թաշկինակը հեռացող որդու ետևից: Ինչպիսի հիանալի հնարավորություն է բաց թողնված: Ինչ որ է, նա փոքր-ինչ

սփոփեց իրեն, Սիրիլին պատմելով, որ այժմ, երբ իր հովանավորության տակ մնացել է միայն աղջիկը, ինչպիսի դատակություն է ստեղծվել նրա կյանքում: Նրան դուր եկավ այս արտահայտությունը և որոշեց հիշել: Ջեյմսի սպառնալիքի մասին նա լռեց: Ծիշտ է՝ այդ սպառնալիքը արտահայտված էր շատ դրամատիկ, բայց լավ էր այդ չհիշել: Միսսիս Վեյնը հույսով էր, որ մի օր իրենք միասին կծիծաղեն այդ խոսքերի վրա:

ԳԼՈՒԽ VI

- Դու, երևի, արդեն լսել ես նորությունը, Բեգիլ,- հայր-
րեց լորդ Հենրիին այդ երեկո Հոլլուորդին, որը ծառայի ուղևո-
ցությամբ մտավ «Բրիստոլտ» ռեստորանի փոքրիկ առանձ-
նասենյակը, որտեղ երեք հոգու համար ծաշ էր մատուցված:

- Ո՛չ, Հա՛րրի, իսկ ի՞նչ նորություն է,- հարցրեց նկարիչը՝
վերարկուն և գլխարկը տալով ակնածանքով սպասող
սպասավորին,- հուսով եմ՝ քաղաքական չէ: Քաղաքական
նորություններն ինձ չեն հետաքրքրում: Համայնքների
պալատում դժվար թե այնպիսի մարդ գտնվի, որի համար
նկարիչը չափսոսա իր ներկերը: Չնայած նրանցից շատերը
սպիտակեցման կարիք ունեն:

- Դորիան Գրեյը նշանվել է և պատրաստվում է ամուս-
նանալ,- ասաց լորդ Հենրին՝ ուշադիր նայելով Հոլլուորդին:

Հոլլուորդը ցնցվեց և մոայլվեց:

- Դորիանն ամուսնանում է,-բացականչեց նա, - անկարելի
է:

- Բացարձակ ճշմարտություն է:

- Ո՞ւմ հետ:

- Ինչ-որ աննշան դերասանուհու:

- Չեմ հավատում: Դորիանն այնքան խելոք է, սիրելի՛ Բեգիլ,
որ չի կարող ժամանակ առ ժամանակ հիմարություն չանել:

- Բայց ամուսնությունն այնպիսի «հիմարություն» չէ, Հա՛ր-
րի, որ անեն «ժամանակ առ ժամանակ»:

- Ամերիկայում դա բացառություն է,- ծուլորեն պա-
տասխանեց լորդ Հենրին:- Բայց ես չասացի, թե Դորիանն
ամուսնանում է: Ասացի, որ նշանվել է: Տարբերությունը
մեծ է: Օրինակ, ես պարզ հիշում եմ իմ ամուսնությունը,
բայց նշանվելս՝ բնավ: Եվ հակված եմ մտածելու, որ նման
մտադրություն երբեք չեմ ունեցել:

- Ապա մտածիր, Հանրի, Դորիանի ծագումը, դիրքը, ունեցվածքը... Պարզապես խենթություն է այդպիսի անհավասար ամուսնությունը:

- Եթե ուզում ես, որ Դորիանն այդ աղջկա հետ ամուսնանա, Բեգիլ, նրան ասա այն, ինչ հենց նոր ինձ ասացիր: Այդ դեպքում, համոզված եմ, նա կամուսնանա: Միշտ ամենամեծ հիմնարկությունը մարդ գործում է ազնիվ մղումներից դրդված:

- Գոնե աղջիկը լավը լինի: Շատ ցավալի է, եթե Դորիանն ընդմիշտ կապվի ինչ-որ անարժանի հետ, այդ ամուսնությունը կարող է վիստել նրան հոգեպես և մտավորապես:

- Լավը: Օ՛, նա ուղղակի գեղեցկուհի է,- քրթմնջաց լորդ Հենրին՝ ումպ-ումպ խմելով նարնջի թրմօղիով վերմուսը,- Դորիանն ասում է, որ գեղեցկուհի է, իսկ նման հարցերում նա հազվադեպ է սխալվում: Քո նկարած դիմանկարը նրան սովորեցրեց գնահատել ուրիշների գեղեցկությունը: Այո, այո, այդ հարցում դիմանկարը գերազանց ազդեցություն է թողել նրա վրա: Այս երեկո մենք կտեսնենք նրա ընտրյալին, եթե տղան չի մոռացել մեր ժամադրությունը:

- Դու լմուռք ես ասում, Հանրի:

- Միանգամայն լուրջ, Բեգիլ: Ամոթ ինձ, թե երբևէ ավելի լուրջ եղած լինեմ, քան այս պահին:

- Բայց միթե դու հավանություն ես տալիս, Հանրի,- շարունակեց նկարիչը՝ սենյակում քայլելով և կծելով շրթունքը:

- Ո՛չ, դու չես կարող հավանություն տալ, անկարելի է: Դա պարզապես ինչ-որ հիմար հափշտակություն է:

- Ես երբեք ոչինչ չեմ հավանում կամ հերքում: Դա անհերթելի մոտեցում է կյանքի նկատմամբ: Մենք չենք առաքվել այս աշխարհը, որպեսզի գովերգենք մեր բարոյական համոզմունքները: Ես ոչ մի կարևորություն չեմ տալիս, թե ինչ են ասում գոնիկները, և երբեք չեմ խառնվում ինձ համար

հաճելի մարդկանց գործերին: Եթե մեկն ինձ դուր է գալիս, ապա այն ամենը, ինչում որ նա դրսևորվում է, բոլորն ինձ համարում է պատճառում ինձ: Դորիան Գրեյը սիրահարվել է, գեղեցիկ աղջկա, որը Ջուլիետտա է խաղում, և ուզում է, ամուսնանալ նրա հետ: Իսկ ինչո՞ւ ոչ: Թեկուզ ամուսնանա Մեսսալինայի՝ հետ, դրանից նա պակաս հետաքրքիր չի լինի: Գլոտես, որ ես ամուսնության ջատագով չեմ: Ամուսնության գլխավոր չարիքն այն է, որ նա մարդու եսասիրությունը ոչնչացնում է: Իսկ ոչ եսասեր մարդիկ անգույն են, նրանք զուրկ են անհատականությունից: Ժիշտ է՝ կան մարդիկ, որոնց ամուսնական կյանքը դարձնում է բարդ: Նրանք պահպանում են իրենց «ես»-ը և ավելացնում ուրիշ շատ «ես»-եր: Այդպիսիներն ստիպված են ապրելու ավելի քան մեկ կյանքով, դառնում են շատ ավելի բարձր կազմակերպված, հենց դա էլ, կարծես, մարդու գոյության նպատակն է: Բացի այդ, յուրաքանչյուր փորձառություն ունի արժեք, և ինչ էլ ուզում է ասեն ընդդեմ ամուսնության, միևնույն է, դա մնում է որպես փորձառություն: Հուսով եմ, որ Դորիանը կամուսնանա այդ աղջկա հետ, վեց ամիս կրթոտությամբ կպաշտի նրան, իսկ հետո հանկարծ ուրիշով կհրապուրվի: Այդ ժամանակ նա կդառնա իհանալի ուսումնասիրության նյութ:

- Դու այդ բոլորը լուրջ չես ասում, Հարրի: Որովհետև, եթե Դորիանը խորտակվի, բոլորից շատ ինքդ կվշտանաս: Դու շատ ավելի լավն ես, քան ձևանում ես:

Լորդ Հենրին ծիծաղեց:

- Մենք բոլորս էլ սիրում ենք ուրիշների մասին լավը մտածել այն պարզ պատճառով, որ վախենում ենք, մեզ համար, լավատեսության հիմքում ընկած է բացարձակ սարսափը: Մենք վերագրում ենք մեր մերձավորներին այն

11-ին դարում մ. թ. ա. Հռոմի, կայսեր Կլավդիոսի կինը, որը հայտնի էր իր դաժանությամբ և անբարոյականությամբ:

առաքինությունները, որոնցից կարող ենք շահ ստանալ, և կարծում ենք, թե դա կատարում ենք մեծահոգությունյոց դրդված: Գովում ենք Բանկիրին, որ կարողանանք բազմացնել մեր վարկը, լավ հատկություններ ենք գտնում նույնիսկ ավագակի մեջ՝ հուսալով, որ նա կխնայի մեր գրպանները:

Հավատա՛, Բեգիլ, այն ամենը, ինչ ասում եմ, ասում եմ միանգամայն լուրջ: Բոլորից շատ արհամարհում եմ լավատեսությունը: Ինչ վերաբերում է խորտակվելուն, ապա խորտակված կարելի է համարել միայն այն կյանքը, որն իր զարգացման մեջ կանգ է առել: Վերափոխել մարդկային բնավորությունը, նշանակում է միայն փչացնել այն: Իսկ ինչ վերաբերում է Դորիանի ամուսնությանը... Իհարկե, դա հիմարություն է: Բայց տղամարդկանց և կանանց միջև կան մերձեցման ուրիշ, ավելի հետաքրքիր ձևեր: Եվ ես, անկասկած, խրախուսում եմ դրանք... լինելով ժամանակակից՝ դրանք շատ ավելի թովիչ են... Բայց ահա և ինքը՝ Դորիանը:

Նա քեզ ավելին կպատմի, քան ես:

- Հարրի, Բեգիլ, թանկագիտներս, կարող եք ինձ շնորհավորել,- ասաց Դորիանը և, շարժելով արեշումե աստառով թիկնոցը, սեղմեց իր բարեկամների ձեռքը:- Ես երբեք այդպես երջանիկ չեմ եղել: Իհարկե, այս ամենը բավական անսպասելի էր, ինչպես և անսպասելի են կյանքի բոլոր հրաշքները: Բայց ինձ թվում է, որ ամբողջ կյանքում իմ փնտրածը հենց այս է եղել:

Հուզմունքից և հաճույքից նա շառագունել էր և զարմանալի գեղեցկացել:

- Ես ցանկանում եմ Ձեզ երջանկություն Ձեր ամբողջ կյանքի ընթացյալում, Դորիան,- ասաց Հոլլուորդը,- բայց Ձեզ համար աննկրկի է, որ այդ մասին միայն Հարրիին եք ասել: Ձե՛ որ կարող է՝իք նաև ինձ ասել:

- Եվ աններելի է նաև, որ ճաշից ուշացել եք,- ժպտալով ասաց լորդ Հենրին՝ ձեռքը դնելով պատանու ուսին,- դե, եկեք նստենք սեղանի մոտ և տեսենք, թե ինչպիսին է այստեղի նոր ավագ խոհարարը, իսկ հետո հերթով մեզ ամեն ինչ կպատմեք:

- Առանձնապես պատմելու բան չկա,- արձագանքեց Դորիանը, երբ տեղավորվեցին փոքր կլոր սեղանի շուրջը:- Ահա թե ինչպես պատահեց. երեկ երեկոյան՝ Ձեր մոտից գնալուց հետո, Հարրի, հագնվեցի, ճաշեցի Ռուփերթ-սթրիթի խալական փոքրիկ ռեստորանում, ուր մի անգամ Դուք տարել էիք ինձ, իսկ ժամը ութին գնացի թատրոն: Սիրիլը Ռոզալինդ էր խաղում: Բեմագարդարանքներն, իհարկե, ահավոր էին, իսկ Օռլանդոն՝ ծիծաղելի: Բայց Սիրիլը... Օ՛հ, եթե տեսնեիք նրան... Տղայի հագուստով ուղղակի հոյակապ էր. դարչնագույն թևքերով ճահճագույն թավշե բաժկոնակ, բաց շագանակագույն տաբատ՝ թանկարժեք ճարմանդին բազնի փետուր ամրացրած, հիանալի կանաչ գլխարկ և մուգ կարմիր աստառով կնգուղավոր թիկնոց: Երբեք նա ինձ այդպես զմայլիչ չէր թվացել: Իր գերող նազելիությամբ նա նման էր տանգարյան՝ այն քանդակին, Բեզիլ, որ ես տեսել եմ Ձեր արհեստանոցում: Դեմքը երիզող մազերը նման էին գունատ վարդի նուրբ թերթերի: Իսկ խաղը... Ասենք, ինքներդ այս երեկո կտեսնեք: Նա պարզապես ծնված է դերասանուհի լինելու համար: Ես հմայված նստել էի խղճուկ օթյակում: Մոռացել էի, որ Լոնդոնում եմ, որ հիմա տասնիններորդ դարն է: Իմ սիրո հետ ես գտնվում էի կուսական հեռու անտառում: Ներկայացումից հետո գնացի ետնաբեմ և խոսեցի նրա հետ: Մենք նստած էինք միասին, հանկարծ ես նրա աչքերում այնպիսի արտահայտություն տեսա, որ մինչ այդ երբեք չէի նկա-

տել: Շուրթերս ձգվեցին դեպի նրա շուրթերը: Մենք համբուրվեցինք: Չեմ կարող ասել, թե ինչ զգացի այդ պահին: Թվում էր, թե ամբողջ կյանքս կենտրոնացել է այդ հրաշալի ակնթարթի մեջ: Նա սպիտակ շուշանի պես դողում էր... ապա հանկարծ չոքեց և սկսեց համբուրել ձեռքերս: Գիտեմ, պետք չէր, որ ես այդ բոլորը պատմեի ձեզ, բայց չպատմել չեմ կարող: Մեր նշանադրությունն, իհարկե, խիստ գաղտնիք է, նա նույնիսկ մորը ոչինչ չի ասել: Չգիտեմ՝ ինչ կասեն իմ խնամակալները: Լորդ Հենրին, երևի, կկատաղի: Բայց ոչ մի նշանակություն չունի: Մեկ տարի հետո ես չափահաս եմ դառնում և կարող եմ անել՝ ինչ ուզեմ: Դե ասացե՛ք, Բեզիլ, միթե հիանալի չէ, որ պոեզիան ինձ սովորեցրեց սիրել, և կնոջս գտա Շեքսպիրի դրամաներում: Նրա շուրթերը, որոնց Շեքսպիրն է սովորեցրել խոսել, ականջիս շշջացին իրենց գաղտնիքը: Ինձ գրկում էին Ռոզալինդի ձեռքերը, ես համբուրում էի Ջուլիետտային:

– Այո՛, Դորիան, ինձ թվում է՝ Դուք ծիշտ եք,– դանդաղորեն ասաց Հոլլուորդը:

– Այսօր տեսնլ եք նրան,– հարցրեց լորդ Հենրին: Դորիանը տարուբերեց գլուխը:

– Ես նրան թողել եմ Արդենյան անտառում և գտնելու եմ Վերոնայի այգիներից մեկում:

Լորդ Հենրին մտախոհ կում-կում ըմպեց շամպայնը:

– Իսկ երբ խոսեցիք ամուսնության մասին, Դորիան: Եվ նա ինչ պատասխանեց: Թե՛ դուք արդենք չեք հիշում:

– Սիրելի՛ Հարրի, ես նրան պաշտոնական առաջարկություն չեմ արել, որովհետև դա ինձ համար գործնական խոսակցություն չէր: Ես նրան ասացի, որ սիրում եմ իրեն, իսկ նա պատասխանեց, թե ինքն արժանի չէ իմ կինը լինելուն: Արժանի չէ՛. Տե՛ր իմ աստված, ինձ համար նույնիսկ ամբողջ

աշխարհը ոչինչ չարժե նրա համեմատությամբ:

- Կանայք զարմանալիորեն գործնական են,- քրթմնջույց լորդ Հենրին.- շատ ավելի գործնական, քան մենք: Այդպիսի պառիսերին մենք հաճախ մոռանում ենք խոսել ամուսնության մասին, իսկ կանայք միշտ հիշեցնում են:

Հուլիուսորդը ձեռքը դրեց նրա ուսին:

- Վերջացրո՛ւ, Հարրի, դու վիրավորում ես Դորիանին: Նա ուրիշների նման չէ, վերին աստիճանի ազնիվ է և երբեք ոչ մեկին չի դժբախտացնի:

Լորդ Հենրին նայեց Դորիանին:

- Դորիանը երբեք չի վիրավորվի ինձանից,- պատասխանեց նա:- Ես դա հարցրեցի նրան ամենալավ միտումով, միտում, որ կարող է արդարացնել ամեն մի հարց՝ թեկուզև հետաքրքրասիրությունից: Ուզում էի ստուգել իմ տեսությունը, որ սովորաբար ոչ թե տղամարդիկ, այլ կանայք են տղամարդկանց առաջարկում: Բացի, իհարկե, բուրժուական դասից: Դե, նրանք էլ չէ՞ որ ետ են մնացել դարից:

Դորիան Գրեյը ծիծաղեց և տարուրերեց գլուխը:

- Դուք բոլորովին անուղղելի եք, Հարրի, բայց անկարելի է բարկանալ Ձեզ վրա: Երբ Դուք տեսնեք Սիբիլ Վեյնին, կզգաք, որ նրան վշտացնել կարող է միայն սրիկան, անսիրտ գազանը: Չեմ հասկանում՝ ինչպե՞ս կարելի է անարգել մեկին, եթե նրան սիրում ես: Ես սիրում եմ Սիբիլ Վեյնին: Ուզում եմ նրան դնել ոսկե պատվանդանի վրա, տեսնել, թե ինչպես է ողջ աշխարհը պաշտում այն կնոջը, որն իմն է: Ի՞նչ է ամուսնությունը: Անխախտ երդում: Ծիծաղելի է ձեզ թվում: Օհ, ո՛չ, մի ծաղրեք: Ահա, այդպիսի երդում էլ ես եմ ուզում տալ: Նրա վստահությունն ազնվացնում է ինձ, իմ հանդեպ ունեցած հավատը դարձնում է ինձ առաքինի: Երբ Սիբիլի հետ եմ, ամաչում եմ այն բոլորից, Հարրի, որ դուք եք ինձ

տովորեցրիլ և բոլորովին այլ մարդ եմ դառնում: Այո՛, սոսկ նրա ձեռքի հալումը մոռացնել է տալիս Ձեզ և Ձեր ողջ հրապուրիչ, դուրսիչ, բայց սխալ և թունավոր տեսությունները:

Օրինակ...- հարցրեք լորդ Հենրին՝ սալաթ վերցնելով:

Կյանքի, սիրո, հաճույքի... և ընդհանրապես Ձեր բոլոր տեսությունները, Հարրի:

Հաճույքը միակ բանն է, որի համար արժե տեսություն ունենալ,- պատասխանեց նա ցածր, երգեցիկ ձայնով,-բայց, դժբախտաբար, ես հաճույքի տեսությունը չեմ կարող ինձ վերագրել: Նրա արարիչը բնությունն է, ոչ թե ես, հաճույքի բնության այն փորձաքարն է, որով նա ստուգում է մարդուն, հաճույքը բնության փառաբանման նշանն է: Երբ մարդ երջանիկ է, միշտ լավն է: Բայց միշտ չէ, որ լավ մարդիկ երջանիկ են լինում:

- Իսկ ինչ եք հասկանում լավ ասելով,- բացականչեց Բեկիլ Հոլլուորդը:

Այո՛, - արձագանքեց Դորիանը՝ հենվելով աթոռի մեջքին և նայելով լորդ Հենրիին սեղանի կենտրոնում դրած ալ եկրիկների մեծ ծաղկեփնջի վրայով:- Ո՛ր մարդն է լավը Ձեր կարծիքով, Հարրի:

Լինել լավը, նշանակում է ներդաշնակել ինքն իր հետ,- պատասխանեց լորդ Հենրին՝ բռնելով բաժակի ոտը իր նույր, սպիտակ մատներով:- Իսկ ով ստիպված է ուրիշի հետ ներդաշնակել, աններդաշնակ է ապրում ինքն իր հետ: Միայն անձնական կյանքը, ահա ամենից կարևորը: Ինչ վերաբերում է մերձավորների կյանքին, ապա մարդ կարող է, նրանց վզին փաթաթել իր բարոյական տեսակետները, եթե ուզում է ձևապաշտ կամ մաքրակրոն լինել: Բայց ուրիշի կյանքին պետք չէ խառնվել: Բացի այդ, անհատականությունն, անկասկած, ավելի բարձր ձգտումների ունի:

Արդի բարոյագիտությունը պահանջում է մեզանից, որ մենք բաժանենք մեր դարաշրջանի բոլորի կողմից ընդունված հասկացությունները, իսկ երբ կրթված մարդը խոնարհալիար ընդունում է իր ժամանակի չափանիշները, ես դա համարում եմ անբարոյականության ամենակոպիտ ձևը:

- Բայց համաձայնիր, Հարրի, որ կյանքը միայն իր համար չափազանց բարձր արժեքով է գնվում,- նկատեց նկարիչը:

- Այո՛, մեր օրերում ամեն ինչի համար էլ շատ թանկ ենք վճարում: Երևի աղքատի ողբերգությունն այն է, որ նրա համար ամենամատչելի բանը ինքնահրաժարումն է: Գեղեցիկ մեղքերը և գեղեցիկ իրերը հարուստների արտոնություններն են:

- Անձնական կյանքի համար ոչ թե փող, այլ ուրիշ բան պետք է վճարել:

- Ի՛նչ, Բեգիլ:

- Իմ կարծիքով, ապաշխարանք, տառապանք... սեփական բարոյալքման գիտակցություն:

Լորդ Հենրին թոթվեց ուսերը:

- Սիրելիս, միջնադարի արվեստը հոյակապ է, իսկ միջնադարի զգացումները և պատկերացումները հնացել են:

Դրանք, իհարկե, պետք են գրականությանը, բայց չե՞ որ վնասում պետք է գալիս հենց այն, ինչը կյանքում արդեն դուրս է եկել գործածությունից: Հավատա՛մ, ոչ մի քաղաքակիրթ մարդ չի զղջում երբևէ, որ տրվել է հաճույքին, իսկ անքաղաքակիրթը չգիտե՛ ինչ է հաճույքը:

- Ես այժմ գիտեմ, թե ինչ է հաճույքը,- բացականչեց Դոփան Գրեյը,- դա նշանակում է պաշտել մեկին:

- Իհարկե, ավելի լավ է պաշտել, քան պաշտվել- պատասխանեց լորդ Հենրին՝ իր համար մրգեր ընտրելով:- Պաշտվելը շատ տաղտկալի բան է: Կանայք մեզ՝ տղամարդկանցս, վերաբերվում են ճիշտ այնպես, ինչպես մարդկությունը՝

աստվածներին: Նրանք երկրպագում են մեզ և միշտ ձանձրացնում՝ ինչ-որ բաներ պահանջելով:

- Իմ կարծիքով՝ նրանք միայն պահանջում են այն, ինչ առաջինն են նվիրում մեզ,- կամացուկ ասաց Դորիանը,- նրանք սեր են արթնացնում մեր մեջ և սեր էլ իրավունք ունեն սպասելու մեզանից:

- Այ դա միանգամայն ճիշտ է, Դորիան,- բացականչեց Հոլլուորդը:

- Աշխարհում միանգամայն ճիշտ ոչինչ չկա,- առարկեց լորդ Հենրին:

- Օ՛, ո՛չ, կա, Հարրի,- ընդհատեց Դորիան Գրեյը,- Դուք հույս չեք ժխտի, որ կանայք տղամարդկանց տալիս են իրենց կյանքի ամենաթանկագին բանը:

- Հնարավոր է,- համաձայնեց լորդ Հենրին՝ հառաչելով:

- Բայց նրանք անվերջ ետ են պահանջում, և պահանջում են կաթիլ առ կաթիլ: Այ դա է դժբախտությունը: Կանայք, ինչպես ասել է մի սրամիտ ֆրանսիացի, ոգևորում են մեզ վեհ գործեր կատարելու, բայց միշտ խանգարում են իրականացնելիս:

- Հարրի, Դուք անտանելի ցինիկ եք: Բայց չգիտեմ՝ ինչու եմ Ձեզ այդպես սիրում:

- Դուք միշտ էլ կսիրեք ինձ, Դորիան,- պատասխանեց նա,- սուրճ չէիք ցանկանա, բարեկամներս: Մատուցող, սուրճ, կոնյակ և գլանակ բերեք... Ասենք, գլանակ պետք չէ, ես ունեմ: Բեզիլ, սիգար մի ծխիր, գլանակ վերցրու: Գլանակը գերագույն հաճույքի կատարյալ ձևն է, նուրբ ու չհագեցնող: Ուրիշ էլ ինչ է պետք... Այո՛, Դորիան, Դուք ինձ միշտ կսիրեք: Ես Ձեր աչքում բոլոր մեղքերի մարմնացումն եմ, որոնք կատարելու խիզախությունը Դուք չունեք:

- Դատարկ բաներ եք ասում, Հարրի,- բացականչեց պա-

ուանին և վառեց ծխախոտը հուր արտաշնչող արծաթե դյուս կոնով, որը սպասավորն էր դրել սեղանին:

- Ավելի լավ է գնանք թատրոն: Երբ բեմում տեսնւոյ Միքիլին, կյանքը բոլորովին Ձեզ այլ կերպ կերևա: Նա Ձեզ համար այնպիսի հայտնություններ կանի, որոնց մասին մինչև հիմա 'Դուք չեք էլ մտածել:

- Ես ամեն ինչ ճաշակել եմ և իմացել,- ասաց լորդ Հենրին՝ աչքերի հոգնած արտահայտությամբ:- Բայց միշտ ուրախ եմ նոր տպավորությունների համար, միայն վախենում եմ, թե այլևս նոր սպասելիքներ չլինեն ինձ համար: Ասե՛ք, թերևս Ձեր հրաշք-աղջիկը ցնցի ինձ: Միրում եմ ներկայացում այնտեղ ամեն ինչ շատ ավելի իրական է, քան կյանքում: Գնանք: Դորիան, Դուք ինձ հետ եկեք: Ափսոս, Բեզիլ, որ իմ կարբիոլետում միայն երկու հոգով կարող ենք տեղավորվել: Դու հետևիր մեզ միաձի կառքով:

Նրանք ելան սեղանի մոտից և, հագնելով վերարկուները, սուրճը խմեցին կանգնած: Նկարիչը լուռ էր և մտազբաղ: Նրան համակել էր թախսիծը: Այդ ամուսնությունը նրա սրտովը չէր, թեև հասկանում էր, որ Դորիանին կարող էր ավելի վատ բաներ պատահել:

Մի քանի րոպե անց երեքն էլ ներքևում էին: Ինչպես որոշել էին, Հոլլուորդը մենակ էր գնում նրանց կառքի հետևից: Նայելով լորդ Հենրիի կառքի առկայծող լույսին՝ նա կորուստի մի նոր զգացում էր ապրում: Հասկանում էր, որ Դորիան Գրեյն այլևս իր համար չի լինելու այն, ինչ առաջ էր: Կյանքը բարձրացել էր նրանց միջև...

Հոլլուորդի աչքերը մշուշվեցին, բազմամարդ լուսավոր փողոցներն աղոտացան: Իսկ երբ կառքը սրընթաց մոտեցավ թատրոնին, նկարչին արդեն թվում էր, թե այսօր ինքը ծերացել է մի քանի տարով:

Այդ երեկո, չգիտես ինչու, թատրոնը լի էր հանդիսականներով, և գլխուկ հրեա տնօրենը, մուտքի մոտ դիմավորելով Դորիանին ու իր ընկերներին, շողոքորթ ու քաղցր-մեղցր ժպիտով մինչև ականջները բացեց բերանը: Հանդիսավոր ու ծառայամիտ քծնանքով ուղեկցելով նրանց դեպի օթյակ՝ տնօրենը անվերջ շարժում էր թանկարժեք մատանիներով իր փափլիկ ձեռքը և բարձր, գրեթե ամբողջ ծայնով ինչոր լաներ պատմում նրանց: Դորիան Գրեյը նրան հետևում էր ավելի մեծ խորշանքով, քան առաջ՝ ունենալով սիրահարի այն զգացումը, որը եկել էր տեսնելու Միրանդային, բայց հանդիպել է Կալիբանին: Սակայն լորդ Հենրիին, ըստ երևույթին, հրեան դուր եկավ: Համենայն դեպս, նա այդպես հայտարարեց և ցանկացավ անպայման ձեռքը սեղմել՝ հավատացնելով նրան, որ հպարտ է ծանոթանալու համար մի մարդու հետ, որն իսկական տաղանդ է հայտնագործել և սնանկացել է բանաստեղծի հաւդեպ ունեցած սիրո պատճառով: Հոյուորդը դիտում էր պարտերի հասարակությանը: Տոթը սարսափելի հեղձուցիչ էր, և հսկայական ջահը բոցավառվում էր, ինչպես հրաթերթիկներով վիթխարի մի գեորգին: Գալլորկայի երիտասարդները հանել էին կոստյումներն ու բաճկոնները և կախել իրենց կողքի բազրիքներից: Նրանք խոսում էին սրահի մի ծայրից մյուսը և նարինջ էին հյուրասիրում իրենց շուրջը նստած անձաշակ հագնված աղջիկներին: Պարտերում ինչ-որ կանայք բարձրածայն քրքջում էին: Նրանց սուր ծայներն ականջ էին ծակում: Բարից լսվում էր դուրս թողող խցանների ճայթյունը:

- Եվ ահա այսպիսի վայրում Դուք գտել եք Ձեր աստվածությունը,- ասաց լորդ Հենրին:

- Այո՛,- պատասխանեց Դորիան Գրեյը,- այստեղ եմ

գտել նրան՝ աստվածուհուն, գտել եմ հասարակ մահկանա-
ցուների միջև: Երբ նա խաղում է, մարդ մոռանում է, ամեն
ինչ: Երբ հայտնվում է բեմահարթակում, այս հասարակ,
բիրտ մարդիկ՝ կոպիտ դեմքերով և անտաշ շարժումներով,
կերպարանափոխվում են ամբողջովին: Շունչները պահած
դիտում են նրան: Լալիս և ծիծաղում են նրա կամքով: Այդ
աստվածուհին դարձնում է նրանց ջութակի պես զգայուն,
խանդավառում է նրանց, և այն ժամանակ ես զգում եմ, որ
այս մարդիկ նույն մսից ու արյունից են, ինչ որ ես:

- Նույն մսից ու արյունից: Ես հուսով եմ, որ այդպես չէ,-
բացականչեց լորդ Հենրին՝ հեռադիտակն ուղղելով դեպի
գայլորկայի հանդիսատեսները:

- Ուշադրություն մի՛ դարձրեք նրա վրա, Դորիան,- ասաց
նկարիչը:- Ես Ձեզ հասկանում եմ, թե ինչ եք ուզում ասել,
և հավատում եմ այդ աղջկան: Եթե Դուք սիրում եք, ուրեմն
նա լավն է: Եվ, իհարկե, մի աղջիկ, որն այդպես ազդում է
մարդկանց վրա, չի կարող գեղեցիկ և ազնիվ հոգի չունենալ:
Վեհացնել սերունդը՝ մեծ արժանիք է: Եթե այդ աղջիկը
կարող է հոգի ներշնչել նրանց, ովքեր մինչև հիմա ապրել են
առանց հոգու, եթե կարող է գեղեցիկի զգացում արթնացնել
այն մարդկանց մեջ, որոնց կյանքը եղել է կեղտոտ և տգեղ,
եթե կարող է հրաժարեցնել իրենց եսասիրությունից և
տանջանքի արցունք քամել օտարի վշտի համար, ուրեմն
արժանի է Ձեր երկրպագմանը, աշխարհը պետք է պաշտի
նրան: Լավ եք անում, որ ամուսնանում եք նրա հետ: Սկզբում
ես այլ կերպ էի մտածում, իսկ այժմ կարծում եմ, որ Դուք
ճիշտ եք: Աստվածներն արարել են Սիբիլ Վեյնին Ձեզ համար:
Առանց նրա Ձեր կյանքը կատարյալ չէր լինի:

- Շնորհակալ եմ, Բեգիլ,- ասաց Դորիան Գրեյը՝ սեղմն-
ով նրա ձեռքը:- Ես գիտեի, որ Դուք ինձ կհասկանաք: Իսկ

Հարրին ուղղակի սարսափեցնում է իր ցինիզմով... Ահա և նվագախումբը: Թեև գարշելի բան է, բայց ընդամենը հինգ րոպե է տևում: Հետո կբարձրանա վարագույրը, և Դուր կտևաներ աղջկան, որին ես կտամ իմ ամբողջ կյանքը, որին արդեն տվել եմ այն բոլորը, ինչ լավ է իմ մեջ:

Վառույթ ժամ հետո բուռն ծափահարությունների տակ բևեռ դուրս եկավ Սիբիլ Վեյնը: Այո, իրոք, կարելի էր նրանով գնալով: «Նա աշխարհի ամենագեղեցիկ էակն է, որ երբևէ ես տեսել եմ», - մտածեց լորդ Հենրին: Ամոթսած նազելիության մեջ և վեհերոտ հայացքում մատաղ եղնիկ հիշեցնող ինչ-որ բան կար: Երբ նա աչքը գցեց խանդավառ ամբոխին, այտերին թևեր մի կարմրություն իջավ, ինչպես վարդի սավերն է արծաթյա հայելու մեջ: Մի քանի քայլ նա ետ քաշվեց, շուրթերը կարծես դողում էին: Բեզիլ Հոլլուորդը վեր թռավ և սկսեց ծափահարել: Դորիանն անշարժ նստած էր, ինչպես երազում հայացքը սևեռած նրան: Իսկ լորդ Հենրին նայում էր ինտոդիտակով և քրթմնջում՝ «Սքանչելի է, սքանչելի է»:

Տեսարանը ներկայացնում էր Կապուլետտի տան սրահը: Կրոնավորի հագուստով ներս մտավ Ռոմեոն՝ Մերկուցիոյի և մյուս ընկերների հետ: Նվագախումբը, եթե կարելի է այդպես անվանել, սկսեց նվագել: Պարերն սկսվեցին: Անճոռնի և խղճով հագնված դերասանների միջև Սիբիլ Վեյնը սահում էր, ինչպես մի ուրիշ, ավելի չքնաղ աշխարհի էակ: Պարելիս նույնպես այնպես էր ճոճում իրանը, կարծես եղեգ լիներ ջրի վրա: Պարանոցի թեքվածքը հիշեցնում էր սպիտակաթուրք շուշանի: Ձեռքերը կարծես փղոսկրից կերտած լինեին:

Մական նա զարմանալիորեն անմասնակից էր մնում այդ տոկոսին: Ուրախության ոչ մի նշույլ չերևաց նրա դեմքին, երբ տեսավ Ռոմեոյին:

Եվ Զուլիետայի առաջին խոսքերը՝

- Դուք խիստ եք, դաժան դեպի Ձեր ձեռքը, ազնվի/ ուխտավոր,

Որ իր ջերմնուանդ հարգանքն է ցածում սիրով բախտավորյու:
Ուխտի եկողը ձեռքով հպում է ձեռքը սուրբերի,

Ափ ընդ ափ լինել՝ անբիծ համբույրն է ուխտավորներին,¹-

ինչպես և նրան հաջորդող մի քանի բառերը հնչեցին լրիվ արհեստական: Ձայնը հրաշալի էր, բայց ելևէջներն ամբողջովին կեղծ էին, երանգավորումը՝ սխալ: Դա բանաստեղծությունը դարձնում էր անկյանք, բուռն զգացմունքը՝ անբնական:

Դորիան Գրեյը գունատվում էր: Նա ապշած էր և անհանգիստ: Ո՛չ լորդ Հենրին, ո՛չ Բեզիլ Հոլլուորդը չէին համարձակվում որևէ բան ասել: Սիբիլ Վեյնը բոլորովին անտաղանդ թվաց, նրանք խիստ հիասթափված էին:

Սակայն հասկանում էին, որ Ջուլիետտա խաղացողի իսկական ստուգումը երկրորդ գործողության պատշգամբի տեսարանն է: Եվ սպասում էին այդ պահին: Եթե Սիբիլը այդտեղ էլ ձախողվեր, ուրեմն, նրա մեջ տաղանդի/ նշույլ անգամ չկա:

Նա ուղղակի կախարդանքով լեցուն էր, երբ լուսնի լուսի տակ հայտնվեց պատշգամբում: Դա արդեն չէր կարելի ժխտել: Բայց խաղն անտանելի կեղծ էր և գնալով ավելի էր վատանում: Անհեթեթորեն արհեստական էին շարժումները: Ամեն ինչ արտասանում էր չափազանցրած խանդավառությամբ: Գեղեցիկ մենախոսությունը՝

Գիշերվա դիմակը երեսիս վրա է,

Թե չէ, կոսսական մի շիկնածություն այգերս կայրեր

Այն խոսքի համար, որ դու այս գիշեր ինձնից լսեցիր,

արտասանվեց աշակերտուհու անշնորհք ճիգով, որ սո-

¹ Չափածո թարգմանությունները՝ Խ. Դաշտենցի:

վորեցրել էր ճարտասանության ինչ-որ երկրորդ կարգի դասատու: Իսկ երբ պատշգամբից թեքվեց և հասավ այս հիանալի տողերին. –

Թեպետ իմ սիրտը հրճվում է քեզնով,

Սակայն այս գիշեր հաճություն չունեմ դաշինք կոելու,

Դա խիստ հանդուգն է և խիստ անխոհեմ, խիստ հանկարծակն,

Նման փայլակի, որ չքանում է

Նախքան թե կասես՝ «Նայիր-փայլում է»: Բարի գիշեր, անուշ:

Միրո բողբոջն այս հաստնանալով շնչով ամառվան՝

Կարող է դառնալ մի չքնաղ ծաղիկ հաջորդ հունդիպման,

կարծես արտասանում էր առանց իմաստը հասկանալու: Դա չէր կարելի բացատրել ջղային հուզմունքով: Ընդհակառակը, շատ հանգիստ էր և լրիվ տիրապետում էր իրեն: Պարզապես վատ խաղ էր: Ըստ երևույթին, դերասանուհին բոլորովին անտաղանդ էր:

Նույնիսկ գալյորկայի և վերջին շարքերի անկուլտուրական հանդիսատեսները կորցրեցին հետաքրքրությունը խաղի նկատմամբ: Սկսեցին բարձրաձայն խոսել, աղմկել և նույնիսկ սուլել: Հրեա ձեռնարկուն, դահլիճի ետնամասում կանգնած, ոտքերը դռփում էր և ցասումնալից հայիոյում: Միայն աղջիկն էր, որ անտարբեր էր մնում ամեն ինչի նկատմամբ:

Երբ երկրորդ գործողությունը վերջացավ, սրահում բարձրացավ փոթորկոտ սուլոց: Լորդ Հենրին վեր կացավ և հագավ վերարկուն:

– Նա շատ գեղեցիկ է, Դորիան, – ասաց նա, – բայց խաղալ չգիտի: Գնանք:

– Ո՛չ, ես մինչև վերջ պետք է նայեմ, – դառնությամբ, բայց կտրուկ պատասխանեց պատանին, – շատ եմ ցավում, որ

յւմ պատճառով կորցրեցիք երեկոն, Հարրի: Երկուսիցդ և չնկրողություն եմ խնդրում:

- Սիրելի Դորիան, օրիորդ Վեյնը թերևս տկար է այսօր,- լնդհատեց Հոլլուորդը,- ուրիշ անգամ կգանք:

- Երանի տկար լինե՞ր,- պատասխանեց Դորիանը,- բայց ես տեսնում եմ, որ նա պարզապես սառն է ու անհոգի: Ամբողջովին փոխվել է: Դեռ երեկ նա մեծ դերասանուհի էր: Իսկ այս երեկո՝ պարզապես տափակ և միջակ դերասանուհի:

- Այդպես մի խոսեք Ձեր սիրած աղջկա մասին, Դորիան. սերն արվեստից բարձր է:---

- Թե՛ սերը, թե՛ արվեստը ընդօրինակման ձևեր են,- ասաց լորդ Հենրին:- Դե՛, գնանք, Դորիան, այստեղ այլևս մի մնացեք: Հոգու համար վատ խաղ դիտելը վնասակար է... Եվ վերջապես, դժվար թե ուզեիք, որ Ձեր կինը դերասանուհի լինի: Ուրեմն, միթե միևնույնը չէ, եթե նա փայտե տիկնիկի պես է խաղում Զուլիետտա: Նա շատ սիրունիկն է և եթե կյանքի մասին էլ այդպիսի աղոտ պատկերացում ունի, որքան արվեստի, ապա ավելի մոտիկ ծանոթությունը նրա հետ Ձեզ մեծ հաճույք կպատճառի: Միայն երկու տեսակի մարդիկ կան, որոնք իսկապես հետաքրքիր են. մարդիկ, որոնք բացարձակապես ամեն ինչ գիտեն կյանքի մասին, և մարդիկ, որոնք բացարձակապես ոչինչ չգիտեն:

Օ՛, սիրելիս, այդպես ողբերգական մի ընդունեք, ի սեր աստծո: Երիտասարդ մնալու գաղտնիքը երբեք չհուզվելու մեջ է: Դա փչացնում է դեմքը: Եկեք Բեզիլի հետ ակումբ գնանք: Այնտեղ կծխենք և կխմենք Միբլ Վեյնի գեղեցկության կենսացը: Նա գեղեցկուհի է: Ուրիշ ինչ եք ուզում:

- Գնացե՛ք, Հարրի,- բղավեց պատանին,- ես ուզում եմ մենակ մնալ: Բեզիլ, Դուք էլ գնացեք: Միթե չեք տեսնում, որ սիրտս կտոր-կտոր է լինում,- նրա աչքերը լցվեցին տաք

արցունքով, շուրթերը դողացին: Նետվելով օթյակի խորքը՝ կայավ պատին և ձևոքերով ծածկեց դեմքը:

- Գնանք, Բեգիլ,- ասաց լորդ Հենրին ձայնի զարմանալի ընթշույթամբ: Եվ երկուսն էլ դուրս եկան օթյակից:

Մի քանի րոպե անց լույսերը մարեցին, վարագույլը բայծրացավ, և սկսվեց երրորդ գործողությունը: Դորիան Գրեյը վերադարձավ իր տեղը: Գունատ էր և չափազանց անտարբեր: Ներկայացումը շարունակվում էր, թվում էր վերջ չկա: Սրահը կիսով չափ դատարկվել էր, հանդիսատեսների մի մասը, հռիռալով և ծանր կռճիկները թխթխկացնելով, դուրս էր գնում:

Ձախողումը կատարյալ էր:

Վերջին գործողությունն ընթանում էր գրեթե դատարկ դահլիճում: Վերջապես վարագույրն իջավ թրքջոցի և բարձրածայն փնթփնթոցների տակ:

Հենց որ գործողությունը վերջացավ, Դորիան Գրեյն անմիջապես ետնաբեմ նետվեց: Սիբիլը մենակ կանգնած էր Հարդարասենյակում՝ դեմքի հաղթական արտահայտությամբ: Աչքերը շողում էին արտակարգ հրով, նա ամբողջությամբ կարծես ճառագայթում էր: Կիսաբաց շուրթերը ժպտում էին միայն իրեն հայտնի ինչ-որ գաղտնի ժպիտով:

Երբ Դորիան Գրեյը ներս մտավ, Սիբիլը նայեց և լցվեց անսահման ուրախությամբ:

- Ինչ վատ խաղացի ես այսօր, Դորիան,- բացականչեց նա:

- Ահավոր,- հաստատեց Դորիանը՝ տարակուսանքով նայելով Սիբիլին: - Սարսափելի էր: Հիվանդ եք: Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչի նման էր Ձեր խաղը և որքան տառապանք դա պատճառեց ինձ:

Աղջիկը ժպտում էր:

- Դորիան, - երգեցիկ ծայնով ծոր տվեց, - կարծես այդ անունը մեղրից էլ քաղցր էր նրա ծաղկաթերթ ալ շուրթերի համար,- Դորիան, Դուք պետք է հասկանայիք: Իսկ այժմ հասկանում եք, չէ:

- Ինչ հասկանամ,- բարկացած հարցրեց նա:

- Այն, թե ինչու ես վատ խաղացի այսօր... թե ինչու ես սրանից հետո միշտ էլ պետք է վատ խաղամ, թե ինչպես ես այլևս չեմ կարող խաղալ այնպես, ինչպես առաջ:

Դորիանը թոթվեց ուսերը:

- Երևի հիվանդ էիք: Այն դեպքում ինչո՞ւ խաղացիք: Չէ, որ Դուք ծաղրուծանակի առարկա եք դառնում: Ընկերներս անտանելի ծանծրացան: Ես՝ նույնպես:

Սիբիլը կարծես չէր լսում: Նա ուրախության էքստազի մեջ էր: Երջանիկ ինքնամոռացությունը նրան լրիվ վերափոխել էր:

- Դորիան, Դորիան,- բացականչեց նա,- նախքան Ձեզ ճանաչելը իմ կյանքի միակ իրականությունը խաղն էր: Դրանով էի ապրում: Ամեն ինչ ինձ իրական էր թվում: Մի գիշեր Ռոզալինդա էի, մյուս գիշերը՝ Պորցիա: Իմն էր Բենտրիչի նուրախությունը և Կորգելիայի տառապանքը: Եվ այդ ամենին հավատում էի: Ինձ հետ խաղացող խղճուկ դերասանները աստվածային էին թվում: Նախշած բեմը իմ աշխարհն էր: Ես ապրում էի տեսիլքների մեջ, որոնք ինձ իրական մարդիկ էին թվում: Եվ ահա, որտեղից որտեղ, հայտնվեցիք Դուք, սեր իմ, և գերությունից ազատեցիք իմ հոգին:

Դուք ինձ ցույց տվեցիք իրական կյանքը: Այսօր ես առաջին անգամ տեսա այն ամբողջ դատարկությունը, կեղծիքն ու բուտաֆորային անհեթեթությունը, որը ինձ շրջապատում է բեմում: Այս երեկո ես առաջին անգամ տեսա, որ Ռոմեոն ծեր է, սարսափելի և շպարված, որ լուսնյակ գիշերն այգում

արհեստական է. իսկ այգին այդ ոչ թե այգի է, այլ ողորմելի դեկորացիաներ: Բառերը, որոնք ես արտասանում էի, իսկական չէին, իմը չէին, և այն խոսքերը չէին, որ ես ուզում էի ասել: Ձևը շնորհիվ ես հասկացա այն, ինչը վեր է արվեստից: Ես զգացի իսկական սերը: Արվեստը նրա գունատ արտադրումն է: Օ՛, բերկրություն իմ, իմ Հմայի՜չ Արքայազն, Արալսու՜յն իմ կյանքի, ծանծրացել եմ ապրել ստվերների մեջ: Ինձ համար Դուք ավելի թանկ եք, քան ողջ աշխարհի արվեստը: Իմ ինչին են պետք այդ տիկնիկները, որոնք շրջապատում են ինձ բեմում: Երբ երեկոյան ես թատրոն եկա, ինձ հանկարծ զարմանք պատեց. ամեն ինչ միանգամից օտարացավ ինձ համար: Ես կարծում էի՝ հիանալի կխաղամ, բայց հակառակը եղավ: Եվ հանկարծ հոգով հասկացա, թե ինչու չեմ կարողանում խաղալ: Եվ դա ինձ բերկրանք պատճառեց: Ես լսում էի, որ սուլում են, բայց ժպտում էի: Նրանք ինչ կարող էին հասկանալ մեր սիրուց: Տարևք ինձ այստեղից: Դորիան, տարևք Ձեզ հետ այնտեղ, որտեղ մենք բոլորովին մենակ կլինենք: Ինձ համար թատրոնն ատելի է: Ես կարող էի լինում սեր պատկերել, քանի դեռ չգիտեի, թե ինչ է դա, իսկ հիմա, երբ ինչպես հուր այրում է ինձ այդ սերը, ես անկարող եմ: Ա՛խ, Դորիան, Դորիան, այժմ ինձ հասկանում եք: Ձե՛ որ հիմա իմ՝ սիրահարվածի դեր կատարելը սրբապղծություն է: Ձևը շնորհիվ էր, որ դա իմացա:

Դորիանն ընդոստ շրջվեց Սիբիլից և նստեց բազմոցին:

– Դուք սպանեցիք իմ սերը,– մրմնջաց նա:

Սիբիլը զարմացած նայեց նրան, ապա ծիծաղեց: Դորիանը լուրջ էր: Աղջիկը մոտեցավ, նուրբ մատներով շոյեց նրա մուկը, հետո չոքեց և շուրթերը սեղմեց պատանու ձեռքերին. Սալայն Դորիանը ցնցվեց, ետ քաշեց ձեռքերը: Ապա վեր թռչելով տեղից՝ գնաց դեպի դուռը.

- Այո՛, այո՛,- գոչեց նա,- Դուք սպանեցիք իմ սերը: Առաջ Դուք հուզում էիք իմ երևակայությունը, իսկ հիմա ոչ մի հետաքրքրություն չեք առաջացնում իմ մեջ: Ես Ձեզ սիրեցի, որովհետև Դուք հրաշալի էիք խաղում, որովհետև Դուք մարմնավորում էիք մեծ բանաստեղծների երազանքները, կերպավորում, կյանք էիք տալիս արվեստի անմարմին տեսիլքներին: Իսկ հիմա այդ ամենը վերջացած է: Դուք դարձաք դատարկ ու սահմանափակ մի կին: Աստված իմ, ինչքան էի ես հիմար, ինչ խնթրություն էր իմ սերը Ձեր նկատմամբ: Այժմ ինձ համար Դուք ոչնչություն եք: Ես Ձեզ այլևս տեսնել չեմ ուզում: Նույն-իսկ չեմ էլ հիշի Ձեզ, Ձեր անունը չեմ արտասանի երբեք: Օ՛հ, եթե իմանայիք, թե Դուք ինչ էիք ինձ համար առաջ... Առաջ... Հիշելը նույնիսկ ցավ է պատճառում ինձ: Երանի ես երբեք տեսած չլինեի Ձեզ: Դուք փշրեցիք իմ բոլոր երազանքները: Որքան քիչ եք դուք հասկանում սիրուց, եթե ասում եք, թե այն սպանեց Ձեր մեջ դերասանին: Չէ՛ որ առանց Ձեր արվեստի դուք ոչնչություն եք: Ես ուզում էի Ձեզ դարձնել նշանավոր, ուզում էի, որ Դուք հռչակ ունենաք: Աշխարհը կերկրպագեր Ձեզ, և Դուք կկրեիք իմ անունը: Իսկ ի՞նչ եք հիմա: Սիրունիկ դեմքով, երրորդ կարգի դերասանուհի:

Սիրիլը գունատվել, ու դողում էր: Ձեռքերը ջղածգվել էին, ձայնը կարծես խեղդվել էր կոկորդում:

- Դուք լրիռք եք այդ ասում, Դորիան,- շշնջում էր նա,-- գուցե խաղում եք:

- Խաղում եմ: Օ՛, ո՛չ, խաղալը ես Ձեզ համար եմ թողնում: Դուք այնքան լավ եք այդ անում,- թույնով լցված՝ առարկեց նա:

Աղջիկը տեղից կանգնեց և դեմքի տանջալից արտահայտությամբ մոտեցավ նրան: Ձեռքը դրեց Դորիանի ուսին և նայեց նրա աչքերի մեջ: Բայց Դորիանը մի կողմ հրեց նրան

ու ղղավեց.

- Չդիպչե՞ք ինձ:

Աղջիկը խուլ հառաչեք, ընկավ պատանու ոտքերը: Եվ տրորված ծաղկի նման այդպես մնաց հատակին:

- Դորիան, Դորիան, ինձ մի լքե՛ք,- աղերսանքով շնչաց նա,- ես շատ եմ գղջում, որ վատ խաղացի այսօր: Անվերջ Ձեր մասին էի մտածում: Կրկին կփորձեմ... այո՛, այո՛, ես ջանք չեմ խնայի: Սերը այնքան անսպասելի էր: Ես թերևս դա չգգայի էլ, եթե ինձ չհամբուրեիք... եթե մենք չհամբուրվեինք... կրկին համբուրեք ինձ, սեր իմ, մի գնացե՛ք: Ես չեմ դիմանա...

Մի լքիր ինձ, եղբայրս... Ո՛չ, ո՛չ, ես դա նկատի չունեի, նա միայն կատակում էր... Օհ, միթե չեք կարող ինձ ներել: Այսուհետև ես շատ կաշխատեմ, կջանամ լավ խաղալ: Այդպես դաժան մի եղեք, որովհետև աշխարհում ես ամեն ինչից շատ Ձեզ եմ սիրում: Չէ՞ որ ես միայն մեկ անգամ եմ Ձեզ դժգոհ թողել: Իհարկե, Դուք ճիշտ եք, Դորիան, ես չպետք է մոռանայի, որ դերասանուհի եմ: Հիմարության էր, բայց ի՞նչ անեմ, չկարողացա: Ա՛խ, ինձ մի լքեք, մի լքեք ինձ, Դորիան:

Բուռն արցունքները խեղդեցին նրան, հատակին ընկած վիրավոր կենդանու պես նա գալար-գալար էր գալիս, իսկ Դորիան Գրեյը վերևից նրան էր նայում՝ ամբարտավան արհամարհանքի քմծիծաղը նրբագեղ շուրթերին: Այն մարդկանց տանջանքների մեջ, որոնք այլևս սիրելի չեն, միշտ ինչ-որ ծիծաղելի բան կա: Սիբիլ Վեյնը անհեթեթորեն մեղոդրամատիկ էր թվում, նրա արցունքներն ու հեծեծանքը գրգռում էին Դորիանին:

- Ես գնում եմ,- վերջապես ասաց նա հանգիստ, հստակ ձայնով,- չէի ցանկանա անխիղճ լինել, բայց Ձեզ տեսնել այլևս չեմ կարող, Դուք հիասթափեցրիք ինձ:

Սիբիլը լուռ հեկեկում էր, նա ոչինչ չպատասխանեց, բայց

սողաց ավելի մոտիկ՝ ձեռքերը կույրի պես առաջ մեկնած. կարծես նրան էր փնտրում: Սակայն Դորիանը շրջվեց և դուրս եկավ: Մի քանի րոպե հետո նա արդեն փողոցում էր:

Թե ո՛ր էր գնում, ինքն էլ չգիտեր: Հետո աղոտ մտաբերեց, որ թափառում է հագիվ լուսավորված փողոցներում, չարագուշակ տեսքով տների մոտ, կամարների սև ստվերների տակ: Կանայք խռպոտ ձայներով և սուր քրքիջով կանչում էին նրան: Խոշոր կապիկների պես մրթմրթալով և հայիոյելով օրորվում էին հարքածները: Դորիանը տեսնում էր տների դռներին կուչ եկած խղճուկ ու հյուծված երեխաների, լսում էր մռայլ բակերից եկող սուր ճիչեր ու կոպիտ հայիոյանք:

Այգաբացին նա Քովենթ-Գարդնի մոտ էր: Մութը ցրվել էր, մեղմ առկայծող կրակներով ընդելուզված երկինքը նման էր հրաշագեղ մարգարտահատիկի: Դեռ ամայի, փայլուն սալարկներով դանդաղ ճոռում էին երկար ցողունների վրա օրորվող շուշաններով լի սայլերը: Օդում տարածվել էր ծաղիկների բույրը, որը բալասանի պես ամոքում էր պատանու ցավը: Բեռնած սայլերի հետևից նա ինքնաբերաբար շուկա մտավ և սկսեց դիտել սայլերը բեռնաթափողներին: Սպիտակ խալաթը հագին մի սայլապան նրան բալ հյուրասիրեց: Դորիանը շնորհակալություն հայտնեց և մտացրիվ սկսեց ուտել, զարմանալով, թե ինչու իրենից փող չվերցրեց այդ մարդը: Բալը կեսգիշերին էին քաղել, և նրա մեջ կարծես թափանցած լիներ լուսնի սառնությունը: Տղաները երկար շարքով՝ մեկը մյուսի ետևից, շերտավոր վարդակակաչների և դեղին, կարմիր վարդերի զամբյուղները ձեռքներին, նրա առջևից ճանապարհ ճեղքեցին դալար կանաչ բանջարեղենի հսկայական կույտերի միջով: Նախասրահի դռան տակ՝ արևի լույսով ողողված մոխրագույն սյուների միջև, թրև էին գալիս մի խումբ գջլոտված աղջիկներ: Մի ուրիշ խումբ էլ կուտակվել

էր Պյացցեի վրա գտնվող սրճարանի դռների մոտ: Անհարկ սալարակի վրա լծասարքերն ու զանգակները զնգզնգացնելով սայթաքում էին ծանրաքարշ ձիերը: Մի քանի սայլապաններ քնել էին պարկերի կույտերի վրա: Վարդագույն ոտքերով, ծիածանաւանդ վզիկներով աղավինները այս ու այն կողմ էին վազվզում և կտցահարում թափած ցորենի հատիկները:

Քիչ անց Դորիանը կառք վարձեց և տուն գնաց: Տան շեմին մի պահ կանգնելով՝ նա սկսեց նայել լուռ հրապարակին, լուսամուտների ամուր ծածկված փակոցափեղկերին և գույնզգույն վարագույրներին: Այժմ երկինքը ջինջ ծիածանաքարի գույն ուներ, և նրա ֆոնի վրա արծաթի պես փայլվում էին տանիքները: Դիմացի տան ծխնելույզից բարախիկ ծուխ էր բարձրանում, որի մանուշակագույն ժալպվենը, պտույտներ տալով, գալարվում էր սաղափագույն օդում:

Ինչ-որ, դռների գոնդոլից մի ժամանակ գողացած վննետիկյան հսկայական ոսկեզօծ լապտերի մեջ, որն այժմ կախված էր մուտքի կաղնե մեծ տախտակադրվագներով ընդարձակ սրահի առաստաղից, դեռ առկայծում էին գազի երեք այրիչներ, որոնց բոցի կապույտ նեղ լեզուները երիզվել էին սպիտակ հրով: Նա մարեց լույսը, գլխարկն ու վերարկուն շաքտեց սեղանին ու գրադարանի միջով գնաց դեպի իր ննջարանը, որն ութանկյուն մեծ սենյակ էր առաջին հարկում: Իրեն շոայլություններով շրջապատելու ձգտումով տոգորված՝ նա վերջերս նորից էր գարդարել իր սենյակը և պատերից կախել վերածնունդի շրջանի մի քանի հազվագյուտ պատկերազարդ գորգեր, որոնք գտել էր Մելքիի տան ձեղնահարկում: Դռան բռնակը պտտելիս նրա հայացքն ընկավ Բեգիլ Հոլլուորդի նկարած դիմանկարին: Դորիանը ցնցվեց ու ետ ընկրկեց ինչ-որ բանից ապշած: Հետո ննջասենյան մտավ: Սակայն ծաղկեփնջիկը վերարկուի մերակից հանելով, նա կարծես

վարանեց: Վերջապես վերադարձավ գրադարան, մոտեցավ իր դիմանկարին և ուշադիր գննեց: Աղոտ լույսի տակ, որ ստվելոված էր դեղին մետաքսե վարագույրներով, նկարում դեմքը փոքր-ինչ փոխված երևաց: Արտահայտությունն այլ էր. շուրթերի անկյուններում ինչ-որ դաժանություն կար... Այն քնդ տարօրինակ բան:

Դորիանը լուսամուտին մոտեցավ և քաշեց վարագույրը: Սենյակը ողողվեց վաղորդյան պայծառ ճառագայթներով, տարօրինակ ստվերները ետ փախան խավար անկյունները: Սակայն նկարում դեմքի տարօրինակ արտահայտությունը շարունակում էր մնալ, ավելին, նա դարձել էր նույնիսկ ավելի իստակ: Այն փառ լույսի տակ բերանի գիծն այնպես պարզ երևաց, կարծես Դորիանը հայելուն էր նայում սարսափելի ոճի կատարելուց հետո:

Նա ցնցվեց և, սեղանի վրայից վերցնելով լորդ Հենրիի բազմաթիվ նվերներից մեկը՝ փղոսկրե հրեշտակիկներով շրջանակած ձվածև հայելին, նայեց նրան: Ո՛չ, նրա ալ շրթունքները ո՛չ մի գիծ այդպես չէր այլանդակում: Ի՛նչ էր այդ նշանակում:

Դորիանը տրորեց աչքերը, ընդհուպ մոտեցավ նկարին և կրկին գննեց: Դիմագծի և գույների ոչ մի փոփոխություն չկար նկարում, սակայն արտահայտությունն, անկասկած, փոխվել էր: Ո՛չ, դա իր երևակայության արդյունքը չէր: Ջարհուրելի փոփոխությունն ակնհայտ էր:

Նստելով աթոռին՝ նա սկսեց խորհրդածել: Հանկարծ հիշողության մեջ հայտնվեցին այն խոսքերը, որոնք ինքն ասել էր Բեզիլ Հոլլուորդի արվեստանոցում՝ դիմանկարն ավարտվելու օրը: Այո՛, շատ լավ էր հիշում: Նա այն ժամանակ խելահեղ մի ցանկություն հայտնեց, ուզեց, որ ինքն ընդմիշտ երիտասարդ մնա, իսկ դիմանկարը ծերանա, ցանկացավ, որ

իր գեղեցկությունը երբեք չխուսանա, իսկ կտավի դեմքին դրոշմվի կրքերի ու մեղքերի կնիքը: Այո՛, նա ուզում էր, որ տառապանքների և ծանր խոհերի հետքերը ակոսեին դեմքը կտավի վրա, իսկ ինքը պահպաներ դեռ նոր գիտակցված փթթող պատանեկությունն ու նրբագեղությունը: Միթե իր ցանկությունն իրականանում էր: Ո՛չ: Դա անկայելի էր. այդպիսի հրաշքներ չեն լինում: Նույնիսկ մտածելն այդ մասին զարհուրելի էր: Եվ սակայն իր դիմաց էր գտնվում յղիմանկարը՝ դաժանության գիծը շուրթերի վրա:

Դաժանություն, միթե նա դաժան էր վարվել: Մեղավորը ոչ թե ինքն էր, այլ՝ Սիբիլը: Ինքը կարծել էր, թե այդ աղջիկը մեծ դերասանուհի է, և այդ պատճառով էլ սիրել էր նրան: Իսկ Սիբիլը հիասթափեցրեց: Պարզվեց, որ նա ոչնչություն է և անարժան իր սիրուն: Սակայն զղջման և կարեկցանքի անսահման մի զգացում համակեց Դորիանին, երբ հիշեց նրան իր ոտքերի առաջ փոքրիկ երեխայի նման հեկեկալիս: Հիշեց, թե ինչպիսի չոր անտարբերությամբ էր նայում այն ժամանակ: Ինչո՞ւ էր ինքն այդպես ստեղծվել, ինչո՞ւ է իրեն այդպիսի հոգի տրվել...

Բայց միթե ինքը չէր տանջվում: Երեք սարսափելի ժամ տևող ներկայացման ընթացքում նա տառապանքի մի ամբողջ դար ապրեց, տանջալից մի հավիտենականություն: Իր կյանքը համենայն դեպս հավասարարժեք է նրա կյանքի հետ: Ինքը խոցել էր Սիբիլին հավիտենապես, բայց չէ՞ որ նա էլ ժամանակավորապես իր կյանքն էր մթագնել: Ընդ որում՝ կանայքավելի հեշտ են կրում տառապանքը, քան տղամարդիկ: Նրանք ապրում են միայն իրենց զգացմունքներով, միայն իրենց զգացմունքների մասին՝ են մտածում: Եթե սիրեկան են պահում, ապա միայն նրանց հետ միշտ տեսարաններ սարքելու համար: Այդպես էր ասում լորդ Հենրին, իսկ լորդ

Հենրին շատ լավ գիտի կանանց:

Ինչո՞ւ իզուր ինքը տանջվի Սիբիլ Վեյնի համար: Չի՞ որ նա այլևս գոյություն չունի իր համար:

Իսկ նկամը: Այդ մասին ինչ կարող էր ասել: Նկարը պահում էր իր կյանքի գաղտնիքը և կարող էր այդ գաղտնիքը բոլորին հայտնել: Դիմանկարը սովորեցրել էր նրան սիրել իր սեփական գեղեցկությունը, միթե նույն այդ դիմանկարը կստիպի նրան ատել իր սեփական հոգին: Այժմ էլ ինչպե՞ս նայել կտավին:

Ո՛չ, ո՛չ, այդ բոլորը հոգեկան տառապանքից գրգռված երևակայության արդյունք էր: Նա անց էր կացրել սոսկալի զիշեր, և ահա աչքին ինչ-որ տեսիլք էր երևում: Հանկարծ ուղեղում հայտնվեց այն փոքրիկ բոսորագույն բիծը, որ լսելագարեցնում է մարդկանց: Նկարը չէր փոխվել, լսելացնություն էր այդպես մտածելը:

Սակայն դիմանկարը նայում էր նրան դաժան մի ժպիտով, որը այլանդակում էր գեղեցիկ դեմքը: Վաղորդյան արևի ճառագայթների տակ փայլում էին մազերը: Երկնագույն աչքերը հանդիպել էին իր աչքերին: Նա համակվեց անսահման կարեկցանքով, սակայն ոչ թե իր, այլ դիմանկարի հանդեպ: Նկարը փոխվել էր արդեն և դեռ շատ կփոխվեր: Կճերմակեն ոսկևիայլ մազերը: Կթռնեն դեմքի սպիտակ և կարմիր վարդերը: Յուրաքանչյուր գործած մեղքի համար մի բիծ կաղճատի, կփչացնի գեղեցկությունը:

Ո՛չ, նա այլևս մեղք չի գործի: Դիմանկարը փոխվի թե ոչ, միևնույն է, այդ նկարը կդառնա նրա խղճի տեսանելի խորհրդանիշը: Պետք է սրանից հետո կռվել գայթակղումների դեմ: Եվ այլևս չհանդիպել լորդ Հենրիի հետ, կամ գոնե չլսել նրա թունավոր տեսությունները, որոնք Բեզիլ Հուլլուորդի պարտեզում առաջին անգամ արթնացրին իր մեջ անկարելի

հանդուգն տենչը:

Եվ Դորիանը որոշեց վերադառնալ Սիբիլ Վեյնի մոտ, մեղքը թավել, կամուսնանա նրա հետ և կփորձի նորից սիրել: Այն, դա իր պարտականությունն էր: Թերևս Սիբիլն ավելի շատ է տանջվել: Խնդճ երեխա: Դաժան և եսասիրաբար վարվեց նրա հետ: Սերը կվերադառնա, նրանք երջանիկ կլինեն միասին: Սիրիլի հետ նրա կյանքը կլինի մաքուր և գեղեցիկ:

Նա վեր կացավ աթոռից և, սարսռալով, վերջին անգամ նայեց նկարին ու մի մեծ վարագույր քաշեց նրա վրա:

- Ի՞նչ զարհուրելի բան է,- քրթմնջաց ինքն իրեն և, մոտենալով լուսամուտին, բացեց:

Նա դուրս եկավ պարտեզ, գնաց դեպի բացատ և ամբողջ կրծքով ագահորեն շնչեց առավոտյան թարմ օդը: Թվում էր, թե պայծառ առավոտը ցրեց բոլոր մռայլ կրքերը, և Դորիանը այժմ մտածում էր միայն Սիբիլի մասին: Նա իր սրտում լսում էր նախկին սիրո թույլ արձագանքը: Դորիանը անվերջ կրկնում էր իր սիրեցյալի անունը: Եվ թռչունները, որոնք ծվվում էին ցողաթաթախ պարտեզում, կարծես ծաղիկներին պատմում էին Սիբիլի մասին:

ԳԼՈՒԽ VIII

Վաղուց կեսօրն անցել էր, երբ Դորիանը արթնացավ: Ասլա սավույը ուսնածայրերի վրա մի քանի անգամ ներս էր մտնում և տեսնելու, թե իր երիտասարդ տերն արդյոք չի արթնացել: Նա զարմացել էր, որ նա այսօր այդքան երկար է քնում: Վերջապես ննջարանից հնչեց զանգը, և Վիկտորն անաղմուկ քայլերով ներս մտավ՝ մի գավաթ թեյ և նամակների մի կույտ Սևրի հին ճենապակե փոքրիկ սկուտեղին դրած: Նա քաշեց երկնագույն շողշողուն աստառով կանաչ կերպասե վարագույրները, որոնք կախված էին երեք բարձր լուսամուտներից:

- Դուք այսօր լավ քնեցիք, մեսյո՛ր,- ժպտալով ասաց նա:

- Ժամը քանի՞սն է, Վիկտոր,- քնաթաթալս հարցրեց

Դորիանը:

- Մեկն անց քառորդ, մեսյո՛ր:

- Օհո՛, շատ է ուշ:

Դորիանը նստեց անկողնում և, թեյ ըմպելով, սկսեց նայել նամակները: Մեկը լորդ Հենրիից էր, առավուտյան էր սուրհանդակը բերել: Մի պահ վարանեց, ապա կողք դրեց և թռուցիկ նայեց մյուս նամակները: Նրանց մեջ պարունակվում էին սովորական տոմսակներ՝ ճաշի հրավերներ, նկարների ցուցահանդեսի փակ դիտման հրավիրատոմսեր, բարեգործական համերգների ծրագրեր, մի խոսքով՝ սովորական գրություններ, որ թափում են բարձրաշխարհիկ երիտասարդների գլխին սեզոնի ամենաեռուն ժամանակ: Այդտեղ կար նաև Լյուդովիկոս XV ռժի նրբակերտ արծաթյա հարդարանքի, սպասքի բավականին մեծ մի հաշիվ, որը Դորիանը չհամարձակվեց ուղարկել իր խնամակալներին: Նրանք չափազանց հետամնաց մարդիկ էին և չէին հասկանում, որ մեր դարում միայն ոչ անհրաժեշտ իրերն են մկր

միակ անհրաժեշտությունները: Կային նաև մի քանի շատ քաղաքավայրի գրած նամակներ. Ջերմին-սթրիթի վաշխա-
ռունկից, ոյունք առաջարկում էին առաջին իսկ պահանջով
փող տալ, ինչպիսի գումար ուզում է լինի՝ ամենաչափավոր
տոկոսով:

Մոտ տասը ռուպե հետո Դորիանը վեր կացավ և հագնելով
մետաքսով ասեղնագործած նրբագեղ քիշմիրե խալաթը՝
մտավ եղնջաքարով երեսպատած լոգասենյակը: Երկար
քնկույց իետո սառը ջուրը թարմացրեց նրան: Թվում էր, թե
կրեկլա ապրումները արդեն մոռացել է: Միայն մեկ-երկու
անգամ հիշեց, որ ինքը ինչ-որ տարօրինակ ողբերգության է
մասնակցել, բայց դա հիշեց աղոտ, ինչպես երազ:

Հագնվելուց հետո նա գնաց գրադարան և նստեց բաց
լուսամուտի կողքին՝ կլոր սեղանի մոտ, ուր ֆրանսիական
ձևով թեթև նախաճաշ էր դրված: Հրաշալի օր էր: Օդը լցվել էր
անուշ բուրմունքով: Ներս մտավ մի մեղու և բզզաց Դորիանի
դիմաց դրած չինական երկնագույն սկահակի շուրջը, որի
մեջ դեղին վարդեր կային: Եվ Դորիանը իրեն միանգամայն
կրջանիկ զգաց:

Բայց հանկարծ նրա հայացքն ընկավ վարագույրին, որով
երևել ծածկել էր դիմանկարը, և ցնցվեց:

- Ցոլրտ է, պարոն,- հարցրեց սպասավորը՝ սեղանին
օմլեթ դնելով,- փակեմ լուսամուտը:

Դորիանը գլուխն օրորեց:

- Չեմ մրսում,- կամաց ասաց նա:

Միթե իրոք դա ճիշտ էր: Իսկապես փոխվել է դիմանկարը,
թե պարզապես երևակայությունն էր ստիպել դիմանկարի վրա
տեսնել չար արտահայտություն՝ զվարթ ժպիտի փոխարեն:
Նկարած կտավը չէր փոխվի, անշուշտ: Դա անհեթեթություն
է: Պետք է մի օր դա պատմել Բեզիլին, նա կզվարճանա:

Սակայն որքան կենդանի է մարդ հիշում այդ ամսնւյ, նախ՝ աղոտ աղջամուղջում, ապա՝ արևածագի պայծառ շողերի տակ նա տեսավ շուրթերը ծոմոռոլ այդ դաժան արտահայտությունը: Իսկ այժմ գրեթե սարսափում էր մենակ մնալուց: Գիտեր, որ եթե մենակ մնա, նորից կզննի դիմանկարը: Եվ վախենում էր իմանալ իրողությունը:

Երբ սպասավորը սուրճ ու գլանակ բերելուց հետո շարժվեց դեպի դուռը, Դորիանը մեծ ցանկություն ունեցավ նրան կանգնեցնելու: Վիկտորը դուռը չէր հասցրել փակել, Դորիանը նրան նորից ներս կանչեց:

Դորիանը մի պահ լուռ նայեց նրան:

– Ով էլ ուզում է գա, Վիկտոր, ես տանը չեմ, – հառաչելով ասաց նա:

Սպասավորը խոնարհվեց և դուրս գնաց:

Դորիանը վեր կացավ սեղանի մոտից, մի ծխախոտ վառեց և մեկնվեց շքեղ ծածկոցով բազմոցին՝ դիմանկարը քողարկող վարագույրի դիմաց: Վարագույրը հին էր, իսպանական ոսկեգույն կաշվից՝ Լուդովիկոս XIV ոճի բազմերանգ նկարներով զարդարած: Դորիանը սևեռում հայացքով գնում էր վարագույրը՝ ցանկանալով իմանալ արդյոք դրանից առաջ այն չի թաքցրել մարդկային կյանքի գաղտնիքներ:

Ինչ անի. մի կողմ չբաշխ վարագույրը, թե՛ թողնի տեղում: Ինչ օգուտ իմանալուց: Սարսափելի կլիներ, եթե դա ճիշտ լիներ: Իսկ եթե ճիշտ չէ, ինչո՞ւ իզուր տանջվել:

Իսկ ինչ կլինի, եթե հանկարծ օրհասական պատահակա-նությամբ ուրիշ աչքեր նայեն վարագույրի ետևը և տեսնեն ահավոր փոփոխությունը: Ինչ կանի, եթե Բեզիլ Հոլլուորդը ցա և ցանկանա նայել իր աշխատանքը: Իսկ Բեզիլն անպայման դա կուզի տեսնել: Ո՛չ, պետք է մի անգամ էլ գննել դիմանկարը և անմիջապես: Տանջող կասկածանքից վատ բան չկա:

Դորիանը վեր կացավ, երկու դռներն էլ կողպեց: Գոնե այդ խայտառակությունը տեսնելիս մենակ լիներ: Նա վարագույրը լաշեց և դեմ-դիմաց տեսավ իրեն: Այո՛, նկարը փոխվել էր:

Հետագայում Դորիանը հաճախ (և միշտ էլ զարմանքով) հիշում էր, որ առաջին րոպեներին դիմանկարը դիտում էր զրեթե օբյեկտիվ հետաքրքրությամբ: Անհավանական էր թվում, թե այդպիսի փոփոխություն կարող է կատարվել: Մինչդեռ դա ակնառու փաստ էր: Միթե ինչ-որ անմեկնելի նմանություն կա իր հոգու և քիմիական կոյուլենների միջև, որոնք ինքնաբերաբար ձևավորվում և երանգավորվում են կտավի վրա: Միթե հնարավոր է, որ այդ հյուլեններն արտա-ցունեն կտավի վրա իր ամբողջ հոգին, իրականացնեն հո-գու երազները: Թե՛ այլ, ավելի սարսափելի պատճառ կա թաքնված:

Նա վախից սարսռաց, կրկին գնաց դեպի բազմոցը, պառկեց և հայացքը ահով սևեռեց դիմանկարին:

Նրան մխիթարում էր միայն այն գիտակցությունը, որ դիմա-նկարը ինչ-որ բան արդեն սովորեցրեց իրեն: Նկարն օգնեց իրեն հասկանալու, թե ինքը որքան անարդարացի և դաժան է վարվել Սիբիլ Վեյնի հետ: Ուշ չէր դեռևս ուղղել սխալը: Սի-բիլը դեռ կարող էր իր կինը լինել: Նրա ազդեցությամբ իր՝ Դորիանի մտացածին և նսասիրական սերը կվերափոխվեր ավելի ազնիվ զգացմունքի, իսկ Բեզիլ Հոլլուորդի նկարած ոլիմանկարը կառաջնորդի նրան կյանքում, ղեկավար ուժ կհանդիսանա նրա համար, ինչպես ոմանց համար՝ խիղճը, իսկ բոլոր մարդկանց համար էլ՝ սարսափը աստծո հանդեպ: Զլոջման համար գոյություն ունի ափիոն՝ թմրադեղ, որ կարող է՝ օրորելով քնեցնել բարոյական զգացումը: Բայց այստեղ՝ նրա աչքի առաջ, քայքայման տեսանելի խորհրդանիշ էր, մեղքի ակներև հետևանք: Այստեղ նրա աչքի առաջ էր այն

ապացույցը, որ մարդն ընդունակ է կործանել սեփական հոգին:

Ժամացույցը խփեց ժամը երեքը, չորսը: Անցավ կես ժամ, սակայն Դորիանը չէր շարժվում տեղից: Նա ջանում էր հավաքել ու միացնել կյանքի ալ թելերը, հյուսեր դրանք իրար հետ ու ձև տար նրանց, գտնել իր ուղին կրքերի բոսոր լաբիրինթոսում, որտեղ մոլորվել էր ինքը: Նա չգիտեր՝ ինչ անել, ինչ մտածել: Վերջապես մոտեցավ սեղանին և սկսեց կլկոտ մի նամակ գրել սիրած աղջկան: Մեղադրելով իր լսելագարությունը՝ նա ներում էր աղերսում Սիբիլից՝ էջ էջի ետևից ծածկելով նամակը գղջման և անսահման տառապանքի կրքոտ խոսքերով: Ինքնախարագանման մեջ յուրահատուկ հեշտասիրություն կա: Եվ երբ մենք ինքներս ենք մեզ մեղադրում, զգում ենք, որ ուրիշ ոչ ոք իրավունք չունի այլևս մեզ մեղադրելու:

Հասկարծ դուռը բախեցին, և լսվեց լորդ Հենրիի ձայնը.

– Դորիան, սիրելիս, ես անպայման պետք է Ձեզ տեսնեմ: Ննրս թողեյ անմիջապես: Ինչ եք այդպես փակվել:

Դորիանը սկզբում ձայն չէր հանում և չէր շարժվում տեղից. Բայց բախոցը կրկնվեց ավելի բարձր և ավելի համառ: Նա որոշեց, որ ավելի լավ է ներս թողնել լորդ Հենրիին և բացատրել, որ ինքը մտադիր է նոր կյանք սկսել: Անհրաժեշտության դեպքում նա պատրաստ է վիճել Հենրիի հետ և նույնիսկ խզել կապերը, եթե այդ խզումը անխուսափելի է. նա վեր ցատկեց, դիմանկարը շտապ ծածկեց վարագույրով և դուռը բացեց:

– Ցավում եմ, Դորիան,– ներս մտնելով՝ ասաց Հենրին,– բայց աշխատեք շատ չմտածել կատարվածի մասին:

– Դուք Սիբիլ Վեյնին նկատի ունեք,– հարցրեց պատանին:

– Այո, իհարկե,– պատասխանեց լորդ Հենրին և, ընկղմելով

բազկաթոռի մեջ, դանդաղորեն հանեց ձեռնոցները,- ճիշտն ասած, ահավոր է, բայց Դուք մեղավոր չեք: Ասացնք, ներկայացումից հետո նրա մոտ գնացիք:

- Այո:

- Այդպես էլ գիտնի: Եվ տեսարան սարքեցիք:

- Ես դաժան վարվեցի, Հենրի, շատ դաժան: Իսկ այժմ արդեն ամեն ինչ կարգին է: Չեմ ավստում կատարվածի համար: Դա սովորեցրեց ինձ ավելի լավ ճանաչել ինքս ինձ:

- Օ՛հ, Դորիան, շատ ուրախ եմ, որ Դուք Ձեր սրտին այդպես մոտ չընդունեցիք: Վախենում էի, թե կտառապեք խղճի խայթից և կպոկեք Ձեր ոսկե գանգուրները:

- Այդ բոլոր ապրումներն արդեն ունեցել եմ,- ասաց Դորիանը և ժպտալով շարժեց գլուխը,- իսկ այժմ կատարելապես երջանիկ եմ: Նախ հասկացա, թե ինչ է խիղճը: Դա բոլորովին էլ այն չէ, ինչ գուր լիք ասում, այլ ամենաաստվածային բանն է մեր մեջ: Այլևս մի ծաղրեր, Հենրի, գոնե՝ ոչ իմ ներկայությամբ: Ուզում եմ, որ խիղճս մաքուր լինի, ես թույլ չեմ տա այլանդակվի հոգիս:

- Ինչպիսի սքանչելի էսթետիկա բարոյագիտության համար, Դորիան: Շնորհավորում եմ: Իսկ ինչից եք մտադիր սկսելու:

- Սիբիլ Վեյնի հետ ամուսնանալուց:

- Սիբիլ Վեյնի հետ,- բացականչեց լորդ Հենրին և ապշահար նայեց Դորիանին,- բայց, սիրելիս, նա...

- Ա՛խ, Հենրի, գիտեմ՝ ինչ պետք է ասեք: Ամուսնության մասին ինչ-որ ահավոր բան: Պետք չէ: Այլևս այդպիսի բաներ մի ասեք: Երկու օր առաջ ես խնդրեցի Սիբիլին ամուսնանալ ինձ հետ: Եվ խոստումս չեմ խախտի: Նա պետք է իմ կինը լինի:

- Ձեր կլինի, Դորիան... Միթե Դուք չեք ստացել իմ նամա-

կը: Այս առավոտ էի գրել և ուղարկել եմ սպասավորիս ինձ:

- Ձեր նամակը: Այո, ինչպես չէ, հիշում եմ... Բայց դեռ չեմ կարդացել, Հարրի: Վախենում էի այնտեղ այնպիսի բան գրած լինեիք, որ ինձ դուր չգար: Դուք Ձեր կծու ծաղրանքով կյանքը կտոր-կտոր եք անում:

- Ուրեմն դեռ ոչինչ չգիտեք:

- Ինչի մասին:

Լորդ Հենրին քայլեց սենյակում, ապա, նստելով Դորիանի կողքին, բռնեց նրա ձեռքերը և ամուր սեղմեց:

- Դորիան,- ասաց նա,- նամակում ես... մի վախեցեք... ես հայտնել էի Ձեզ, որ Սիրիլ Վեյնը... մեռավ:

Ցավի ճիչ դուրս պրծավ պատանու կրծքից, նա վեր ցատկեց և ազատեց ձեռքերը լորդ Հենրիից:

- Մեռավ, Սիրիլը մեռավ: Ճիշտ չէ: Ահավոր սուտ է: Ինչպես եք համարձակվում խաբել ինձ:

- Միանգամայն ճիշտ է, Դորիան,- մտալ առաջ լորդ Հենրին:- Այդ մասին են հայտնում այսօրվա բոլոր լրագրերը: Ես Ձեզ գրել էի՝ ոչ մեկին չընդունեք մինչև իմ գալը: Անշուշտ, դատաքննություն կլինի, պետք է աշխատել, որ Դուք չխառնվեք այդ պատմությանը: Փարիզում նման բաները հոչակ են թերում մարդկանց, մինչդեռ Լոնդոնում մարդիկ դեռ շատ են նախապաշարված: Այստեղ երբեք չի կարելի կարիերայի առաջին փորձը խայտառակությամբ սկսել: Հետաքրքրության համար դա պահվում է ծեր հասակում: Հուսով եմ՝ թատրոնում Ձեր անունը չգիտեն: Եթե այդպես է, ապա շատ լավ է: Ձեզ տեսնլ են նրա սենյակը մտնելիս: Դա շատ կարևոր հանգամանք է:

Դորիանը մի պահ լուռ էր: Նա սարսափից քարացել էր: Վերջապես խեղդված ձայնով կմկմաց.

- Դատաքննություն: Ինչ եք ուզում ասել: Միթե Սիրիլը...

Օ'հ, Հենրի, ես չեմ կարողանում դիմանալ: Շուտ ատեր: Անմիջապես պատմեք ամեն ինչ:

- Ես չեմ կարծում, թե դա սովորական պատահար է, Դորիան, թեպետ լավ կլիներ, որ հասարակությունն այդպես մտածեր: Բայց ահա թե ինչ են պատմում, երբ այդ երեկո նա մոր հետ դուրս է եկել թատրոնից, կարծեմ, մոտ տասներկուսն անց կեսին, հանկարծ ասել է, թե ինչ-որ բան է մոռացել վերևում: Որոշ ժամանակ նրան սպասել են, բայց չի վերադարձել: Վերջապես նրան գտել են իր սենյակի հատակին մեռած: Սլալմամբ ինչ-որ թունավոր բան է խմել, որն օգտագործում են գրիմավորման ժամանակ: Չգիտեմ, թե ինչ, բայց նրա մեջ եղել է կապտաթթու կամ կապարի սպիտակադեղ: Երևի կապտաթթու եղած լինի, որովհետև մեռել է նույն ակնթարթին:

- Աստված իմ, ինչ սարսափելի բան է,- գոռաց պատանին:

- Այո, իհարկե,- շատ ողբերգական է, բայց 'Դուք չպետք է խառնվեք այդ գործին: «Ստանդարտ»-ում կարդացի, որ Սիրիլ Վեյնը տասնութ տարեկան է: Բայց նա ավելի փոքր էր երևում: Կարծես բոլորովին երեխա լիներ և ինչքան անփորձ էր լսաղում: Դորիան, Դուք այդքան Ձեր սրտին մոտ մի ընդունեք: Անպայման ինձ հետ կգաք ճաշելու, իսկ հետո կգնանք օպերա: Այսօր Պատտին է երգում, բարձրաշխարհիկ մարդիկ այնտեղ կլինեն: Կգնանք քրոջս օթյակը, այսօր նրա հետ մի քանի պերճաշուք կանայք են լինելու:

- Ուրեմն ես սպանեցի Սիրիլ Վեյնին,- կարծես ինքն իրեն մրմնջում էր Դորիանը:- Սպանեցի, կարծես դանակը վերցրել ու կտրել եմ կոկորդը: Սակայն վարդերն առաջվա պես գեղեցիկ են, թռչունները կրկին ուրախ գեղգեղում են իմ այգում: Իսկ այս երեկո կճաշեմ Ձեզ հետ, կգամ օպերա, հետո էլ, գուցե, կընթրենք որևէ տեղ... Որքան տարօրինակ և ողբերգական

է կյանքը: Եթե այդ բոլորը կարդայի գրքում, Հանրի, Լյուի կարտասվէի, իսկ այժմ, երբ կատարվել է իրական կյանքում և այն էլ՝ ինձ հետ, ես այնպես եմ ցնցված, որ նույնիսկ չեմ կարողանում արտասվել: Ահա սիրային այն նամակը, որ ես առաջին անգամ գրել եմ իմ կյանքում: Տարօրինակ չէ՞ արդյոք, որ այդ առաջին սիրային կրքոտ նամակը ես մեռածի եմ գրել: Հետաքրքիր է՝ զգո՞ւմ են արդյոք որևէ բան այդ համրացած գունատ մարմինները, որոնց մենք մեռել ենք անվանում: Սիրիլը արդյոք սա կարո՞ղ է զգալ, գիտենալ, լսել: Ա՛յս, Հանրի, ես ինչպես էի նրան սիրում մի ժամանակ: Այժմ, ինձ թվում է, թե դա տարիներ առաջ էր: Այն ժամանակ նա ամեն ինչ էր ինձ համար: Ապա վրա հասավ այդ ահավոր երեկոն... Միթե դա երեկ էր, միթե նա երեկ էր այնպես վատ խաղում, որից սիրտս ծնվում էր: Հետո նա ինձ բացատրեց ամեն ինչ: Չափազանց հուզիչ էր... Սակայն ամենաչնչին չափով իսկ սիրտս չշարժվեց: Եվ ես նրան հիմար անվանեցի: Հետո ինչ-որ բան կատարվեց... չեմ կարող ասել, թե ինչ, բայց դա սոսկալի էր: Ես որոշեցի վերադառնալ Սիրիլի մոտ: Զգացի, որ վատ եմ վարվել... Իսկ այժմ նա մեռած է: Աստված իմ, աստված, ի՞նչ անեմ, Հանրի: Դուք չգիտեք, թե ես ինչ վտանգի մեջ եմ: Եվ հիմա ոչ ոք ինձ չի կարող փրկել անկումից: Դա կարող էր միայն Սիրիլը: Նա իրավունք չուներ սպանել իրեն: Դա եսասիրություն է:~

- Սիրելի Դորիան,- պատասխանեց լորդ Հենրին և, ծխախոտատուփից գլանակ վերցնելով՝ հանեց ոսկեգույն թիթեղապատ լուցկին,- կինը կարող է տղամարդուն սրբացնել միայն մի կերպ՝ ծանծրացնել այնպես, որ նա կորցնի հետաքրքրությունը կյանքի նկատմամբ: Եթե ամուսնանայիր այդ աղջկա հետ, դժբախտ կլինեիր: Իհարկե, նրա հետ սիրալիր կլինեիր, դա հեշտ է, եթե անտարբեր ես մարդու

նկատմամբ: Բայց շուտով նա կզգար, որ Դուք չեք սիրում իրեն: Իսկ երբ կինն զգում է դա, սկսում է հագնվել չափազանց աղաղակող և անճաշակ կամ կրում է շատ շքեղ զլխարկներ, որոնց արժևքը այլ կնոջ ամուսին է վճարում: Էլ չխոսենք այդպիսի անհավասար ամուսնության նվաստացուցիչ լինելու մասին, ույր ես թույլ չեի տա Ձեզ, հավատացեք, քանի որ բոլոր դեպքերում էլ դա կատարյալ անհաջողություն կլիներ Ձեզ համար:

- Թեյոս Դուք ճիշտ եք,- սարսափելի գունատ մրմնջաց պատանին՝ ետ ու առաջ քայլելով սենյակում,- Բայց ես կարծում էի՝ պարտավոր եմ ամուսնանալ: Ես մեղավոր չեմ, որ այդ սարսափելի ողբերգությունը ինձ խանգարեց կատարելու պարտականությունս: Հիշում եմ՝ մի անգամ ասում էիք, որ լավ որոշումների մեջ ինչ-որ չար ճակատագիր կա: Նրանք միշտ չափազանց ուշ են կատարվում: Իմն, անշուշտ, այդպես էր:

- Լավ որոշումները բնության օրենքներին հակառակվելու ապարդյուն ջանքեր են: Նրանք ծնվում են զուտ մեծամտությունից, բայց ոչ մի արդյունք չեն տալիս: Նրանք երբեմն մեզ տալիս են երանավետ, բայց դատարկ զգացումներ, որոնք հրապուրում են թույլերին: Ահա և բոլորը: Լավ որոշումները, պարզապես, չեկ են, որը մարդիկ դնում են մի բանկ, որտեղ իրենք ընթացիկ հաշիվ չունեն:

- Հանրի,- բացականչեց Դորիան Գրեյը՝ մոտենալով նրան և նստելով կողքին,-ինչո՞ւ ես այնպես շատ չեմ տանջվում, ինչպես կուզեի: Միթե ես անսիրտ եմ: Ինչ եք կարծում:

- Ձեզ անսիրտ համարել երբեք չի կարելի բոլոր այն խենթություններից հետո, որոնք Դուք, կատարեցիք վերջին երկու շաբաթվա ընթացքում, - պատասխանեց լորդ Հենրին քաղցր, մեղամաղձոտ ժպիտով: Պատանին խոժոռեց հոնքերը:

- Ինձ դուր չի գալիս այդ բացատրությունը, Հարրի: Իսկյուրախ եմ, որ ինձ անսիրտ չեք համարում: Ես այդպիսին չեմ, գիտեմ, այդպիսին չեմ: Սակայն պետք է խոստովանեմ, որ այդ դեպքն ինձ այնպես չի ցնցել, ինչպես պետք է: Ինձ թվում է, դա զարմանալի դրամայի արտասովոր վերջ է: Նրա մեջ հունական ողբերգության ահագու գեղեցկությունն է, ողբերգություն, որտեղ ես նշանակալից դեր եմ խաղացել, բայց որը չի խոցել իմ սիրտը:

- Դա հետաքրքիր հանգամանք է,- ասաց լորդ Հենրին: Նա մեծ բավականություն էր ստանում, երբ խաղում էր պատանու չգիտակցված եսասիրության հետ,- այո՛, շատ հետաքրքիր: Եվ կայծում եմ, թե դա ահա ինչպես կարելի է բացատրել. պատահում է՝ հաճախ կյանքի իսկական ողբերգություններն այնպես անէսթետիկական ձևով են կատարվում, որ վիրավորում են մեզ իրենց կուպիտ մոլեգնությամբ, բացարձակ անհետևողականությամբ, անմտությամբ, նրբագեղության լրիվ բացակայությամբ: Ինչպես ամեն գոեհիկ՝ բան, նրանք ազդում են մեզ վրա, բացարձակ կուպիտ ուժի տպավորություն են թողնում, և ըմբոստանում ենք դրանց դեմ: Բայց երբեմն կյանքում մենք բախվում ենք այնպիսի ողբերգության հետ, որն ունի գեղարվեստական գեղեցկության տալրեր: Եթե այդ գեղեցկությունը իսկական է, ապա դրամատիզմը ուղղակի կլանում է մեր զգացումները: Մենք հանկարծ զգում ենք, որ այլևս ոչ թե դերակատարներ, այլ լոկ հանդիսատես ենք այդ ողբերգության մեջ: Կամ, ավելի ճիշտ՝ երկուսը միասին: Դիտում ենք ինքներս մեզ և ներկայացման հրաշքով դյուրվում: Իսկ փաստորեն ինչ է կատարվել: Մի աղջիկ ինքնասպանություն է գործել Ձեր նկատմամբ տաժած սիրո պատճառով: Ավա՛ղ, ինձ հետ նման բան չի կատարվել: Այն ժամանակ ես կհավատայի սիրուն,

կհավատայի նրա ուժին և հավիտյան կերկրապագեի նրան: Բայց նրանք, ովքեր սիրել են ինձ, իսկ նրանք շատ չեն նդել, համառորեն երկար տարիներ ապրել են նրանից հեռու, երբ ոչ ևս եմ սիրել նրանց և ոչ էլ՝ նրանք ինձ: Այդ կանայք գիրացել են, դարձել ծանծրալի, իսկ երբ հանդիպում ենք, անմիջապես սկսում են հիշողությունները: Օ՛հ, կանանց այդ սարսափելի հիշողությունը: Ինչ ահավոր բան է և մտքի խնչալիսի՝ անշարժություն է բացահայտում: Մարդ պետք է, կյանսի կյանքի գույները, բայց երբեք չհիշի մանրամասնությունները: Մանրամասնությունները միշտ տափակ են:

- Ստիպված ես պետք է կակաչնեյ ցանեմ իմ պարտեզում,- հառաչեց Դորիանը:

- Դրա մեջ անհրաժեշտություն չկա,- առարկեց զրուցակիցը,- կյանքը իր ձեռքում միշտ էլ կակաչնեյ ունի: Ճիշտ է՝ երբեմն բաներ կան, որ համառորեն չեն ուզում մոռացվել: Մի ժամանակ ես ամբողջ սեզոնի ընթացքում միշտ մանուշակներ էի կրում իմ մերակին՝ որպես սիրո սգի նշան, որի մեռնել չէր ուզում: Բայց ի վերջո մեռավ: Չեմ հիշում՝ ինչի ուզանեց նրան: Հավանաբար այդ կնոջ՝ ամբողջ աշխարհի ինձ զոհաբերելու պատրաստականությունը: Դա միշտ սարսափելի ակնթարթ է. հավիտենականության սարսափով է համակում մարդու հոգին: Այո՛, կպատկերացնե՞ք՝ անցած շաբաթ լեռի Հեմֆշայրի մոտ ճաշելիս կողքիս նստած էր նույն լեռին և ջանում էր ամեն ինչ նորից սկսել՝ թաղել անցյալը, փնտրել ապագան: Ես թաղել էի այդ սիրավեպը գերեզմանում՝ առօրյա լինելու տակ, իսկ նա նորից փորփորեց հանեց անցյալը՝ հավաստացնելով, թե ես խորտակել եմ իր կյանքը: Պետք է նշեմ, որ նա խժոռում էր ահռելի ախորժակով, այնպես որ ես չեմ մտախոհվում նրա համար: Ինչպիսի՞ անճաշակություն: Անցյալի միակ հրապույրն այն է, որ նա անցյալ է: Բայց կանայք երբեք չեն նկատում, որ

վարագույրն իջել է: Նրանք միշտ ցանկանում են վեցերորդ գործողություն, ուզում են՝ շարունակվի ներկայացումը, երբ արդեն չքացել է ամեն հետաքրքրություն: Եթե նրանց կամքով լիներ, ամեն կատակերգություն ողբերգությամբ կվերջանար, իսկ յուրաքանչյուր ողբերգություն կհասներ ծիծաղելի կատակերգության վերջնակետին: Կանայք հրաշալի դերասանուհիներ են, սակայն՝ առանց գեղարվեստական հոտառության: Դուք ավելի բախտավոր գտնվեցիք, քան՝ ես: Հավատացեք, Դորիան, իմ ճանաչած կանանցից ոչ մեկն ինձ համար չէր անի յայն, ինչ Սիբիլ Վեյնս արեց Ձեզ համար: Սովորական կանայք միշտ սփոփում են իրենց: Ոմանք դա անում են՝ կրելով սրտաճմլիկ գույներ: Երբեք մի՛ վստահեք կանանց, որոնք, հաշվի չառնելով իրենց տարիքը, կրում են Mauve¹ գույնի շրջագգեստ, կամ երեսունհինգ տարեկան կնոջը, որ սիրահար է վարդագույն ժապավենների: Դա միշտ նշանակում է, որ նրանք անցյալ ունեն: Ոմանք էլ մեծ սփոփանք են ստանում իրենց ամուսինների մեջ հանկարծ հայտնաբերած լավ արժանիքներից: Նրանք այնպես են ցուցադրում իրենց ամուսնական երջանկությունը, կարծես դա ամենագայթակղիչ մեղքն է: Ոմանց էլ սփոփում է կրոնը: Կրոնի խորհրդավորությունը նրանց համար սիրախաղի դյուրանք ունի: Այդպես է ինձ ասել մի կին, և ես միանգամայն հավատում եմ: Բացի այդ, ոչինչ այնպես չի շողոքորթում կնոջ փառամոլությունը, ինչպես մեղսագործուհու համ բավը: Խիղճը բոլորիս դարձնում է եսասեր: Այո՛, սփոփանքները, որ իրոք գտնում են կանայք արդի կյանքում, վերջ չունեն: Իհարկե, ամենակարևորը չեմ նշել...

- Ո՛րը, Հարրի,- անտարբեր հարցրեց պատանին: - Ապա ինչպե՛ս: Ամենաճիշտ սփոփանքն այն է, երբ խլում են ուրիշի

¹ Բաց վարդերանգ մանուշակագույն (ֆրանս.):

երկրպագուին, երբ կորցնում են իրենցը: Բարձրաշխարհիկ կյանքում կինն այլևս սևերես չի մնում: Բայց, իրոք, Դորիան, Սիրիլ Վեյնը որքան էր տարբերվում սովորական կանանցից: Նրա մահվան մեջ անսահման գեղեցկություն կա: Ուրախ եմ, որ տալիս եմ այնպիսի դարում, երբ կատարվում են նման հրաշքներ: Նրանք մեզ ներշնչում են սիրո, բուռն կրքերի, օտմանտիկ զգացմունքների գոյության հավատ, որը ծիծաղելի է, բայց:

- Ես նրա հետ սարսափելի դաժան վարվեցի: Դուք մոռանում եք դա:

- Վախենում եմ, թե դաժանությունը, անկեղծ դաժանությունը ավելի է դուր գալիս կանանց, քան այլ բան: Նրանք գալիս են նախնադարյան բնագոյ ունեն: Մենք նրանց տուգնաբեր ենք, բայց, միևնույն է, նրանք շարունակում են մնալ ստրկուհիներ և իրենց համար տերեր են որոնում: Սիրում են հայտնաբերել... Ես համոզված եմ, որ Դուք հոյակապ էիք: Ձեզ կրթեք չեմ տեսել խիստ զայրացած, բայց պատկերացնում եմ՝ որքան հիասքանչ եք եղել: Եվ, վերջապես, երեկ չէ առաջին օրը ինձ մի բան ասացիք, որ այն ժամանակ կարծեցի, թե դա սխալ էր: Ձեր երևակայությունն է, իսկ հիմա տեսնում եմ, որ Դուք միանգամայն ճիշտ էիք, և դա ամեն ինչի բանալին է:

- Ի՞նչ ասացի, Հարրի:

- Որ Սիրիլ Վեյնի մեջ Դուք տեսնում եք վիպական բոլոր երկուստեղծությունն մի գիշեր նա Դեզդեմոնա է, հաջորդ գիշերը՝ Օֆելյա և մեռնելով՝ Ջուլիետտա, հարություն է առնում՝ որպես Իմոջենա:

- Լեյծա այլևս հարություն չի առնի,- շնչաց պատանին և երկուր ծածկեց ձեռքերով:

Ո՛հ, հարություն չի առնի երբեք: Նա խաղաց իր վերջին օրը: Բայց թող նրա միայնակ մահը իր խղճուկ հարդարա-

սենյակում Ձեզ հանդիսանա որպես արտասովոր և մուսյ
հավատ Յակոբինյան¹ ողբերգությունից՝ որպես հիասթափ
ներկայացում Ուերստերից², Ֆորդից³ կամ Սիրիլ Թյուրնկից⁴։
Այդ աղջիկն իրականում երբեք չի ապրել, ուրեմն, երբևր չի
էլ մեռել։ Ձեզ համար, գոնե, նա եղել է միայն պատրանք,
տեսիլք, որ փայլատակել է Շեքսպիրի ողբերգություններում՝
դարձնելով դրանք ավելի հմայիչ, եղել է սրինգ, որով Շեքս-
պիրի երաժշտությունն ավելի դյուրիշ և կենսուրախ է հնչել։
Այն ակնթարթին, երբ նա բախվեց իրական կյանքի հետ,
խոցվեց և գնաց անդարձ։ Ողբացեք Օֆելյայի համար, եթե
ուզում եք։ Մոխիր լցրեք Ձեր գլխին, որովհետև Կորդելիան
խեղդվեց։ Գոռացեք երկինքն ի վեր, որովհետև Բրաբանցլոյի
դուստրը մեռավ։ Բայց զուր արցունք մի՛ թափեք Սիրիլ Վեյնի
համար։ Սիրիլն ավելի քիչ իրական էր, քան նրանք։

Տիրեց լռություն։ Իրիկնային մթնշաղը պարուրեց սենյակը։
Պարտեզից ներս էին սողոսկում արծաթե ոտքերով անշշուկ
ստվերները։ Բոլոր երանգները դանդաղ գունաթափվում էին։

Քիչ անց Դորիան Գրեյը բարձրացրեց աչքերը։

– Դուք օգնեցիք, որ ես հասկանամ ինքս ինձ, Հանրի,–
շշնջաց նա՝ թեթևացած հառաչելով,– ինձ էլ էր այդպես թվում,
բայց ինչ–որ մի տեսակ վախենում էի և չէի կարողանում
բացատրել ինքս ինձ։ Որքան լավ գիտեք ինձ։ Բայց չխոսե՛ք
այլևս կատարվածի մասին։ Դա զարմանահրաշ գզացում էր։
Այո և բոլորը։ Արդյոք ինձ համար կյանքը նախասահմանել
է նման այլ հրաշք։

– Կյանքը Ձեզ համար նախասահմանել է ամեն ինչ, Դո-

1 Դրական ողբերգություններ՝ ստեղծված Հակոբ Ի-իսի թագավորության
ժամանակ (1603–1625)։

2 Անգլ. դրամատուրգ, ողբերգու (1580–1625)։

3 Անգլ. լատաստեղծ, դրամատուրգ (1586–1640)։

4 Անգլ. դրամատուրգ (1575 –1626)։

րիան: Այդպիսի գեղեցկությամբ Ձեզ համար անկարելի ոչինչ չկա:

- Իսկ եթե ուժասպառվեմ, ծերանամ և կնճռուտվեմ, այն ժամանակ...

- Ա՛հ, այն ժամանակ,- ասաց լորդ Հենրին և կանգնեց,- այն ժամանակ, սիրելի Դորիան, և ստիպված կլինեք պայքարելու Ձեր յուրաքանչյուր հաղթանակի համար: Իսկ հիմա նրանք իրենք են գալիս Ձեր ձեռքը: Ո՛չ, Դուք պետք է պահպանեք Ձեր գեղեցկությունը: Մենք ապրում ենք այնպիսի դարում, երբ շատ կարդալը խանգարում է իմաստուն լինելուն, իսկ շատ մտածելը չի թողնում, որ մարդ գեղեցիկ լինի: Մենք չենք կարող չպահպանել Ձեզ: Իսկ այժմ հարկավոր է հազնվել և կառքով գնալ ակումբ: Առանց այդ էլ ուշանում ենք:

- Ավելի լավ է՝ ես ուղիղ օպերա գամ, Հարրի: Այնպես հոգնած եմ, որ ուտել չեմ ուզում: Ո՞ր համարն է ձեր քրոջ օթյակը:

- Կարծեմ՝ քսանյոթ: Դատիկոնում է, դոսն վրա կկարդաք քրոջս ազգանունը: Բայց ափսոս, Դորիան, որ չեք ուզում ինձ հետ ճաշել:

- Իրոք, ուժ չունեմ,- հոգնած ասաց Դորիանը,- ես Ձեզ անսահման երախտապարտ եմ այն ամենի համար, ինչ ասացյիք ինձ: Դուք, իրոք, իմ ամենալավ բարեկամն եք: Ոչ ոք դեռ այնպես ինձ չի հասկացել, ինչպես Դուք:

- Դա մեր բարեկամության սկիզբն է, Դորիան,- պատասխանեց լորդ Հենրին՝ սեղմելով նրա ձեռքը,- ցտեսություն: Հուսով եմ, որ ինն անց երեսունից ուշ չեմ տեսնի Ձեզ: Հիշեցնեք, երբում է Պատտին:

Երբ լորդ Հենրին գնաց, Դորիան Գրեյը հնչեցրեց զանգը: Մի քանի րոպե անց Վիկտորը բերեց աշտանակները և վարագույրները քաշեց:

Դորիանն անհամբեր սպասում էր նրա գնալուն: Թվում

էր, թե սպասավորն այսօր անսահման ժամանակ է խլում:

Հենց որ Վիկտորը գնաց, Դորիանը նետվեց յեկայի վայրագույրը և ետ քաշեց: Ո՛չ, դիմանկարի վրա ոչ մի փոփոխություն չկար: Ըստ երևույթին, դիմանկարն իրենից շուտ էր իմացել Սիբիլ Վեյնի մահվան բոթը: Այդ դիմանկարը իմանում էր նրա՝ Դորիանի կյանքում կատարվող դեպքերը: Չար դաժանությունն, անկասկած, աղճատել էր գեղեցիկ բերանը ճիշտ այն ակնթարթին, երբ աղջիկը թույն էր խմել: Կամ, թերևս, դիմանկարն անտարբեր էր իրադրություններին: Միթե այնտեղ արտացոլվելու էին սոսկ հոգու տվյալափոխները: Իսկ եթե մի օր դիմանկարը փոխվեր իր աչքի առաջ: Նա հենց դա էլ ուզում էր, բայց և սարսռում էր այդ մտքից: Խեղճ Սիբիլ... Որքան ռոմանտիկ էր այդ բոլորը: Նա մահվան պահեր բեմադրաբար կամ հաճախ էր ապրել: Եվ ահա մահվան շունչը դիպավ նրան և խլեց, տարավ: Ինչպես էր կատարել վերջին սարսափելի տեսարանը: Անիծում էր արդյոք իրեն մեռնելիս: Ո՛չ, նա մեռավ իր հանդեպ տածած սիրուց, և այդ օրվանից Դորիանի համար ընդմիշտ կմնար որպես սրբություն: Ջոհելով իրեն՝ Սիբիլն ապաշխարեց. Դորիանն այլևս չէր հիշի, թե որքան է տանջվել նրա պատճառով այն սարսափելի երեկոն թատրոնում: Նա կմնար իր հիշողության մեջ՝ որպես զմայլելի ողբերգական կերպար, որն առաքվել էր կյանքի բեմադրաբար՝ սիրո գերագույն գոյությունը ցույց տալու համար: Ջմայլելի ողբերգական կերպար... Աչքերը լցվեցին արցունքով, երբ հիշեց Սիբիլի մանկական դեմքը, թովիչ աշխուժությունն ու վեհերոտ նազանքը: Նա իսկույն վանեց հիշողությունները և կրկին նայեց դիմանկարին:

Դորիան Գրեյն զգաց, որ եկել է ընտրության ժամը: Խամ, թերևս, ընտրությունն արդեն կատարված էր: Այդ կյանքն ինքն էր վճռել, կյանքը և իր անսահման հետաքրքրությունը

կյանքի նկատմամբ: Հավիտյան երիտասարդություն, անհագուրդ կիրք, նուրբ և թաքուն հաճույքներ, խելահեղ ուրախություններ և ավելի խելահեղ մեղքեր. այդ բոլորը իրեն կտրվի: Դիմանկարը պետք է կրի իր անարգանքի ծանր բեռը, ահա ամենը:

Ցավի զգացումն ա ունեցավ իր սրտում այն մտքից. ուր կտավի գեղեցիկ դեմքը պղծվելու է: Մի անգամ, չարաճճիությամբ նմանվելով Նարցիսին, նա համբուրել էր կամ, ավելի ճիշտ, ձևացրել էր, թե համբուրում է այդ նկարած շուրթերը, որոնք այժմ թունոտ ժպտում են իրեն: Ամեն առավոտ նա նստում էր դիմանկարի դիմաց և զմայլվում նրա գեղեցկությամբ՝ գրեթե նրան սիրահարված, ինչպես մի ժամանակ թվում էր: Իսկ միթե հիմա իր գործած յուրաքանչյուր մեղքը պետք է արտացոլվեր կտավի վրա: Միթե դա պեսոք է դառնար հրեշավոր, այլանդակ, թաքնվեր փակ սենյակում՝ զրկված արևի շողերից, որոնք այնպես հաճախ ոսկե փայլ էին տալիս հրաշալի գանգուրներին: Ափսո՛հ, ափսո՛հ...

Մի պահ նա ուզեց աղոթել, որպեսզի չքվի գերբնական սարսափելի կապը իր և դիմանկարի միջև: Դիմանկարը փոխվել էր աղոթքի շնորհիվ, գուցե նոր աղոթքով էլ դադարեն փոխվել:

Բայց ո՞վ կիրաժարվի հավիտյան երիտասարդ մնալու հնարավորությունից, եթե փոքրիշատե գիտե կյանքը, որքան էլ ուզում է այդ հնարավորությունը անցողիկ լինի և ճակատագրական հետևանքներով հղի: Բացի այդ, միթե իսկապես ինքը ի վիճակի է դրան: Միթե աղոթքով էր նա փոխվել: Արդյո՞ք այդ փոփոխությունը չի բացահայտվի ինչ-որ գիտական խորհրդավոր օրենքներով: Եթե միտքը կարող է ազդել կենդանի օրգանիզմի վրա, միթե չի կարող ազդել նաև մեռածների կամ անշունչ մարմինների

վրա: Առանց մտքի և գիտակցված ցանկության չեն կարող արդյոք արտաքին փոփոխությունները հնչել ներյուշնուսկ մեր տրամադրություններին և զգացմունքներին: Հյուլեն ձգտի հյուլլեին գաղտնի սիրով կամ խորհրդավոր ձգողականությամբ: Բայց ինչ փույթ, թե որն է պատճառը: Նա այլևս աղոթքով կամ որևէ սարսափելի անհայտ ուժով չի գայթակղվի: Եթե վիճակված է, որ դիմանկարը փոխվի, ուրեմն, թող փոխվի: Ահա և բոլորը: Ինչո՞ւ իզուր խորամուխ լինել խորհրդավորության մեջ: Չէ՞ որ իսկական հաճույք կլինի դիտել այդ երևույթը: Դիմանկարը հնարավորություն կտա հետևել իր՝ ամենագազանի մտքերին: Դիմանկարը կլինի ամենակախարդական հայելին: Այդ հայելու մեջ մի ժամանակ նա տեսել է իր սեփական մարմինը, իսկ այժմ կտեսնի սեփական հոգին: Եվ երբ կտավի վրա սկսվի ձմեռը, ինքը Դորիանը դեռ կշարունակի մնալ թրթռուն գարուն՝ ամռան եզերքին: Երբ դիմանկարի վրայից անցնեն նրա ներկերը, և նա դառնա անագե աչքերով մեռելային կավճե դիմակ, Դորիանը դեռ կպահպանի իր երիտասարդական թովչանքը: Այո՛, նրա գեղեցկության ծաղիկը չի թառամի: Չի թուլանա երբեք կյանքի զարկերակը: Հունական աստվածների նման նա հավիտյան ուժեղ, արագաշարժ, կենսուրախ կլինի: Փույթ չէ, թե ինչ կկատարվի կտավի գունագեղ տեսիլքի հետ: Ոչինչ չէր սպառնում իրեն: Ահա ամենակարևորը:

Դորիան Գրեյը ժպտալով վարագույրը քաշեց նախկին տեղը՝ դիմանկարի երեսին, և գնաց ննջարան, որտեղ նրան էր սպասում սպասավորը: Մի ժամ անց Դորիանն արդեն օպերայում էր, իսկ լորդ Հենրին, ետևում նստած, կոթնել էր նրա բազկաթոռին:

ԳԼՈՒԽ IX

Հաջորդ առավոտյան, երբ Դորիանը նախաճաշում էր, եկավ Բեգիլ Հոլլուորդը:

- Ուրախ եմ Ձեզ գտնելու համար,- լրջորեն ասաց նա: - Անցած երեկո եկա, բայց ասացին, որ օպերայում եք: Իհարկե, ես չհավատացի և ավստոսացի, որ լուր չէիք թողել թե որտեղ եք: Ամբողջ երեկոն ահավոր տագնապների մեջ էի, վախենում էի, որ մի ողբերգությանը հաջորդի մյուսը: Երբ Դուք լսեցիք, պետք է անմիջապես ինձ հեռագրեիք: Այդ մասին ես պատահմամբ ակումբում կարդացի երեկոյան «Գլորուսում»: Անմիջապես եկա և խիստ դառնացա՝ Ձեզ տանը չգտնելով: Ձեք պատկերացնի՝ ինչպես եմ ցնցված: Ես մտնում եմ Ձեր դրության մեջ, պատկերացնում եմ, թե հիմա ինչպեսք եք տանջվում: Բայց երեկ որտեղ էիք: Հավանաբար աղջկա մոր մոտ էիք գնացել: Մեկ մտածեցի՝ զալ. հասցեն լրագրում կար, ինչ-որ Յուբսոն-Ռոդի մոտակայքում է, կարծեմ: Բայց վախեցա, որ ավելորդ կարող եմ լինել, ինչո՞վ մարդ կարող է թեթևացնել նման վիշտը: Դժբախտ կին: Պատկերացնում եմ վիճակը: Միակ զավակը... Ինչ էր ասում լսեղճը:

- Ի՞նչ իմանամ, սիրելի Բեգիլ,- խիստ սրտնևղած քրթմնջաց Դորիան Գրեյը՝ ումպ-ումպ խմելով բաց դեղին գինին՝ ոսկե ուլունքանման բծերով վենետիկյան նրբագեղ բաժակով,- ես օպերայում էի: Ափսոս, այնտեղ չէիք: Ես լորդ Հենրիի քրոջ՝ լեդի Գուննգոլենի հետ ծանոթացա: Նրա օթյակում էինք, շատ հմայիչ կին է, իսկ Պատտին աստվածային էր երգում: Եկեք տիպա՝ նյութերից չխոսենք: Ինչի մասին չեն խոսում, թվում է՝ դա չի էլ եղել: Միայն խոսքերն են, ինչպես Հարրին է ասում, շունչ տալիս երևույթներին: Պետք է ասեմ, որ նա մոր միակ զավակը չէր: Տղա էլ ունի, կարծեմ, մի հիանալի տղա է: Բայց նա դերասան չէ: Նավաստի է, թե՛ ինչ-որ նման բան:

Իսկ հիմա Ձեր մասին պատմեցեք: Ինչ եք նկարում:

- Գնացել էիք օպերա...- խիստ դառնությամբ հաստ-հաստ հարցրեց Հովուորդը,- գնացել էիք օպերա, երբ Սիբիլը մահվան մահճի մեջ էր ինչ-որ խղճուկ խրճիթում: Եվ նույնիսկ կարող եք ուրիշ կանանց հրապույրի մասին խոսել, խոսել Պատտիի աստվածային երգելու մասին, երբ աղջիկը, որին Դուք սիրում էիք, դեռ գերեզմանում հանգիստ չի գտել: Ա՛յս, Դորիան, դեռ որքան արհավիրքների միջով պեսոք է անցնի նրա խեղճ, փոքրիկ մարմինը:

- Վերջացրե՞ք, Բեզիլ: Ոչինչ չեմ ուզում լսել,- գոռաց Դորիան Գրեյը՝ ոտքի կանգնելով,- այլևս այդ մասին չխոսեք: Ինչ եղել է, եղել է, ինչ անցած է, անցել է:

- Երեկը Դուք անցյալ եք համարում:

- Ժամանակն ինչ գործ ունի այստեղ: Միայն սահմանափակ մարդկանց են տարիներ պետք զգացմունքից ազատվելու համար: Մարդ իր գլխի տերն է, վշտին կարող է վերջ տալ նույնպիսի հեշտությամբ, ինչպես և կարող է հաճույք ստեղծել: Ես չեմ ուզում իմ զգացմունքների զոհը դառնալ: Ուզում եմ օգտվել նրանցից, հաճույք ստանալ և իշխել նրանց վրա:

- Դորիան, դա սարսափելի է: Դուք լրիվ փոխվել եք: Տեսքով նույն հիանալի տղան եք, որն ամեն օր գալիս էր իմ արվեստանոցը նկարվելու: Բայց այն ժամանակ Դուք պարզ էիք, անմիջական և բարեհոգի: Աշխարհիս ամենաանկեղծ արարածն էիք: Իսկ հիմա... Չգիտեմ՝ ինչ է պատահել Ձեզ: Անսիրտ, անխիղճ մարդու պես եք խոսում: Գիտեմ, բոլորը Հարրիի մեղքն է...

Պատանին կարմրեց և, մոտենալով պատուհանին, մի պահ նայեց արևի լույսով ողողված պարտեզի ծփացող կանաչին:

- Ես շատ երախտապարտ եմ Հարրիին, Բեզիլ,- վերջապես ասաց նա, - ավելի շատ, քան՝ Ձեզ: Դուք միայն ինձ

փառամոլություն սովորեցրիք:

- Ինչ արած, դրա համար պատժված եմ կամ մի օր կպատժվեմ:

- Չեմ հասկանում՝ ինչ նկատի ունեք, Բեգիլ,-բացականչեց Դորիանը՝ շրջվելով,- ինչ եք ու ում ասել: Ասացեք, ինչ եք ուզում:

- Ես ուզում եմ Դորիան Գրեյին, որին նկարում էի,- թախծով ասաց նկարիչը:

- Բեգիլ,- պատանին մոտեցավ և ձեռքը դրեց նրա ուսին,- չափազանց ուշ եք եկել: Երեկ, երբ լսեցի, որ Սիբիլ Վեյնը ինքնասպանություն է կատարել...

- Ինքնասպանություն... Օ, տեր իմ աստված, միթե դա ճիշտ է,- հառաչեց Հոլլուորդը՝ սարսափած նայելով Դորիանին:

- Իսկ Դուք կարծում էիք, սիրելի՛ Բեգիլ, պարզապես դժբախտ պատահա՞ր է: Իհարկե, ինքնասպանություն է:

Նկարիչը ձեռքերով ծածկեց դեմքը:

- Օ՛հ, ահավոր է,- շնչաց նա և ողջ մարմնով սարսռաց:

- Ո՛չ,- առարկեց Դորիան Գրեյը,- ահավոր ոչինչ չկա: Դա մեր դարաշրջանի ամենառոմանտիկ ողբերգություններից մեկն է: Սովորական դերասանները, որպես կանոն, ամենահասարակ կյանքով են առաջնորդվում: Նրանք լավ ամուսիններ են, հավատարիմ կանայք կամ նման ծանծրալի բաներ: Հասկանո՞ւմ եք, դա միջին դասակարգի առաքինությունն է: Իսկ Սիբիլն այլ էր... Նա ապրեց ամենագեղեցիկ ողբերգությունը: Միշտ հերոսուհի էր: Եվ վերջին երեկոյան, երբ մենք նրան դիտում էինք, վատ խաղաց, որովհետև զգացել էր իսկական սերը: Իսկ երբ իմացավ սիրո անիրականանալիության մասին, մեռավ, ինչպես մի ժամանակ մահացել է Ջուլիետտան: Նա կյանքից գնաց դեպի արվեստի երկնականարը: Նահատակ հիշեցնող ինչ-որ բան կա նրա մեջ:

Այո՛, նրա մահվան մեջ կա նահատակի բուռն ոգևորությունը, ապարդյուն գեղեցկությունը: Բայց եթե ես այդպես եմ խոսում, Դուք չկարծեք, թե չեմ տանջվել: Եթե Դուք գայլի՝ Լյուկ՝ մոտավորապես հինգն անց կես, վեցից քառորդ պակաս, ինձ արցունքներով ողողված կգտնեիք: Նույնիսկ Հարրին, որ այստեղ էր (այդ բոլոր բերողը նա էր), չէր պատկերացնում, թե ինչ է կատարվում ինձ հետ: Օ՛, ինչպես էի տանջվում: Հետո անցավ: Ես չեմ կարող կրկին ապրել նույն զգացումը: Դա ոչ ոք չի կարող ապրել, բացի սենտիմենտալ մարդկանցից: Դուք սարսափելի անարդարացի եք իմ նկատմամբ, Բեզիլ: Եկել եք ինձ սփոփելու, շատ հաճելի է, բայց երբ սփոփված եք տեսնում, արդեն զայրանում եք: Ահա թե ինչի է նման մարդկային կարեկցանքը: Դուք ինձ հիշեցնում եք Հարրիի պատմած անեկդոտը մի ֆիլանտրոպի մասին, որը կյանքի քսան տարւին վատնել է ինչ-որ չարաշահումների, թե անարդար օրենքների դեմ պայքարելով, արդեն լավ չեմ հիշում: Բայց, վերջիվերջո, երբ հասել է իր նպատակին, հիասթափությանը չափ ու սահման չի մնացել: Նա այլևս ոչինչ չի ունեցել անելու և մեռել է գրեթե տաղտուկի մեջ՝ դառնալով համոզված մարդատյաց: Այսպիսով, սիրելի՛ Բեզիլ, եթե իրոք ուզում եք ինձ սփոփել, սովորեցրեք՝ ինչպես մոռանալ կատարվածը կամ դիտել արվեստագիտական տեսակետից: Գոտյեն չէ՛, արդյոք, որ գրել է՝ «la consolation des arts»: Հիշում եմ՝ մի օր Ձեր արվեստանոցում ձեռքս ընկավ մագաղաթե կազմով մի փոքրիկ գիրք, ուր գտա այդ հիասքանչ արտահայտությունը: Իհարկե, ես նման չեմ այն երիտասարդին, որի մասին պատմում էիք ինձ, երբ միասին Մարլոյում էինք: Այդ երիտասարդը հավատացնում էր, որ դեղին կերպասը կարող է սփոփել մարդուն կյանքի բոլոր դժբախտություններից: Սիրում եմ այն

1 Ափովսնքը արվեստների մեջ (ֆր.):

բոլոր գեղեցկությունները, որոնք կարելի է շոշափել, ձեռքում պահել, սիրում եմ հինավուրց զառբաբը, կանաչ բրոնզը, ջնարակապատ աշխատանքը, փղոսկրե կերտվածքները, սքանչելի կահավորանքը, ճոխությունը, պերճանքը. դրանք բոլորն աչք են շոյում: Բայց ինձ համար բոլորից թանկը արվեստագետի այն բնագղն է, որ ծնում է այդ գեղեցկությունները կամ, համենայն դեպս, բացահայտում է դրանք մարդու մեջ: Դառնալ սեփական կյանքի հանդիսատեսը, ինչպես Հարրին է ասում, նշանակում է խուսափել կյանքի տառապանքներից: Գիտեմ՝ Ձեզ զարմացնում է այդպիսի խոսակցությունը: Դուք չեք պատկերացնում, թե ես որքան եմ հասունացել: Երբ մենք ծանոթացանք, փոքր տղա էի, իսկ այժմ տղամարդ եմ: Իմ մեջ ծնունդ են առել նոր կրքեր, մտքեր, հայացքներ: Այո, ես հիմա ուրիշ եմ դարձել: Բայց չեմ ուզում, Բեգիլ, որ Դուք ինձ ավելի քիչ սիրեք: Ես փոխվել եմ, սակայն Դուք պետք է միշտ լինեք իմ ընկերը: Իհարկե, ես Հարրիին շատ եմ սիրում: Բայց գիտեմ, որ Դուք նրանից լավն եք: Դուք նրա պես ուժեղ չեք, որովհետև չափազանց շատ եք կյանքից վախճնում, բայց ավելի լավն եք: Որքան լավ էր, երբ միասին էինք: Մի լքեք ինձ, Բեգիլ, և մի վիճեք ինձ հետ: Ես այն եմ, ինչ որ կամ, այլևս ոչինչ անել չի կարելի:

Նկարիչը ակամայից զգացվեց: Պատանին անսահման թանկ էր նրա համար, և ծանոթությունը այդ պատանու հետ մեծ շրջադարձային կետ էր նկարչի արվեստում: Նա չէր կարող այլևս կշտամբել Դորիանին, և նա մխիթարվում էր այն մտքով, որ պատանու անտարբերությունը, թերևս, բույս պեական տրամադրություն էր, որ շուտով կանցնի: Ձե՛ որ Դորիանի մեջ այնքան լավ գծեր կային, այնքան ազնվություն:

– Դե լավ, Դորիան, – վերջապես ասաց նա թախծոտ ժպիտով, – այդ սարսափելի պատմության մասին այլևս չեմ խոսի:

Միայն հույսով եմ, որ ձեր անունը նրա հետ չի կապվի:
Դատաքննությունն այսօր պետք է լինի: Ձեզ չմն կանչել:

Դորիանը բացասաբար շարժեց գլուխը և սրտնեղությամբ արտահայտություն իջավ դեմքին «դատաքննություն» լատիլ լսելիս: Նրա կարծիքով այդ բոլոր մանրամասնությունների մեջ ինչ-որ նողկալի և գռեհիկ բան կար:

- Նրանք չգիտեն իմ ազգանունը,- պատասխանեց Դորիանը:

- Բայց աղջիկը, երևի, գիտեր:

- Միայն անունս, այն էլ, համոզված եմ, որ ոչ ոքի ատած չի լինի: Մի անգամ նա ինձ ասաց, որ թատրոնում շատ են հետաքրքրվում, թե ով եմ ես, իսկ ինքը պատասխանել է, որ իմ անունը Հմայիչ Արքայազն է: Դա շատ հուզիչ է, ճիշտ է: Բեզիլ, ինձ համար նկարեք Միբիլին: Ես կուզեի որպես հիշատակ նրանից պահել ավելին, քան մի քանի համբույրների և քնքուշ խոսքերի հիշողությունը:

- Կվորձեմ, Դորիան, եթե ուզում եք: Բայց պետք է նորից, զարք նկարվելու: Առանց Ձեզ չեմ կարող:

- Այլևս չեմ նկարվի, Բեզիլ, անկարելի է,- գոչեց նա՝ ընկրկելով:

Նկարիչը զարմացած նայեց նրան:

- Սա ինչ անմտություն է, Դորիան,- բացականչեց նա,- միթե դրանով ուզում եք ասել, որ Ձեզ դուր չի գալիս իմ նկարած դիմանկարը: Ի դեպ, որտեղ է այն: Ինչո՞ւ եք ծածկել վարագույրով: Ես ուզում եմ տեսնել: Դա իմ ամենալավ աշխատանքն է, որ ես երբևէ կատարել եմ: Քաշեցնեք վարագույրը, Դորիան: Ուղղակի անշնորհություն է, Ձեր սպասավորի կողմից դիմանկարն այդպես թաքցնել: Թերևս դա էր պատճառը, որ ներս մտնելուն պես անմիջապես զգացի, ու սենյակում ինչ-որ բան կա:

- Սպասավորը մեղավոր չէ, Բեզիլ: Միթե Դուք կարծում եք, թե ես թույլ կտամ, որ նա իր ճաշակով կարգավորի սենյակը: Սպասավորը միայն երբեմն ծաղիկներ է ընտրում ինձ համար և ուրիշ ոչինչ: Ինքս եմ ծածկել, լույսը չափազանց ուժեղ էր ընկնում նրա վրա:

- Չափազանց ուժեղ: Չի կարող պատահի, սիրելիս: Ամենահարմար տեղն է: Ապա նայեմ,- և Հոլլուորդը շարժվեց դեպի սենյակի անկյունը:

Դորիանը սարսափից ճչաց: Ապա նետվելով նկարչից առաջ՝ կանգնեց նրա և վարագույրի միջև:

- Բեզիլ,- ասաց նա սարսափելի գունատ,- չհամարձակվե՞ք նայել: Ես չեմ ուզում, որ Դուք նայեք դիմանկարին:

- Չհամարձակվեմ նայել իմ սեփական ստեղծագործությանը: Դա ինչ նորություն է: Եվ ինչո՞ւ,- հարցրեց Հոլլուորդը՝ ծիծաղելով:

- Եթե Դուք փորձեք նայել, Բեզիլ, ազնիվ խոսք, մինչև կյանքիս վերջը չեմ խոսի Ձեզ հետ: Բոլորովին լուրջ եմ ասում: Ոչ մի բացատրություն, և ոչինչ չպետք է հարցնեք: Բայց հիշեցե՛ք, եթե դիպչեք այս վարագույրին, մեր միջև ամեն ինչ կվերջանա:

Հոլլուորդը կարծես շանթահար կանգնել էր և ապշած նայում էր Դորիան Գրեյին: Նա Դորիանին երբեք այդպես չէր տեսել: Պատանին ցասումից սփրթնել էր, մատները ջղաձգորեն սեղմվել էին, բիբերը, կարծես, կապույտ հրագնդեր լինեին: Ամբողջ մարմնով դողում էր:

- Դորիան:

- Լռեցե՛ք:

- Բայց բանն ինչո՞ւմն է: Եթե Դուք չեք ուզում, իհարկե, չեմ նայի,- բավականին սառը ասաց նկարիչը և, կտրուկ շրջվելով, մոտեցավ լուսամուտին: - Բայց դա պարզապես

անհերթելության է: Ինչ է նշանակում իրավունք չունենալ իմ սեփական աշխատանքին նայել, մանավանդ, երբ աշխատող մտադիր եմ ուղարկել Փարիզ՝ ցուցահանդեսի: Ըստ երևույթին, ցուցադրելուց առաջ անհրաժեշտ կլինի նոր փայլ տալ: Ուրեմն, միևնույն է, պետք է մի օր տեսնեմ, իսկ ինչո՞ւ ոչ այսօր:

- Ցուցահանդես: Դուք ուզում եք դա ցուցադրել,- սարսափահար բացականչեց Դորիան Գրեյը: Ուրեմն, աշխարհը պետք է տեսնի իր գաղտնիքը: Մարդիկ պետք է դիտեն իր կյանքի ամենանվիրական բանը: Անկարելի է: Հարկավոր է անմիջապես մի բան ձեռնարկել, բայց ինչ՝ չգիտեր:

- Այո՛: Հուսով եմ՝ չեք առարկի. Ժորժ Պտին մտադիր է հավաքել իմ բոլոր լավ գործերը հատուկ ցուցահանդեսի համար, որը կբացվի հոկտեմբերի սկզբին Սեզ փողոցի վրա: Դիմանկարն այնտեղ կդրվի միայն մեկ ամսով: Կարծում եմ, որ կարճ ժամանակով նրանից Դուք հեշտությամբ կարող եք բաժանվել: Չէ՞ որ այդ ժամանակ քաղաքում չեք լինի: Եվ հետո, եթե նկարը միշտ վարագույրի հետևում եք պահում, դա նշանակում է՝ այնքան էլ մեծ արժեք չունի Ձեզ համար:

Դորիան Գրեյը ձեռքը տարավ ճակատը, որը ծածկված էր քրտինքի խոշոր կաթիլներով: Նա զգում էր, որ ինքը ահավոր անսլուդի եզրին է:

- Ընդամենը մեկ ամիս առաջ ասում էիք, որ երբեք չեք ցուցադրի, - գոչեց նա,- ինչո՞ւ եք հիմա մտափոխվել: Դուք էլ շատերի պես Ձեզ անդրդվելի եք համարում, մինչդեռ նրանց նման հազար ու մի տրամադրություն ունեք: Միակ տարբերությունն այն է, որ Ձեր տրամադրությունները բավականին անիմաստ են: Դուք, իհարկե, չեք մոռացել այն, որ ամենահանդիսավոր ձևով ինձ հավաստիացնում էիք, թե ոչ մի դեպքում իմ դիմանկարը չեք ուղարկի ցուցահանդես: Լիդպես եք ասել նաև Հարրիին:

Դորիանը հանկարծ լռեց, և նրա աչքերում կրակ փայլատակեց: Հիշեց, թե ինչպես լորդ Հենրին մի անգամ կես-լուրջ, կես-կատակ ասել էր. «Եթե Դուք ուզում եք հետաքրքիր քառորդ ժամ ունենալ, ստիպեք Բեզիլին խոստովանել, թե ինչո՞ւ չի ուզում ցուցադրել Ձեր դիմանկարը: Իհարկե, նա ինձ պատճառն ասել է, և դա բացարձակ հայտնություն էր»: Ահա թե ինչ, ուրեմն, Բեզիլը նույնպես իր գաղտնիքն ունի: Հենց այս րոպեին կիմանա:

- Բեզիլ, - սկսեց Դորիանը՝ ընդհուպ մոտենալով նրան և նայելով ուղիղ աչքերի մեջ,- մեզանից յուրաքանչյուրն իր գաղտնիքն ունի: Դուք Ձերն ասացեք, իսկ ես իմը կասեմ: Առաջ ինչո՞ւ չէիք ուզում ցուցադրել իմ դիմանկարը:

Նկարիչը ցնցվեց:

- Դորիան, եթե դա պատմեմ, Դուք ինձ այլևս առաջվա պես չեք սիրի և, անշուշտ, կծիծաղեք ինձ վրա: Երկուսն էլ ինձ համար անտանելի ծանր կլինեն: Եթե ցանկանում եք, որ երբեք չնայեմ դիմանկարին, թող Ձեր ասածը լինի: Ես միշտ կարող եմ Ձեզ նայել: Եթե ուզում եք աշխարհից թաքցնել ամենալավ աշխատանքը, որ ես երբևէ կատարել եմ, ինչ արած, համաձայն եմ: Ձեր ընկերությունն ինձ համար ավելի լավն է, քան որևէ փառք ու համբավ:

- Ո՛չ, Բեզիլ, պատասխանեցեք իմ հարցին,-- պնդեց Դորիան Գրեյը,- ես կարծում եմ, որ իրավունք ունեմ իմանալու:

Սալսափի զգացումը փոխվել էր հետաքրքրության: Նա համառորեն որոշել էր իմանալ Բեզիլ Հոլլուորդի խորհրդավորությունը:

- Նստենք, Դորիան,- հուզված ասաց նկարիչը,- նստենք, նախ պատասխանեցեք իմ հարցին: Դուք դիմանկարում որևէ արտառոց բան չե՞ք նկատել, այնպիսին, որ առաջին հայացքից աչքի չի լնկել, բայց հետո հանկարծ ինքնին բացահայտվել է:

- Բենգիլ,- գոչեց պատանին և դողացող ձեռքերով կառչեց բազկաթոռի արմնկակալներից՝ վախվորած վայրի աչքերը նրան սևեռած:

- Տեսնում եմ՝ նկատել եք: Չխոսեք, նախ ինձ լսեք, Դո՛րիան: Այն ակնթարթից, երբ ես հանդիպեցի Ձեզ, Դուր ինձ վրա թողեցիք ամենաարտասովոր ազդեցությունը: Գերեցյալ իմ հոգին, ուղեղը և տաղանդը: Դուք դարձաք ինձ համար աներևույթ իդեալի տեսանելի մարմնացում, որ ծախսում է, նկարչի առաջ՝ որպես թովիչ պատրանք: Ես պաշտեցի Ձեզ: Սկսեցի խանդել բոլորին, ում հետ խոսում էիք: Ուզում էի ամբողջովին իմը լինեիք: Ես երջանիկ էի միայն այն ժամանակ, երբ Ձեզ հետ էի: Իսկ երբ հեռանում էիք ինձանից, պատկերանում էիք իմ արվեստի մեջ... Իհարկե, ես երբևր տեղիք չէի տալիս, որ Դուք դա նկատեք: Միևնույն է, ոչինչ չէիք հասկանա: Նույնիսկ ես ինքս էլ լավ չէի հասկանում: Ես միայն զգում էի, որ իմ դիմաց տեսնում եմ կատարյալին, և այդ պատճառով աշխարհն իմ աչքին հիանալի էր երևում, թերևս, չափազանց հիանալի, քանի որ նման հիացմունքները վտանգավոր են: Ես չգիտեմ՝ ո՞րն է ավելի սարսափելի, նման պաշտամունքի կորուստը, թե՛ պահպանումը: Անցնում էին շաբաթներ, իսկ ես ավելի ու ավելի էի կլանվում Ձեզանով: Վերջապես իմ գլխում մի նոր միտք ծագեց: Ես Ձեզ առաջին անգամ նկարել էի որպես Պարիս՝ շքեղաշուք զենք ու զրահով, որպես Ադոնիս որսորդական թիկնոցով, փայլուն նիզակը ձեռքին: Դուք Լոտոսի ծանր ծաղեպսակով նստած էիք կայսր Ադրիանի նավակի առջև և նայում էիք կանաչ Նեղոսի տղմոտ ալիքներին: Հունական պուրակում խոնարիվել էիք հանդարտ լճակի վրա և հիանում էիք ջրի անշարժ արծաթե հայելում արտացոլված Ձեր սքանչելի գեղեցկությամբ: Եվ բոլոր կերպարները լինում էին ինչպես ինչպիսի

արվեստը՝ ներըմբռնումով՝ երկնային և անհասանելի: Եվ մի օր էլ, ճակատագրական մի օր, ինչպես հաճախ մտածում եմ, որոշեցի նկարել Ձեր հիասքանչ դիմանկարն, ինչպես կաք իրականում, բայց ոչ թե անցած դարերի հագուստով, այլ ժամանակակից կոստյումով: Չգիտեմ՝ արդյոք ռեալիստական մեթոդն էր, թե սոսկ Ձեր իսկ անձնավորության հմայքը, որ ներկայացել էր ինձ առանց մշուշի, առանց շղարշի: Բայց երբ նկարում էի, յուրաքանչյուր վրձնահարված, յուրաքանչյուր երանգ կարծես բացահայտում էր գաղտնիքս: Ես վախենում էի, թե մարդիկ դիմանկարի մեջ կնկատեն Ձեր հանդեպ ունեցած իմ պաշտամունքը: Ջգում էի, Դորիան, որ դիմանկարո մ ես չափազանց շատ բան եմ արտահայտել, չափազանց շատ բան եմ դրել ինձանից: Ահա թե ինչու վճռեցի՝ երբևէ չցուցադրել դիմանկարը: Դուք մի փոքր վշտացաք, չէ՞ որ անտեղյակ էիք: Երբ հետագայում Հայրիին ես այդ մասին ասացի, նա ծիծաղեց ինձ վրա: Բայց նշանակություն չտվեցի: Դիմանկարն ավարտելուց հետո ես նայեցի նկարին և զգացի, որ ճիշտ եմ... Իսկ մի քանի օրից հետո նկարը տարան իմ արհեստանոցից, ու հենց որ ես ազատվեցի նրա անհաղթահարելի կախարդանքից, ինձ թվաց, թե այդ բոլորը լոկ իմ հիմար երևակայությունն է, որ դիմանկայում մարդիկ կտեսնեն միայն Ձեր զարմանալի գեղեցկությունը և նկարչի տաղանդը, ուրիշ ոչինչ: Նույնիսկ հիմա էլ ինձ թվում է, որ ես սխալվում էի, որ նկարչի զգացմունքները չեն արտացոլվում իր ստեղծագործության մեջ: Արվեստը շատ ավելի վերացական է, քան մենք պատկերացնում ենք: Ձևերը և գույները պատմում են միայն ձևերի և գույների մասին, ուրիշ ոչինչ: Հաճախ ինձ թվում է՝ արվեստը ավելի շուտ թաքցնում է, քան բացահայտում նկարչին: Այդ պատճառով էլ, երբ Փարիզից առաջարկություն ստացա, որոշեցի Ձեր

ղիմանկարը դարձնել ցուցահանդեսի ամենամեծատուր գործը: Իմ մտքով կանցնե՞ր արդյոք, թե Դուք կառարկե՞ք Այժմ տեսնում եմ, որ ծիշտ եք: Դիմանկարը պետք չի ցուցադրել: Պատմելուս համար մի բարկացեք, Դորիան: Դուք ստեղծված եք պաշտվելու համար, ինչպես մի անգամ ասացի Հենրիվին:

Դորիան Գրեյը թեթևացած շունչ քաշեց: Այտերը նորից շատագունեցին, շուրթերին ժպիտ խաղաց: Վտանգն անցել էր, այժմ ապահով էր: Սակայն նա անսահման կարեկցանք զգաց նկարչի նկատմամբ տարօրինակ խոստովանության համար: Հետաքրքիր է՝ արդյոք ինքն էլ կարող է գտնվել ուրիշի հոգու իշխանության տակ: Լորդ Հենրին այդպիսի վտանգ լինելու հյուսպույր ունի, բայց միայն այդքան: Սիրվելու համար նա չափազանց խելացի և չափազանց ցինիկ է: Կհայտնվի՞ մեկը, որ իր՝ Դորիանի կուռքը դառնա: Կճաշակի՞ արդյոք Դորիանը նաև այդ զգացումը:

- Շատ զարմանալի է, Դորիան,- ասաց Հոլլուորդը,- որ կարողացել եք դա նկատել դիմանկարում: Բայց իրո՞ք նկատել եք:

- Այո՛, ինչ-որ բան,- պատասխանեց նա,- և խիստ ապշել եմ:

- Իսկ հիմա դեմ չե՞ք լինի՝ դիմանկարին նայել:

Դորիանը տարուբերեց գլուխը:

- Մի՛ խնդրեք, Բեգիլ: Չեմ թողնի նույնիսկ մոտենալ:

- Գուցե ուրիշ անգամ:

- Երբեք:

- Ինչ արած, թերևս ծիշտ եք: Դե, ցտեսությո՜ւն, Դորիան:

Դուք միակն եք իմ կյանքում, որ, իրոք, ազդեցության թողեցիք արվեստիս վրա: Լավ կատարած գործերիս համար՝ Ձեզ՝ եմ երախտապարտ: Օ՛հ, եթե իմանայիք, թե ես ինչ գնով այդ ամենն ասացի:

- Սիրելի Բեգիլ, ինչ ասացիք առանձնապես: Այն, որ չափազանց շատ եք պաշտել ինձ: Դա նույնիսկ հաճոյալստ-սություն չէ:

- Ես մտադիր չէի Ձեզ հաճոյալստել: Դա խոստովանու-թյուն էր: Իսկ այժմ, կարծես, ինչ-որ բան կորցրեցի: Թերևս, պետք չէ գգացածը բառերով արտահայտել:

- Այդ խոստովանությունը հուսախաբեցրեց ինձ:

- Այսինքն, ինչ էիք սպասում: Միթե ուրիշ բան էլ եք նկա-տել յիմանկարում:

- Ո՛չ, ուրիշ ոչինչ: Ինչո՞ւ եք հարցնում: Իսկ երկրպագության մասին այլևս չխոսե՞նք: Դա հիմարության է: Մենք ընկերներ ենք, Բեգիլ, և միշտ էլ պետք է ընկերներ մնանք:

- Դուք Հարրի ունեք,- տխուր ասաց նկարիչը:

- Ա՛յս, Հարրին,- քահ-քահ ծիծաղեց Դորիանը,- Հարրին ցերեկն զրադված է անհավանական բաներ ասելով, իսկ երեկոները՝ անհավատալի բաներ ստեղծելով: Ճիշտ նման կյանք էլ ես կուզեի վարել: Բայց ես ծանր պահերին դժվար թե Հարրիի մոտ գնամ: Ավելի շուտ Ձեզ մոտ կգամ, Բեգիլ:

- Եվ Դուք կրկին կգա՞ք նկարվելու:

- Ո՛չ, դա անկարելի է:

- Ձեր մերժումով Դուք խորտակում եք ինձ՝ որպես նկար-չի: Ոչ ոք իր իդեալին երկու անգամ չի հանդիպում: Ասենք՝ մի անգամ գտնողներն էլ շատ քիչ են:

- Ձեմ կարող բացատրել, թե ինչու, Բեգիլ, բայց այլևս չպետք է նկարվեմ: Յուրաքանչյուր դիմանկարում ինչ-որ ճա-կատագրական բան կա: Այն ունի իր անձնական կյանքը... Կգամ Ձեզ մոտ թեյելու: Դա նույնքան հաճելի կլինի:

- Ձեզ համար, գուցե, ավելի հաճելի,- վշտացած քրթ-մնջաց Հոլլուորդը:- Դե, ցտեսություն, Հարրի: Ափսոս, չթո-ղեցիք՝ դիմանկարը նայեմ: Ինչ արած, Ձեզ լրիվ հասկանում

նմ:

Երբ նա դուրս եկավ սենյակից, Դորիանը ժպտուց ինքն իրեն: Խնդ Բեզիլ, որքան է իր կռահումների մեջ հետու լուկական պատճառից: Եվ որքան տարօրինակ է. ինքը՝ Դորիանը ոչ միայն չբացեց իր գաղտնիքը, այլև իմացավ լնկերոջ գաղտնիքը: Որքան շատ բան բացատրեց նրան այդ տարօրինակ խոստովանությունը: Նկարչի խանդի զուր բռնկումները, բուռն նվիրվածությունը, զարմանալի զսպվածությունը, շռայլ գովասանքը, այժմ ամեն ինչ հասկանալի էր: Դորիանին թվում էր՝ ինչ-որ ողբերգական բան կա այդ ընկերության մեջ՝ գունազարդված ռոմանտիկ սիրահարությամբ:

Նա հառաչեց և ենչեցրեց սպասավորին կանչող զանգը: Հարկավոր էր դիմանկարը անպայման թաքցնել: Նա դիսկչի անի թողնել գաղտնիքն աչքի առաջ: Խենթություն կլիներ, թեկուզ մի ժամ դիմանկարը սենյակում թողնել, ուր կարող էին ներս մտնել իր ընկերները:

Երբ Վիկտորը ներս մտավ, Դորիանը սևեռուն հայացքով նայեց նրան՝ փորձելով կռահել, թե արդյոք նրա մտքով չի անցել գողունի նայել վարագույրի ետևը: Սպասավորը, բռնաբերված անվրդով, սպասում էր հրամանի: Դորիանը զանակ վառեց, ապա մոտեցավ և նայեց հայելուն, որի մեջ նա պարզորոշ կարող էր տեսնել Վիկտորի դեմքի արտացոլումը: Այդ դեմքի վրա բացի ծառայելու սիրալիր հանդարտությունից ուրիշ ոչինչ չկար: Ուրեմն վախենալու կարիք չկար: Այնուամենայնիվ, մտածեց նա, անհրաժեշտ է զգոն լինել:

Հատ-հատ արտասանելով բառերը՝ նա կարգադրեց Վիկտորին կանչել տնտեսուհուն, ապա պատվիրեց գնալ շրջանակ պատրաստողի մոտ և խնդրել, որ երկու մարդ ուղարկի:

Նրան թվաց, թե սպասավորը դուրս գնալիս հայացքը գցեց վարագույրի կողմը: Թե՛ դա պարզապես նրա երևակայությունն էր:

Չանցած մի քանի րոպե՝ գրադարան աճապարեց տիկին Հիֆը՝ մետաքսե սև զգեստով, կնճռոտած ձեռքերին հնաձև կիսաձեռնոցներ: Պատանին նրանից պահանջեց նախկին դասասենյակի բանալին:

– Հին դասասենյակի, միստեր Գրեյ, – բացականչեց նա: – Բայց չե՞ որ հիմա այնտեղ լրիվ փոշու մեջ կորած է: Նախ, թույլ հավաքեն, կարգավորեն, հետո: Իսկ հիմա նույնիսկ անկարելի է ներս նայել: Իրոք, անկարելի է:

– Հավաքել և կարգավորել պետք չէ, Հիֆ: Միայն բանալին եմ ուզում:

– Օ՛հ, Դուք կծածկվեք սարդոստայններով, սը՛ր, եթե ներս մտնեք: Չե՞ որ սենյակը հինգ տարի գրեթե չի բացվել՝ նորին գերազանցության մեռնելուց ի վեր:

Պապի մասին լսելիս Դորիանը կնճռոտեց դեմքը: Նույն լորդի մասին տհաճ հիշողություններ ուներ:

- Ոչինչ,- պատասխանեց նա,- ես միայն ուզում եմ նայել, ուրիշ ոչինչ: Տվեք բանալին:

- Ահա, վերցրեք, սըր,- ասաց ծեր կինը և դողդոջուն ձեռքերով փնտրեց բանալիների կապի մեջ,- ահա, իմա կհանեմ օղակից: Չլինի՞ մտածել եք վերևում ապրել: Այստեղ Ձեզ համար շատ հարմար է, սըր:

- Ո՛չ, ո՛չ,- անհամբեր ընդհատեց Դորիանը,- շնորհակալություն, Հիֆ, կարող եք գնալ:

Տիկին Հիֆը փոքր-ինչ հապաղեց, որպեսզի շաղակրատի տնային մի քանի գործերի մասին: Դորիանը, հառաչելով, խոստացավ կարգավորել նրա ուզածները: Տնտեսուհին դուրս եկավ սենյակից՝ գոհունակության ժպիտը դեմքին:

Երբ դուռը փակվեց, Դորիանը բանալին դրեց գրպանը և պրպտող հայացք ձգեց սենյակին: Աչքին ընկավ կերպասե ալ ոսկեհյուս ծածկոց՝ XVII դարի վերջի վենետիկյան արվեստի հույակապ մի գործ, որ բերել էր պապը Իոլոնիայի մոտ գտնվող մենաստանից: Այո, այդ ծածկոցով կարելի էր փակել ահավոր դիմանկարը: Թերևս մի ժամանակ դա դագաղի ծածկոց եղած լինի: Այժմ պետք է թաքցնեք նկարի քայքայումը, որն ավելի ահավոր է, քան դիակի նեխումը, որովհետև դա ստեղծելու էր սարսափներ ու չէր մեռնելու: Ինչպես որդերն են լափում դիակը, այնպես էլ մեղքերն են ուտելու կտավի վրայի պատկերը: Նրանք կլափեն գեղեցկությունը, կհռչոտեն հմայքը, կաղծեն և կապականեն նրան: Եվ, այնուամենայնիվ, դիմանկարը շարունակելու է ապրել: Նա ապրելու է հավիտյան:

Դորիանն այդ մտքից սարսռաց և մի պահ զղջաց, որ չի պատմել Հոլլուորդին դիմանկարը թաքցնելու իսկական

պատճառը: Բեզիլը կօգնե՞ր նրան հաղթահարել լորդ Հենրիի ազդեցությունը և ազդեցությունը սեփական խառնվածքի, որն ավելի վտանգավոր էր: Դորիանի նկատմամբ տածած Բեզիլի սերը (իսկ դա իսկական սեր էր) ազնիվ և վսեմ զգացմունք էր: Դա լոկ ֆիզիկական հրապույր չէր գեղեցկության նկատմամբ, որ ծնվում է զգացմունքներից և մեռնում, երբ հոգնում են զգացմունքները: Ոչ, դա այնպիսի սեր է, որ գիտեին Միքելանջելոն և Մոնտեն¹, Վինքելմանը² և ինքը՝ Շեքսպիրը: Այո, Բեզիլը կարող էր փրկել իրեն, բայց արդեն չափազանց ուշ էր: Անցյալը կարելի է ջնջել զղջումով, հրաժարումով կամ մոռացումով: Իսկ ապագան անխուսափելի է: Դորիանն զգում էր, որ իր մեջ թափառում են այնպիսի կրքեր, որոնք սոսկալի ելք կգտնեն իրենց համար, և անորոշ երազանքներ, որոնք իրականանալու դեպքում կմթագնեն իր կյանքը:

Նա բազմոցի վրայից վերցրեց ոսկեհյուս ծածկոցը և անցավ վարագույրի ետևը: Արդյոք ավելի գարշելի չէր դարձել նկարի դեմքը: Ո՛չ, անփոփոխ էր: Բայց, չնայած դրան, Դորիանն էլ ավելի նողկաց նկարից: Ոսկեզանգուրներ, երկնագույն աչքեր, վարդագույն շուրթեր, բոլորը նույնն էին:

Փոխվել էր միայն արտահայտությունը: Նա իր դաժանությամբ զարհուրելի էր: Նկարի դեմքին դրոշմված դատապարտող արտահայտության համեմատությամբ որքան չնչին և աննշան էին Բեզիլի կշտամբանքները: Նկարից Դորիան Գրեյին էր նայում նրա սեփական հոգին և կանչում պատասխանատվության:

Ցավի տհաճ զգացումով Դորիանը շքեղ ծածկոցը նետեց դիմանկարի վրա: Այդ պահին դռան բախոց լսվեց: Վարագույրի ետևից Դորիանի դուրս գալուն պես սպասավորը ներս

1 Վերածննդի ֆրանս. գրող:

2 Գերմանական ճարտարապետ:

մտավ:

- Մարդիկ այստեղ են, պարոն:

Դորիանը մտածեց, որ սպասավորին պետք է անմիջապես որևէ տեղ ուղարկել. նա չպետք է իմանա, թե ուր են տանում դիմանկարը: Պետք չէ վստահել: Վիկտորի աչքերը խնկացի լին և խորամանկ: Դորիանը նստեց գրասեղանի մոտ, մի երկտող գրեց լորդ Հենրիին և խնդրեց կարդալու որևէ բան ուղարկել՝ հիշեցնելով, որ պետք է հանդիպեն երեկոյան ուրն անց քառորդ թոպե:

- Կսպասեք պատասխանին,- ասաց նա՝ երկտողը սպասավորին մեկնելով.- իսկ բանվորներին ներս բերեք:

Չանցած երկու-երեք թոպե՝ նորից դռան բախոց լսվեց, և ներս մտավ ինքը՝ միստեր Հաբբարդը, Սաութ-Օդլի սթրիթի նշանավոր շրջանակ պատրաստողը՝ կոպիտ արտաքինով երիտասարդ օգնականի հետ: Պարոն Հաբբարդը շիկահեր այտամորուքներով կարմրադեմ փոքրիկ մարդ էր: Նրա՝ արվեստի երկրպագումը բավականաչափ ձևավորվել էր շնորհիվ միշտ կարիքավոր նկարիչների, որոնք անվերջ գործ էին ունենում նրա հետ: Որպես կանոն՝ նա երբեք չէր հեռանում արվեստանոցից: Սպասում էր, որ մարդիկ գնային իր մոտ: Բայց Դորիանի համար միշտ բացառություն էր անում: Դորիան Գրեյի մեջ ինչ-որ բան կար, որ դյուրեւում էր բոլորին: Հաճելի էր նույնիսկ նրան նայելը:

- Ինչո՞վ կարող եմ Ձեզ ծառայել, միստեր Գրեյ,- հարցրեց նա՝ շփելով հասուլիկ, պեպենոտ ձեռքերը:- Մտածեցի Ձեզ պատիվ անել՝ անձամբ ներկայանալով: Ես հենց նոր, եմ մի պեղեցիկ շրջանակ գնել, սըր: Դրված էր վաճառքի:

Հին ֆլորենցիական է, կարծեմ Ֆոնթիլից: Հիանալի կսպի կլոնական սյուժեով նյութի համար, միստեր Գրեյ:

- Ներեցեք Ձեզ պատճառած նեղության համար, միստեր Հաբբարդ: Անշուշտ, ես կանցնեմ շրջանակը նայելու, չնայած առանձնապես հիմա չեմ հետաքրքրվում կրոնական նկարչությամբ: Այսօր միայն կուզեի մի նկար տեղափոխել վերնահարկ: Բավականին ծանր է, այդ պատճառով խնդրեցի Ձեզ երկու մարդ ուղարկել:

- Ինչ եք ասում, միստեր Գրեյ, դա անհանգստություն չէ բոլորովին: Շատ ուրախ եմ, որ կարող եմ Ձեզ որևէ բանով օգնել: Որտեղ է այդ նկարը, սըր:

- Սա է,- պատասխանեց Դորիանը՝ ետ քաշելով վարագույրը: Կարող եք տեղափոխել ծածկած. չեմ ուզում քերծվածքներ առաջանան վերև բարձրացնելիս:

- Ոչ մի դժվարություն չի լինի, սըր,- ուրախ ասաց շրջանակ պատրաստողը և օգնականի հետ միասին արձակեցին արույրե երկար շղթաները, որոնցով ամրացված էր դիմանկարը:

- Իսկ որտեղ կհրամայեիք տեղափոխել, միստեր Գրեյ:

- Ես ձեզ ցույց կտամ ճանապարհը, միստեր Հաբբարդ: Բարի եղեք հետևել ինձ: Կամ գուցե ավելի լավ է՝ Դուք անցնեք առջևից: Դժբախտաբար, տան ամենավերին հարկում է: Բարձրանանք գլխավոր սանդուղքներով, նրանք ավելի լայն են:

Նա դուռը լայն բացեց, և, դուրս գալով սրահ, նրանք աստիճաններով սկսեցին վեր բարձրանալ: Վիթխարի զարդարուն շրջանակի պատճառով դիմանկարը չափազանց ծանր էր, և ժամանակ առ ժամանակ Դորիանը ջանում էր օգնել նրանց՝ չնայած միստեր Հաբբարդի քծնողական բողոքին, որը իր դասի բոլոր մարդկանց պես թույլ չէր տալիս, որ ջննտվմենը որևէ օգտակար գործ կատարի:

- Բեռը թեթև չէր, սըր,- շնչակտուր ասաց փոքրիկ մարդը,

ներ վերև հասան, և նա ճաղատ գլխից մարբեց քրտինքը:

- Այո՛, բավականին ծանր էր,-քրթմնջաց 'Դորիանը' լուցելով սենյակի դուռը, որը պետք է պահեր նրա տարօրինակ գաղտնիքը և թաքցներ հոգին մարդկանց աչքերից:

Ավելի քան չորս տարի նա այդ սենյակը չէր մտել: Երբ Դորիանը երեխա էր, դա նրա խաղասենյակն էր, երբ մի քիչ մեծացավ, դարձրին նրա դասասենյակը: Այդ ընդարձակ, հարմարավետ սենյակը հանգուցյալ լորդ Քելսոն կառուցել էր տվել հատկապես փոքրիկ թոռնիկի համար, որին նա մորը ապշեցուցիչ կերպով նմանվելու, թե՛ մի այլ պատճառով տանել չէր կարողանում և աշխատում էր հեռու՝ պահել իրենից: Դորիանին թվաց, թե սենյակում ոչինչ չի փոխվել: Դեռ այդտեղ էր իտալական խոշոր սնդուկը՝ cassone, որի վրա տարօրինակ նախշեր կային, և որի ոսկեգույն զարդերը ժամանակի ընթացքում խամրել էին: Այդ սնդուկում փոքր ժամանակ նա հաճախ էր թաքնվել: Ահա դասագրքերով լի կարմիր փայտե գրապահարանը, նրա մոտ պատից կախված էր նույն հինավուրց ֆլամանդական գորգը, որտեղ խունացած թագավորն ու թագուհին պարտեզում շախմատ էին խաղում, իսկ նրանց կողքով, ձիեր հեծած, անցնում էին զրահավոր ձևոնոցներ հագած մի խումբ բազեորսներ՝ կնգուղավոր թռչուններով: Որքան լավ էր հիշում բոլորը: Շուրջը նայելիս նա վերհիշում էր իր միայնակ մանկության յուրաքանչյուր, յուրաքանչյուր պահ: Հիշում էր մանկության անբիծ մաքրությունը և զարհուրում այն մտքից, որ հենց այստեղ պետք է թաքնվեր ճակատագրական դիմանկարը: Վաղանցիկ օրերին կմտածեր սրվողք, թե ինչ է իր համար նախասահմանված:

Բայց տանն ուրիշ ապահով տեղ չկար դիմանկարը հետաքրքրասեր աչքերից քողարկելու համար: Այստեղի բանալին լյու ձեռքում էր, ոչ ոք չէր կարող ներս մտնել: Թույլ ալ

ծածկոցի ետևում կտավի վրա պատկերված դեմքը դառնա անասնական, բուր, եղծված: Ինչ փույթ: Միննույն է՝ ոչ ոք չի կարող տեսնել: Նույնիսկ ինքը չի տեսնի: Ինչու դիտլի հոգու նողկալի փտումը: Ինքը կպահպանի երիտասարդությունը: Դա բավական է:

Բայց միթե նա չի կարող ուղղվել: Միթե անարգված ապագա ունենալը այդքան անխուսափելի է: Գուցե նրա կյանքի մեջ մտնի մի մեծ սեր և մաքրի նրան, փրկի նոր մեղքերից, որոնք ծնվում են հոգու և մարմնի մեջ, զարմանալիորեն աննկարագրելի մեղքեր, որոնց իսկ խորհրդավորությունը նրանց նենգ հրապուրանք է տալիս: Գուցե դա մի օր, երբ ալ, զգայուն շրթունքները կորցնեն իրենց դաժան արտահայտությունը և հնարավոր լինի աշխարհին ցույց տալ Բեզիլ Հոլլուորդի գլուխգործոցը:

Ո՛չ, դա անհնար է: Ժամ առ ժամ, շարաթ առ շաբաթ կտավի վրա պատկերված մարդը ծերանում էր: Եթե նույնիսկ նրա վրա չազդեին գաղտնի հանցագործություններն ու արատները, միննույն է, ժամանակի այլանդակ հետքերից չէր խուսափի: Նրա այտերը կդալկանան, կթռչնեն: Մարող աչքերի շուրջը կսողան դեղին կնճիռները և կոչնչացնեն նրանց գեղեցկությունը: Մազերը կկորցնեն իրենց փայլը, բերանը, ինչպես ծերերինն է լինում, կիսաբաց ու անիմաստ տեսք կստանա, շրթունքները այլանդակորեն կկալսվեն: Կնճռոտած վիզ, սառը, կապույտ երակներով ձեռքեր, կուչ եկած մարմին՝ ինչպես իր պապինը, որն այնպես դաժան էր իր նկատմամբ մանկության օրերին: Այո, նկարը հարկավոր էր թաքցնել: Ուրիշ ելք չկա:

- Խնդրեմ, ներս բերեք, միստեր Հաբբարդ,- տխուր ասաց նա,- ներեցնեք երկար սպասեցնելու համար: Ինչ-որ բանի մասին էի մտորում:

- Ոչինչ, մի քիչ հանգստացանք, միստեր Գրեյ,- պատուախանք շրջանակ պատրաստողը, որի շունչը դեռ տևելիս էր նկել,- որտեղ դնենք, սըր:

- Միևնույն է, ահա այստեղ, պետք չէ կախել: Ուղիակի պատին հենեք: Շնորհակալ եմ:

- Ձե՛ կարելի արդյոք նայել արվեստի այս ստեղծագործությանը, սըր:

Դորիանը ցնցվեց:

- Դժվար թե Ձեզ հետաքրքրի, միստեր Հաբբարդ,- պատասխանեց Դորիանը՝ աչքերը սևեռելով մարդուն: Դորիանը պատրաստ էր ցատկել նրա վրա և գետին գլորել, եթե նա համարձակվեր բարձրացնել շքեղ ծածկոցը, որը թաքցնում էր իր կյանքի գաղտնիքը,- Ձեզ այլևս չեմ անհանգստացնի: Շատ երախտապարտ եմ, որ բարեհաճեցիք:

- Չարժե, միստեր Գրեյ, չարժե: Միշտ պատրաստ եմ Ձեզ օգնելու, սըր,- և միստեր Հաբբարդը թխկթխկացնելով իջավ ստիճաններն ի վար, իսկ նրա հետևից օգնականը, որն, ամոթխած՝ հիացմունքը կապտավուն դեմքին, անընդհատ շրջվում էր՝ Դորիանին նայելու: Նա իր կյանքում այդքան հմայիչ ու գեղեցիկ մարդ չէր տեսել:

Երբ ներքևում ոտնաձայները մարեցին, Դորիանը կողպեց դուռը և բանալին դրեց գրպանը: Այժմ ապահով էր: Ոչ ոք այլևս չէր տեսնի սարսափելի նկարը: Միայն ինքը կտեսնի իր խայտառակությունը:

Վերադառնալով գրադարան՝ նա տեսավ՝ ուղիղ ժամը վեցն է: Թեյը մատուցված էր: Մադափազարդ, բուրավետ մուգ փայտե սեղանի վրա (դա լեդի Ռեդլիի՝ իր խնամակալի կնոջ նվերն էր, նա մշտապես հիվանդ էր և անցած ձմեռը անց էր կացրել Կահիրեում) մի երկտող էր դրված լորդ Հենրիից, իսկ կողքին՝ դեղին կազմը և անկյունները փոփո-

ինչ մաշված մի գիրք: Թեյի սկուտեղին դրված էր նաև «Սենթ Ջեյմս գագեթ»-ի երրորդ տպագրված օրինակը: Հավանաբար Վիկտորը վերադարձել էր: Հետաքրքիր է, բանվորներին չէր հանդիպել սրահից դուրս գալիս, հարցուփորձ չէր արել, թե ինչ էին անում: Իհարկե, սպասավորը նկատած կլիներ, որ դիմանկարը չկա: Նկատած կլիներ թեյը բերելիս: Վարագույուն տեղում չէր, և դատարկ պատը երևում էր: Մեկ էլ տեսար՝ մի գիշեր Դորիանը բռնեց նրան վերնահարկ սողոսկելիս և յասասենյակի դուռը ջարդելիս: Սարսափելի է տանը լրտես ունենալ: Դորիանը լսել էր, թե ինչպես հարուստներին իրենց ամբողջ կյանքում ահաբեկել են սպասավորները, որոնց հաջողվել է նամակ կարդալ կամ ծածուկ խոսակցություն լսել, ձեռքն է ընկել հասցեագրված այցետոմս, տիրոջ բարձի տակ գտել ևն թառամած ծաղիկ կամ ճմրթված ժանյակի կտոր:

Նա հառաչեց և թեյ լցնելով՝ բացեց լորդ Հենրիի երկտողը: Լորդ Հենրին գրում էր, որ ինքն ուղարկում է երեկոյան թերթը և մի գիրք, որը կհետաքրքրի իրեն, իսկ ուրն անց տասնհինգ կսպասի ակումբում: Դորիանն անտարբեր բացեց լրագիրը և աչքի անցկացրեց: Հայացքը կանգ առավ հինգերորդ էջում կարմիր մատիտով ընդգծված տողերի վրա: Նա ուշադիր կարդաց հետևյալ պարբերությունը:

«Դատաքննություն դերասանուհու մահվան գործով: Այս առավոտ Հոքսթոն ռոդի վրա գտնվող Բելլ-Թեյերնում տեղամասային քննիչ միստեր Դենքիի կողմից հետաքննություն կատարվեց երիտասարդ դերասանուհի Սիբիլ Վեյնի մահվան կապակցությամբ, որ վերջերս հանդես էր գալիս Հոլրոյնսի թագավորական թատրոնում: Դատաքննությունը հաստատեց, որ մահը տեղի է ունեցել դժբախտ պատահարի պատճառով: Խոր ցավակցություն հայտնեցին հանգուցյալի մորը: Նա խիստ հուզված էր իր իսկ, ինչպես նաև դոկտոր

Բիրրելի ցուցմունքի ժամանակ, որը կատարել էր դիտելով ձումը»:

Դորիանը կնճռոտեց դեմքը և լրագիրը երկու կտոր անելով՝ դեն նետեց: Որքան տհաճ էր այս բոլորը: Ինչ անավուր էլին այլանդակ մանրամասնությունները: Նա բարկացավ լույս Հենրիի վրա հողվածն ուղարկելու համար: Իհարկե, մեծ հիմարություն էր ընդգծել տողերը կարմիր մատիտով: Չէ, որ Վիկտորը կարող էր կարդալ: Այդպիսի բաներ կարդալու համար նա բավականին լավ գիտեր անգլերեն:

Նա, թերևս, կարդացել և ինչ-որ բան կասկածում էր: Բայց հետո ինչ: Ինչ գործ ունի Դորիան Գրեյը Սիբիլ Վեյնի մահվան հետ: Պետք չէր վախենալ: Դորիան Գրեյը չէր սպանել նրան:

Հայացքն ընկավ լորդ Հենրիի ուղարկած դեղին գրքին: Հետաքրքիր է՝ ինչ գիրք է: Նա մոտեցավ ութանկյուն փոքրիկ մարգարտագույն սեղանին, որ նրան թվում էր, թե արծաթից պատրաստել են ինչ-որ եգիպտական անտեսանելի մեղուներ: Վերցնելով գիրքը՝ Դորիանն ընդմեջ բազկաթոռի մեջ և թերթեց էջերը: Մի քանի րոպե անց նա կլանվեց ընթերցանությամբ:

Դա ամենաարտաոռոց գիրքն էր, որ ինքը կարդացել էր երբևէ: Թվում էր, թեզմայելի զգեստներ հագած՝ քաղցրահունչ մեղեդիների տակ նրա աչքի առջևից համր շարքերով անցնում են աշխարհի բոլոր մեղսագործությունները: Շատ լիաներ, որոնց մասին նա երազել էր աղոտ կերպով, հանկարծ նրա աչքին իրական էին դառնում: Շատ բաներ, որ նույնիսկ երազում էլ չէր տեսել, կամաց-կամաց բացվում էին նրա առջև:

Դա վեպ էր առանց սյուժեի, միայն մեկ հերոսով, որի հոգեբանական ուսումնասիրությունը, պարզապես, գրքերի թեման էր: Իրոք, նա փարիզեցի մի երիտասարդ էր. նա

կյանքն անց Լ,ր կացրել՝ ջանալով XIX դարում պատկերացնել յուրաքանչյուր դարի բոլոր կրքերն ու մտայնությունները, բացի իյ դարից, որպեսզի զգա այն բոլորը, ինչի միջով անցել է աշխարհի հոգին: Նրան հետաքրքրում էր ինքնահրաժարման անքնական ձևերը, որ մարդիկ հիմարաբար առաքինություն են համարում, և նույնքան էլ բնական ըմբոստ պոռթկումները, որ խելացի մարդիկ դեռ մեղք են կոչում: Գիրքը գրված էր զարմանալի նրբակերտ ոճով, վառ կենդանի, բայց երբեմն էլ՝ ինչ-որ չսփով մշուշապատ բարրառով, արխայիզմներով, տեխնիկական արտահայտություններով և ընդարձակ մեկնաբանություններով լի: Նման ոճով նկարում էին Ֆրանսիական սիմվոլիստական դպրոցի ամենափանաղի նկարիչները: Այնտեղ օգտագործվում էին խոլորձների նման արտասովոր փոխաբերություններ, որոնք նույնքան նրբերանգ էին: Մարդու զգայական կյանքի նկարագրվում էր միստիկական փիլիսոփայության տերմիններով: Երբեմն դժվար էր որոշել, թե ինչ ես կարդում՝ որևէ միջնադարյան սյրի կրոնական էքստազների նկարագրություն, թե ժամանակակից մեղսագործի անամոթ խոստովանություն: Դա շատ թունավոր գիրք էր: Կարծես էջերը ներծծված էին խնկի ուժեղ բույրով, որը մարդու ուղեղ էր թմրեցնում: Համաչափ, ներդաշնակ դարձվածքները, մեղեդիի փառաբուշ միապաղաղությունը, բարդ կրկնագերը և նրբագեղ կրկնությունները համակում էին հիվանդներին երազանքով: Եվ գլուխ առ գլուխ կլանելով գիրքը՝ Դորիանը չէր նկատում, որ օրը մոտենում է վախճանին, և ստվերները թաքնվում են տան անկյուններում:

Անամա դահանակագույն երկինքը, որտեղից ճեղքել ու դուրս էր ցցվել մի աստղ, ամկայծում էր լուսամուտների հետևում: Դորիանը կարդում էր ու կարդում ալոտ լույսի տակ,

րանի դեռ տառերը նրեում էին: Երբ սպասավորը նրան մի րանի անգամ հիշեցրեց, որ ուշ է, նա վեր կացավ, գնաց մյուս սենյակը, գլորջը դրեց ֆլորենցիական փոքրիկ սեղանին՝ մահճակալի մոտ, ապա սկսեց հագնվել ճաշի գնալու համար:

Միտ ժամը ինն էր, երբ հասավ ակումբ: Լորդ Հենրին, սաստիկ ծանծրացած, նստել էր միայնակ:

- Ներեցեք, Հարրի,- բացականչեց նա,- ես փաստորեն Ձեր մեղքով եմ ուշացել: Ձեր ուղարկած գիրքն այնպես դյուրեց ինձ, որ ես մոռացա, թե ինչպես է ժամանակը սահում:

- Այդպես էլ գիտեի, որ դուր կգա,- պատասխանեց լորդ Հենրին՝ բարձրանալով աթոռից:

- Չասացի՝ դուր է գալիս, Հարրի, ասացի՝ դյուրեց: Տարբերությունը մեծ է:

- Օ՛, արդեն հասկացա՞ր տարբերությունը,- ասաց լորդ Հենրին:

Նրանք անցան ճաշասենյակ:

Դորիան Գրեյը տարիներով չէր կարողանում ազատվել այդ գրքի ազդեցությունից: Կամ, թերևս, ավելի ճիշտ կլիներ ասել՝ ինքը չէր ուզում երբեք ազատվել: Փարիզից նա պատվիրեց այդ գրքից ինը օրինակ և կազմել տվեց տարբեր գույներով: Այդ գույներ պետք է համընկնեին նրա փոփոխական տրամադրություններին և երևակայություններին, որոնց գրեթե չէր կարողանում տիրապետել:

Գրքի հերոսը՝ երիտասարդ փարիզեցին, որի մեջ զարմանալիորեն միահյուսվել էին ռոմանտիկությունն ու գիտնականի սթափ միտքը, Դորիանին թվում էր, թե իր նախատիպն է. իսկ ամբողջ գլխով՝ նրա կյանքի պատմությունը, որը գրված էր ավելի շուտ, քան ինքն ապրել էր:

Մի բանում Դորիանն ավելի բախտավոր էր, քան վեպի հերոսը: Նա երբեք ահավոր սարսափ չէր զգացել և վիճակված էլ չէր զգալ հայելիներին, մետաղների փայլուն մակերեսներին և մարմանդ ջրի հարթությանը նայելիս, սարսափ, որ ապրել էր երիտասարդ փարիզեցին դեռ վաղ հասակում, երբ հանկարծ կորցրել էր երբևմնի ապշեցուցիչ գեղեցկությունը: Գրեթե դաժան ուրախությամբ (թերևս ուրախության, ինչպես նաև հրճվանքի մեջ դաժանությունն իր տեղն ունի) Դորիանը կարդում էր գրքի վերջին գլուխը, որտեղ իրական ողբերգությամբ, չնայած փոքր-ինչ չափազանցրած, նկարագրվում էին մարդու վիշտն ու հուսահատությունը կորցրածի համար, որն աշխարհում բոլորից բարձր էր նա գնահատում:

Այո, Դորիանը հրճվում էր, որովհետև նրա հրաշալի գեղեցկությունը, որ դյուրեւ էր Բեզիլ Հոլլուորդին և շատ շատերին, նրբեք չպետք է խամրեր: Նույնիսկ նրա մասին ամենավատ լուրեր լսողները (իսկ ժամանակ առ ժամանակ արտառուց

յուրեր էին շրջում Լոնդոնում և դարձել էին ակումբների ասեկոսները) Դորիանին տեսնելուց հետո չէին կայույլ հասնում որևէ բամբասանքի: Նա այնպիսի տպավորություն էր թողնում, կարծես աշխարհի և ոչ մի կնդտ չի բավել նրան: Անպարկեշտ բամբասողները իսկույն լռում էին, երբ ներս էր մտնում Դորիան Գրեյը: Նրա դեմքի պայծառության մեջ ինչ-որ բան կար, որ կշտամբում էր նրանց: Դորիանի ներկայությունը բավական էր, որպեսզի զրպարտիչները հիշեին իրենց կորցրած մաքրությունը: Եվ նրանք զարմանում էին, թե ինչպես է այդ հրապուրիչ և շնորհագեղ երիտասարդը խուսափել խայտառակ դարի զզվելի կրքերից:

Հաճախ, վերադառնալով տուն, խորհրդավոր ու երկար բացակայություններից հետո, բացակայություններ, որոնք հիմք էին տալիս ընկերներին կամ նրանց, ովքեր իրենց «րնկեր» էին կոչում, տարօրինակ ենթադրություններ անել, Դորիանը ծածուկ բարձրանում էր վերնահարկի կողպած սենյակը, բացում դուռը բանալիով, որից երբեք չէր բաժանվում, և հայելին ձեռին՝ կանգնում էր դիմանկարի ոլիմա՝ մերթ նայելով կտավի ծերացող, չար դեմքին, մերթ հայելուց իրեն ժպտացող գեղեցիկ երիտասարդին: Աչքի զարնող հակադրությունից մեծանում էր հաճույքի զգացումը: Նա ավելի ու ավելի էր սիրահարվում սեփական գեղեցկությանը և էլ ավելի մեծ հետաքրքրությամբ դիտում սեփական հոգու քայքայումը: Լարված ուշադրությամբ, իսկ երբեմն էլ՝ մի տեսակ անբնական հիացմունքով նա զննում էր այլանդակ գծերը, որոնք ակոսում էին կնճռոտվող ճակատը կամ սողոսկում ծանրացած զգայական բերանի շուրջը՝ ցանկանալով իմանալ, թե ի՞նչ է ավելի սոսկալի՝ մոլորագործության, թե տարիքի դրոշմը: Նա մոտեցնում էր սպիտակ ձեռքերը նկարի կոշտ, թորշոմած ձեռքերին և

ժպտում՝ ծաղրելով նրա այլանդակված ու մաշված մարմինը
 Զիշտ է՝ երբեմն գիշերները, երբ նա անքուն պառկած էր լինում իր ննջարանում՝ լցված օծանելիքների բուրմունքով կամ նավանորոգարանների մոտ գտնվող ինչ-որ վատահամբավ որջի խցում, ուր հաճախ սովորություն ուներ այցելել ծալոված, Դորիան Գրեյը մտածում էր իր հոգու կործանման մասին, մտածում էր կսկիծով ու տանջանքով: Բայց նման ակնթարթներ սակավ էին լինում: Հետաքրքրությունը դեպի կյանքը, որ առաջին անգամ նրա մեջ արթնացրեց լուրջ Հենրին, երբ միասին նստած էին իրենց ընդհանուր բարեկամի՝ Բեզիլ Հոլլոտորդի պարտեզում, որքան ավելի շատ էր լավարարություն գտնում, այնքան ավելի ազատ էր դառնում: Ինչքան շատ էր իմանում, այնքան շատ էր գիտենալու ծարավ գգում: Այդ ցանկությունները խելահեղ սովալլուկների նման որքան շատ էին կերակրվում, այնքան ընչաքաղց էին դառնում:

Այնուամենայնիվ, Դորիանն անխոհեմ չէր գոնե հասարակության հետ ունեցած հարաբերությունների նկատմամբ: Ձմռանը՝ ամիսը մեկ-երկու անգամ, իսկ տարվա մնացած եղանակներին՝ ամեն չորեքշաբթի, քանի դեռ սեզոնը՝ չէր վերջացել, նրա շքեղ տան դռները միշտ բաց էին, և այնտեղ ժամանակակից ամենահայտնի երաժիշտները զմայլում էին հյուրերին արվեստի հրաշալիքներով: Նրա ճաշերը, որոնց կազմակերպելու ժամանակ նրան միշտ օգնում էր լուրջ Հենրին, հայտնի էին հյուրերին խստագույն ընտրությամբ և ներառաշակ բացած սեղաններով, որ հիանալի ներդաշնակվում էին էկզոտիկ ծաղիկների, ասեղնագործ սփռոցների և ոսկե, արծաթե հնազեղ ամանեղենի հետ: Շատերը, հատկապես՝

1 Լոնդոնյան սեզոն՝ մայիս-հուլիս, երբ բարձրաշխարհիկ ընտանիքները աշխուժացած կատարում են ընդունելություններ, երեկոյաններ և այլն:

նորելուկ երիտասարդները. Դորիանի մեջ տեսնում էին այն իղևալը, որի մասին երազել էին ուսանողական տալիմներին, իղևալ, որ զուգակցում էր իր մեջ իսկական գիտնականի քաղաքավարությունը և բարձրաշխարհիկ մարդու ույժ հմայքն ու բարեկիրթ շարժումները: Դորիանը թվում էր այն հերոսներից մեկը, որն, ինչպես Դանտեն է ասում, «ձգտում է վեհացնել հոգին գեղեցկության երկրպագումով»: մեկը, որի համար, ըստ Գոտյեի, ստեղծված է այս աշխարհը:

Եվ, անկասկած, Դորիանի համար կյանքն առաջինն էր և ամենամեծը բոլոր արվեստներից, իսկ մյուս արվեստները ոչ այլ ինչ էին, եթե ոչ՝ կյանքի նախամուտք: Իհարկե, Դորիանը տուրք էր տալիս և նորաձևությանը, որն ամեն տեսակի կրեակայությունը կարող է իրականացնել, և պճնամոլությանը, որ ձգտում է ընդունել բացարձակ ժամանակակից գեղեցկությունը: Նրա հագնվելը և առանձնահատուկ նորաձևությունները, որոնցով հրապուրվում էր ժամանակ առ ժամանակ, նշմարելի ազդեցություն թողեցին Մեյֆերի պարահանդեսների և Փելլ-Մելլի ակումբի երիտասարդ պճնամուլների վրա, որոնք, փորձելով ստեղծել նրա շնորհագին հմայքը, ընդօրինակում էին նույնիսկ այնպիսի մանրուքներում, ուրոնց նկատմամբ Դորիանն անփույթ էր:

Դորիանը մեծ հաճույքով զբաղեցրեց հասարակության մեջ այն դիրքը, որը նրան առաջարկվեց, երբ հասավ չափափասության. նա անսահման հաճույք էր զգում այն մտքից, թե ինքը կարող է արդի Լոնդոնի համար դառնալ այն, ինչ կայսր Ներոնի ժամանակներում Հոռմի համար դարձավ «Սատիրիկոնի»՝ հեղինակը: Բայց սրտի խորքում նա ցան-

1 Ներոնի ժամանակների հռոմեական գրող Պետրոնիոն: Բացառիկ գեղարվեստական նորաձաշակության համար հռոմեացի պատմաբան Տալլիտր նրան « *arbitr eleganterum* »՝ «նորաձաշակության օրենսդիր» տալանեց:

կանում էր դառնալ էլ ավելին, քան միայն «arbiter elegantiarum», որի հետ խորհրդակցում էին՝ ինչպես կրել զարդարանքները, ինչպես կապել փողկապը կամ ինչպես ծեռնափայտ բռնել, նա երագում էր ստեղծել կյանքի նոր փիլիսոփայություն, որը կունենա իր հիմնավորումը, հետևողական սկզբունքները և կյանքի գերագույն իմաստը գտնում էր զգայությունների, զգացումների շնչավորման մեջ:

Աղայությունների պաշտամունքը մեծ իրավացիությամբ հաճախ դատապարտվել է, որովհետև մարդիկ բնազդաբար սարսափել են կրքերից և զգայություններից, որոնք կարող են իրենցից ավելի ուժեղ գտնվել և, ինչպես գիտենք, բնորոշ են ավելի ցածր մակարդակի էակներին: Բայց Դորիան Գրեյին թվում էր, որ զգայությունների իսկական բնույթը երբեք չի ըմբռնվել, դրանք մնացել են անասնական և անզուսպ, որովհետև մարդիկ միշտ ձգտել են չնպաստել դրա զարգացմանը, տառապանքով սպանել են այդ զգացումները՝ փոխանակ դրանց մեջ տեսնելու նոր հոգեկան կյանքի էլեմենտներ, կյանք, որի գերիշխող գիծը պետք է հանդիսանա բարձր զարգացած ձգտումը դեպի գեղեցկությունը:

Երբ նա հետադարձ հայացք էր գցում մարդու պատմական անցյալին, իսկույն լցվում էր դառն ափսոսանքի զգացումով: Ինչքան շատ բան է բաց թողված, ինչքան գիջումներ է արված, և այդ ամենը՝ ինչպիսի՞նչ նպատակի համար: Որքան խենթ, համառ հրաժարումներ, ինքնատանջման և, ինքնասահմանափակման ինչպիսի՞նչ հրեշավոր ձևեր, որոնց պատճառը սարսափն է, իսկ հետևանքը՝ այլասերումը (իսկ դա անսահմանորեն ավելի սոսկալի է, քան երևակայական այլասերումը), որից մարդիկ անգիտությամբ ձգտել են խուսափել: Բնությունն իր հոյակապ ծաղրով անապատ է քշել ձգնավորներին՝ վայրի գազանների հետ սնվելու համար և

մենակյացին կյանքի ընկեր է տվել դաշտերի և անառատների կենդանիներին:

Այ՛, ինչպես լուրդ Հենրին էր կանխագուշակում, առաջ
և, գալու նոր հեղոնիզմ, որը կվերածնի կյանքը և կփրկի
բիրտ ու հեղհեղուկ մաքրակրոնությունից, որի արտառույ
վերապրուկները վերստեղծվել են մեր օրերում: Իհարկե,
այդ հեղոնիզմը կծառայի բանականությանը, բայց երբեք չի
ընդունի որևէ տեսություն կրքերի բազմազան փորձը նեն-
գափոխելու համար: Հեղոնիզմի նպատակը հենց այդ փորձն
է, ոչ թե՝ նրա պտուղները քանդել են, թե դառը: Մեր կյան-
քում պետք է լինի ոչ ճգնաժողովություն, որն սպանում է
զգացմունքները, ոչ էլ գոեհիկ սանձարձակություն, որն այդ
զգացմունքները բթացնում է: Հեղոնիզմը կսովորեցնի մարդ-
կանց որսալ կյանքի յուրաքանչյուր ակնթարթը, քանի որ
կյանքն ինքն անցնող ակնթարթ է:

Մեզանից ո՞վ չի երբեմն արթնացել այգաբացից առաջ
այնպիսի քաղցր քնից, երբ մահվան հավիտենական քունը
զրեթե ցանկալի է թվում, կամ էլ գիշերվա սարսափից և
սյուլասերված ուրախությունից հետո, երբ ուղեղի բջիջներում
ծնվում են իրականությունից էլ սոսկալի տեսիլքներ՝ վառ
ու կենդանի, ինչպես ամեն մի երևակայություն՝ լցված այն
տիրական ուժով, որ հաղորդում է գոթական արվեստին
մշտնջենական կենսունակություն, կարծես թե այդ արվեստը
ստեղծված է հատկապես նրանց համար, ովքեր հիվանդ
ևս երազկոտությամբ: Աստիճանաբար լուսաբացի սպիտակ
մատները սահում են վարագույրների վրայով, և թվում է, թե
վարագույրները թրթռում են: Սև, արտառուց ստվերները ան-
շուշտ սողում են սենյակի անկյուններն ու ծվարում այնտեղ:
‘Դրսում’ տերևների մեջ, լսվում է թռչունների ծվլոցը, վու-
յոցից ականջին է հասնում աշխատանքի գնացողների ու

նաձայնները, մերթ էլ՝ քամու հառաչանքն ու հեծեծանքը, որ սողում է բլուրներից և թափառում խաղաղ տների շուրջը՝ վալսենալով, կայծես, արթնացնել քնածներին և սակայն ստիպված է վանել բունն իր ապաստարանից: Մեկը մյուսի ետևից բարձրանում են խավարի թեթև շղարշները, և օրհնադալ վերականգնվում իրերի նախկին ձևերն ու երանգները, մեր աչքի առջև այգաբացը վերադարձնում է աշխարհին իր սովորական ձևը: Աղոս հայելիները կրկին ետ են ստանում կյանքի արտացոլումը: Հանգած մոմերը շարունակում են մնալ այնտեղ, որտեղ թողել էինք, իսկ կողքին՝ ընդհատված գիրքը կամ թռչնած ծաղիկը, որ զարդարել էր պարահանդեսում Ձեր կուրծքը, կամ էլ նամակը, որ վալսեցել էինք կարդալ կամ կարդացել անթիվ ու անհամար անգամ: Ոչինչ կարծես չի փոխվել: Գիշերվա տեսիլային սովերների միջից նորից վերադառնում է մեր ծանոթ իրական կյանքը: «Ուտք է սկսել այնտեղից, որտեղ կանգ էինք առել և համակվում ենք անհրաժեշտության սոսկալի զգացումով անվերջ ուժասպառվել նույն տաղտկալի միապաղաղ սովորությունների շուրջը: Երբեմն այդ պահերին բուռն ցանկություն ենք զգում բանալ մեր աչքերը և տեսնել ուրիշ՝ նոր աշխարհ, որ գիշերվա ընթացքում վերափոխվել է մեր հաճույքի համար, աշխարհ, որտեղ իրերն ընդունել են նոր ձևեր, երանգներ և գաղտնիքներ, աշխարհ, որտեղ անյայլ շատ քիչ, կամ բոլորովին էլ ոչ մի տեղ չունի, իսկ եթե նույնիսկ ապրում է, ապա ոչ ավստասանքի և ոչ էլ անհրաժեշտության ձևով, որովհետև նույնիսկ ուրախության հուշերն իրենց դառնությունն ունեն, իսկ անդարձ հաճույքի հիշողությունները ցավ են պատճառում:

Ահա այդպիսի նոր աշխարհների ստեղծումն էր հանդիսանում 'Դորիան Գրեյի համար կյանքի էական կամ

զլխավոր նպատակներից մեկը: Եվ փնտրելով նոր ու
զմայլիչ զգայություններ, որոնք կարող էին ունենալ օտ
մանտիկայի հիմնական տարրը՝ արտասովորությունը, նա
հաճախ հրապուրվում էր այնպիսի գաղափարներով, որոնք,
անկասկած, խորթ էին իր խառնվածքին. սրվում էր այդ
զաղափարների նենգավոր ազդեցությանը և ապա, հաւ-
կանալով նրանց էությունը, բավարարում էր իր հետա-
քրքրությունը և լքում այնպիսի անտարբերությամբ, որը ոչ
միայն համատեղելի է խանդավառ խառնվածքի հետ, այլև,
յուստ ժամանակակից որոշ հոգեբանների, հաճախ հանդի-
սւսնում է անհրաժեշտ պայման:

Մի անգամ Լոնդոնում խոսում էին, թե Դորիանը մտա-
յլիւր է ընդունել կաթոլիկություն: Իրոք, նրան միշտ ձգում էր
կաթոլիկ կրօնը: Ամենօրյա զոհաբերությունների խորհրդա-
վորությունը պատարագի ժամանակ, որ ավելի ահա-
ւոր էր իր ռեալականությամբ, քան հին աշխարհի բոլոր
զոհաբերությունները, հուզում էր նրան դեպի մեր զգացմունք-
նւրն ունեցած իր հոյակապ արհամարհանքով, նախնադարյան
սլարգությամբ, մարդկային ողբերգության հավիտենական
խանդավառությամբ, որը այդ խորհրդավորությունը ձգտում
է, խորհրդանշել: Դորիանը սիրում էր չոքել սառը մարմարի
վրա և դիտել ծաղկազարդ շուրջառ հագած քահանային, թե
յուրապես է սպիտակ ձեռքերով դանդաղ քաշում հաղորդության
խորհրդատուի քողը կամ բարձրացնում ակնեղեններով
,ուղշողուն լապտերանման մասունքների տապանակը, որի
մէջ դրված էր անգույն նշխարը, և այդ ժամանակ նա ուզում
էր, իսկապէս, որ դա իրոք «panis caelestis»՝ «հրեշտակների
խոյ» է: Դորիանը սիրում էր նաև այն պահը, երբ քահանան
Վրիստոսի չարչարանքների հագուստով մանրացնում է,
սլուտարագի նշխարը հաղորդատուի մեջ և հարվածում

կուրծքը մեղքերի համար: Դորիանին հմայում էին ոսկե-գույն խոշոր ծաղիկների նման ծխացող բուրվառները, որոնցով խնկարկում էին ժանյակազարդ ալ հագուստներ հագած, հանդիսավոր լուրջ դեմքերով տղաները: Դուրս գնալիս Դորիանը հետաքրքրությամբ նայում էր խավար խոստովանարարներին, երբեմն էլ՝ երկար նստում նրանց աղոտ սովերում՝ լսելով, թե ինչպես են հինավուրց վանդակների մեջ մարդիկ շշնջում իրենց կյանքի ճշմարիտ պատմությունները:

Սակայն Դորիանը հասկանում էր, որ պաշտոնական կերպով որևէ դավանանքի ընդունումը կնշանակի սահման դնել իր մտավոր զարգացմանը, և երբեք նման սխալ թույլ չէր տալիս: Նա չէր ուզում իր հիմնական կացարանը համարել պանդոկը, որը կարող էր պետք գալ մի գիշերվա կամ գիշերային մի քանի ժամերի համար, երբ աստղերը չեն լուսավորում, իսկ լուսինը դեռ չի նորել: Մի ժամանակ Դորիանը հափշտակված էր միստիցիզմով, երևույթները խորհրդավոր դարձնելու նրա հրաշալի հատկությամբ և միշտ նրան ուղեկցող բարդ պարադոքսներով: Իր կյանքի մի ուրիշ շրջանում նա հակվել էր դեպի գերմանական դարվինիզմի մատերիալիստական տեսությունը և զարմանալի հաճույք էր ստանում մարդկային բոլոր մտքերն ու կրքերը հանգեցնել ուղեղի գորշ նյութի ինչոր բջիջների կամ սպիտակ ջղաթելերի գործունեությանը. այդպես գայթակղիչ էր ոգու բացարձակ անկախության գաղափարը՝ կախված ֆիզիկական՝ հիվանդ, թե առողջ, նորմալ, թե աննորմալ պայմաններից: Սակայն, ինչպես ասվեց սկզբում, կյանքին վերաբերող ոչ մի տեսություն կարևորություն չունեւ Դորիանի համար: Կարևորը նրա համար կյանքն էր: Նա խորապես գիտակցում էր, թե որքան անպտուղ են վերացական եզրահանգումները, երբ նրանք կտրված են իրականությունից և փորձից, գիտեր, որ մարդու զգայական

կյանքը, ճիշտ, ինչպես հոգևորը, ունի իր սուրբ գաղտնիքները, որոնք սպասում են իրենց բացահայտմանը:

Իսկ այժմ նա սկսեց ուսումնասիրել տարբեր տեսակի լույս մուտքների գործողությունը և բուրավետ նյութերի պատրաստման գաղտնիքները: Անուշահոտ յուղեր քամելով և այլևայլ արևելքի բուրավետ խեժ՝ նա եկավ այն եզրակացության, որ չկա հոգեկան ոչ մի տրամադրություն, որ կապված չլինի ինչ-որ զգայական ընկալումների հետ, և որոշեց բացահայտել նյութանոց իսկական հարաբերակցությունը. ուզում էր իմանալ՝ ինչ կա արդյոք խնկի մեջ, որ միստիկական տրամադրությամբ և, համակում մարդուն, ինչո՞վ է օժտված համապարը, որ կրքեր և, յուրբոքում: Ինչո՞ւ մանուշակի բույրը մեռած սիրո հուշեր և, արթնացնում, մուշկը տանջում է ուղեղը, իսկ բամբակը՝ անառակացնում երևակայությունը: Երագելով ստեղծել բուրմուռների հոգեբանական ազդեցության վերաբերյալ գիտություն՝ Դորիանն ուսումնասիրեց զանազան հոտավետ սյուրմատների, քաղցրաբույր բույսերի, բուրումնավետ ծաղկավոշիների, անուշահոտ բալասանի, բուրումնալից ծառերի, նարդոսի, որ թուլացնում է, հալվեի, որն, ասում են, սպաքինում է հոգին մեղամաղծությունից և մարդկանց խելագարեցնող հովենու ազդեցությունը:

Դորիանի կյանքում եղավ նաև այնպիսի շրջան, երբ նա ամբողջովին տրվեց երաժշտությանը: Այդ ժամանակ վանդակապատ լուսամուտներով երկար սրահում, որի սուստառը ոսկեգույն էր, իսկ պատերը ներկված էին ձյապատդագույն, նա կազմակերպում էր արտասովոր համերգներ. խելահեղ գնչուների փոքրիկ ցիտրաններից վայրի երաժշտություն էր թնդում, դեղին շալերով վեհամբան թունիսցիները զարկում էին հսկա ջնարի պիրկ լարերին: Առամները բացած նեգրերը միապաղաղ հարվածում և, ին

պղնձն թմբուկներին, իսկ նիհար, չալմայակիր հնդիկները փչում էին եղեգնյա կամ արույրե դուդուկներ՝ հմայելով կամ ձնացնելով, թե իմայում են խոշոր ակնոցավոր օձերին և պոզավոր զարհուրելի թունավոր իժերին: Նման պահերին բարբարոսական երաժշտության կտրուկ ընդհատումները և սուր աններդաշնակությունը հուզում էին Դորիանին, մինչդեռ Շուբերտի գմայլանքը, Շոպենի չքնաղ հեծեծանքը և նույնիսկ Բեթհովենի զորեղ սիմֆոնիաները ոչ մի ազդեցություն չէին թողնում նրա վրա: Աշխարհի բոլոր ծայրերից նա հավաքել էր այնպիսի զարմանալի երաժշտական գործիքներ, որ կարելի էր գտնել միայն մեռած ազգերի գերեզմաններում կամ վայրի ցեղերի վերապրուկների մեջ, որոնք դեռ պահպանվել էին՝ շփվելով արևմտյան քաղաքակրթության հետ: Դորիանը սիրում էր ձևոք տալ գործիքներին, փորձում էր նվագել: Նա իր հավաքածուում ուներ Ռիո նեգրոյի հնդիկների խորհրդավոր «ջուրուպարիսը», որ կանանց արգելված էր նայել, նույնիսկ պատանիներին չէր թույլատրվում, միայն կարելի էր նայել պասից հետո և մտրակով զարկվելու դեպքում: Կային պերուական կավե կժեր, որոնց ծայնը նման էր թռչունների սուր ծլչի, մարդկային ոսկորներից պատրաստած սրինգներ, որ լսել էր Ալֆոնսո դե Օվալլեն Զիլիում և հնչեղ կանաչ հասպիսներ, որոնք գտել էին Կուցկոյի մոտ և, որոնք ունեին անկրկնելի թաղցրահնչունություն: Դորիանն ուներ նաև զետաքարերով լի ներկած ոլորումներ, որոնք թափահարելիս թնդում էին, և մեքսիկական երկար շեփոր, որի նվագողը օղը ոչ թե փչում էր, այլ ներս էր քաշում: Հետո ուներ ամազոնյան ցեղերի սուր ծայն ունեցող «թուրե», որը ժամապահները օրն ի բուն հնչեցնում էին՝ բարձր ծառերին նստած, և որի ծայնը, ասում են, լսելի է երեք յո հեռավորությունից: Ուներ փայտե երկու թրթռացող լեզուներով «գեփոնացլի», որ հարվածում էին բույսերի

կայանահյուրի խեղճով սծած ձողերով: Եվ, վերջապես, նրա հավաքածուում կար խաղողի ողկույզների նման զանգավունք ունեցող ացտեկական «յոթի» և հսկայական գլանաձև ու բլրուկ, որի վրա սծի կաշի էր քաշած. դա մերսիկուսյան տաճարում տեսել էր Կորտեզի ուղեկից Բերնալ Դիասու, որն այնպես վառ էր նկարագրում նրա լալագին ձայնը: Դորիանին այդ գործիքները հրապուրում էին իրենց ինքնատիպությամբ, և նա զարմանալի հաճույք էր զգում այն մտքից, որ արվեստը, ինչպես բնությունը, ունի իր հրեշները՝ ճիվաղային և զգվելի ձայներով:

Սակայն Դորիանը շուտով հիասթափվեց նաև դրանցից: Նու երեկոները, նստած օպերայի իր օթյակում, միայնակ կամ լորդ Հենրիի հետ հիացմունքով «Տանհոյզեր» էր լսում, և թվում էր, թե նախերգանքում սեփական հոգու ողբեր-գությունն է հնչում:

Հետո նրա մեջ հայտնվեց նոր մոլություն. սկսեց տարվել թւսնկարժեք քարերով: Մի անգամ դիմակահանդեսում նա հայտնվեց ֆրանսիական ծովակալ Անն-դյւ-ժոյեզի կոստյումով, որի բաճկոնի վրա 560 մարգարիտ կար: Այդ հե-տաբերությունը տարիներ տևեց, նույնիսկ, կարելի է ասել, մինչև կյանքի վերջը: Հաճախ նա ամբողջ օրը ջոկջոկում ու սուփների մեջ դասավորում էր քարերի հավաքածուները: Այստեղ կային ձիթապտղագույն խրիզոթերիլներ, որ կարմիր-կուսնգ էին ստանում լւմպի լույսի տակ, արծաթափայլ զծելով րիմֆեն, պիստակագույն փերիդոթ, վարդագույն և ոսկեգույն գլխու երանգ ունեցող թոփազգեր, հրավառնոնաքարեր, որոնց մեջ առկայծում էին քառածայր աստղեր, բոցագույն հրակներ: Կարնազագույն և մանուշակագույն շփինելներ, մերթ սուտակի, մերթ շափյուղայի երանգափայլով մեղեսիկներ: Միտում էր արևաքարի կալմիր ոսկին, լուսնաքարի մարգարտանման

ճևրմակությունը, կաթնագույն սաղափի ծիածանանման գունալսաղերը: Ամստերդամից ձեռք էր բերել արտասովոր չափսի երփներանգ երեք զմրուխտ և բոլոր գիտնականների նախանձը շարժող հազվագյուտ փիրուզ:

Դորիանն ամենուրեք փնտրում էր ոչ միայն թանկագին քարեր, այլև այդ քարերի մասին եղած ամենահետաքրքիր լեգենդները: Ալֆոնսի «Clericalis disciplina»¹ գրքում հիշատակվում է իսկական հակինթե աչքերով օձի մասին, իսկ Ալեքսանդրի ռոմանտիկ պատմության մեջ ասում են, թե Էմաթիայի նվաճողը Ջորդանի դաշտավայրում տեսել է օձեր, որոնց «մեջքին աճում են իսկական զմրուխտե մանյակներ»:

Վիշապի ուղեղում, ինչպես պատմում է Ֆիլոստրատը, գեմմա անունով ազնիվ քար կա, «և եթե հրեշին ցույց տան ոսկե տառեր և բոսորագույն կտոր, նա կախարդական քուն կմտնի, որից հետո նրան կարելի է սպանել»:

Ըստ մեծ ալքիմիկոս Պիեր դը Բոնիֆասի՝ աղամանդը կարող է մարդուն անտեսանելի դարձնել, իսկ հնդկական ազաթը՝ պերճալիս: Սարդիոնը մեղմացնում է զայրույթը, հակինթը՝ քուն բերում, մեղեսիկը ցրում է գինու մշուշը, նոնաքարը հեռացնում չար ոգին մարդու միջից, իսկ ծովակնը գունաթափում է լուսնին: Լուսնաքարը նվազում և ավելանում է լուսնի հետ մեկտեղ, իսկ մելոցին, որով գողեր են հայտնաբերում, ուժը կորցնում է միայն ուլիկի արյունից:

Լեոնարդ Բամիլլը տեսել է հենց նոր սպանած դոդոշի ուղեղից հանած սպիտակ մի քար, որը հակազդում է թույնին: Անգեղաքարը, որ գտնվում է արաբական եղջերուի սրտում, հրաշք է, որը կարող է բուժել ժանտախտը: Արաբական թռչունների բներում էր գտնվում ասֆիլաթը: Ըստ Դեմոկրիտի՝ այդ քարը կրողը կրակից անվտանգ է մնում:

¹ «Խրատներ կղերականների համար» (լատ.):

Յևլոնի թագավորը իր թագադրման օրը շրջում էր մայրաքաղաքում, որպես թագադրության ծես՝ ձևորին լուսածուտականի մի մեծ քար: Իոհան քահանայի պալատի պարիսույները սարդիոնից էին, իսկ նրանց մեջ պոզավոր օձի և օյյուրներ և էին դրված, որպեսզի ոչ ոք չկարողանա թույն տանել ներս: Պալատի եռանկյունաձև վերնաճակատին դրված էին «երկու ոսկե խնձոր, իսկ նրանց մեջ՝ երկու նոնաքար, ցերեկը փայլում էր ոսկին, գիշերը՝ նոնաքարը»: Լոջի՝ «Ամերիկայի մարգարտահատիկը» արտասովոր վեպում պատմվում է, թե ինչպես թագուհու ննջասենյակում կարելի էր տեսնել «աշխարհի բոլոր առաքինի կանանց արտացոլումը խրիզոլիտե, նոնաքարե, շափյուղայե և կանաչ զմրուխտե հայելիներին նայելիս»: Մարկո Պոլոն տեսել է, թե ինչպես Չիփանգուի¹ բնակիչները իրենց մեռելների բերանները վարդագույն մարգարտահատիկներ են դնում: Մի ծովային հրեշ սիրահարվում է մարգարտահատիկի: Երբ մարգարիտ որոնողը հանում է մարգարտահատիկը Փերոզե թագավորի համար, հյրեշը սպանում է գողին և յոթ լուսնի ընթացքում ողբում կորուստը: Հետո, ինչպես պատմում է Փրոքոփին, երբ հոները գայթաղեցին Փերոզե թագավորին և գցեցին որոգայթի մեջ, նա դեն նետեց մարգարտահատիկը, որը երբեք չգտնվեց՝ չնայած Անաստաս կայսրը նրա համար խոստացել էր 500 ֆունտ ոսկի:

Մալաբարի թագավորը ցույց էր տվել մի վենետիկցու՝ 304 մարգարտահատիկից տերողորմյա. դա այն աստվածների թիվն էր, որոնց նա պաշտում էր:

Երբ Ալեքսանդր VI-ի որդին՝ «հերցոգ դե Վալենտինուան, այցելեց ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս XII, նրա ձին, ինչպես Բրանստոմն էր պատմում, ամբողջովին ծածկված էր

¹ Ճապոնիա:

ոսկե տերևներով, իսկ հերցոգի գլխարկը զարդարված էր երկշարք սուտակներով, որոնք կուրացուցիչ լույս էին արձակում»:

Անգլիական Կարլոս թագավորի ձիու ասպանդակներից կախված էին 421 ադամանդ: Ռիչարդ II ուներ ալ սուտակազարդ վերարկու՝ 30000 մարկ արժողությամբ: Հուլն այսպես է նկարագրում Հենրի VIII կոստյումը իր թագադրության նախօրեին: Թաուեր գնալիս «նա հագել էր ոսկե զառբաքից բաձկոնակ, որի լանջապանակն ասեղնագործած էր ադամանդներով և այլ թանկարժեք քարերով, իսկ լանջագոտին՝ խոշոր սուտակներով»: Յակով առաջինի սիրուհիները կրում էին ոսկե զարդացանց, զմրուխտե ականջօղեր: Էդուարդ II նվիրել էր Փիրս Գեյվստոնին զուտ ոսկե հակինթազարդ մի զրահ, որի փիրուզազարդ լայն օձիքը ոսկե վարդերից էր, իսկ գլխարկը ծածկված էր մարգարտահատիկներով: Հենրի II հագնում էր մինչև արմուկները հասնող ականեղեններով ձեռնոցներ, իսկ ոսորդական թաթմանները հյուսված էին 12 սուտակներով և 52 մարգարիտներով: Բուրգունդական դինաստիայի վերջին դուքս Կարլոս Համարձակի շափյուղազարդ գլխարկից կախված էին տանձաձև մարգարիտներ:

Որքան հիասքանչ էր կյանքը մի ժամանակ, որքան պերճաշուք՝ իր շքեղություններով և զարդարանքներով: Նույնիսկ կարդալն անցյալի անդարձ ճոխությունների մասին հաճույք էր պատճառում:

Հետագայում Դորիանն սկսեց հետաքրքրվել ասեղնագործություններով և պատկերազարդ գորգերով, որոնք փոխարինեցին Հյուսիսային Եվրոպայի ժողովուրդների ցուլոտ սենյակների որմնանկարներին: Խորանալով ուսումնասիրվող նյութի մեջ (իսկ Դորիանն արտակարգ ընդունակությամբ կլանվում էր ամբողջովին նրանով, ինչով զբաղվում էր)՝ նա

գրեթե դառնությամբ էր նկատում, թե ինչպես I, ժամանակն ավերում գեղեցիկն ու անկրկնելին:

Այնուամենայնիվ, նա խուսափել էր դրանից: Ամռանը հաջորդում էր ամառ. շատ անգամ էր դեղին նարգիլը ծաղկել ու թռչնել, նորից ու նորից կրկնվել էին խելահեղ գիշերնկոյ՝ իրենց ամոթով, իսկ Դորիանն անփոփոխ էր: Ոչ մի ծմեռ չէր փչացնում դեմքը, չէր մեռցնում փթթող երիտասարդությունը: Մինչդեռ որքան այլ էր իրերի ճակատագիրը, իրեր, որոնք մարդիկ էին ստեղծել:

Ո՛ր էին անհետացել դրանք: Ո՞րտեղ է Աթենասի հաճույքի համար թխամորթ աղջիկների հյուսած զնափրանագույն հագուստը, որի վրա պատկերված էր աստվածների կոիվը հսկաների հետ: Որտեղ է Կերոնի հրամանով Հռոմում 'Կոլիզեյի վրա ձգված հսկայական վելարիումը՝ աստղալից երկինք պատկերող այդ վիթխարի ալ առագաստը, որտեղ ոսկեսանձ ձիեր լծած մարտակառքով սլանում էր Ապոլլոնը: Նա տենչում էր տեսնել Արևի քուրմի համար ասեղնագործած անձեռոցիկները, որոնց վրա պատկերված էին բոլոր ընտիր խորտիկները և ուտելիքները, ինչպիսիք ցանկալի են խնջույքի համար: Կամ Քիլպերիկ թագավորի թաղման ծածկոցը՝ վրան երեք հարյուր ոսկե մեղուներ, կամ Պոնտոս եպիսկոպոսի գայրույթը գրգռող արտառոց հագուստները, որտեղ պատկերված էին «առյուծներ, ընձառյուծներ, արջեր, շներ, անտառներ, ժայռեր, որսորդներ», մի խոսքով՝ այն ամենը, ինչ որ նկարիչը կարող էր տեսնել բնության մեջ: Ո՛ր է Օռլեանի Կարլոս արքայազնի հագուստը, որի խեղճերին ասեղնագործած էին երգի հետևյալ սկզբնական

1) Հսկայական քաթան անֆիթատրոնի վերևում, որ պահպանում էր հանդիսատեսին անձրևից և արևից:

րառները. «Madame, je suis tout joyeux»¹. այդ խոսքերը և նյանց երաժշտությունը ասեղնագործած էին ոսկե թելերով. իսկ յուրաքանչյուր ծայնանիշ (որ քառանկյուն էր այն ժամանակ)՝ չորս մարգարտափափկներով:

Դորիանը կարդացել էր Ռեյմսի պալատում Բուրգունդիայի Զոան թագուհու համար պատրաստած սենյակի նկարագրությունը: Պատերը զարդարված էին 1321 ասեղնագործ թութակներով, որոնց թևերին շողշողում էր թագավորի զինանշանը, և 561 թիթեռնիկներով, որոնց թևերին պատկերված էր թագուհու զինանիշը: Դրանք բոլորն էլ արված էին զուտ ոսկուց: Եկատերինա Մեդիչիի սգո մահիճը ծածկված էր սև թավիշով՝ վրան կիսալուսիներ և արևներ: Գունագարդ մետաքս վարագույրների ոսկե և արծաթե հենքի վրա տերևապսակներ և ծաղկաշղթաներ էին պատկերված, իսկ ծուպերիզները ասեղնագործած էին մարգարիտներով: Մալիճը դրված էր ննջասենյակում, որի պատկերից կախված էին թագուհու սև թավշյա զինանիշերը՝ արծաթագույն զառարբի վրա: Լյուդովիկոս XIV սենյակում կային ոսկե ասեղնագործ արծանասյուներ՝ 15 ֆուտ բարձրությամբ. Լևի թագավոր Յան Սոբյեսկիի շքեղ մահիճը դրված էր զմյուռնական ոսկե զառարբի վրանի տակ, որի վրա Ղուրանից մի քանի սողեր էին փխրուզով ասեղնագործած: Նրան պահող ոսկեզօծ, արծաթյա հոյակերտ սյուները շքեղորեն զարդարված էին արծնապակյա և թանկարժեք քարե մեղալիտներով: Այդ վրանը լեհերը վերցրել էին Վիեննայի մոտ գտնվող թուրքական ճամբարից: Նրա ոսկեզօծ գմբեթի տակ դրված էր Մուհամեդ մարգարեի դյուշը:

Եվ այսպես՝ մի ամբողջ տարի Դորիանը եռանգով հավաքեց ու կազմեց հազվագյուտ ասեղնագործությունների և կսուր-

¹ «Տիկին, ես շատ ուրախ եմ». (ֆր.):

ուրի հավաքածու: Նա ուներ հնդկական նորավերտ մարմուշ,
 որ Դելիից էր ճարել և որի վրա ոսկեղեն դավանանքներ
 էր հյուսած և կոյարգելի ծիածանանման թևեր, շղարշ, որ
 բերված էր Դաքայից և որի թափանցիկության պատճառով
 դա Արևելքում կոչում են «եթերային կտոր», «ջրի շիփ»,
 «երեկոյան ցող», ուներ արտասովոր նկարազարդ կտորներ,
 որոնք ճավայից էին, ուներ ձեռքի նրբին աշխատանքով
 ստեղծած չինական դեղին վարագույրներ, դարչնագույն
 կերպասե կամ երկնագույն շքեղակազմ գրքեր, որոնց վրա
 «fearus be lys»¹, թռչուններ և այլ պատկերներ էին նկարած,
 ուներ հունգարական ժանյակից քողեր, սիցիլիական զառբաբ
 և իսպանական ամուր թավիշ, վրացական ոսկեգոծ գործ-
 վածքներ և ոսկեփայլ երանգով ճապոնական «ֆուկուսաա»²
 վրան հրաշագեղ գույնի թռչուններ:

Դորիանը հատուկ կիրք էր տածում եկեղեցական հան-
 դերծանքի, ինչպես նաև այն ամենի նկատմամբ, որոնք
 առնչված էին կրոնական ծիսակատարությունների հետ: Տան
 արևմտյան պատշգամբաքառում գրված մայրի փայտից մեծ
 սնդուկներումնա պահել էր բազմաթիվ գեղեցիկ հագուստներ,
 որոնք արժանի էին միանձնուհիներին, որովհետև միանձնու-
 հիներն են, որ պետք է կրեն բոսորագույն զգեստ, թանկարժեք
 յարեր և նրբագեղ քաթան, որպեսզի ծածկեն ինքնակամ
 գրկանքներով հյուծված և ինքնածաղկմամբ խոցված իրենց
 անարյուն մարմինը: Դորիանն ուներ մորեգույն մետաքսե
 և ոսկեթել զառբաբե մի շուրջառ, որի նախշը կրկնվում էր,
 դա նոնենու ոսկե պտուղներ էին, վեցաթերթիկ ծաղիկներով
 պսակ և մանր մարգարիտներով ասեղնագործած արքայա-
 խնձորներ: Ուրաը բաժանված էր քառակուսիների, որոնցից
 յուրաքանչյուրը որևէ դրվագ էր ներկայացնում կույս Ու-

¹ «Շուշաններ»: (Լևդլ.):

րիամի կյանքից, իսկ նրա պսակադրությունը երփներանգ մետաքսով ասեղնագործած էր կնգուղի վրա: Դա XV դարի իտալական աշխատանք էր:

Մյուս շուրջառը կանաչ թավշից էր, որի վրա արծաթե թելով ու գունավոր բյուրեղով ասեղնագործած էին ականթի տերևների սրտաձև փնջեր և երկար սպիտակ ցողուններ: Ճարմանդի վրա ոսկեթելով պատկերված էր Սերովբեի գլուխը: Ուրարների վրա գործած էին կարմիր և մետաքսե ռոմբաձև նախշեր՝ ծածկված բազմաթիվ սրբեր և նահատակներ պատկերող մեդալիոններով, դրանց թվում նաև՝ սուրբ Սերովբեինը:

Դորիանն ուներ նաև եկեղեցական այլ հանդերձանքներ՝ սաքագույն և երկնագույն մետաքսից, ոսկե զառբաբից, դեղին կամկայից և ոսկեթել դիպակից, որոնց վրա պատկերված էին Քրիստոսի չարչարանքներն ու խաչումը, ասեղնագործած էին նաև առյուծներ, սիրամարգեր և այլ խորհրդանիշներ: Սպիտակ կերպասից և վարդագույն նուրբ մետաքսից նա ժամաշապիկներ ուներ, որոնք զալոյարված էին վարդակակաչներով, դելֆիններով, շուշաններով: Ուներ մորեգույն թավշե և երկնագույն քաթանից զոհասեղանի ծածկոցներ, բազմաթիվ խաչվառներ, սկիիի բողեր: Միստիկական ծիսակատարությունները, որոնց համար օգտագործվում էին այդ առարկաները, բորբոքում էին Դորիանի երևակայությունը:

Այդ գանձերը, ինչպես և այն ամենը, ինչ Դորիան Գրեյը հավաքել էր իր գողտրիկ տանը, օգնեցին նրան որոշ ժամանակ մոռացության տրվել և խուսափել սարսափից, որ երբեմն անտանելի էր թվում: Դատարկ, փակ սենյակում, որտեղ նա գրեթե իր ամբողջ մանկությունն էր անցկացրել, սեփական ձևորով պատից կախեց ճակատագրական դիմանկարը, որի փոփոխվող դիմագծերում նա կարդում էր իր կյանքի

խայտառակ ճշմարտությունը՝ ոսկեգույն վարագույնով ծածկված: Մի քանի շաբաթ նա վերև չբարձրացավ, մոռացության տվեց այլանդակ դիմանկարը, նախկին անողությունը, զվարթությունը, դեպի կյանքն ունեցած կրրուտ վերաբերմունքը կրկին վերադարձան: Հետագայում, գիշերյալաբար տնից դուրս գալով, նա գնում էր Բլու-Գեյթ-Ֆիլլյուսի մոտ գտնվող ինչ-որ կեղտոտ անառականոցներ և այնքան Լ,րմում, մինչև վոնդում էին: Երբ վերադառնում էր, նստում Լ,րդիմանկարի առջև՝ երբեմն խորշելով թե՛ նկարից, թե՛ իրենից, երբեմն էլ՝ անհատականության այնպիսի հախարտությամբ լի, որը նրան մեղքերին ընդառաջ էր տանում, թաքուն չարախնդությամբ ժպտում էր իր այլանդակ նմանակին, որին վիճակված էր իր փոխարեն տանել մեղքերի ծանրությունը:

Մի քանի տարուց հետո Դորիանն արդեն չէր կարողանում երկար ժամանակ հեռանալ Անգլիայից: Նա հրաժարվեց Թրու-վիլի շքեղ ամառանոցից, որը վարձել էր լորդ Հենրիի հետ, ինչպես նաև Ալժիրի սպիտակ պարիսպներով ցանկապատած տնակից, որտեղ նրանք միասին շատ ծմեռներ էին անցկացրել: Նա չէր կարողանում բաժանվել դիմանկարից, որը նրա կյանքում այնքան մեծ տեղ էր գրավում: Բացի դրանից, նա վախենում էր նաև, որ մեկնումեկը կսողոտսկի այն սենյակը, որտեղ նկարն է, չնայած կարգադրել էր, որ ապահով սողնակ ղնեն դռան վրա:

Ասենք, նա լրիվ համոզված էր, որ եթե սենյակ էլ մտնեն, միևնույն է, դիմանկարից ոչինչ չեն կռահի: Ճիշտ է՝ զարշելի տգեղության տակ դիմանկարը պահպանել էր իր նմանությունը, բայց ինչ կարող էին հասկանալ դրանից՝ Դորիանը կծիծաղեր բոլոր նրանց վար, ովքեր փորձեին իրենց ահաբեկել: Ինքը հո չէր նկարել դիմանկարը: Հետո ինչ, թե՛ նկարը նողկալի է: Ո՛վ կարող էր նրան մեղադրել յուր

համար: Եթե նույնիսկ ճշմարտությունը պատմեր էլ, ինչպես
դա կա, միթե կհավատային:

Եվ, այնուամենայնիվ, վախենում էր: Երբեմն, երբ նա
Նոթթինգեմշայրի իր ընդարձակ տանը բարձրաշխարհիկ
երիտասարդներին հյուր էր ընդունում, որոնց մեջ նա շատ
ընկերներ ուներ և ամբողջ կոմսությանը ապշեցնոսմ էր շոայլ
ճոխություններով ու փառահեղ խնջույքներով, հանկարծ
թողնում էր հյուրերին, սլանում Լոնդոն, որպեսզի տեսներ,
թե դուռն արդյոք չէն ջարդել, դիմանկարը տեղում է, թե՛
ոչ: Իսկ եթե հանկարծ նկարը գողանան: Միայն այդ մտքից
նա արդեն սարսափահար էր լինում: Չէ՛ որ աշխարհով մեկ
կտարածվի գաղտնիքը: Թերևս արդեն սկսել են կասկածել:

Այո, նա շատերին էր դուրսել, բայց շատ շատերն էլ կային,
որ նրան չէին վստահում: Ուեստ-էնդյան ակումբում քիչ մնաց
նրան սև քվե տային՝ չնայած ծագումով և հասարակական
դիրքով ամբողջովին իրավունք ուներ ակումբի անդամ
լինելու: Ասում են, երբ մի առիթով Չերչիլ-ակումբում Դո-
րիանի ընկերներից մեկը նրան ծխասենյակ տարավ, դուքս
Քերվիքը և մի այլ ջենտլմեն բարձրացան և ցուցադրական
կերպով հեռացան ակումբից: Արտառոց լուրեր էին պտտվում
սյուս մասին, երբ արդեն քսանհինգ տարեկան էր: Պատմում
էին, որ նրան ինչ-որ մեկը տեսել է Ուայթ-Չեփլի հեռավոր
թաղամասի անառականոցներից մեկում՝ օտարերկրյա նա-
վաւտիների հետ ընդհարվելիս, որ իբրև թե նա կապված է
գողերի և դրամանենգների հետ և գիտե նրանց արհեստի
գաղտնիքները: Նրա տարօրինակ բացակայությունների մա-
սին արյուն շատերը գիտեին, և երբ նա նորից էր հայտնվում
հասարակության մեջ, տղամարդիկ անկյուններում քչփչում
էին, քմծիծաղով անցնում նրա մոտով, կամ սառը, զննող հա-
յացքով այնպես նայում նրան, կարծես ցանկանում էին վեր-

յաւպէս իմանալ նրա մասին ճշմարտութիւնը:

Դորիանն, իհարկեւ, ուշադրութիւն չէր դարձնում նման անպատկառութիւններին և արհամարհանքի վրա, իսկ մալոյ կանց մեծամասնության կարծիքի համար բավական էր նրա անկեղծ բարեհոգութիւնը, սիրալիրութիւնը, հրապուրիչ, մասնական ժպիտը, սքանչելի, անթառամ երիտասարդութեան անսահման շնորհագեղութիւնը, որպէսզի հերքվէին նրա շուրջը պտտվող, այսպէս կոչված, բամբասանքները:

Այնուամենայնիւ, բարձրաշխարհիկ միջավայրում սկսեցին նկատել, որ Դորիանի մտերիմներից շատերը սկսել են խուսափել նրանից: Խելահեղ սիրահարված կանայք, որ հաւնուն նրա սիրո արհամարհել էին պատշաճութիւնը և հասարակական կարծիքը, այժմ գունատվում էին ամոթից և սարսափից, երբ Դորիան Գրեյը սենյակ էր մտնում:

Սակայն մութ շշուկները Դորիանի մասին շատերի աչքում միայն ավելացնում էին նրա տարօրինակ ու վտանգավոր իրապոյրը: Ընդ որում, նրա հարստութիւնը նույնպէս որոշ չափով ապահովում էր Դորիանի անվտանգութիւնը: Հասարակութիւնը, գոնե քաղաքակիրթ հասարակութիւնը, երբեք հեշտութեամբ չի հավատում այն ամենին, ինչով վարկաբեկում են հարուստ և հրապուրիչ մարդկանց: Այդ հասարակութիւնը լինազդաբար զգում է, որ շարժումներն ավելի կարևոր են, քան առաքինութիւնը, և, նրա կարծիքով, ամենահարգարժան մարդը շատ ավելի ցածր է գնահատվում, քան լավ խոհարար ունեցողը: Ի վերջո, երբ մեկին մարդ վատ ճաշով կամ անպետք գինիով է հյուրասիրում, շատ ողորմելի միսիթարանք է ասելը, թե նա անբասիր է անձնական կյանքում: Նույնիսկ մեծ առաքինութիւնները, ինչպէս մի անգամ նշեց լորդ Հենրին՝ այդ հարցը քննարկելիս, չեն քափում մարդու հանցանքը, եթե նա իր տանը չի հյուրասիրում բավականաչափ տաք ճաշով: Ի

պաշտպանություն այդ տեսակետի՝ շատ բան կարելի է ասել: Որովհետև լավ հասարակության մեջ իշխում են կամ պետք է իշխեն նույն օրենքները, ինչ որ արվեստում. էականը բացարձակապես ձևն է: Ձևին հարկավոր է տալ նշանակալից հանդիսավորություն և արարողության թատերականություն, ձևն իր մեջ պետք է ռոմանտիկ պիեսի կեղծությունը զուգակցի սրամտության և գեղեցկության հետ, որոնք այնպես գերում են մեզ այդ պիեսների մեջ: Միթե ձևացնելն այդքան մեծ մեղք է: Կարծում եմ՝ ոչ: Դա պարզապես մարդկային անձնավորությանը բազմազանություն տալու միջոց է:

Համենայն դեպս, այդպես էր Դորիան Գրեյի կարծիքը: Նա ապշում էր մարդկանց սահմանափակ հոգեբանության վրա, ովքեր մարդու «ես»-ը համարում են պարզ, մշտական, հուսալի և էությանը միատեսակ: Ըստ Դորիանի՝ մարդ արարածը բյուր կյանքով, բյուր զգայություններով բարդ, բազմաձև էակ է, որի մեջ դրված է մարդկային մտքերի և կրքերի անհասանելի ժառանգություն, ըստ որում՝ նույնիսկ մարմինը, վարակված է մեռած նախահայրերի հրեշային հիվանդություններով:

Դորիանը սիրում էր թափառել քաղաքից դուրս գտնվող իր տան սառը և մռայլ պատկերասրահում, դիտել այն մարդկանց դիմանկարները, որոնց արյունը հոսում է իր երակներում: Ահա Ֆիլիպ Հերբերթը, որի մասին Ֆրենսիս Օսբոնը իր «Հիշողություններ ելիզավետ թագուհու և Յակով թագավորի իշխանության օրերի մասին» գրքում պատմում է, որ «նա գեղեցկությամբ պալատի սիրելին էր, բայց գեղեցկությունը երկար չպահպանվեց»: Դորիանը մտածում էր, թե արդյոք իր կյանքը չի հանդիսանում Հերբերթի կյանքի կրկնությունը: Արդյոք նրանից ինչ-որ զարմանալի թունավոր մանրէ, մի մայմնից մյուսն անցնելով, չի հասել իրեն: Նրա թառամած գեղեցկության մշուշոտ իղձը չէր արդյոք հանկարծակի և

ստանց պատճառի Դորիանի մեջ խելահեղ աղոթք արթնացրել է։ Բեզիլ Հոլլուորդի արվեստանոցում, որն այնպես փոխեց իր սովորողը կյանքը։

Ահա ոսկեկար կարմիր բաժկոնակ հագած և ակննդազարդ թվկնոցը գցած՝ ոսկերիզ ժանյակներով և թեզանիքով կանգնած է պարոն Էտոնի Շերարդը, իսկ նրա ոտքերի տակ՝ սևով սյուծաթափայլ զենք ու զրահը։ Նրանից ինչ է ժառանգել ինքը։ Զուլաննա Նիապոլիտանացու այս սիրեկանը չի թողել արդյոք 'Իոլիանին որպես ժառանգություն մեղքեր և ամութ։ Միթե իր սուրբքները այդ մեռած մարդու սոսկ երագներն էին, որոնք յուսգործելու համարձակությունը նա չէր ունեցել։

Ահա խունացած կտավից Դորիանին է ժպտում լեղի Էլիզավետ Գևերեն։ Նրա գլխին ժանյակե գլխադիր է, հագինը՝ կտրված վարդագույն թևքերով մարգարտագործ իրանակալ։ Այժմ ձեռքում՝ ծաղիկ կա, ձախում՝ սպիտակ և կարմիր վարդերից արծնապակե մանյակ։ Նրա մոտ՝ սեղանին, դրված է մանդոլինա և խնձոր։ Սրաքիթ մաշիկների վրա շքեղ կանաչ վարդահանգույց կա։ Դորիանը գիտեր այդ կնոջ կյանքը և տուրքինակ պատմությունները նրա սիրեկանների մասին։ Այսօր նրա խառնվածքից ինչ էր ժառանգել ինքը։ Թվում էր՝ նրա ծանրացած կոպերով նշածն աչքերի հետաքրքրությամբ 'Իոլիանին են նայում։

Իսկ ինչ էր ժառանգել դիմափոշի ցանած կեղծամով և զվարճալի ճանճախալով Ուիլոուբից։ Որքան չար արտահայտություն ունի նա, որքան են մոռյլ, խոժոռ, արհամարհանքով սեղմված նրա հեշտասեր շուրթերը։ Նուրբ ժանյակի թևանիքները կիսով չափ ծածկել են ամբողջովին մատներով զարդարուն ոսկրոտ դեղին մատները։ Այդ XVIII դարի պճնամուր ճեղքատասարդ տաքիներին լորդ Ֆերրասի թևերն էր։

Իսկ երկրորդ լորդ Բիքինհեյմը, արքայազն ռեզենտի ամենաբուռն օրերի ընկերը և միասին Ֆիցհերբերթի հետ նրա զաղտնի ամուսնության վկաներից մեկը: Որքան հպարտ և գեղեցիկ է նա այդ շագանակագույն գանգուրներով և խրոխտ դիրքով: Նրանից ինչ կրքեր էր ժառանգել հետագա սերունդը: Ողջ աշխարհը նրան անարգ մարդ էր համարում: Նա գլխավորել էր Քարլթոն Հաուզի նշանավոր շվայտանքները: Կրծքին փայլում էր շքանշանը: Կողքին կախված էր սևագգեստ, բարակ շուրթերով, գունատ իր կնոջ դիմանկարը: Նրա արյունը նույնպես հոսում է իմ երակներում... Որքան զարմանալի է...- մտածում էր Դորիանը:

Ահա և մայրը՝ լեդի Համիլթոնի դեմքով և, կարծես, գինու մեջ թրջած շուրթերով... Դորիանը գիտեր, թե ինքն ինչ է ժառանգել մորից, նա ժառանգել էր գեղեցկություն և կրքոտ սեր ուրիշների գեղեցկության նկատմամբ: Մայրը Բաբուսի բրմուհու զգեստով ժպտում էր դիմանկարից: Մազերին դրված էին խաղողի տերևներ: Ձեռքի գավաթից թափվում էր բուսորագույն հեղուկը: Երեսի գույնը խունացել էր կտավի վրա, բայց խորունկ, կրակոտ աչքերը դեռ սքանչելի էին և, կարծես, հետևում էին որդուն ամենուր:

Սակայն մարդ նախահայրեր ունի ոչ միայն տոհմում, այլև գրականության մեջ, որոնք իրենց խառնվածքով և էությամբ թերևս ավելի հարազատ, իսկ ազդեցությամբ՝ ավելի մեծ են: Լինում էին պահեր, երբ Դորիան Գրեյին թվում էր, թե ամբողջ մարդկային պատմությունը պարզապես իր կյանքի արձագանքն է, ի հարկե, ոչ թե արդի իրականությամբ, այլ իր երևակայությամբ ստեղծած կյանքի, ինչպես պահանջում էին ուղեղն ու կրքերը: Նրան հասանելի էին բոլոր արտառոց և ահավոր պատկերները, որոնք անցել էին կյանքի բեմահարթակով, մեղքերը դարձել գայթակղիչ, չար և քնքուշ:

Ի վում էր, թե ինչ-որ խորհրդավոր ձևով նրանց կյանքը կապված է իր կյանքի հետ:

Հմայիչ վեպի հերոսը, որը մեծ ազդեցություն էր թույլ տալիս 'Խորիանի կյանքի վրա, նույնպես այդպիսի երևակայությամբ էր համակված: Յոթերորդ գլխում նկարագրվում է, թե նա ինչպես Տիրերիուսի կերպարանքով, կայծակից չշանթահարվելու համար դափնեպսակով զարդարված Կապրիում գտնվող պարտեզում նստել ու էլեֆանդիթի անամոթ գրքերն է կարդում, իսկ մոտով այս ու այն կողմ էին գնում ու գալիս թզուկներն ու սիրամարգերը, և սրնգահարն էլ ծաղրում էր յուրվառը խնկարկողին: Նա, ինչպես Կալիգուլան¹, ավտոտում հարյուցողությամբ էր զբաղվում կանաչ պարեգուտներով իր հեծյալների և ընթրում փղոսկրե մսուրքի մեջ ճակատը մարգարտազարդ ձիու հետ: Եղել է Դոմիցիան, թափառել է, հայելանման մայմարե միջանցքում և վայրենի հայացքով վնասել այն դաշույնի արտացոլումը, որ պետք է ընդհատի կյանքի ընթացքը, հիվանդացել է այն մարդկանց սարսափելի *taedium vitae* հիվանդությամբ, որոնց ոչինչ կյանքը չի մերժում: 'Կրկնում նստած՝ թափանցիկ զմրուխտի միջով նա հիանում էր սյունայի արյունալի սպանդով, իսկ հետո, մարգարտազարդ սյու պատգարակին բազմած, որը քաշում էին արծաթապայտ ջուլիները, նոնեիների ծառուղիով վերադառնում էր Ոսկե սյուլատը և լսում իրեն՝ կայսր Ներոնին, անիծող ամբոխի ձիջր: Նա եղել է նաև Հելիոգաբալ, որը, դեմքը ներկած, նստել է, կանանց հետ միասին ճախարակի մոտ և հրամայել, որ 'հարթագենից բերեն լուսնի աստվածուհուն և միստիկական սլակադությամբ նրան տան Արևին:

Դորիանը կարդում ու կարդում էր կրկին այդ ֆանտաստիկ պոլիսը և հաջորդ երկու գլուխները: որոնց մեջ, ինչպես գալ-

¹ Հռոմեական կայսր, Դեսպոտ (37-41):

մանալի գորգերի կամ ճարտարոճներն պատրաստած արծնապակիների վրա, պատկերված էին նրանց ահարկու և գեղեցիկ դեմքերը, որոնց Չարությունը, Արյունոռությունը և Ձանձրույթը դարձրել էին հրեշներ կամ խելագարներ: Ֆիլիպպոն՝ Միլանի դուքսը, սպանել էր կնոջը և շուրթերին լոսոոր թույն քսել, որպեսզի սիրեկանը ըմբոշխներ մահը անշունչ էակից, որին գգվել էր: Վենետիկցի Պիետրոարին հայտնի էր որպես Պավել Երկրորդ, բայց փառասիրությամբ տոգորված՝ հասել էր այն բանին, որ իրեն կոչեն «Ֆորմոզուս», այսինքն՝ «Գեղեցիկ»: Նրա՝ 200000 ֆլորին գնահատված թագը ձեռք էր բերվել սոսկալի մեղքի գնով: Ջան Մարիա Վիսկոնտին մարդկանց միշտ հալածում էր շներով, նրա սպանված դին վարդերով ծածկեց մի պոռնիկ, որը սիրում էր նրան: Չեզարե Բորշան սլանում էր, սպիտակ ձի հեծած, նրա հետ վարգում էր եղբայրասպանությունը՝ Պերրոտոյի արյան բծերը թիկնոցի վրա: Ֆլորենցիացի երիտասարդ կարդինալ-արքեպիսկոպոս Պիետրո Ռիարիոն՝ Սիքստո IV պապի որդին և սիրելին, որի գեղեցկությանը միայն նրա անառարկությունն էր հավասար, հավերժահարսերով ու մարդաձիերով զարդարուն սպիտակ և այլ մետաքսե վրանում ընդունեց Լեոնորա Արագոնցուն և կալուստիոնց ոսկեզօծել մի տղայի, որը խրախճանքի ժամանակ պետք է ներկայացներ Գանիմեդին՝ կամ Հիլասին²: Էզելինի մեղամաղձոտությունը ցրվում էր միայն մահվան տեսարանով. նա ուներ արյան մոլուցք, ինչպես շատերը կարմիր գլխու մոլություն. ասում են, թե նա սատանայի որդին է և սևփական հոգու վրա վեգ խաղալիս խաբել է հորը: Ջան Բատտիստա Չիբոն, որն իրեն ծաղրանքով կոչում էր Անմեղ,

1 Գեղեցիկն այս անի հունակ. դից. մեք. որին փախցրել էր Ջեսը և էր մատուցակը դարձրել:

2 Հերկուլեսի սիրելին:

յու նույն այն Չիբոն էր, որի հյուծված զարկերակներն մեջ
կրկաւ բժիշկը ներարկեց երեք պատանու արյուն: Ռիմինիի
տիպակալ Սիգիզմոնդո Մալատեստան՝ Իզոտտայի սկսե-
կանք, որն անձեռոցիկով խեղդեց Պոլիսենային և զմրուխ-
տու գավաթով թունավորեց Ջիներա դ'Էստին, հանուն իր
խաղատառակ կրքերի հեթանոսական տաճար կառուցեց,
ուրուղ կատարվում էին քրիստոնեական ժամերգություններ:
Նորա պատկերը այրեցին Հռոմում՝ որպես աստծո և մարդու
բռնամու: Կարլ VI այնքան կրքոտորեն էր սիրում եղբոր կնոջը,
որ մի բորոտ նրան խելագարություն կանխագուշակեց, իսկ
կրթ ուղեղն արդեն ցնորված էր, հանգստացնում էին միայն
մոսիմոլական խաղաթղթերով, որտեղ նկարված էին սիրո,
մոսիմոլան և խելագարության տեսարաններ: Եվ, վերջապես,
գոտարված բաճկոնակը հագին, ալմաստազարդ գլխարկը
գեղեցիկ գանգուրներին դրած Գրիֆոնետտո Բայոնին՝ Աս-
տուրելի և իր հարսնացուի՝ Սիմոնետտոյի և, նրա մանկա-
վկիկ մարդասպանը, այնքան էր գեղեցիկ, որ Պերուջայի
կոլլին հրապարակում մեռնելիս նույնիսկ նրան ատողներն
սորոսավում էին, իսկ Ատալանտան, որն անիծել էր նրան,
օրհնում էր:

Նրանց բոլորի մեջ կար մի սոսկալի ձգողական ուժ: Դո-
րիանը նրանց զիշերները տեսնում էր երագում, իսկ ցերեկը
նրան ահաբեկում էր երևակայությունը: Վերածնունդի դա-
յալաբանը գիտեր թունավորման տարօրինակ ձևեր, թունա-
վորում էին սաղավարտի կամ վառվող ջահի միջոցով, ասեղ-
նուղործած ձեռնոցով կամ թանկարժեք հովհարով, ոսկեգոծ
վկախոտ գնդիկով կամ սաթե մանյակով: Իսկ Դորիան Գթեր
խուսավորվել էր գրքով: Լինում էին պահեր, որ նա չարիքը
համարում էր միջոց, որով կարող էր իրականացնել այն, ինչը
համարում էր կյանքի գեղեցկություն:

ԳԼՈՒԽ XII

Դա նույնմերի իննին էր՝ իր ծննդյան 38-ամյակի նախօր-
յակին, հետագայում Դորիանը որքան հաճախ էր այդ հիշում:

Երեկոյան ժամը տասնմեկին նա տուն էր վերադառնում
լորդ Հենրիի մոտից, որտեղ ծաշել էր: Դորիանը փաթաթվել
էր թավ մուշտակի մեջ, որովհետև ցուրտ և մառախլապատ
գիշեր էր: Գրովենորսկիների և Սաուս Օդլի-սթրիթի անկյունում
նրա կողքից լսավարի միջով մի մարդ անցավ՝ մոխրագույն
վերարկուի օձիքը բարձրացրած: Ձեռքին ճամպրուկ կար:
Դորիանը ճանաչեց նրան: Դա Բեգիլ Հոլլուորդն էր: Չգիտես
ինչու՝ հանկարծ նրան վախի տարօրինակ զգացում համակեց:
Դորիանը ձևացրեց, թե չի ճանաչում և աճապարեց տան
ուղղությամբ:

Բայց Հոլլուորդը տեսել էր նրան: Դորիանը լսեց, թե
ինչպես նա կանգ առավ, ապա շտապեց իր ետևից: Մի քանի
րոպե անց Բեգիլի ձեռքը Դորիանի ուսին էր:

- Դորիան, ինչպիսի երջանիկ պատահականություն: Ժա-
մը իննից ես Ձեզ էի սպասում Ձեր գրադարանում: Վերջապես
լսեցի Ձեր հոգնած սպասավորին և ասացի, որ ինձ թողնի,
իսկ ինքը գնա քնի: Գիշերվա գնացքով Փարիզ եմ մեկնում,
շատ էի ուզում նախքան գնալս Ձեզ տեսնել: Երբ Դուք անցաք
լուս կողքով, ճանաչեցի, ավելի շուտ՝ ճանաչեցի Ձեր մուշտակը,
բայց լրիվ համոզված չէի: Միթե Դուք ինձ չճանաչեցիք:

- Այս մառախուղում, սիրելի Բեգիլ: Ես նույնիսկ Գրովենոր
պուրակը չեմ ճանաչում: Կարծեմ, տանս մոտակայքում է,
բայց բոլորովին համոզված չեմ: Ափսոս, որ գնում եք, ես Ձեզ
չեմ տեսել մի ամբողջ հավիտենականություն: Հուսով եմ,
շուտ կվերադառնաք:

- Ո՛հ, Անգլիայից հեռանում եմ վեց ամսով: Մտադիր եմ
Փարիզում արվեստանոց վարձել և փակվել այնտեղ, մինչև

չվերջացնեմ մի մեծ նկար, որ մտահղացել է: Բայց լմ գործերի մասին չէի ուզում խոսել: Ահա և Ձեր շքամուտքը, թույլ տվե՛ք մի յուպեով ներս մտնել: Ասելիք ունեմ:

- Անչափ ուրախ կլինեմ: Բայց գնացքից չն՞ք ուշանա,- անվտուրթորեն ասաց Դորիանը և, բարձրանալով շեմին, բացեց դուռը:

Մառախուղի միջից երևացող լապտերի լույսի տակ Հոլ-յուորդը նայեց ժամացույցին:

Դեռ հսկայական ժամանակ ունեմ,- պատասխանեց նա,- գնացքը մեկնում է տասներկուսն անց քառորդ, իսկ հիմա դեռ տասնմեկն է: Չէ՞ որ ես ակումբ էի գնում հենց Ձեզ գտնելու, երբ հանդիպեցինք: Ուղեբեռով չեմ զբաղվելու, ձուր իրերն արդեն ուղարկել եմ: Միայն այս ճամպրուկն եմ վերցնում, քսան թուպեում հեշտությամբ կհասնեմ Վիկտորիա կայարանը:

Դորիանը նայեց նրան և ժպտաց:

Ահա թե ինչպես է ճանապարհորդում հայտնի նկարիչը՝ ձևերին ճամպրուկ և աշնանային թեթև վերակու: Շուտ մտեք, թե չ, հիմա մառախուղը ներս կլցվի: Եվ, խնդրեմ, լուրջ նյութի մասին չխոսեք: Մեր օրերում ոչ մի բան լուրջ չէ: Համենայն դեպս, չպետք է լուրջ լինի:

Հոլլուորդը տարուբերեց գլուխը և Դորիանի ետևից մտավ գրադարան: Մեծ բուխարիկում բոցկլտում էր կրակը: Լուսպերը վառվում էին: Գունավոր փայտի դրվագազարդ փուր սեղանին դրված էին սոդայաջրի սիֆոնով լի հոլան-դական արծաթե թաս և բյուրեղյա խոշոր գավաթներ:

Տեսնո՞ւմ եք, Ձեր սպասավորն աշխատել է, որ էս ինձ զրկում ինչպես տանը: Ինչ ուզում էի, բերում էր, նույնիսկ՝ Ձեր տոմսալավ գլանակները: Շատ հյուրասեր է և ինձ ավելի և, դուր զալիս, քան ֆրանսիացին: Ի միջի այլոց, ո՞ր է նա:

Դորիանը թորվեց ուսերը:

- Կարծեմ ամուսնացավ լեդի Ռադլիի սպասուհու հետ և նրան տևողվորեց Փարիզում՝ որպես անգլիական դերձակուհի: Անգլիամոլությունն այնտեղ, ասում են, շատ մույա է: Հիմարություն է ֆրանսիացիների կողմից, այնպես չէ: Ի միջի այլոց, նա վատ սպասավոր չէր: Երբեք ինձ դուր չէր գալիս, բայց բողոքելու առիթ չի տվել: Երբեմն մարդու գլուխ անհեթեթ բաներ են մտնում: Նա շատ նվիրված էր և կարծես հեռանալիս ավստոսում էր անչափ:

- Մի բաժանկ էլ սողայով բրենդի, թե՛ կնախորհորեիք ռեյնվայն սելերյան ջրով: Ես միշտ ռեյնվայն եմ խմում: Կարծեմ՝ մի շիշ սլետք է լինի կողքի սենյակում:

- Շնորհակալ եմ, ոչինչ չեմ ուզում,- ասաց նկարիչը և, հանելով գլխարկն ու վերարկուն, շարտեց անկյունում դրած ճամպուրակի վրա,- ահա թե ինչ, Դորիան, ես Ձեզ հետ լուրջ խոսակցություն ունեմ: Մի կնճռոտվեք այդպես: Առանց այդ էլ շատ դժվար է խոսել:

- Իսկ ինչի՞ մասին է,- անհամբեր գոչեց Դորիանը՝ ընկղմվելով բազմոցի մեջ,- հուսով եմ՝ խոսքն իմ մասին չէ: Այսօր հոգնել եմ ինքս ինձանից, կուզեի ուրիշի մասին խոսել:

- Խոսքը Ձեր մասին է,- պատասխանեց Հոլլուորդը լսատու-թյամբ,- և պետք է անպայման ասեմ: Ես Ձեզանից կխլեմ ընդամենը կես ժամ:

- Կես ժամ,- քրթմնջաց Դորիանը և հառաչելով գլանակ վառեց:

- Ես շատ բան չեմ հարցնելու, Դորիան, և, վերջապես, հանուն Ձեր սիրո եմ խոսում: Ինձ թվում է՝ Դուք պետք է իմանաք, որ Ձեր մասին ահավոր բաներ են խոսում Լոնդոնում:

- Այդ մասին ես ոչինչ չեմ ցանկանում իմանալ: Սիրում եմ ուրիշի մասին բամբասանք լսել, իսկ ասեկոսենքն իմ

մասին ինձ չեն հետաքրքրում: Նրանք զուրկ են նորություն
կրապույրից:

- Նրանք պետք է Ձեզ հետաքրքրեն, Դորիան: Յուրաքան
չուր բարեկիրթ մարդու համար թանկ է իր անունը: Դուք
չկ'ը ցանկանա, որ մարդիկ Ձեզ կոչեն ստոր և անարգված:
Ինտրկե, Դուք ունեք դիրք, հարստություն և այլն: Բայց դիրքն
ու հարառությունն ամեն ինչ չեն: Հասկացեք, ես բոլորովին
չեմ հավատում այդ լուրերին: Համենայն դեպս, չեմ կարող
հավատալ, երբ տեսնում եմ Ձեզ: Մեղսանքն այնպիսի բան է,
որ պոռճմվում է մարդու երեսին: Դա հնարավոր չէ թաքցնել:
Մարդիկ հաճախ խոսում են գաղտնի արատների մասին:
Բայց գաղտնի արատներ գոյություն չունեն: Երբ մարդն
ուրատ ունի, դա ինքնին արտահայտվում է բերանի գծերում,
հուրացած կռիվների վրա, նույնիսկ երևում է ձեռքերից: Ան-
պաշտարի մեկը, չեմ ասի թե ով, բայց Դուք նրան լավ գի-
տեմ, եկավ ինձ մոտ իր դիմանկարը պատվիրելու: Մինչ այդ
կրկնեք ես նրան չէի տեսել, ոչ էլ որևէ բան էի լսել նրա մասին,
չուսյած հետո շատ բան լսեցի: Առատաձեռն զին առաջարկեց,
բայց հրաժարվեցի: Նրա մատների ձևի մեջ ինչ-որ բան կար,
որն անտանելի թվաց ինձ: Իսկ այժմ արդեն գիտեմ, որ իմ
պայտությունն ինձ չի խաբել: Նրա կյանքն ահավոր է: Իսկ
'Դուք, Դորիան, վճիտ, պայծառ, անմեղ դեմք ունեք և հրաշալի,
չխամրող երիտասարդություն: Ես չեմ կարող հավատալ որ-
և, պայտության՝ Ձեր հասցեին: Սակայն հիմա Ձեզ շատ
ուսկավ եմ տեսնում, իմ արվեստանոցը չեք գալիս, և բա-
նի որ ես հեռու եմ Ձեզանից և զգվելի խոսակցություններ
եմ լսում Ձեր մասին, ուղղակի չգիտեմ՝ ինչ ասեմ: Ասացե՛ք:
'Դորիան, ինչո՞ւ այնպիսի մարդը, ինչպիսին դուքս Քերվիլին
է, հեռանում է սենյակից, երբ դուք ներս եք մտնում: Ինչո՞ւ
Լուսկոնի շատ բարեկիրթ մարդիկ ոչ Ձեր տուն են գալիս, ոչ

1,1 Ձեզ հրավիրում: Դուք մտերիմ էիք լորդ Սթենվիլի հետ: Լնցած շաբաթ ես հրավիրված էի ճաշի, այնտեղ հանդիպեցի նրան: Պատահեց, որ խոսակցության մեջ Ձեր անունը հիշվեց՝ կապված մանրանկարների հետ, որ փոխ էինք տվել Դադլիի ցուցահանդեսին: Սթենվիլին արհամարհանքով ծամածոեց շուրթերը և ասաց, որ Դուք, թերևս, բարձր գեղարվեստական ճաշակ ունեք, բայց այնպիսի մարդ եք, որի հետ չի կարելի ծանոթացնել ոչ մի պարկեշտ աղջկա, իսկ ողջամիտ կանանց նույնիսկ պատվաբեր չէ Ձեզ հետ գտնվել միևնույն սենյակում: Ես նրան հիշեցրի, որ Դուք իմ ընկերն եք և բացատրություն պահանջեցի: Եվ նա տվեց: Պատմեց բոլորի ներկայությամբ: Սարսափելի էր: Ինչո՞ւ Ձեր ընկերությունն այդպես ճակատագրական է երիտասարդների համար: Թշվառ գվարդիականը, որն ինքնասպանություն կատարեց, Ձեր մտերիմ ընկերն էր: Միստեր Շենրի Աշթոնի անունն արատավորվեց և ստիպված հեռացավ Անգլիայից: Դուք անբաժան էիք միմյանցից: Իսկ ի՞նչ կասեք Ադրիան Սինգլթոնի և նրա ահավոր վախճանի մասին: Ի՞նչ կասեք լորդ Քենթի միակ որդու և նրա կարիերայի մասին: Երեկ Սենթ-Ջեյմս-սթրիթում ես հանդիպեցի նրա հորը: Ամոթից ու վշտից կարծես կուչ էր եկել: Իսկ Փերթի երկուսսարդ դուքսը: Ի՞նչ կյանք է հիմա վարում: Ո՞ր բարեկիրթ մարդն այժմ նրա հետ ընկերություն կանի:

- Վերջացրե՛ք, Բեգիլ: Այնպիսի բաներ եք ասում, որոնց մասին ոչինչ չգիտեք,- կծելով շուրթերը՝ ասաց Դորիանը՝ ձայնի խոր արհամարհանքով: - Դուք հարցնում եք, թե ինչո՞ւ է Քերվիքը հեռանում սենյակից, երբ ես ներս եմ մտնում, որովհետև ես նրա մասին ամեն ինչ գիտեմ, իսկ նա ոչինչ չգիտի իմ մասին: Ինչպե՞ս կարող է մաքուր լինել մեկի կյանքը, որի երակներում այդպիսի արյուն է հոսում:

‘Իոսի ինձ հարցնում եք Հենրի Աշթոնի և երիտասարդ յոուրս Վեյքի մասին: Միթե ես եմ սովորեցրել Աշթոնին վատ ուղալքների, իսկ դուքսին՝ անառակության: Եթե Վեյքի իմևար որդին ամուսնանում է փողոցայինի հետ, ես ինչ մեղք ունեմ, Ադրիան Սինգլթոնի գլխի տներն եմ. ինչ է, որ մուրհակի տակ ընկերոջ ստորագրությունն է դնում: Ես գիտեմ, թե ինչպես են բարբաջում Անգլիայում: Քաղքենիները առատ ճաշասեղանների շուրջը պարծենում են իրենց բուրդագիտական նախապաշարմունքներով և փսփսում են ուղիականների, այսպես կոչված, «անառակության» մասին՝ անուշադր ցույց տալ, որ իրենք միշտ բարձր հասմարակության մեջ են լինում և շատ մտերիմ են նրանց հետ, ում զրպարտում են: Այս երկրում բավական է, որ մարդ խելք ունենա կամ խնդալիկ լինի, և ահա լեզուները կսկսեն չարախոսել: Իսկ խրեմք ինչպիսի կյանք են վարում, նրանք, ովքեր ուզում են ցույց տալ իրենց կարծեցյալ առաքիությունները: Սիրելիս, ‘Իոսի մոռանում եք, որ մենք ապրում ենք երկերեսանիների հարազատ երկրում:

• Դորիան,- գոչեց Հոլլուորդը,- հարցը դրանում չէ: Ես գիտեմ՝ Անգլիան բավականին վատն է, հասարակությունն՝ ուռուցեղ: Հենց այդ պատճառով էլ ուզում եմ, որ Դուք լավ լինեք: Մինչդեռ Դուք էլ այդպիսին չեք: Մենք իրավունք ունենք մարդու մասին դատել մյուսների վրա թողած ազդեցությամբ: Իսկ Ձեր ընկերները, ինչպես երևում է, կորցրել են ուղիական, բարության, մաքրության ամեն մի զգացում: ‘Իոսի նրանց ներարկել եք հաճույքի խելահեղ ցանկություն: Երանք գլորվել են մինչև հատակը: Այդ Դուք եք նրանց առաջնորդել: Այո՛, Դուք, և այնպես եք ժպտում, կարծես իչինչ չի եղել... Ես դեռ ավելի վատթարը գիտեմ: Գիտեմ՝ Հարրիսը և ‘Իոսի անբաժան եք: Եթե ոչ ուրիշը, ապա գոնե հենց այդ

պատճառով չպետք է արատավորեիք նրա քրոջ անունը:

- Զգույշ, Բեգիլ, շատ եք առաջ գնում:

- Ես պետք է ասեմ ամեն ինչ, իսկ Դուք պետք է լսեք: Այո, լսեցիք: Մինչև Ձեր ծանոթությունը լեդի Գվենդոլենի հետ, ոչ ոք նրա մասին ոչ մի վատ խոսք չէր ասել: Իսկ այժմ Լոնդոնում կգտնվի վայելուչ մի կին, որ իրեն թույլ տա կառքով զբոսնել նրա հետ Պարկում: Ինչո՞ւ է նույնիսկ նրա երեխաներին արգելված ապրել իր հետ: Եվ այդ բոլորը չէ... Ձեր մասին դեռ ուրիշ շատ բաներ են պատմում: Պատմում են, թե ինչպես են վաղ առավոտյան Ձեզ տեսել անառականոցից դուրս գալիս, և ինչպես եք Դուք գողեցող մտել Լոնդոնի ամենակեղտոտ հետնախորշերը: Ասացե՛ք՝ ճիշտ են այդ բոլորը: Միթե ինտարվոր է, որ ճիշտ լինեն: Երբ առաջին անգամ ես լսեցի այդ ամենը, ծիծաղեցի: Հիմա սարսռում եմ: Իսկ ի՞նչ է կատարվում քաղաքից դուրս գտնվող Ձեր տանը: Դորիան, եթե իմանայիք ինչեր են ասում Ձեր մասին: Չէի ասի, թե քարոզ կարդալ չեմ ուզում: Հիշում եմ՝ մի անգամ Հարրին ասում էր, որ իր վրա քարոզիչի պարտականություն վերցրած յուրաքանչյուր մարդ սիրում է հենց առաջին խոսքից հայտարարել, որ դա ինքն անում է առաջին ու վերջին անգամ, բայց հետո անընդհատ լսալստում է խոստումը: Այո, ես ուզում եմ քարոզ կարդալ: Ուզում եմ՝ Դուք այնպիսի կյանք վարեք, որ բոլորն էլ Ձեզ հարգեն: Ուզում եմ, որ ունենաք մաքուր անուն և լավ համբավ: Ուզում եմ՝ հեռու մնաք ահավոր մարդկանցից, որոնց հետ ընկերություն եք անում: Այդպես մի թոթվեք Ձեր ուսերը: Անտաքեր մի եղեք, խնդրում եմ: Դուք զարմանալի ազդեցություն ունեք: Թող այդ ազդեցությունը բարի և ոչ թե վնասակար լինի: Ձեր մասին ասում են, որ Դուք իսկույն փչացնում եք նրան, ում հետ մտերմանում եք, որ բավական է մոտենք մի տուն, անմիջապես խայտառակում եք այդ տունը:

Չգիտեմ՝ այդպէս է, թե ոչ: Ինչ իմանամ: Բայց, ասում են, որ այդպէս է: Ձեր մասին այնպիսի բաներ են պատմում, որոնց ես երբեմն չեմ կարող չհավատալ: Լորդ Գլոսթերը, որն Օքսֆորդի ուսանողական իմ ամենալավ ընկերներից մեկն է, ինձ ցույց տվեց մի նամակ, որ գրել էր նրա կինը իրեն՝ ամառանոցում միայնակ մեռնելիս: Ամենասոսկալի՝ խուսափանքի մեջ, որ կարդացել եմ երբևէ, Ձեր անունն էլ, հիշատակված: Ես նրան ասացի, դա անկարելի է, որ ես Ձեզ շատ լավ գիտեմ, Դուք նման բանի ընդունակ չեք: Բայց խոսեցիք ձեզ գիտեմ, հիմա ինքս եմ ինձ հարց տալիս: Բայց ուրիշ հարցին պատասխանելու համար պետք է ասեա՞ծ լինե՞ի Ձեր հոգին...

Հոգին, - բարձրանալով բազմոցից՝ քրթմնջաց Դորիան 'Իրեյր' սարսափից գրեթե գունատված:

Այո՛, - անհուն թախիծով մտալլ պատասխանեց Հոլլուոր-դը: Տեսնել Ձեր հոգին: Բայց դա կարող է միայն աստված:

Դառն արհամարհանքի ծիծաղ դուրս թռավ Դորիանի ժպիտներից:

Կարող եք տեսնել և Դուք, հենց այս երեկո, - գոչեց նա, լուսնայն ճանկելով սեղանից: - Եկեք: Դա Ձեր սեփական ձեռքի գործն է: Ինչո՞ւ չտեսնեք: Իսկ հետո, եթե ուզեք, կարող եք ուրիշ մասին պատմել աշխարհին: Ոչ ոք չի հավատա Ձեզ: Իսկ երբ, հավատան, ապա ավելի շատ կհիանան ինձանով: Ես Ձեզանից լավ եմ ճանաչում մեր դարաշրջանը՝ չնայած նրա մոտին ձանձրալի կերպով այդքան շատ եք բարբաջում: Եկեք, տեսնու՞մ: Բավական է ինչքան շատախոսեցիք բարոյալքման մոտին: Այժմ Դուք այդ կտեսնեք երես առ երես:

Նրա յուրաքանչյուր բառը հնչում էր ինչ-որ խելահեղ հույսորտությամբ: Նա քմախաճ երեխայի պէս համառորեն ոտ-րը խփում էր գետնին: Ահավոր ուրախություն էր զգում, որ

մեկը պետք է կիսի իր գաղտնիքը, պետք է կիսի այն մարդը, ով նկարել է դիմանկարը. դա իր խայտառակության ակունքն է, և թող մինչև կյանքի վերջը տանջվեր իր արածի նողկալի հիշողությունից:

- Այո,- շարունակեց նա և, ընդհուպ մոտենալով Բեզիլին, նայեց նրա խոժոռ աչքերի մեջ,- ես Ձեզ ցույց կտամ իմ հոգին: Դուք կտեսնեք այն, ինչ Ձեզ թվում է, թե միայն աստված կարող է տեսնել:

Հուլիուորդը ընկրկեց:

- Սրբապղծություն է, Դորիան, չհամարձակվեք այդպես խոսել,- գոչեց նա,- դրանք սոսկալի և իմաստազուրկ բարբաջանքներ են:

- Կարծում եք,- Դորիանը կրկին ծիծաղեց:

- Իհարկե, իսկ այն ամենը, ինչ ասացի, ասացի միայն Ձեր բարին կամենալով: Գիտեք, որ ես Ձեզ համար միշտ հավատարիմ ընկեր եմ եղել:

- Մի՛ դիպչեք ինձ: Ինչ ասելու եք, շուտ վերջացրեք:

Նկարչի երեսին ջղաձգության ցավ երևաց: Մի պահ նա վարանեց՝ համակված կարեկցանքի խոր զգացումով: Վերջապես, ինչ իրավունք ունի միջամտելու Դորիան Գրեյի կյանքին: Եթե Դորիանը կատարել է պտտվող լուրերի թեկուզ տասներորդ մասը, ուրեմն կարելի է պատկերացնել, թե ինչպես է տանջվում: Հետո շտկվեց, մոտեցավ բոլսարուն և երկար նայեց բոցկլտացող կրակին ու նրա եղյամանման մոխրին:

- Դեհ, սպասում եմ, Բեզիլ,- ասաց նա խիստ և հստակ ձայնով:

Նկարիչը շրջվեց:

- Իմ ասելիքը հետևյալն է, և Դուք պետք է պատասխանեք այդ հարցին: Եթե ասեք, որ բոլոր սոսկալի մեղադրանքները

բացարձակապես կեղծիք են՝ սկզբից մինչև վերջ, ևս
կիսավատամ Ձեզ: Ժխտեցեք, Դորիան, ժխտեցեք: Մինչև Դուք
չևր տեսնում, թե ինչպես եմ տանջվում: Աստված իմ, ևս չեմ
ուզում մտածել, թե Դուք վատն եք, թե Դուք անարգված և
կոյրծանված մարդ եք:

Դորիայն Գրեյը ժպտաց և արհամարհանքով ծամածուկ
յուրթեղը:

- Բարձրանանք վերև, Բեզիլ,- հանգիստ ասաց նա,-
այնտեղ ես պահում եմ իմ կյանքի օրագիրը, որտեղ արտա-
յայտվում է յուրաքանչյուր օրը: Բայց օրագիրը երբեք դուրս չի
լիկվում սենյակից, հենց այնտեղ էլ գրվում է: Ես Ձեզ դա
յուրյց կտամ, եթե գաք ինձ հետ:

- Լավ, գնանք, եթե ուզում եք, Դորիան: Միևնույն է, ևս
սուրբ ուշացել եմ գնացքից: Բայց ոչինչ, վաղը կգնամ: Միայն
թե ինձ չստիպեք այս գիշեր կարդալ օրագիրը: Ես ուզում եմ
յուր իմ հարցի ուղղակի պատասխանը:

Պատասխանը կստանաք վերևում: Այստեղ չեմ կարող
ուսլ: Դուք հարկադրված չեք լինի երկար կարդալու:

ԳԼՈՒԽ XIII

Դորիանը դուրս եկավ սենյակից և բարձրացավ սանդուղքներով: Բեզիլը հետևում էր նրան: Բարձրանում էին զգույշ, ինչպես գիշեր ժամանակ քայլողները՝ բնագդաբար աշխատելով աղմուկ չբարձրացնել: Լամպը տարօրինակ սովերներ էր գցում պատերին և աստիճաններին: Ուժեղ քամուց ինչ-որ զնգզնգացին լուսամուտի ապակիները:

Երբ հասան վերնահարկ, Դորիանը լամպը դրեց հատակին և, հանելով բանալին, պտտեց փականքքում:

- Համառորեն ուզում եք իմանալ ճշմարտությունը, Բեզիլ,- ցածրաձայն հարցրեց նա:

- Այո:

- Հիանալի է,- ժպտալով պատասխանեց Դորիանը, ապա ավելացրեց կոպտությամբ,- աշխարհում Դուք միակ մարդն եք, որ իրավունք ունեք իմ մասին ամեն ինչ իմանալու: Դուք ավելի մեծ դեր եք խաղացել իմ կյանքում, քան կարծում եք,- նա վերցնելով լամպը, բացեց դուռը և ներս մտավ: Քամու հոսանքից լամպը բոցկլտաց մուգ նարնջագույն բոցով: Դորիանը դռնաց:

- Դուռը փակեք,- շնչաց նա՝ լամպը դնելով սեղանին:

Հուլիսի 1-ը տարակուսանքով շուրջը նայեց: Երևում էր՝ տարիներ ի վեր սենյակում չէին ապրել: Ֆլամանդական խոնացած որմնագորգ, վարագույրով ծածկած ինչ-որ նկար, իտալական հին սնդուկ, գրեթե դատարկ գրապահարան և աթոռ ու սեղան. ահա բոլորը, ինչ կար սենյակում: Մինչ Դորիան Գրեյը վառում էր բուխարու վրայի կիսայրած մոմը, Բեզիլը նկատեց, որ ամեն ինչ ծածկված է փոշով, իսկ գորգը ծակծկված է: Մի մուկ վազեց տախտակադրվածի ետևում: Խոնավության հոտ էր փչում:

- Այսպես, ուրեմն, կարծում եք միայն աստված կարող է

տեսնել հոգին, Բենգիլ: Քաշեք վարագույրը և կտեսնեք իմ հոգին:

Չայնր սառն էր և դաժան:

‘Դուք խելագար եք, Դորիան, կամ խաղում եք.– քրթմնջալց ոլլուորդը՝ խոժոռվելով:

Չնր քաշում: Այն դեպքում ինքս կքաշեմ.– ասաց Դորիանը և, սրկելով վարագույրը ձողից, շարտեց հատակին:

Սարսափի ճիչ թռավ նկարչի շուրթերից, երբ աղոտ լույսի տակ տեսավ այլանդակ դեմքը, որ քմծիծաղով ժպտում էր կոտովից: Արտահայտության մեջ ինչ-որ բան կալ, որ նրա մեջ տհաժություն և հակակրանք առաջացրեց: Օ՛, բարի երկինք, իր դիմաց Դորիան Գրեյի սեփական դեմքն էր: Արտամենայնիվ, ահավոր փոփոխությունը չէր ոչնչացրել կրթչալի գեղեցկությունը: Որոշ չափով դեռ պահպանվել էր նուրբացող մազերի ոսկե փայլը, զգայուն շուրթերի ալ գույնը, չմտծ աչքերի սքանչելի կապույտը, դեռ լրիվ չէին անցել նորր զծագրված բթանցքերի և գեղակազմ վզի ազնիվ գծերը... Այո՛, Դորիանն ինքն էր, բայց ո՛վ էր նկարել: Կարծես ռոմուսեց սեփական վրձնի գործը և պատվիրված շրջանակը: Սխալը հրեշավոր էր, այնուամենայնիվ, սարսափը պատեց նրան: Ճանկեց այրվող մոմը և պահեց դիմանկարի դիմաց: Հախ անկյունում վառ կարմիր երկար տառերով գրված էր իր անունը:

‘Կա ինչ-որ նողկալի’, ստոր և անամոթ ծաղրանկար էր: Այ՛, դա երբեք ինքը չէր նկարել: Եվ սակայն իր իսկ ձեռքի ու փոստանքն էր: Հոլլուորդը ծանաչեց և նույն ակնթարթին դուռը, որ արյունը սառչում է երակներում: Իր սեփական սկարթ... Ինչ էր նշանակում դա... ինչո՞ւ էր փոխվել: Նա շրջվեց և խելագար հայացքով նայեց Դորիանին: Բերանը ծոմովել էր, իսկ չորացած լեզուն կարծես ի վիճակի չէր որևէ բան

ալոտարներէ: Ձեռքը տարավ դեպի ճակատը, որը թրջված էր սառը քրտինքով:

Դորիանը, բուխարուն հենված, դիտում էր նրան տալօրինակ արտահայտությամբ, որ լինում է խաղով կլանված մեծ դերասանի դեմքին: Ո՛չ անկեղծ վիշտ կար, ո՛չ էլ ուրախության արտահայտություն: Պարզապէս հանդիսատեսի թուփն հետաքրքրություն, թերևս աչքերի շողացող հաղթանակով: Վերարկուից հանել էր ծաղիկը և հոտ էր քաշում կամ ձևացնում էր, թե հոտ է քաշում:

- Ինչ է նշանակում սա,- վերջապէս գոչեց Հոլլուորդը- նրա ձայնը սուր և արտասովոր հնչեց իր իսկ ականջում:

- Տարիներ առաջ, երբ ես դեռ փոքր էի,- ասաց Դորիան Գրեյը՝ ճմրթելով ձեռքի ծաղիկը,- Դուք հանդիպեցիք ինձ, շոյեցիք ինձ և սովորեցրիք հպարտանալ իմ գեղեցկությամբ: Մի օր էլ ծանոթացրիք Ձեր ընկերոջ հետ, և նա բացատրեց երկտասարդության հրաշքը. Դուք ավարտեցիք իմ դիմանկարը, որը բացահայտեց գեղեցկության հրաշքը: Մի խելահեղ ականթարթ (մինչև հիմա էլ դեռ չգիտեմ՝ զոջամ, թե՞ ոչ), ևս ցանկություն հայտնեցի... կամ, թերևս, աղոթք էր դա...

- Հիշում եմ, ծի, ինչքան լավ եմ հիշում... անկարելի է... Սենյակը խոնավ է, և կտավը բորբոսնել է: Կամ, գուցե, թունավոր հանքային քայքայող նյութ է օգտագործվել ներկերում: Բայց Ձեր ասածը անկարելի է...

- Ահ, ինչն է անկարելի,— քթմնջաց Դորիանը և, մոտենալով լուսամուտին, ճակատը սեղմեց սառը, քրտնած ապակուն:

- Դուք ասում էիք, թե դիմանկարը ոչնչացրել եք:
- Ճիշտ չէ, նա է ոչնչացրել ինձ:
- Չեմ կարող հավատալ, թե դա իմ նկարն է:
- Միթե չեք կարող տեսնել Ձեր իդեալն այնտեղ,- դառնու-

բայտմբ ասաց Դորիան Գրեյը:

Իմ իդեալը, ինչպես Դուք եք անվանում...

Ոչ, ինչպես Դուք էիք անվանում:

Ինչ կա որ: Այդտեղ ամոթալի բան չկա, ես չեմ ամաչում
դրանից: Դուք ինձ համար այնպիսի իդեալ էիք, ինչպիսին ես
այլու չեմ հանդիպի կյանքում: Իսկ սա սատիրի դեմք է:

Սա իմ հոգու դեմքն է:

Հիսուս Քրիստոս, ահա թե ես ինչ եմ պաշտել: Դա
տոտանայի աչքեր ունի:

Մեզանից յուրաքանչյուրի մեջ կ'երկինք, կ'դժոխք կա...
Ինչիկ,- գոչեց Դորիանը՝ բռն հուսահատությամբ:

Հոլլուորդը կրկին շրջվեց դեպի նկարը և երկար-երկար
նայեց:

Աստված իմ,- բացականչեց նկարիչը,- ուրեմն, ահա,
բա՛ն Դուք ինչ եք արել Ձեր կյանքի հետ, և եթե դա ճիշտ է,
այդ դեպքում Դուք նույնիսկ շատ ավելի վատն եք, քան
սրտակերպեցնում են Ձեր հակառակորդները:

Նա մոտեցրեց մոմը նկարին և ուշադիր գննեց: Արտաքինից
բխում էր, թե ոչ ոք կտավին ձեռք չի տվել, մնացել էր ճիշտ
աղյուս, ինչպես թողել էր: Հավանաբար, սոսկալի նեխումը
նկարից էր սկսվել: Ներքին կյանքի, արտասովոր արագացող
մեղմության բորոտությունը դանդաղ կրծել էր այն: Դա ավելի
գալիստիկ էր, քան դիակի նեխումը թաց գերեզմանում:

Հոլլուորդի ձեռքը դողաց, մոմակալից մոմն ընկավ հատա-
կին և թշնամեց: Նա ոտքով սեղմեց, հանգցրեց, ապա թուլացած
նստեց սեղանի մոտ դրած երեքուն աթոռի վրա և երեսը
համկեց ձեռքերով:

Ո՛ր, բարձր աստված, ինչպիսի դաս էր սա, Դորիան:
Ինչպիսի ահավոր դաս էր:

Պատասխան չկար. լուսամուտի մոտից լսվում էր միայն

‘Դորիանի հեկեկանքը:

– Աղոթեցեր, Դորիան, աղոթեք, – շնչաց նա:– Ինչպե՞ս էին մեզ այդ սովորեցրել մանկության օրերին. «Մեզ փորձության մի տանիր, հապա չարեն մեզ ազատե... Թողություն տուր մեր մեղքերին»: Եկեք աղոթենք միասին: Ձեր փառամոլության աղոթքը լսվեց, թերևս լսվի նաև զղջման աղոթքը: Ես Ձեզ չափազանց շատ էի երկրպագում: Եվ դրա համար պատժված եմ: Դուք ինքներդ էլ էիք Ձեզ անչափ սիրում: Երկուսս էլ պատժված ենք:

Դորիան Գրեյը դանդաղ շրջվեց և նայեց նրան արտասովախառն աչքերով:

– Չափազանց ուշ է, Բեզիլ, – ասաց նա հեծկլտալով:

– Երբեք ուշ չէ, Դորիան: Եկեք չոքենք և փորձենք հիշել որևէ աղոթք: Ինչ–որ տեղ չկամր այսպիսի տող՝ «Եթե անգամ Ձեր մեղքերը կարմիր էլ լինեն, ինչպես արյուն, ես կդարձնեմ ձյան նման սպիտակ»:

– Այժմ դրանք ինձ համար դատարկ խոսքեր են:

– Լռեցե՛ք, մի խոսեք այդպես: Առանց այդ էլ շատ եր մեղանչել կյանքում: Աստված իմ, միթե չեք տեսնում, թե այդ անիծյալ նկարն ինչպես է կտավից նայում մեզ:

Դորիան Գրեյը նայեց դիմանկարին և հանկարծ համակվեց ատելության անզուսպ զգացումով Բեզիլ Հոլլուորդի նկատմամբ, կարծես այդ զգացումը նրան ներշնչվեց կտավի տեսիլքից, որը քմծիծաղող շուրթերով փսփսաց նրա ականջին: Ցանցի մեջ ընկած գազանի կատաղություն առաջացավ նրա մեջ, և ատեց սեղանի մոտ նստած մարդուն, ատեց ավելի շատ, քան որևէ բան աշխարհում:

Նա ոչինչ չտեսնող հայացքով շուրջը նայեց: Ինչ–որ բան շողաց ներկած սնդուկի վերևում: Աչքերը կանգ առան նրա վրա: Նա գիտեր, որ դա դանակ է, որն ինքը թերել էր մի քանի

որ առաջ՝ պարան կտրելու համար և մոռացել է, որ այդտեղ:

Դանդաղորերն Դորիանը շարժվեց դեպի դանսալը: Եվ երբ սպիկն Հոլլուորդը ետևում էր, ճանկեց ու ետ շրջվեց խակույն՝ ոլլուորդը շարժվեց՝ ցանկանալով, կարծես, վեր կենալ սպիկի մոտ: Դորիանը ցատկեց և դանակը խրեց նրա ականջակալի մեծ զարկերակի մեջ և, սեղմելով գլուխը սեղանին, կրկին ու կրկին հարվածեց դանակով:

Լավեց խուլ տնքոց, և արյունախեղդ մարդու սոսկալի խախտոց: Երեք անգամ նա տարօրինակ շարժումներով օդում բառիահարեց ջղաձիգ ձեռքերը: Դորիանը երկու անգամ ևս հարվածեց դանակով: Բայց Հոլլուորդը այլևս չէր շարժվում: Ինչ որ բան սկսեց կաթել հատակին: Գլուխը դեռևս սեղանին սեղմած՝ նա մի պահ սպասեց: Ապա շարտեց դանակը և լսողությունը լարեց: Ոչինչ չէր լսվում, բացի արյան կաթկթոցից հնոմաշ գորգի վրա: Նա բացեց դուռը և կանգնեց սանդուղքի հարթակին: Տանը լռություն էր տիրում: Շրջակայքում ոչ ոք չկար: Մի քանի վայրկյան հենվեց բազրիքին և նայեց ներքև՝ խափարի մթին խորությանը: Հետո հանեց բանալին և, վիսրայառնալով սենյակ, դուռը ներսից կողպեց:

Սպանվածը դեռ նստած էր աթոռի վրա՝ սեղանին հակված պլլուով, դուրս ընկած կուղով և անբնականորեն երկար լուսուկներով: Եթե չլինեիր ծոծրակի վերքը և սեղանի վրա դռնուղ տարածվող լերդացած արյան մուգ լիժը, կարելի էր կարծել, թե Հոլլուորդը պարզապես քնած է:

Ինչքան արագ կատարվեց այդ բոլորը: Դորիանը զարմանալիորեն հանգիստ էր: Մոտենալով լուսամուտին՝ նա բացեց ու կռավ պատշգամբ: Քամին ցրել էր մառախուղը, երկինքը, ետևում էր հսկայական սիրամարգի պոչի՝ ընդելուզված լյուր ուսկաչ աստղերով: Նա ներքև նայեց, տեսավ ոստիկանին, որ շրջում էր թաղամասում և լապտերի երկար լույսն ուղղում

խաղաղ տների վրա: Անկյունում առկայծեց և անհայտացավ
երկանիվ կառքի մորեգույն լույսը: Ցանկապատի երկայնքով
բայլում էր մի կին՝ ծածանվող շալը ուսերին: Մերթ ընդ մեռյա-
նա կանգ էր առնում և ետ նայում: Հետո սկսեց երգել խռպուս
ձայնով: Ոստիկանը մոտեցավ նրան, ինչ-որ բան ասաց: Նա
ծիծաղելով շարունակեց օրորվել: Քամու ուժեղ ալիք անցավ
հրապարակով: Գազի լապտերները բոցկլտացին կապտա-
վուն երանգով: Մերկ ծառերի երկաթանման սև ճյուղերը
տալուրեքվեցին: Դորիանը դողաց և, ներս մտնելով, փակեց
լուսամուտը:

Մոտենալով դռանը, պտտեց բանալին և բացեց: Նույնիսկ
հայացքը չգցեց սպանվածի վրա: Նա գգում էր, որ գլխավորյա
կատարվածիմասինչմտածելնէ: Ընկերը՝ իր թշվառությունների
հանցավորը, որ նկարել էր ճակատագրական դիմանկարը,
հեռացել էր կյանքից: Ահա և բոլորը:

Դորիանը դուրս գալիս հիշեց լամպը: Դա մուգ արծաթից
շինած, սև փայլուն պողպատե արաբանալսշ զարդանկար-
ներով մավրիտանական զարմանալի հազվագյուտ գործ էր՝
ծածկված փիրուզյա խոշոր քարերով: Լամպի անհայտանալը
գրադարանից սպասավորը կարող էր նկատել և հարցնել, թե
որտեղ է: Դորիանը մի պահ վարանեց, ապա վերադառնալով՝
վերցրեց լամպը սեղանից: Նա ակամա նայեց անշունչ դիակին:
Որքան խաղաղ էր: Մահվան ինչ սոսկալի սպիտակություն
էր իջել երկար ձեռքերին: Նա մոմապատկերի զարհուրելի
տեսիլքի էր նման:

Կողպելով դուռը՝ գաղտագողի իջավ ներքև: Ուռքի տակ
երբեմն ճոռում էին աստիճանները, կարծես, տնքում էին
ցավից: Մի քանի անգամ կանգ առավ, սպասեց... Ո՛չ, ամեն
ինչ խաղաղ էր, միայն իր ոտնաձայնն էր հասնում ականջին:

Երբ նա մտավ գրադարան, անկյունում տեսավ ճամպրուկն

ու վերադարձին: Հարկավոր էր թաքցնել: Բացեց պատի վաղուտն՝
սրահարանը, որտեղ պահված էր ծառվելու կոստյումը, և
ստիպեց դրեց: Հետո կարող էր հեշտությամբ այրել: Նայեց
մոմացույցին: Երկուսից քսան թուպե էր պակաս:

Նախտեց և սկսեց մտածել: Ամեն տարի, գրեթե ամեն ամիս,
սուրբապետի հանցանքի համար, որ հենց նոր ինքը կատարեց,
մոլորկանց կախաղան են բարձրացնում Անգլիայում: Օդում
ստորածված էր մարդասպանության մոլուցքը... Թերևս ինչ-որ
սուրբապետ աստղ չափազանց շատ էր մոտեցել երկրին... Եվ
սուրբապետ ինչ հանցանշաններ կային իր դեմ: Բեզիլ Հոլլոուոր-
դի իր տնից դուրս էր եկել ժամը 11-ին: Ոչ ոք չէր տեսել նրան
կրկին վերադառնալիս: Բոլոր սպասավորները գրեթե Սելբի
Ռոյալում էին, իսկ անձնական սպասավորը քնած էր: Փարիզ:
Այո: Բեզիլը Փարիզ էր գնացել կես գիշերվա գնացքով,
ինչպես մտադիր էր: Ջարմանալի գուսպ սովորություններով՝
նա այնքան ինքնամոլոր էր, որ ամիսներ կանցնեին, մինչև
սկսեին կասկածներ արթնանալ: Ամիսներ... Իսկ հետքերը
կուրսի է ոչնչացնել շատ ավելի շուտ:

Հանկարծ գլխում միտք փայլատակեց: Նա հազավ
մուշտակն ու գլխարկը և ելավ նախասենյակ: Այա հապաղեց,
կրկնեց ոստիկանի ծանր ու դանդաղ քայլերը սալահատակին
և տեսավ լապտերի լույսի արտացոլումը լուսամուտի վրա:
Հույսը պահած սպասեց: Մի քանի թուպե անց նա դուռը
բացեց, դուրս եկավ փողոց և զգուշությամբ նորից փակեց
դուռը իր ետևից: Այա սկսեց զանգահարել: Հինգ թուպե հետո
հայտնվեց քնատ, կիսահագնված սպասավորը:

- Ներեցեք, Ֆրենսիս, որ արթնացրի Ձեզ,- ասաց, Դո-
րիանը՝ ներս մտնելով,- բանալին տանն էի մոռացել: Ժամը
թույլման է:

Երկուսն անց քսան, սըր,- կկոցած աչքերը ժամացույցին

ուղղած՝ պատասխանեց սպասավորը:

- Երկուսն անց քսան, ինչ ուշ է: Վաղը ժամը իննին կարթնացնեք ինձ, գործ կա:

- Շատ լավ, սըր:

- Երեկոյան ոչ ոք չի եկել:

- Միստեր Հոլլուորդն էր եկել, սըր: Սպասեց մինչև տասն-մեկը, հետո գնաց գնացքին հասնելու:

- Օ՛, ափսոս, չտեսա: Որևէ լուր չթողեց:

- Ո՛չ, սըր: Միայն ասաց՝ եթե չհանդիպի Ձեզ ակումբում, կգրի Փարիզից:

- Լավ, Ֆրենսիս, չմոռանաք արթնացնել ժամը իննին:

- Շատ լավ, սըր:

Սպասավորը, քստքստացնելով գիշերային մաշիկները, միջանցքով գնաց:

Դորիան Գրեյը շարտեց գլխարկը և վերարկուն սեղանին և գրադարան մտավ: Քառորդ ժամ ետ ու առաջ էր քայլում սենայկում և, կրծոտելով շուրթերը, խորհում: Ապա դարակից վերցրեց Կապույտ գիրքը և սկսեց թերթել: Ահա, գտա. «Ալան Քեմպբել-Մեյֆեր, Հերթֆորդ, 152»: Այո՛, դա իր ուզած մարդն էր:

ԳԼՈՒԽ XIV

Հաջորդ առավոտ՝ ժամը իննին, սպասավորը, մի գավաթ ռոբուստ սկուտեղին դրած, ներս մտավ և բացեց վահանայական դռները: Դորիանը՝ աջ կողքին պառկած, ձեռքն այտի տակ, բռնած էր մուշ-մուշ՝ խաղից կամ դասերից հոգնած երեխայի պես: Արթնացնելու համար սպասավորը ստիպված երկու անգամ շարժեց նրա ուսը, իսկ երբ Դորիանը բացեց աչքերը, շուրթերին այնպիսի աննշմար ժպիտ էր խաղում, կարծես կոտորակի երազի մեջ լիներ: Սակայն այդ գիշեր նա ոչ մի կոտորակ տեսել: Նրա քունը չէր վրդովել ո՛չ որևէ թուսավոր և ո՛չ էլ որևէ մռայլ տեսիլք: Նա ուղղակի ժպտում էր, ժպտում էր, որովհետև երիտասարդությունը միշտ ժպտում է ամենից պատճառի, դա երիտասարդության ամենագլխավոր կոտորույթներից մեկն է: Դորիանը շրջվեց և, հենվելով արմունկին, սկսեց կում-կում ըմպել շոկոլադը: Նոյեմբերյան մեղմ արևը թափանցում էր սենյակը: Երկինքը ջինջ էր: Օդում գլուխվում էր կենսատու ջերմություն. կարծես մայիսյան ամառվոտ լիներ:

Առաիծառաբար գիշերվա դեպքերը արյունաթաթախ տրեք-բուլ, անշշուկ սողոսկեցին նրա ուղեղը և վերակենդանացան գոթուրբելի պարզությամբ: Նա դողաց՝ հիշելով տանջալից օրրոտմաները, և մի պահ կրկին նրա մեջ արթնացավ Բեզիլ Ռոլլոնորդի նկատմամբ այն անմեկնելի ատելությունը, որից դուրսված նա սպանություն գործեց: Դորիանը կատաղությունից նստիսկ սառեց:

Ապանվածը դեռ այնտեղ՝ վերևում, նստած էր: Եվ այժմ արդեն՝ արևի պայծառ լույսի տակ: Սարսափելի էր: Այդպիսի նուրբ լույսի տեսարանները ոչ թե ցերեկվա, այլ խավարի համար էին:

Դորիանն զգաց, որ ինքը կհիվանդանա կամ կլսելագարվի,

կյան շատ մտածի: Մեղքեր կան, որոնց հիշողությունն ավելի զմայլիչ է, քան իրագործելը, կան տարօրինակ հաղթանակներ, որոնք հազեցնում են ոչ այնքան կրքերը, որքան հայարտությունը և ավելի մեծ ուրախություն են պատճառում բանականությանը, քան ընձեռել են կամ կարող են երբևէ ընձեռել զգայություններին: Իսկ սա մի մեղք էր, որ հարկավոր էր վանել հիշողությունից, ընդարմացնել խաշխաշով և խեղդել, քանի դեռ ինքը չի խեղդել քեզ:

Երբ ժամացույցը խփեց ինն անց կես, Դորիանը շփեց ծակատը և ընդոստ վեր կացավ անկողնուց: Նա նույնիսկ սովորականից ավելի խնամքով հագնվեց, առանձնահատուկ ուշադրությամբ ընտրեց քորոցը և փողկապը, մի քանի անգամ փոխեց մատանին: Նախաճաշին նույնպես երկար ժամանակ հատկացրեց՝ համտեսելով զանազան կերակրատեսակներ և զյուրեցելով սպասավորի հետ նոր շքագցեսուների մասին, ուր մտադիր էր պատվիրել Սելբիի բոլոր սպասավորների համար: Նայեց առավոտյան փոստը: Մի քանի նամակ կարդաց ժպտալով, երեքը՝ ծանծրայթով: Իսկ մեկը կարդաց մի քանի անգամ՝ դժկամ ու դեմքի տաղտկալի արտահայտությամբ, ապա պատռեց: «Ահավոր բան է կնոջ հիշողությունը», ինչպես մի անգամ ասել էր լորդ Հենրին:

Մի գավաթ սև սուրճ խմելուց հետո անձեռոցիկով դանդաղ մաքրեց շուրթերը, նշան արեց, որ սպասավորը չգնա և, մոտենալով գրասեղանին, նստեց, երկու նամակ գրեց: Մեկը գրպանը դրեց, մյուսը մեկնեց սպասավորին:

– Ֆրենսիս, սա տարեք Հերթֆորդ–սթրիթ 152, իսկ եթե միստեր Քեմբելը Լոնդոնում չլինի, իմացեք նրա հասցեն:

Մենակ մնալով՝ Դորիանը գլանակ վառեց և թղթի վրա սկսեց նկարել նախ ծաղիկներ և մի քանի ճարտարապետական դրվագներ, ապա մարդկային դեմքեր: Հաճկարժ նկատեց,

ույ նկարած բոլոր դեմքերը զարմանալիորեն նման են Միգիլ Հոլլուորդին: Մոայլվեց և, վեր կենալով, մոտեցավ յլուսպահարանին, վերցրեց առաջին պատահած գիրքը, ուրոշեց չմտածել կատարվածի մասին, մինչև դրա ծայրահեղ անսիրաժեշտությունը չլինի:

Դորիանը մեկնվեց բազմոցի վրա և նայեց գրքի վերնագրին: Դա Գոտյեի «Արծնապակիներ և զարդաքանդակներ» գիրքն է, Շամպանտիեի շքեղ հարտարակությամբ, ճապոնական թղթի վրա, Ժակ-Մարի փորագրություններով, կիտրոնաօրանաչավուն կաշվե կազմի վրա նկարված էին ոսկեգոծ փոփոխակներ և կետագծային նոնաքարեր: Դա Ադրիան Սին-յուսթոնն էր նվիրել իրեն: Թերթելով էջերը՝ հայացքը կանգ առավ Լասների ձեռքի մասին պոեմի վրա. շիկակարմիր տոլիսմազով ծածկված և «doigt de faune»¹, սառը դեղին ձևերը «du supplice encore mal lavée»²: Դորիանը թեթևակի յողալով նայեց իր սպիտակ մոմանման նուրբ մատներին և յարունակեց կարդալ, մինչև հասավ հետևյալ հիանալի տուրլերին Վենետիկի մասին.

Ջինչ ալիքների թեթև հուզանքում,
Բուստալճակում հայելանման,
Ծիծաղում է, տես, ճերմակ-վարդագույն
Ադրիատիկի քնքուշ Վենեթան:

Ծովի հարթության վրա գեղատես,
Ուր ալիքներն են երգում ծփանուտ,
Աղջըկական կույս ստինքների պես,
Դառնում են ահա գմբեթները սուրբ:

¹ Այնուամարդի մատներով (ֆր.):

² Դա չէ, ի մաքրվել հանցանքի հետքերից (ֆր.):

Փոքրիկ մակույկն է մոտենում կամաց,
“Պարանը սյունին նետում անհամբեր,
Ու վարդագունող հենքի դեմ դիմաց
Բարձրանում եմ ես սանդուղքներն ի վեր:

Ինչ զմայելի բանաստեղծություն է... Կարդում ես, և թվում է, թե թիավարում ես վարդամարգարտագույն քաղաքի կանաչավուն ջրերում՝ ծածանվող վարագույրներով արծաթաքիթ սև գոնդոլի մեջ նստած:

Նույնիսկ բանաստեղծության տողերը թվում էին փիրուզագույն ուղիղ գծեր, որոնք ակոսվում էին նավակի ետևից Լիդո թիավարելիս: Գույների հանկարծակի լուցկոտումը հիշեցնում էր ծիածանաքարե վզիկներով թռչուններին, որոնք ճախրում էին մեղրահացի պես ոսկեփայլ զանգակատան շուրջը կամ վնհապանծ գեղանագույնամբ շորորում կիսամթին փոշոտ կամարասրահներով: Գլուխը բարձին դրած՝ կիսախուփ աչքերով Դորիանը նորից ու նորից կրկնում էր ինքն իրեն.

Ու վարդագունող շենքի դեմ-դիմաց
Բարձրանում եմ ես սանդուղքներն ի վեր:

Ամրողջ Վենետիկը այս երկու տողում էր: Հիշեց այնտեղ անցկացրած աշունը և հրաշալի սերը, որ մղում էր նրան ամեն տեսակի խելահեղության: Ռոմանտիկան ամենուրեք է: Բայց Վենետիկը, ինչպես և Օքսֆորդը, մնացել էր նրա համար որպես ռոմանտիկայի հենք, իսկ իսկական ռոմանտիկայի համար հենքն ամեն ինչ է կամ՝ գրեթե ամեն ինչ:

Միառժամանակ Դորիանի հետ Վենետիկում էր նաև Բեզիլը: Նա խելագարվում էր Տինտորետտոյի համար: Խեղճ Բեզիլ... Ինչպիսի սոսկալի մահ...

Դորիանը հառաչեց և որպեսզի մոռացության տա այդ

մտքերը, կրկին սկսեց ընթերցել Գոտյեի բանաստեղծությունները: Նա կարդաց Զմյուռնիայի մի փոքրիկ սրճարանի մասին, որտեղ ծիծեռնակները անվերջ ներսուղուրս են անում լուսամուտից, ուր հաջիները նստած քաշում են իրենց սալե-տուր-ողորմյաները, ուր չալմայավոր վաճառականները ծխում են երկար, ծոպկավոր ծխամորժեր և լուրջ գրուցում միմյանց հետ: Կարդում էր համաձայնության հրապարակում կանգնած Կոթողի մասին, որն իր միայնակ օտարության մեջ գրանխոս սպցունք էր թափում՝ թախծելով արևի և լոտոսածածկ շոգ Լեզոսի մասին՝ ձգտելով դեպի սֆինքսների աշխարհը, ուրտեղ ապրում են վարդագույն եգիպտահավերը, ոսկեզօծ մույլիլներով սպիտակ գառնանգոնները և բյուրեղյա փոքրիկ աչքերով կոկորդիլոսները, որ սողում էին գոլորշիացող կամաչ տիղմի վրա:

Հետո Դորիանն սկսեց խորհել այն բանաստեղծությունների մասին, որոնք, համբույրներով ողողած մարմարից երաժշտություն քամելով, պատմում են այն արտասովոր արձանի մասին, որ Գոտյեն համեմատում է կոնտրալտո ձայնի հետ և սովորաբար «monstre charmant»¹, և որը հանգչում է Լուվրի հյուանաքարե սրահում:

Իայց քիչ անց գիրքն ընկավ Դորիանի ձեռքից: Տագնապող սարսափի զգացումը համակեց նրան: Իսկ եթե հանկարծ Ալան Ջեմփերելը Անգլիայում չլինի ... Մինչև նրա վերադարձը ուսուցիչն ժամանակ կանցնի: Կամ գուցե Ալանը մեյժի տուն գալ: Ինչ կանի այն ժամանակ: Չէ որ յուրաքանչյուր բոպեն ուրիասական է:

Հինգ տարի առաջ ինքն ու Ալանը շատ մտերիմ էին, գրեթե անբաժան: Հետո այդ ընկերությունը հանկարծ ընդհատվեց: Իսկ այժմ, երբ հանդիպում էին բարձր հասարակության մեջ:

1. մայիսի հրեշ (Ֆր.):

միայն Դորիան Գրեյն էր ժպտում, իսկ Ալան Քեմփրելը՝ երբևր՝

Քեմփրելը չափազանց խելացի և բարձրաշնորհ երիտասարդ էր, բայց կերպարվեստից ոչինչ չէր հասկանում և նրան փոքրիշատե պատկերացում ուներ պոեզիայի գեղեցկության մասին, ապա միայն Դորիանի շնորհիվ: Նրա միակ կիրքը գիտությունն էր: Քեմփրիջում նա ժամանակի մեծ մասն անց էր կացնում լաբորատորիայում և գերազանց ավարտեց բնական գիտությունների կուրսը: Այժմ հրապուրված էր քիմիայով, ուներ սեփական լաբորատորիա, որտեղ փակվում էր օրն ի բուն՝ ի մեծ հեճուկս մոր, որը երագում էր որդուն պառլամենտական դիրք և քիմիկոսի մասին աղոտ պատկերացում ուներ, նա կարծում էր, թե քիմիկոսը դեղագործի նման բան է:

Այնուամենայնիվ, քիմիան չէր խանգարում Ալանին նաև հիանալի երաժիշտ լինել: Նա ջութակ ու դաշնամուր շատ ավելի լավ էր նվագում, քան սիրողների մեծամասնությունը: Հենց երաժշտությունն էլ նրա և Դորիան Գրեյի մտերմության առիթն էր հանդիսացել, երաժշտությունը և այն անմեկնելի հմայքը, որ օգտագործում էր Դորիանը ցանկանալուն պես, իսկ հաճախ էլ՝ առանց գիտակցելու: Նրանք առաջին անգամ հանդիպել էին լեդի Բերկշիրի տանը մի ելուեկո, երբ այնտեղ նվագում էր Ռուբինշտեյնը, իսկ հետո միշտ միասին լինում էին օպերայում և ամենուր, որտեղ կարելի էր լսել լավ երաժշտություն:

Նրանց մտերմությունը տևեց տասնութ ամիս: Քեմփրելը միշտ լինում էր մերթ Սելբիում, մերթ Գրովենոր-Սկվերում: Ինչպես շատերի, այնպես էլ նրա համար Դորիանը կյանքի ողջ գեղեցիկի և սքանչելիքի մարմնացումն էր: Ոչ ոք դեռ չէր տեսել որևէ ընդհարում Դորիան Գրեյի և Քեմփրելի միջև: Բայց հանկարծ մարդիկ նկատեցին, որ նրանք հանդիպելիս

կուլիվ են միմյանց հետ խոսում, և Քեմիբելը, կարծես, միշտ ուրիշատում էր ավելի շուտ հեռանալ որևէ երևկույթից, որտեղ ներկա էր նաև Դորիան Գրեյը: Ալանը շատ էր փոխվել, երբևէս գուրմանալիորեն մեղամաղձոտ էր դառնում, և թվում էր, թե նույնիսկ այլևս երաժշտություն չի սիրում. համերգների չէր գնում և երբեք չէր համաձայնում նվագել՝ արդարանալով, ուր կլանված է գիտությամբ և երաժշտությամբ զբաղվելու ժամանակ չունի: Իրոք, դա ճիշտ էր: Ալանն օրեցօր ավելի ու ավելի էր գրավվում կենսաբանությամբ, և նրա անունը մի քանի անգամ արդեն երևացել էր գիտական ամսագրերում՝ ուր? հետաքրքիր փորձերի հետ կապված:

Անիս հենց այդ մարդուն էր Դորիան Գրեյն սպասում յուսին մեկ անգամ նայելով ժամացույցին: Ժամանակն անցնում էր, նա սարսափելի սկսում էր հուզվել: Վերջապես վեր կացավ և մեծ-մեծ քայլերով ետ ու առաջ արեց սենյակում՝ փոնդակում փակված գեղեցիկ գազանի նման: Նրա ձեռքերը գուրմանալիորեն սառը-սառն էին:

Միպսումը դառնում էր անտանելի: Ժամանակը կարծես ոչ թե գնում, այլ սողում էր կապարե ոտքերով, մինչդեռ Դորիանին թվում էր, թե ինքը մոլեգին հողմի թևերով սլանում է դուրս խավար անդունդի եզրը: Նա գիտեր, թե այնտեղ ինչ է սպասվում իրեն, պարզորոշ տեսնում էր այդ և դողալով խոնավ ձևերը սեղմում էր այրվող կոպերին՝ ցանկանալով կարծես ցուրտի մեջ ձգմել աչքերը և զրկել իրեն տեսողությունից ու նույնիսկ՝ ուղեղից: Բայց ապարդյուն: Ուղեղը սնվում էր մեղմական պաշարով և ուժգնորեն աշխատում էր, իսկ երևակայությունը, սարսափից դառնալով ավելի ձկուն, ջղաձգվում էր և գալար-գալար լինում, ինչպես կենդանի էակը, որ սուր փոփոխությամբ պարում էր այլանդակ տիկնիկի պես հարթակի վրա՝ փոքր տալով ատամները շարժվող դիմակի տակից:

Հետո հանկարծ ժամանակը կանգնեց: Այո՛, այդ կույր, դանդաղաշարժ սողունը դադարեց արդեն նաև շարժվելուց: Եվ հենց որ ժամանակը մեռավ, սարսափելի մտքերը սրընթաց սկսեցին առաջ սլանալ՝ այլանդակ ապագան հանելով գերեզմանից և ցույց տալով Դորիանին: Նա հայացքը սևեռեց ապագային և սարսափից քարացավ:

Վերջապես դուռը բացվեց, և ներս մտավ սպասավորը: Դորիանը նրան հառեց իր ապակիացած աչքերը:

– Միստր Քեմփբելը, սըր,– հայտնեց սպասավորը:

Թեթև հառաչանք դուրս թռավ Դորիանի չորացած շուրթերից, նրա այտերի գույնը նորից տեղն եկավ:

– Անմիջապես ներս հրավիրեք, Ֆրենսիս:

Դորիանն զգում էր, որ արդեն սթափվել է: Փոքրոգության նուպան անցել էր:

Սպասավորը խոնարհվեց և դուրս եկավ: Մի քանի րոպե անց ներս մտավ Ալան Քեմփբելը՝ մոայլ, խիստ գունատ, ածխանման մազերն ու թուխ հոնքերը ավելի շատ էին ընդգծում նրա գունատությունը:

– Ալան, որքան բարյացակամ եք: Շնորհակալ եմ, որ եկար:

– Գրե՛յ, ես որոշել էի այլևս ոտք չդնել Ձեր շենք: Բայց Դուր գրել էիք, որ կյանքի և մահվան հարց է...

Նրա ձայնը սառն էր և խիստ: Խոսում էր ընդհատ–ընդհատ: Սևեռուն, զննող հայացքում զգացվում էր արհամարհանյ Դորիանին դիմելիս: Ձեռքերը կարակուլե վերարկուի գրպա–նում էին և, կարծես, չնկատեց Դորիանի մեկնած ձեռքը:

– Այո՛, Ալան, կյանքի ու մահվան հարց է, և այն էլ ոչ թե՛ մեկ, այլ՝ երկու մարդու: Նստեցե՛ք:

Քեմփբելը նստեց սեղանի մոտ, իսկ Դորիանը՝ նրա դիմաց: Նրանց աչքերը հանդիպեցին: Դորիանի հայացքում անսահման վիշտ կար: Նա գիտեր, թե ինչ ահավոր բան է

սյուսորաստվում ասելու:

Մի րոպե լարված լռությունից հետո նա հենվեց սևդանին և ուխույց խոսել շատ հանդարտ, դիտելով յուրաքանչյուր խոսքի սուղեկցությունը Ալանի դեմքին:

Ալան, այս տան վերին կողպած սենյակում, որտեղ ինձնից լուռի ոչ ոք չի մտել, սեղանի մոտ նստած է մի դիակ: Նա մտնացել է սրանից տասը ժամ առաջ... Մի ցնցվեք և այդպես մի նայեք... Թե ով է այդ մարդը, ինչո՞ւ է մահացել, ինչպե՞ս է, մտնացել, Ձեզ չի վերաբերում: Ձեր անելիքը հետևյալն է...

Լոնցենք, Գրեյ: Այլևս ոչինչ չեմ ուզում լսել: Ճիշտ եք տառապում, թե ոչ, ինձ համար միևնույն է: Ես վճռականապես հրաժարվում եմ խառնվել Ձեր գործերին: Ձեր սոսկալի գաղտնիքները պահեք Ձեզ համար, նրանք ինձ այլևս չեն հետաքրքրում:

Ալան, Դուք ուզեք-չուզեք այդ գաղտնիքը պետք է իմանա՞տ: Չափազանց ցավում եմ, Ալան, բայց ինչ արած: Դուք միակ մարդն եք, որ կարող եք ինձ փրկել: Ես ստիպված եմ ձեզ իրազեկ դարձնել այդ գործին, ուրիշ ելք չկա: Ալան, Դուք գիտնական եք, քիմիայի և այլ գիտությունների մասնագետ: Այսին, Դուք պետք է ոչնչացնեք այն, ինչ վերևում է, պետք է ոչնչացնեք այնպես, որպեսզի ոչ մի հետք նրանից չմնա: Այդ մարդուն ոչ ոք չի տեսել իմ տունը մտնելիս: Բոլորն էլ համոզված են, որ հիմանափարիզում է: Նրա բացակայությունը չի նկատվի մի քանի ամիս: Իսկ երբ արդեն նկատվի, նրանից ալուսող ոչ մի հետք չպետք է գտնվի: Ալան, Դուք պետք է նյութ և նրան պատկանող իրերը մի բուռ մոխրի վերածեք, որ կարողանամ քամուն տալ:

Դուք խելագարվել եք, Դորիան:

Ա՛հ, վերջապես Դուք ինձ Դորիան անվանեցիք: Հենց այդպես էի սպասում:

- Դուք խելագար եք, լսում եք, խելագար, եթե Ձեր մտային անցնում է, թե թեկուզ մատս կշարժեմ Ձեզ օգնելու համար: Եթե Դուք խելագար չլինեիք, ինչպես կարող էիք անել այդ հրեշավոր խոստովանությունը: Ես չեմ ցանկանում խառնովկայո՞ գործին, ինչպիսին էլ ուզում է լինի: Միթե Դուք կարծում եք, թե ես Ձեզ համար կկործանեմ իմ համբավը: Իմ ինչ գույան է, թե ինչ սատանայական գործեր եք բռնել:

- Դա ինքնասպանություն էր, Ալան:

- Այդ դեպքում ես ուրախ եմ Ձեզ համար: Բայց ո՞վ նրան դրդեց այդ, ինքնասպանությանը: Դուք, իհարկե:

- Ուրեմն, Դուք հրաժարվում եք ինձ օգնելուց:

- Իհարկե, հրաժարվում եմ: Ես բացարձակապես Ձեզ հետ ընդհանուր ոչինչ ունենալ չեմ ուզում: Թող խայտառակվու Ձեզ, ինձ համար միևնույն է: Դուք արժանի եք դրան: Ես նույնիսկ ուրախ եմ Ձեր խայտառակության համար: Ինչպես եք համարձակվում ինձ, հատկապես ինձ խնդրել խառնվելու այդ զարհուրելի գործին: Կարծում էի, թե Դուք շատ լավ եք ճանաչում մարդկանց: Ձեր բարեկամ լորդ Հենրի Ուոթթոնը, Ձեզ շատ բան է սովորեցրել, բայց հոգեբանություն, տեսնում եմ, չի սովորեցրել: Ես նույնիսկ մատս մատիս չեմ խփի Ձեզ համար, ոչ մի բան ինձ չի կարող ստիպել օգնության գալ Ձեզ: Դուք սլսալ հասցեով եք եկել, Դորիան: Դիմեք ձեր ընկերների օգնությանը, բայց ոչ ինձ:

- Ալան, սպանություն է: Ես եմ սպանել նրան: Դուք չգիտեք, թե որքան եմ տառապել ես նրա պատճառով: Եթե իմ կյանքը այսպես է դասավորվել և ոչ թե ուրիշ կերպ, ապա այդ մարդու հանցանքն ավելի մեծ է, քան խեղճ Հարրիինը: Գուցե ինքը չէր էլ ուզում այդ բանը, բայց այդպես դուրս եկավ:

- Մարդասպանություն: Տեր իմ աստված, ահա թե ինչի եք հասել: Դորիան, իմ գործը չէ: Բայց, միևնույն է, Ձեզ

Կենդանաբանները: Յուրաքանչյուր ոճրագործ անսպասելի ուժով, Երևանում է թույլ տալիս, և ինքն իրեն մատնում: Այնուամենայնիվ, ես գործ չունեմ:

«Ինչու է գործ ունենաք: Սպասեցե՛ք, սպասեցե՛ք մի րոպե: Ես ինչ էլ չեմ, միայն լսեցե՛ք, Ալան: Ես Ձեզ խնդրում եմ՝ միայն գլխավոր փորձ կատարել: Դուք լինում եք հիվանդանոցում, դիտարկում եք հիվանդանոցում և Ձեր կատարած գարեջրանոցներից մեկը ուզում: Եթե զգվելի դիտարկում կամ գարեջրանոցի լիարժեքությունը տեսնե՛ք այդ մարդուն արդյան հոսքի հոսքի փոփոխություն ունեցող թիթեղապատ սեղանի վրա, պարզապես կդիտե՛ք՝ որպես հետաքրքիր փորձի առարկա՝ Դուք այդ կանե՛ք նույնիսկ առանց կնճռոտվելու: Մեր մոտեցում էլ չէր անցնի, թե Դուք ինչ-որ վատ բան եք տեսնում: Ընդհակառակը, թերևս մտածե՛ք, որ աշխատում եք մարդկության բարձրության համար, հարստացնում եք աշխարհի գիտությունը, բավարարում եք բնական հետաքրքրությունը կամ նման մի բան: Այն, ինչ ես խնդրում եմ՝ Մեզանից, Դուք բազմաթիվ անգամ եք կատարել: Եվ, իհարկե, դուք ոչնչացնելն ավելի զգվելի չէ, քան այն, որ սովոր եք կատարել հերձարանում: Հասկացե՛ք, դա միակ հանցանշանն է, իմ դեմ: Եթե հայտնաբերվի, կորած եմ, և անկասկած կհայտնաբերվի, եթե չօգնե՛ք ինձ:

Միթե Դուք մոռացա՞ք այն, ինչ ես ասացի: Ես Ձեզ օգնելու ոչ մի ցանկություն չունեմ: Այդ ամբողջ պատմությունը ինձ բոլորովին չի վերաբերում, ես լրիվ անտարբեր եմ դրա նկատմամբ:

- Ալան, աղերսում եմ: Իմ դրության մեջ մտե՛ք: Հենց նոր՝ Ձեր գնալուց քիչ առաջ, քիչ էր մնացել սարսափից մեղման: Մի օր էլ գուցե ինքներդ զգա՞նք նման բան... Օ՛, ո՛չ, ո՛չ, ես դա չեմ ուզում ասել... Գործին պարզապես գիտական տեսակետով

նայել: Չէ՞ որ Դուք չեք հարցնում, թե որտեղից են բերում այն դիակները, որոնց վրա փորձ եք կատարում: Հիմա էլ մի հարցրեք: Առանց այդ էլ ես շատ բան ասացի, քան հարկավոր էր: Աղաչում եմ, մի մերժեք, չէ՞ որ մենք ընկերներ ենք եղել. Ալան:

- Մի խոսեցեք անցած օրերի մասին, Դորիան: Նրանի մեռել են:

- Երբեմն այն, ինչ մենք մեռած ենք համարում, դեռ երկար չի ուզում մեռնել: Վերնահարկի մարդը չի գնում: Նա նստած է սեղանի մոտ հակված գլխով և ձգված ձեռքերով... Ալան. Ալան, եթե Դուք ինձ չօգնեք, ես կորած եմ: Օ՛հ, ինձ կկախեն, Ալան, միթե չեք հասկանում: Կկախեն արածիս համար...

- Ապարդյուն է շարունակել այդ խոսակցությունը: Ես վճռականապես հրաժարվում եմ Ձեզ օգնելուց: Խնդրելը Ձեր կողմից խելացնորություն է...

- Մերժում եք:

- Այո՛

- Աղերսում եմ, Ալան:

- Իզուր:

Դորիան Գրեյի աչքերում կրկին վիշտ արտացոլվեց: Նա մեկնեց ձեռքը և, սեղանից թուղթ վերցնելով, ինչ-որ բան գրեց: Երկու անգամ կարդաց, զգուշությամբ ծալեց և չալրտեց Ալանին: Ապա վեր կացավ և մոտեցավ լուսամուտին:

Քննփրելը զարմացած նայեց Դորիանին, վերցրեց թուղթը և բացեց: Երբ կարդաց երկտողը, գույնը մեռելի պես գցեց. կուչ եկավ աթոռի վրա: Մարսափելի թուլություն զգաց: Միրտն անհանգիստ բաբախում էր, բաբախում էր դատարկության մեջ: Թվում էր՝ հիմա կպայթի:

Երկու-երեք րոպե ահավոր լռություն տիրեց: Դորիանը շրջվեց և, մոտենալով Ալանին, ձեռքը դրեց նրա ուսին:

Շատ եմ ցավում, Ալան,- մրմնջաց նա,- բայց ուրիշ կար
չունեմ: Նամական արդեն գրված է, ահա: Տեսնում եր հաս-
ղև: Եթե ինձ չօգնեք, պետք է ուղարկեմ: Իսկ թե ինչ կլինի
հետևանքը, Ձեզ քաջ հայտնի է: Բայց ես համոզված եմ, որ
'Խոյր կօգնեք: Այժմ արդեն չեք կարող մերժել: Ես երկար
փորձեցի խնայել Ձեզ, պետք է դա ընդունեք: Բայց Դուք դա-
ման գտնվեցիք, վիրավորելու աստիճան կոպիտ: Ինձ հետ
դեռ ոչ ոք չի համարձակվել վարվել այնպես, ինչպես Դուք,
համեմատյալ դեպք, ոչ մի կենդանի էակ: Ամեն ինչ համբե-
լությամբ տարա: Այժմ պայմաններ թելադրելու հերթն իմն է:

Քենմփբելը ձեռքերով ծածկեց դեմքը և սկսեց դողալ:

Այո, պայմաններ թելադրելու հերթն իմն է, Ալան, և Դուք
պիտեր, թե ինչ պայմաններ: Ամեն ինչ պարզ է: Եկեք: Եվ
սուղակես մի դողացեք: Այդ բանը պետք է արվի: Արիացե՛ք և
կատարե՛ք:

Ինչու տնքոց պոռթկաց Քենմփբելի շուրթերից, նա ողջ
մարմնով դողաց: Ժամացույցի թխկթխկոցը բուխարու վրա
կարծես տրոհում էր ժամանակը տառապանքի զատ-զատ
կրակների, որոնք մեկը մյուսից սոսկալի էին: Թվում էր, թե
երկար ժամանակ ցնալով ավելի է սեղմում գլուխը, սպառ-
նույցով խայտառակությունը, կարծես, արդեն պարուրել էր
կրակ: Դորիանի ձեռքը նրա ուսի վրա արձժի անտանելի
նախություն ուներ, և թվում էր՝ շուտով կձգմի նրան:

- Դե՛, Ալան, վճռեցե՛ք անմիջապես:

- Ձեմ կարող,- մեքենայորեն ասաց Քենմփբելը, կարծես
սուղ բառերը կարող էին ինչ-որ բան փոխել:

- Պետք է անեք: Ուրիշ ընտրություն չունեք: Մի՛ հապաղե՛ք:

Քենմփբելը մի պահ վարանեց:

.. Այնտեղ՝ վերևում, կրակ կա՛:

.. Այո՛, զագօջախ, ասրեստով:

- Ես պետք է տուն գնամ լաբորատորիայից իրեր վերցնելու համար:

- Ո՛չ, Ալան: Դուք այստեղից չպետք է հեռանաք: Գրեցներ, թե ինչ եք ուզում, իմ սպասավորը կառքով կգնա, կրերի:

Քենմիքելը մի քանի տող խզմզեց, ծրարեց և ծրարը հասցեագրեց օգնականի անունով: Դորիանը վերցրեց երկտույր և ուշադիր կարդաց: Ապա հնչեցրեց զանգը, կանչեց սպասավորին և տվեց նրան՝ հրամայելով վերադառնալ հնարավորին չափ շուտ և բերել այն, ինչ նշված է:

Երբ սրահի դուռը ծածկվեց, Քենմիքելը ջղայնորեն շարժվեց և բարձրանալով աթոռից՝ մոտեցավ բուխարուն: Նա դողում էր տենդագին:

Մոտ քսան րոպե երկուսն էլ լուռ էին: Սենյակում լսվում էր նույնիսկ ճանճի բզզոցը, և մուրճի հարվածների նման ժամացույցի կտկտոցը:

Աշտարակի ժամացույցը խփեց ժամը մեկը: Քենմիքելը շրջվեց և, նայելով Դորիանին, տեսավ նրա աչքերն արցունքով լցված: Նրա թախծոտ դեմքին ինչ-որ մաքրություն և նրբություն կար, որ կատաղեցնում էր Ալանին:

- Դուք ստոր եք, զարհուրելի ստոր, - քրթմնջաց նա:

- Լոռեցեք, Ալան, Դուք փրկեցիք իմ կյանքը:

- Ձեր կյանքը: Բարի երկինք: Եվ ի՞նչ կյանք է դա: Քայքայումից քայքայում գնալով՝ վերջապես հասաք վերջնակետին՝ ոճրագործության: Բայց ես Ձեր կյանքի փրկության համար չէ որ անում եմ այն, ինչ պահանջում եք ինձանից:

- Ա՛յս, Ալան, - հառաչելով՝ շնջաց նա, - ես կուզեի, որ Ձեր նկատմամբ տածած իմ կարեկցանքի հազարերորդական մասը Դուք ունենայիք իմ հանդեպ:

Այս խոսքերն ասելով՝ նա շրջվեց դեպի լուսամուտը և նայեց պայուսեզին: Քենմիքելը չպատասխանեց:

Միտ տասը րոպե հետո դուռը բախեցին: Ներս մտավ տպա-
տավորը՝ իր հետ բերելով քիմիական նյութերով լի կաթմիր
փոսյտե մի մեծ արկղ, պողպատե և պլատինե լարի երկայ մի
կուլ և բավական տարօրինակ ձևի երկու երկաթե կեռ:

Սրանք այստեղ թողնեմ, սըր,- հարցրեց նա Քեմվորելին:

- Այո,- ասաց Դորիանը,- Բայց, դժբախտաբար, Ֆրանս
սխալ, այլ հանձնարարություն էլ ունեմ: Ինչպես է Ռիչմոնդի
սյարտիզպանի անունը, որ Սելբիում մեզ խոլորձներ է
մոտակարարում:

- Հարդեն, սըր:

Այո, Հարդեն: Իսկ այժմ պետք է անմիջապես գնաք
Ռիչմոնդ՝ նրա մոտ, ասեք, որ նա իմ պատվիրածից երկու
սուլամ ավելի խոլորձներ ուղարկի, և սպիտակ խոլորձները,
որքան հնարավոր է՝ քիչ, ասենք, սպիտակ բոլորովին պետք
չէ: Այսօր հաճելի օր է, իսկ Ռիչմոնդը չքնաղ վայր է, այլապես
ձեզ չէի անհանգստացնի:

- Ինչ եք ասում, սըր: Ոչ մի անհանգստություն: Ժամը
յուսիսին եք կարգադրում վերադառնալ:

- Որքան ժամանակ կտևի Ձեր փորձը, Ալան,- հարցրեց
Դորիանը հանգիստ և անտարբեր ձայնով: Երրորդ մարդու
նկրկայությունից, կարծես, արտակարգ համարձակություն էր
ուռացել:

Քեմվորելը մոռյվեց և կծեց շրթունքը:

- Միտ հինգ ժամ,- պատասխանեց նա:

- Ուրեմն, կարող եք վերադառնալ յոթն անց երեսունին,
Ֆրանսիս... Կամ, սպասեցեք, գիտեք ինչ, գնալուց առաջ
պատրաստեք իմ հագուստը՝ ինչ պետք է հագնեմ, իսկ
կրկնոն թողնում եմ Ձեր տրամադրության տակ: Ես տանը չեմ
մուշկուլ, այնպես որ, Ձեր կարիքը չեմ զգա:

- Շնորհակալ եմ, սըր,- ասաց սպասավորը և դուրս եկավ:

- ԴՆ, Ալան. ոչ մի բան չպետք է կորցնել: Ինչքան ծանր է, այն արկղը: Դա ես կվերցնեմ, իսկ Դուք մյուսները վերցրեք:

Դորիանը խոսում էր արագ և պաշտոնական: Քեմփբելը հնազանդ էր: Նրանք միասին ելան սենյակից:

Երբ հասան վերնահարկ, Դորիանը հանեց բանալին և բացեց դուռը: Բայց հանկարծ կանգ առավ. աչքերի մեջ երևաց անհանգստություն և սկսեց դողալ:

- Ալան, ես երևի չկարողանամ ներս մտնել,- մրմնջաց նա:

- Մի՛ մտեք, Դուք ինձ բոլորովին էլ պետք չեք,- սառնությամբ ասաց Քեմփբելը:

Դորիանը կիսով չափ բացեց դուռը: Անմիջապես նրա աչքին զարկեց արևի լույսի տակ դիմանկարի հեզնող դեմքը: Հատակին ընկած էր պատռված վարագույրը: Հիշեց, որ անցած գիշեր, առաջին անգամ կյանքում, մոռացել է ծածկել ծակատագրական կտավը: Եվ ուզում էր նետվել դեպի նկարն ու ծածկել այն, երբ ցնցված ընկրկեց:

Այդ ինչ նողկալի կարմիր հեղուկ է շողում նրա ձեռքին. կարծես կտավը քրտնած լինի արյունով: Ինչ զարհուրելի է... ավելի զարհուրելի, քան այդ անշարժ մարմինը, որ փլված, ընկած էր սեղանին, որի այլանդակ ստվերը արնաոդող գորգի վրա ցույց էր տալիս, որ դիակը դեռ նույն տեղում է, ինչպես որ ինքը թողել էր երեկ:

Դորիանը խորը շունչ քաշեց և, ավելի լայն բացելով դուռը, աչքերը կիսախուփ, գլուխը մի կողմ շրջած, արագ ներս մտավ՝ որոշելով ոչ մի անգամ չնայել մեռածին: Հետո, կռանալով, վերցրեց ոսկեգույն ծածկոցը և գցեց դիմանկարի վրա:

Վախենալով շրջվել՝ նա, հայացքը ծածկոցի նախշազարդերին հառած, անշարժ կանգնած էր տեղում: Ապա լսում էր, ինչպես Քեմփբելը ներս բերեց ծանր արկղը, երկաթները և

մութ իրերը, որ հարկավոր էին իրեն: Եվ հասկարծ Դորիանը հարցրեց ինքն իրեն, թե արդյոք Ալանը ծանոթ է Բեյլի-Ուոլուորթի հետ, եթե՝ այո, ապա ի՞նչ են նրանք մտածել միմյանց մասին:

Այժմ ինձ մենակ թողեք,- հնչեց նրա ետևում դառնա՜ն ձայնը:

Դորիանը շրջվեց և արագ դուրս գնաց: Նա հասցրեց միայն նկատել, որ սպանվածը այժմ ուղիղ է նստեցրած տառալիս և հենած դեպի թիկնակը, իսկ Քեմփբելը, հայացքը հռոտած դիակի դեղին, փայլուն դեմքին, նայում է նրան:

Աստիճաններով ցած իջնելիս նա լսեց, որ դուռը բանալիով կրկնվեց:

Յոթից բավական անցել էր, երբ Քեմփբելը վերադարձավ գլուխդարան: Նա գունատ էր, բայց բացարձակապես հան-գիստ:

- Ձեր պահանջը ես կատարեցի,- քրթմնջաց նա,- իսկ իմա՜ մնաք բարով մեկընդմիշտ: Այլևս Ձեզ հանդիպել չեմ ուզում:

- Դուք փրկեցիք ինձ կործանումից, Ալան: Ես երբեք դա չեմ մոռանա,- ասաց Դորիանը:

Հենց որ Քեմփբելը գնաց, Դորիանը բարձրացավ վերնա-հարկ:

Սենյակում տարածվել էր ազոտաթթվի սուր հոտ: Սեղանի մոտ նստած դիակն անհայտացել էր:

Այդ նույն երեկո՝ ժամը ութն անց երեսուն րոպեին, հիա նալի հագնված, կոճականցքին մի փուռնջ պարմյան մանուշակ ամրացրած, Դորիան Գրեյը խոնարհվող սպասավորների ուղեկցությամբ մտավ լեդի Նարբորոյի հյուրասենյակը: Քուն քի զարկերակները մոլեգին տրոփում էին, սաստիկ հուզված էր, բայց, ինչպես միշտ, անբռնազբոսիկ շնորհագեղությամբ թևքվեց՝ համբուրելու տանտիրուհու ձեռքը: Թերևս մարդու անկաշկանդ շարժումներն ավելի բնական են լինում այն ժամանակ, երբ նա ստիպված է լինում ձևացնել: Եվ, իրոք, այդ երեկո Դորիան Գրեյին նայելիս ոչ ոք չէր հավատա, թե նա ապրել է զարհուրելի ողբերգություն, որից ավելի զարհուրելի բան չի լինում մեր օրերում: Այդ նրբագեղ մատները երբևր չէին կարող դանակ վերցնել ոճրագործության համար, ժպտուն շուրթերը երբեք չէին բացվի աստծո և մարդկության սրբության ընդդեմ: Դորիանը նույնիսկ ինքն էր զարմանում իր արտաքին հանգստության վրա: Լինում էին պահեր, երբ նա, մտածելով իր երկակի կյանքի մասին, անսալիման հաճույք էր զգում:

Լեդի Նարբորոյի մոտ այդ երեկո հյուրերը առանձնապես շատ չէին, եկել էին միայն նրանք, ում նա հասցրել էր հապճեպ հաղորդել:

Նա խելացի կին էր, պահպանած, ինչպես լորդ Հենրին էր ասում, տգեղության սքանչելի հետքերը: Նա մեր ամենաձանձրալի դեսպաններից մեկի հիանալի կինն էր և ամուսնուն իր իսկ նախագծած մարմարե թանգարանում շքեղ թաղելուց, ապա աղջիկներին հարուստ, բայց բավականին տարեց մարդկանց հետ ամուսնացնելուց հետո նվիրվեց ֆրանսիական գրականության, ֆրանսիական խոհանոցի և ֆրանսիական սրամտության (երբ հաջողվում էր)

հաճույքներին:

Դորիանը նրա բացառիկ սիրելիներից մեկն էր, որի հետ գլուխը չէր մեծագույն գոհունակություն էր հայտնում, որ նրան չի հանդիպել երիտասարդ ժամանակ. «Ես գլխում, սիրելիս, խելահեղորեն կսիրահարվեի Ձեզ,- ասում էր նա սովորաբար,- և, հանուն Ձեր սիրո, գլխարկս կնետնի հույժալի վրա: Ինչպիսի մեծ բարեբախտություն է, որ Դուք դեռ ուղիսարի չէիք եկել: Իրոք, այն ժամանակ մեր գլխարկներն այնքան տղեղ էին, իսկ հողմաղացներն այնքան զբաղված, որ ես երբեք որևէ մեկի հետ սիրախաղի բախտ չունեցա: Եվ, խնայել, դրանում ամենից շատ մեղավոր էր ինքը՝ Նարբորոն: Ես անավոր կարճատես էր, իսկ ինչ հաճույք դավաճանել ստուսնուն, երբ նա ոչինչ չի տեսնում երբեք»:

Այդ երեկո լեղի Նարբորոնի հյուրասենյակում բավական ծանծաղի էր: Բանը նրանում էր, ինչպես բացատրեց տան-սիրուհին հնամաշ հովհարի ետևում, որ ամուսնացած զուտերից մեկը հանկարծ հյուր է եկել, և, որ ամենավատն է, իր հետ բերել է նաև ամուսնուն:

- Ես կարծում եմ, որ դա շատ մեծ անսրբանկատություն է, դստերս կողմից,- շնջաց նա,- իհարկե, ես նույնպես ամեն սուռա Համբուրգից վերադառնալիս հյուր եմ մնում նրանց մոտ, չէ՛, որ ինձ նման ծեր կնոջը ժամանակ առ ժամանակ թարմ օդ է հարկավոր: Բացի այդ, այնտեղ գնալիս ես աշխատում եմ սթափեցնել նրանց: Ձեզ կարող պատկերացնել, թե ինչպես եմ ապրում: Իսկական գավառական կյանք եմ վարում: Այրթանում եմ կանուխ, որովհետև շատ անելիք ունեն, և քնում եմ վաղ, որովհետև մտածելիք չունեն: Ելիզաբեթ թագուհու ժամանակից ի վեր ամբողջ շրջակայքում ոչ մի ծեծկոտուր չի եղել, ուստի բոլորն էլ քնում են: Բայց մի վախեցեք, սեղանի շուրջը Դուք նրանց մոտ չեք նստի, անհոգ կացեք: Ինձ մոտ

կնստեր և կզբաղեցնէր ինձ:

Դորիանը ինչ-որ գեղեցիկ հաճոյախոսություն ասաց և հայացքով ընդգրկեց սենյակը. այո՛, իրոք, ծանծրալի երեկույթ էր: Երկուսին նա առաջին անգամ էր տեսնում, իսկ նրանցից բացի, այնտեղ էին Էռնեստ Հորրուդենը՝ միջին տարիքի միջակություններից մեկը, որպիսիք Լոնդոնի ակումբնակի մշտական հաճախորդներն են: Նրանք թշնամիներ չունեն, բայց բարեկամների կողմից բնավ չեն սիրվում: Լեդի Ռեքսթոնը, որ խիստ պճնված, քառասունյոթ տարեկան, արծվաքիթ մի տիկին էր, ամեն կերպ ջանում էր անվանարկված երևալ, բայց այն աստիճանի տգեղ էր, որ, ի մեծ հիասթափություն նրա, ոչ ոք չէր հավատում, թե նա կարող է անբարոյական լինել: Միսսիս Էրլինը աննկատ, վենետիկցու նման շիկահեր տիկին էր: Տանտիրուհու դուստրը, անճաշակ հագնված երիտասարդ լեդի Ալիս Չեմփսենը, բրիտանական այն բնորոշ դեմքերից մեկն էր, որ մեկ անգամ տեսնելով՝ երբեք չի հիշվում: Նրա ամուսինը կարմրայտ, սպիտակ այտմորուքներով մի արարած էր, որն, ինչպես իր դասից շատերը, կարծում էր, թե անսահման կենսութախոթյամբ կարելի է ծածկել մտածելու ընդունակ չլինելու փաստը:

Դորիանն արդեն զղջում էր գալու համար, երբ հանկարծ լեդի Նարբորոն նայեց բուխարու վրա դրված բրոնզազօծ մեծ ժամացույցին և բացականչեց:

– Ուղղակի աններելի է, որ Հենրի Ուոթթոնն այդքան ուշանում է: Ես նրան դեռ առավոտն եմ իմաց տվել, և նա երդվել է, որ կգա:

Դորիանը որոշ չափով սփոփվեց, իմանալով, որ Հարրին գալու է, իսկ երբ դուռը բացվեց, և լսվեց լորդ Հենրիի ծորուն, նրգեցիկ ձայնը, որ հրապույր էր տալիս նրա կեղծ ներողությանը, Դորիանի ծանծրույթն իսկույն անցավ:

Բայց ճաշին ոչինչ չէր կարողանում ուտել: Ամսնն տար
վում էր ափսեի ետևից՝ ձեռք չտված: Լեդի Նարբորոն
անդրադարձնա՞յն հանդիմանում էր՝ ասելով, թե նա «վիրավորում
է իսկո՞ղ՝ Ադոլֆին, որը ճաշացուցակը կազմել է հատկապես
նրա համար», իսկ լորդ Հենրին մերթ ընդ մերթ նայում էր
էր իր լարեկամին և զարմանում նրա լռության և ցրվածության
վրա: Ծառայապետը ժամանակ առ ժամանակ Դորիանի
լուծակը շամպայն էր լցնում, նա խմում էր մի շնչով: Սակայն
հարավը չէր հագնում:

Դորիան,- ասաց վերջապես լորդ Հենրին, երբ մատուցե-
լին դոնդողածածկ որսամիսը,- այսօր ի՞նչ է պատահել Ձեզ,
չոտ անտրամադիր եք:

- Սիրահարված է, երևի,- բացականչեց լեդի Նարբորոն,-
վստիսնում է ասել, որպեսզի չխանդեմ: Եվ միանգամայն
միշտ է: Ես անպայման կխանդեմ:

- Սիրելի լեդի Նարբորո,- ժպտալով ասաց Դորիանը,-
սուղեն մի ամբողջ շաբաթ չեմ սիրահարվել: Այն ժամանակից
ի վեր, ինչ տիկին դը Ֆերրուրը հեռացավ Լոնդոնից:

- Ինչպե՞ս կարող եք Դուք՝ տղամարդիկդ, սիրահարվել
այդ կնոջը,- բացականչեց ծեր լեդին,- իսկապես, չեմ կարող
հուսկանալ:

- Դա պարզապես նրանից է, որ նա հիշում է Ձեզ, երբ
Դուք աղջնակ էիք, լեդի Նարբորո,- ասաց լորդ Հենրին,- նա
միակ կապն է մեր և Ձեր կարճ զգեստների միջև:

- Նա բոլորովին էլ չի հիշում իմ կարճ զգեստները, լորդ
Հենրի: Բայց ես նրան շատ լավ եմ հիշում երեսուն տա-
րի առաջ, երբ հանդիպեցինք Վիննայում, հիշում եմ, թե
ինչպիսի լանջաբացվածք ուներ:

- Նա հիմա էլ լանջաբացվածքով է,- պատասխանեց
լորդ Հենրին՝ երկար մատներով ձիթապտուղ վերցնելով: -

և՛լ երբ գուգվում է, հիշեցնում է ֆրանսիական վատ վեսյի շյնը հրատարակություն: Բայց նա, իրոք, հետաքրքիր կին է, և միշտ՝ անակնկալներով լի: Իսկ ինչպիսի նվիրվածություն ունի ընտանիքի հանդեպ: Երբ մահացավ երրորդ ամուսինը, մազերը վշտից բոլորովին ոսկեհեր դարձան:

- Ինչպե՞ս կարող եք, Հարրի,- գոչեց Դորիանը:

- Դա ամենառոմանտիկ բացատրությունն է,- ծիծաղելով բացականչեց տանտիրուհին,- ասում եք երրորդ ամուսինը, մինթե Ֆերրուլը չորրորդն է:

- Հենց այդպես է, որ կա, լեդի Նարբորո:

- Ոչ մի դեպքում չեմ հավատա:

- Միստեր Գրեյին հարցրեք, նրա ամենամտերիմ ընկեր-
ներից է:

- Միստեր Գրեյ, ձիշտ է:

- Նա այդպես է հավատացնում, լեդի Նարբորո: Ես նրան հարցրեցի, թե արդյոք չի գմռսել նրանց սրտերը և կախել գոտուց, ինչպես Մարգարիտա Նավարացին: Նա պատաս-
խանեց՝ ոչ, քանի որ, նրանցից և ոչ մեկը սիրտ չուներ:

- Չորս ամուսին, ազնիվ խոսք դա *trop de zèle*¹ է:

- Ավելի ձիշտ՝ *trop d'audace*²: Ես հենց այդպես էլ նրան ասացի,- վրա բերեց Դորիանը:

- Օ՛, նա բավականաչափ համարձակություն ունի ամեն ինչի համար, սիրելիս: Իսկ ինչի՞ նման է Ֆերրուլը: Ես նրան չգիտեմ:

- Շատ գեղեցիկ կանանց ամուսինները պատկանում են ոճրագործների դասին,- ասաց լորդ Հենրին՝ կուժ-կուժ ըմ-
պելով գինին:

Լեդի Նարբորոն խփեց նրան հովհարով:

1 Չավազանց մեծ եռանդ (ֆր.):

2 Չավազանց մեծ համարձակություն (ֆր.)

Լորդ Հենրի, ես բնավ չեմ զարմանում, որ աշխարհը ձեզ համարում է չափազանց բարոյագուրկ մարդ:

- Մի՞թե,- հարցրեց լորդ Հենրին՝ բարձրացնելով հոնքերը,- ո՞ր աշխարհը: Ըստ երևույթին, խոսքն այն աշխարհի մասին կլինի, որովհետև այս աշխարհն ու ես գերազանց հալաբերությունների մեջ ենք:

- Բոլորն էլ, ում ճանաչում եմ, այդպես են ասում,- բացառությամբ ծեր լեդին՝ թափահարելով գլուխը:

Լորդ Հենրին մի պահ լքջացավ:

- Ուղղակի ահավոր է,- վերջապես ասաց նա,- որ մեր տներում մարդու ետևից այնպիսի բաներ են խոսում, որոնք ունկնդրելիք բացարձակ ճշմարտություններ են:

- Ազնիվ խոսք, նա անուղղելի է,- ասաց Դորիանը, խփվելով դեպի սեղանը:

- Հուսով եմ, որ այդպես է,- ծիծաղեց տանտիրուհին,- յայնք եթե իրոք Դուք բոլորդ էլ ծիծաղելիության աստիճան երկրպագում եք տիկին դը Ֆերրոլին, ես էլ պետք է ստիպված կլինեմ ամուսնանալ, որպեսզի ժամանակի մոդայից ետ չընկնեմ:

- Դուք երբեք այլևս չեք ամուսնանա, լեդի Նարբորո,- միջամտեց լորդ Հենրին,- որովհետև Դուք երջանիկ էիք Ձեր ամուսնության մեջ: Կինը երկրորդ անգամ ամուսնանում է միայն այն դեպքում, եթե ատել է առաջին ամուսնուն: Իսկ տղամարդը այն դեպքում, եթե պաշտել է առաջին կնոջը: Կանայք ամուսնության մեջ երջանկություն են փնտրում, տղամարդիկ վտանգի են ենթարկում իրենց երջանկությունը:

- Նարբորոն այնքան էլ անբասիր չէր,- նկատեց ծեր լեդին:

- Եթե նա այդպիսին լիներ, Դուք նրան չէիք սիրի:

- Հարգելի լեդի, - ասաց գրուցակիցը,- կանայք սիրում են մեզ մեր թերությունների համար: Եվ եթե այդ թերություններն

բավականին շատ են, ապա ամեն ինչ նրանք պատրաստ
են մեզ ներելու, նույնիսկ՝ խելքը: Սակայն ես վախենում եմ,
ինձ այլևս ճաշի չհրավիրեք այսպես խոսելու համար, լսյի՛
Նարբորո: Բայց դե ի՞նչ արած: Դա իսկական ճշմարտություն
է:

- Իհարկե, ճիշտ է, լորդ Հենրի: Եթե կանայք չսիրեն Զեյ
թերությունների պատճառով, ի՞նչ կլիներ Զեր վիճակը: Ոչ մի
տղամարդ երբեք չէր ամուսնանա: Բոլորդ էլ կմնայիք դժբախտ
ամուրիներ: Այնուամենայնիվ, դա էլ չէր ստիպի Զեյ փոխվել:
Այժմ բոլոր ամուսնացած տղամարդիկ ապրում են ինչպես
ամուրիներ, իսկ ամուրիները՝ ինչպես ամուսնացածներ:

- Fin de siècle¹, - կամաց ասաց լորդ Հենրին:

- Fin du globe² - պատասխանեց տանտիրուհին:

- Ինչպես կուզեի լիներ Fin du globe, - հառաչեք Դորիանը,
կյանքը մեծ հիասթափություն է:

- Ա՛հ, սիրելի՛ բարեկամս, - բացականչեց լեդի Նարբորոն՝
հագնելով ձեռնոցները, - մի՛ ասեք, թե Դուք արդեն սպառն
եք կյանքը: Երբ մարդ այդպես է ասում, ուրեմն, իմացեք,
որ կյանքն է սպառել նրան: Լորդ Հենրին բարոյագուրկ է,
երբեմն ես էլ կուզեի լինել այդպիսին. բայց դուք ուրիշ եք:
Դուք ծնված եք միայն բարի լինելու համար, դա երևում է,
Զեր արտաքինից: Ես անպայման Զեյ համար լավ կլին պետք
է գտնեմ: Լորդ Հենրի, չե՞ք կարծում, որ միստեր Գրեյն
ամուսնանալու ժամանակն է:

- Ես հենց միշտ դա եմ ասում, լեդի՛ Նարբորո, - խոնարհ-
վելով՝ ասաց լորդ Հենրին:

- Դե, ուրեմն, հարկավոր է հարմար ընտրություն անել:
Այսօր ուշադիր կնայեմ Դեբերեթթը և կկազմեմ բոլոր արժանի

1 Դարի վերջն է (ֆր.):

2 Աշխարհի վերջն է (ֆր.):

հարսնացուների ցուցակը:

Տարիքը նմյնպես կգրեք, լեդի՛ Նարբորո, հարցրեց
Դորիանը:

- Իհարկե, տարիքն էլ՝ որոշ ուղղումներով: Բայց ոչինչ
չպետք է հապճեպ կատարվի: Ես ուզում եմ, որ դա լինի՝
լուրջապես անվանում է «Մորնինգ փոստը», հարմար միություն,
որպեսզի երկուսդ էլ երջանիկ լինեք:

- Ինչպիսի դատարկություններ են մարդիկ բարբաջում
կյո՛ւսնիկ ամուսնությունների մասին,- բացականչեց լորդ
Վենդին,- տղամարդը կարող է երջանիկ լինել կնոջ հետ,
յուսի դեռ չի սիրում նրան:

- Ա՛հ, ինչքան եք ցլնիկ,- բացականչեց ծեր լեդին և, ետ
քաշելով աթոռը սեղանից, գլխով արեց լեդի Ռեքստոնին:-
Հուճախ եկեք ինձ այցելության, լորդ Հենրի: Դուք իմ
տոնուսն ավելի եք բարձրացնում, քան պարոն Էնդրոյի գրած
դիպատոմսերը: Եվ նախօրոք ասեք, թե ո՞ւմ կցանկանայիք
հանդիպել այստեղ: Կաշխատեմ ընտրել հիանալի
յոնկերախումբ:

- Ես սիրում եմ ապագա ունեցող տղամարդկանց և ան-
յույալ ունեցող կանանց,- պատասխանեք լորդ Հենրին,-բայց
ույո դեպքում Ձեզ կհաջողվի կազմակերպել միայն կանանց
կրկնույթ:

- Վախենամ՝ այո,- ծիծաղելով ասաց լեդի Նարբորոն:

Նա վեր կացավ սեղանի մոտից և դիմեց լեդի Ռեքսթոնին.

- Շատ ներողություն, սիրելի լեդի Ռեքսթոն, չէի տեսել, որ
Դուք դեռ չեք վերջացրել Ձեր գլանակը:

- Ոչինչ, լեդի՛ Նարբորո, ես չափազանց շատ եմ ծխում,
լիայց որոշել եմ սահմանափակել հետազայում:

- Ի սեր աստծո, պետք չէ, լեդի՛ Ռեքսթոն,- ասաց լորդ
Հենրին,- զսպվածությունը կործանիչ սովորություն է: Չափա-

վորությունը նույնն է, ինչ որ սովորական ծանծրալի ճաշը, իսկ չափազանցությունը խնջույքի պես լավ բան է:

Լեդի Ռեքսթոնը զարմացած նայեց նրան:

- Մի օր անսպայման համեցեք ինձ մոտ, լորդ Հենրի՛ և ավելի մանրամասն դա բացատրեք ինձ: Հմայիչ տեսություն է,- ասաց նա՝ դուրս սահելով ճաշասենյակից:

- Դե, մենք բարձրանում ենք վերև, իսկ Դուք նույնպես շուտ եկեք, երկար չգբաղվեք քաղաքականությամբ և բամբասանքով,- կանչեց լեդի Նարբորոն դռան մոտից, այլապես վերևում բոլորս կընդհարվենք:

Տղամարդիկ ծիծաղեցին: Պարոն Չեփմենը հանդիսավոր բարձրացավ սեղանի ծայրից և տեղ գրավեց վերին մասում: Դորիան Գրեյը նստեց լորդ Հենրիի մոտ: Պարոն Չեփմենը սկսեց բարձրաձայն խոսել համայնքների պալատի իրերի դյուրության մասին՝ ծաղրելով իր հակառակորդներին: «Կուրադավան մարդ» բառը, որ սարսափելի է անգլիացու համար, ժամանակ առ ժամանակ լսվում էր նրա ծիծաղի պոռթկումի միջից: Կրկնվող նախածանցը ծառայում էր որպես հռետորության զարդարանք: Միստեր Չեփմենը բրիտանական դրոշը բարձրացրել էր մտքի բարձունքի վրա և բրիտանական ազգի ժառանգական բթությունը (նա զավեշտուրեն դա անվանեց անգլիական ողջամտություն) ներկայացվեց իբրև հասարակության հուսալի պատվար:

Լորդ Հենրիի շուրթերին քմծիծաղ երևաց, նա, շրջվելով, նայեց Դորիանին:

- Հը, սիրելի՛ բարեկամս, հիմա ավելի լավ եք զգում,- հարցրեց նա,- ճաշին բավական անտրամադիր էիք:

- Շատ լավ եմ, Հարրի: Ուղղակի հոգնած եմ, ուրիշ ոչինչ:

- Անցած գիշեր դյուրեի՞չ էիք: Փոքրիկ դքսուհին գերվել էր ձեզանով: Նա ինձ ասաց՝ պատրաստվում է Սելբի գնալ:

- Այո՛, նա խոստացել է գնալ ամսի քսանին:

- Մոնմառութն էլ է գալու:

- Դե իհարկե, Հանրի:

- Մոնմառութն ինձ սարսափելի ծանձրացնում է նույն ձևով.

յուրաքանչյուր դքսուհուն: Նա շատ խելացի կին է, ավելի խելացի, քան սովորաբար լինում են կանայք: Նրան պակասում է միայն կուռացի թուլության անսահման հրապույրը: Չէ՛ որ կավե ոտքերն են ոսկե կուռքն արժեքավոր դարձնում: Դքսուհու ոտքերը շատ գեղեցիկ են, բայց նրանք կավից չեն: Ավելի «կոշտ» սպիտակ հալսճապակուց են: Նրանք անցել են կրակի միջով, իսկ այն, ինչ կրակը չի ոչնչացնում, ուրեմն թրծում է: Դքսուհին շատ բան է տեսել կյանքում:

- Վաղուց է ամուսնացած,- հարցրեց Դորիանը:

- Մի ամբողջ հավիտենականություն, ինչպես ինքն է ուսում: Ըստ պերերի գրքի, կարծեմ, տասը տարի է, իսկ տասը տարին Մոնմառութի հետ պետք է որ հավիտենականություն լինի: Ուրիշ ո՞վ է գալիս:

- Օ՛, Վիլոուրիները, լորդ Ռեգրին, կինը, մեր տանտիրուհին, Ջեոֆֆրի Գլոստոնը, մի խոսքով՝ նույն սովորական լուկերախումբը: Հրավիրել եմ նաև լորդ Գրոթթիանին:

- Նա ինձ դուր է գալիս: Շատերը չեն սիրում, բայց ես գտնում եմ, որ նա հաճելի է: Եթե անգամ փոքր-ինչ պճնամուլ է, մեղքը քավում է հիանալի կրթությամբ: Նա ամբողջովին մոմանակակից մարդ է:

- Բայց ես չգիտեմ, Հանրի, նա կկարողանա՞ գալ: Հավանաբար հորը Մոնտե-Կարլո տանի:

- Օ՛հ, ինչ անտանելի մարդիկ են ծնողները: Փորձեք համոզել, որ դա... Ի միջի այլոց, Դորիան, երեկ շատ շուտ վիսխաք, տասնմեկն էլ չկար: Ինչ արեցիք հետո: Ուղիղ տուն գնացիք:

Դորիանը փութկոտորեն նրան նայեց և մոայլվեց:

- Ո՛չ, Հւրրի,- վերջապես պատասխանեց նա,- մոտ մինչև երկրորդ տուն չգնացի:

- Ակումբում էիք:

- Այո՛,- պատասխանեց նա, ապա կծեց շրթունքը,- ասելու ոչ, ակումբ չգնացի: Հենց այնպես թափառում էի: Մոռացիկ եմ, թե ինչ արեցի... Ինչ հետաքրքրասերն եք, Հւրրի: Անպայման պետք է իմանաք, թե մարդ ինչ է անում: Իսկ ես միշտ աշխատում եմ մոռանալ: Եթե ուզում եք ճիշտն իմանալ, տուն գնացի ժամը երկուսն անց երեսունին: Բանալին տալուն էի թողել, սպասավորս ստիպված ինքը դուռը բացեց: Եթե ուզում եք հաստատ իմանալ, կարող եք նրան հարցնել:

Լորդ Հենրիին թոթվեց ուսերը:

- Սիրելիս, ինչ կարևոր է: Եկեք հյուրասենյակ բարձրա նանք...

- Ո՛չ, շնորհակալություն, միստեր Չեփմեն, ես խերես չեմ խմում... Ձեզ ինչ-որ բան է պատահել, Դորիան: Պատմեցե՛ք՝ տեսնեմ ինչ է... Այսօր Ձեզ նման չեք:

- Ուշադրություն մի՛ դարձրեք, Հւրրի: Ուղղակի անտրա մադիր եմ, և ամեն ինչ գրգռում է ինձ: Վաղը կամ մյուս օրը կայցելեմ Ձեզ: Լեդի Նարբորոյին հայտնեք իմ ներողությունը: Վերև չեմ բարձրանա, տուն եմ գնալու, պետք է տուն գնամ:

- Շատ լավ, Դորիան: Համաձարկվում եմ ասել՝ վաղը թեյին Ձեզ կսպասեմ: Դքսուհին նույնպես այնտեղ կլինի:

- Կաշխատեմ,- ասաց նա՝ դուրս գալով սենյակից:

Երբ տուն հասավ, սարսափը, որ արդեն խեղդված էր թվում, կրկին պարուրեց նրան: Լորդ Հենրիի պատահական հարցը տակնուվրա էր արել նրա ջղերը, մինչդեռ անհրաժեշտ էր նյարդերի լիակատար անդորրություն: Վտանգավոր իրերը պետք է ոչնչացվեն: Նա սարսռաց: Սարսափելի էր նույնիսկ

նրանց դիպչելը:

Բայց դա անհրաժեշտ էր: Եվ, մտնելով գյուղատուն, Դորիանը ներսից կողպեց դուռը և բացեց պատի թաքստոցը. ուրտեղ թաքցրել էր Բեզիլ Հոլլուորդի վերարկուն և ճամպ լուկը: Բուխարիկում բոցավառվում էր թեժ կրակը: Դորիանը նորից ցախ ավելացրեց... Խանձված մահուղի և այրվող կուլվի հոտն անտառնելի էր: Երեք քառորդ ժամ պահանջվեց տառն ինչ անհետացնելու համար: Վերջում սրտխառնոց և դլիուսպտույտ զգաց: Մի քանի ալժիրյան մոմեր վառեց մետաղի կրակարանների վրա, հետո ձեռքերն ու ճակատը թրջեց միլսիոտ սառը քացախով:

Հանկարծ նա ցնցվեց: Աչքերը տարօրինակ փայլ ստացան և ջղայնորեն կծեց ներքին շրթունքը: Երկու լուսամուտների միջև դրած էր Լեոնոսե ֆլորենցիական պահարանը՝ փղոսկրե և երկնագույն դժոխաքարի մանրանկարներով: Ակնապլիշ հույացրր նա զցել էր պահարանին, կարծես այդ պահարանը նյութ և հմայում էր, և վախեցնում. կարծես այնտեղ թաքնված էր ինչ-որ բան, որին տեսչում էր, բայց միևնույն ժամանակ՝ խորշում: Շնչառությունն արագացավ: Մոլեգին լուսնությունից տոգորվում էր... Գլանակ վառեց, հետո դեն նետեց: Կոպերը ծանրացել ու այնպես էին կախվել, որ երկար, խիտ արտևանդները գրեթե դիպչում էին այտերին: Բայց ոլորվածի պես աչքը չէր կտրում պահարանից: Վերջապես կլավ բազմոցից, որտեղ պառկած էր, մոտեցավ պահարանին, բունալիով բացեց և ինչ-որ գաղտնի զսպանակ սեղմեց: Դանդաղ դուրս սահեց եռանկյունաձև արկղ: Մատները լուսզղաքար շարժվեցին դեպի արկղը, ներս մտան և ինչ-որ բանի դիպան: Դա չինական նրբակերտ, ոսկեցնցուղ փողբիկ տուփ էր՝ ալեծուփ զարդաքանդակներով, մետաղի թուղերից կախված էին կլոր բյուրեղներ, որոնք վերջանում

Լիկ մետաղահյուս ծոպերով: Դորիանը բացեց տուփը: Նյութ մեջ տարօրինակ ծանր և ուժեղ բույրով մոմանման կանաչ քսուք կար:

Մի պահ նա վարանեց, զարմանալի մի ժպիտ սառել Լի դեմքին: Ապա դողալով, չնայած սենյակում սարսափելի շուր էր, ձգվեց և նայեց ժամացույցին... տասներկուսից քսան Լի պակաս: Տուփը դրեց տեղը, փակեց պահարանի դռնակնևսյու և գնաց ննջարան:

Երբ կեսգիշերային խավարի մեջ հնչեցին ժամացույցի բրոնզե զարկերը, Դորիան Գրեյը հասարակ շորեր հագավ, շարժը փաթաթեց վզին և անձայն դուրս սահեց տնից Բոնդ-սթրիթում հանդիպեց մի լավ ձիակառքի: Նա կանչելով կառապանին և ցածրաձայն հայտնեց հասցեն: Կառապանու բացասաբար շարժեց գլուխը:

- Չավազանց հեռու է,- քրթմնջաց նա:

- Ահա Ձեզ մի սովերեն,- ասաց Դորիանը,- մեկն Լի կստանաք, եթե արագ քշեք:

- Շատ լավ, սըր,- պատասխանեց կառապանը:- Մի ժամից հետո այնտեղ կլինեք: Եվ դրամը դնելով գրպանը՝ ձիու գլուխի շրջեց ու արագությամբ սլացավ Թեմզայի ուղղությամբ:

Յուրտ անձրև էր մաղում, փողոցի աղոտ լապտերակայ մոտեցագույն էին տամուկ մշուշում: Բոլոր պատկերներն ուրդեն փակվում էին, դռների մոտ այս ու այնտեղ խմբվում էին մշուշում հագիվ երևացող տղամարդիկ և կանայք: Մի րոտի գինետներից լսվում էր ահավոր քրքիջ, մյուսներում վիճում, հայիռյում էին հարբածները: Գլխարկը մինչև ճալստը քաշած՝ Դորիան Գրեյը թիկն էր տվել կառքի մեջ և ունտարբերությամբ դիտում էր մեծ քաղաքի այլանդակ խայտառակությունը՝ ժամանակ առ ժամանակ ինքն իրեն կրկնելով լուրջ Հենրիի խոսքերը իրենց առաջին հանդիպմանը «Բուժել հոգին զգայություններով, իսկ զգայությունները՝ հոգով»: Այո, սուս դրանում է ողջ գաղտնիքը: Դորիանը հաճախ էր փորձել այդպես անել, հետագայում նույնպես կփորձեր: Գոյություն ունեին ավիոնի ծխարաններ, ուր մեղքերի հիշողությունը կարող էր անէանալ նոր մեղքերի խենթությամբ:

Դեղին գանգ հիշեցնող լուսինը շատ ցածր էր կախվել երկնքում: Մերթ ընդ մերթ հսկայական տձև մի ամպ ձգում էր երկար բազուկը և ծածկում լուսինը: Փողոցային լապտերները ուսկավանում էին, իսկ փողոցներն՝ ավելի նեղ ու գորշ պառնում: Մի անգամ կառապանը շեղվեց ճանապարհից և ստիպված կես մղոն ետ վերադարձավ: Ձին չմիացնում էր ցրափոսերում, նրանից գոլորշի էր բարձրանում: Կառքի լուսամուտները ծածկված էին մոխրագույն վուշանման մառախուղով:

«Բուժել հոգին զգայություններով, իսկ զգայությունները՝ հոգով»: Որքան համառ էին հնչում այդ խոսքերը Դորիանի սուլանջներում: Անշուշտ, նրա հոգին մահամերձ հիվանդ է, և Այդյոք ծիջտ էր, որ զգայությունները կարող էին բուժել հոգին, չէ՞ որ ինքն անմեղ արյուն էր թափել: Իսկ ինչը կայույլ էր

դա լավել: Ո՛չ, դրա համար քավություն չկար:

Էհ, ինչ կա որ, եթե ներումն անկարելի է, գոնե մոռացումն
Լ, հնարավոր: Եվ Դորիանը վճռել էր մոռանալ, ջնջել ամեն
ինչ հիշողությունից, սպանել անցյալը, ինչպես սպանում են
իմին, երբ նա խայթում է մեկին: Իսկապես, ինչ իրավունքով
էր Բեզիլն այդպես խոսում իր հետ: Ո՛վ էր նրան դատավոր
կարգել ուրիշների վրա: Այնպիսի ահավոր, սոսկալի խոսքեր
էր ասում, որ անտանելի էր:

Կառքը շարունակում էր հագիվհագ քարշ գալ, Դորիանին
թվում էր, թե յուրաքանչյուր քայլափոխի ավելի է դանդաղում
ընթացքը: Սա իջևերեց ապակին և գոչեց կառապանին, որ
ավելի արագ քշի: Ափիոնի անհագուրդ ծարավը տոչորում էր
նրան: Կոկորդն այրվում էր, նորագեղ ձեռքերը ջղածվում էին՝
Նա խենթի պես ձևոնափայթով հարվածեց ձիուն: Կառապանը
ծիծաղեց և նույնպես մտրակեց ձիուն: Ի պատասխան դրան՝
Դորիանը ծիծաղեց, բայց կառապանը, չգիտես ինչու, լռեց:
Ճանապարհն անվերջ էր թվում, փողոցները նման էին
սփռված սև սարդոստայնի: Միօրինակությունը ճնշում էր
Մառախուղը թանձրացավ, Դորիանին սկսեց սարսափը պա-
տել:

Անցնում էին աղյուսի ամայի գործարանների մոտով: Մա-
ռախուղն այստեղ ավելի նոսր էր, և կարելի էր տեսնել շշաձև
տարօրինակ վառարանները՝ նարնջագույն հրի հովհարածև
լեզուներով: Մի շուն հաչեց անցնող կառքի վրա, հեռու խա-
վարում ծղրտաց մի մոլորած ճայ: Նժույզը սայթաքեց անվա-
հետքի մեջ, ապա խրսոնած, քառատրոփ մի կողմ սլացավ:

Քիչ անց, նրանք ելան կավոտ ճանապարհից և կառքը
կրկին սուրաց կոշտ սալարկած փողոցներով: Գրեթե բոլո-
րը լուսամուտները խավար էին, միայն լամպով ներսից լու-
սավորված վարագույրների վրա էր, որ մերթ լնդ մերթ

ուրվագծվում էին տարօրինակ ստվերներ: Դորիանը հետա-
քարդրությամբ նայում էր այդ ստվերներին, որոնք շարժվում
էին ինչպես հսկայական խաղատիկնիկներ և, կենդանի ալա-
յուսների պես, շարժումներ էին անում: Բայց շուտով դրանք
էլ ատելի դարձան: Նրա սրտում խուլ գայրույթ կար: Երբ
թուրվեցին անկյունը, մի կին ինչ-որ բան ձգաց բաց դռնից,
կրկու մարդ մոտ 100 յարդ վազեցին կառքի ետևից: Կառա-
սյունը ետ քշեց նրանց մտրակով:

Ասում են՝ կրքով համակված մարդու մտքերը պտտվում
են շրջանաձև: Իրոք, Դորիան Գրեյի կծուտած ջուրթերը
հուզեմաշ համառությամբ կրկին ու կրկին արտաբերում էին
հույուն և զգայություններին վերաբերող նենգավոր բա-
ռայը, մինչև որ այդ բառերում լրիվ արտացոլվեցին իր
տրամադրությունը և բնականորեն արագացված կրքերը:
Իրերը, որոնք առանց այդ արդարացման էլ դեռ կլիշեին իր
կույանը: Ուղեղում բջիջ առ բջիջ սողում էր մի միտք՝ ապ-
րկու մոլեգին ցանկություն՝ մարդու բոլոր տենչանքներից
ամենասարսափելին, որ սաստկանալով՝ ստիպում էր բա-
լասել յուրաքանչյուր ջիղ, յուրաքանչյուր նյարդ: Տգեղու-
թյունը, որ մի ժամանակ այնքան ատելի էր նրան, որովհետև
կրական էր դարձնում իրերը, այժմ թանկ էր ձիշտ նույն
սլատճառով: Տգեղությունը միակ իրականությունն էր: Բիրտ
վեճերը, գարշելի որջերը, մոլի շվայտանքները, գողերի և
ուսրագիրների ստորություններն ավելի կենսունակ էին
կրկնաց ազդեցության ակնառու իրականությամբ, քան արվես-
տի գեղեցիկ ստեղծագործությունները և երգի անբջային
սլատկերները: Ահա Դորիանը հենց դրանց կարիքն ուներ
մոռացության համար: Երեք օրից հետո նա կազատվեր այդ
կիշողություններից:

Հանկարծ կառապանը ուժեղ ցնցումով կանգնեցրեց

կառույց մութ նրբանցքի մոտ: Տների ցածր տանիքների և խարխուլ ծխնելույզների վերևում բարձրանաւ էին նավերի սև կայմերը: Մշուշի սպիտակ քուլաները, ինչպես տեսիլային առագաստներ, կառչած էին առագաստափայտերին:

– Այստեղ մոտակայքում է, սըր,– խոպոտ ծայնով հարցրեց կառապանը ապակու միջով:

Դորիանն սթափվեց և շուրջը նայեց:

– Այո՛, այստեղ է,– պատասխանեց նա, արագ իջավ կռքից և, կառապանին տալով խոստացած կրկնակի վճար, շտապեց գետափի ուղղությամբ: Տեղ–տեղ մի քանի խոշոր առևտրանավերի վրա լապտերներ էին առկայծում: Լույսը բեկբեկվում էր և ցրվում ջրափոսերի մեջ: Կայմի լույս էլ բոցկտում արտասահման մեկնող շոգենավի վրա, որն ածուխ էր վերցնում: Սահուն սալարկը փայլում էր թաց մակինտոշի պես:

Դորիանն շտապեց դեպի ձախ. նա շուտ–շուտ ետ էր նայում՝ համոզվելու համար արդյոք իրեն չէ՞ն հետևում: Մոտ վեց–յոթ րոպե հետո նա հասավ մի փոքրիկ հին տան, որը սեպվել էր երկու ամայացած գործարանների միջև. Վերնահարկի լուսամուտներից մեկում լամպ էր վառվում: Նա կանգնեց և բախեց դուռը: Դռան բախոցը պայմանական էր: Բիչ անց նա միջանցքում ոտնաձայն լսեց, և դռան շղթան անջատվեց կեռից: Հետո դուռն անաղմուկ բացվեց, և նա ներս մտավ՝ առանց մի խոսք ասելու գեր, թիկնեղ մարդուն, որը սուվերում՝ պատին սեղմված, ճանապարհ տվեց նրան: Միջանցքի ծայրում կախված հնամաշ կանաչ վարագույրը՝ ծածանվեց իր ետևից ներխուժող ուժեղ քամուց: Մի կողմ քաշելով վարագույրը, Դորիանը մտավ երկար, ցածրիկ սենյակը, որ կարծես մի ժամանակ եղել էր երրորդ կարգի պարասրահ: Պատերի վրա վառվում էին գազի ջահեր, որոնց

բաւականցող լույսը աղոտ և շեղ կերպով արտացոլում էր ճանճերի ծերտով կեղտոտած հայելիներում. Գազլի ցուկերի կտուրում ծալքավորված թիթեղյա ցոլարձակների դուրդուցուն լիւն դարձնում լույսի օղակները: Դեղնավուն թեփով ծածկված խոտակը տեղ-տեղ կեղտոտված էր ոտնահետքերով և լիկյորի մուգ բծերով: Մի քանի մալայացի, թիթեղյա վառարանի մոտ սլալգած, վեգ էին խաղում, շատախոսում և ցույց տալիս սպիտակ ատամները: Անկյունում, գլուխը բազուկներին դրած, սևղանին մի նավաստի էր փռվել, իսկ ողջ պատի երկայնքով ձգված խայտաբղետ ներկոտած վաճառասեղանի մոտ երկու հյուծված կին ծաղրում էին մի ծերունու, որը զզվանքով խոզանակում էր վերարկուի թնքերը:

– Նրան թվում է, թե իր վրա կարմիր մրջյուններ են բարձրացել,– հռիռաց կանանցից մեկը, երբ Դորիանն անցավ նրանց մոտով:

Ծերունին սարսափով նայեց կնոջը և սկսեց նվնվալ:

Սևնյակի ծայրում փոքրիկ սանդուղք կար, որ տանում էր դեպի մթնեցրած խցիկը: Հենց որ Դորիանն արագ բարձրացավ երեք երեքուն աստիճաններով, զգաց ափիոնի հեղձուցիչ հոտը: Նա խորը շնչեց, և քթանցքերը դողացին հաճույքից: Եւր ներս մտավ, մի դեղնահեր երիտասարդ, լամպին թնքված, վառում էր երկար, բարակ ծխամորձը, նա նայեց նրան և անվճռականորեն գլխով ողջունեց:

– Դուք այստեղ, Ադրիան,– քրթմնջաց Դորիանը:

– Էլ ուրիշ որտեղ կարող եմ լինել,– անտարբերությամբ պատասխանեց նա,– իմ ծանոթներից ոչ մեկն այժմ չի ուզում խոսել ինձ հետ:

– Ես կարծում էի՝ հեռացել եք Անգլիայից:

– Դարլինգդոնը մտադիր չէ ոչինչ անելու: Եղբայրս վերջապես վճարեց մուրհակը: Ոչ էլ Զորջն է ինձ հետ խո-

տում... Փոյթ չէ,- հառաչելով ավելացրեց նա,- քանի դեռ այս
բալաւսանը կա, ընկերներն ինձ պետք չեն: Թերևս ես չափաւ
զանց շատ ընկերներ եմ ունեցել:

Դորիանը սարսռաց և շրջվեց: Նա հայացքը գցեց արտառույ
կերպարանքների վրա, որոնք տարօրինակ դիրքով պառկած
էին պատահոտված ներքնակներին:

Ջղաձգորեն ծռնոված ձեռքեր ու ոտքեր, բացած բերաններ,
խավարած, անշարժ մարած բիբեր. այդ տեսարանը առինքնեց
Դորիանին: Նրան ծանոթ էր արտասովոր դրախտը, ուր
տանջվում էին նրանք, և գորշ դժոխքը, որ սովորեցնում էր
նոր ուրախության գաղտնիքներ: Նրանք իրենից երջանիկ
էին: Իսկ ինքը մտքերի գերին էր: Հլշողությունն, ինչպես
սարսափելի հիվանդություն, ուտում էր նրա հոգին:

Մերթ ընդ մերթ թվում էր, թե իրեն էին սևեռած Բեզիլ
Հոլլուորդի աչքերը: Այնուամենայնիվ, նա զգաց, որ ինքը չի
կարող այդտեղ մնալ: Ադրիան Սինգլթոնի ներկայությունն
անհանգստացնում էր նրան: Կուզեր լինել այնպիսի տեղ,
որտեղ ոչ ոք իրեն չէր ճանաչում: Նա ուզում էր խուսափել
ինքն իրենից:

- Գնում եմ ուրիշ տեղ,- որոշ դադարից հետո ասաց նա:

- Նավաշինարան:

- Այո:

- Բայց այդ վայրի կատուն, գուցե, այնտեղ լինի: Նրան
այստեղ այլևս չեն թողնում: Դորիանը թոթվեց ուսերը:

- Սիրահարված կանայք սրտխառնոց են ինձ պատճառում:
Կանայք, որ ատում են, ավելի հետաքրքիր են: Բացի այդ,
թմրադեղն այնտեղ ավելի լավն է:

- Միևնույն բանն է:

- Այնտեղինն ինձ ավելի է դուր գալիս: Եկեք գնանք մի
բան խմենք: Խմել եմ ուզում:

- Ես ոչինչ չեմ ուզում.— քրթմնջաց 'Դորիանյու'։

- Ոչինչ, գնանք։

Աղբյուրի Սինգլթոնը ծուլորեն բարձրացավ և, 'Դորիանյուն' հետևեցով, մտավ բար։ Մաշված վերաբերմունքի հագին՝ պատուոված չալմայով մի խառնածին տհաճորեն բացեց ատամները, ուղջունեց, ապա թևկոցով մի շիշ բրենդի և երկու գավաթ ոլոլեց նրանց առաջ։ Երկու կին մոտեցան և սկսեցին շատախոսել։ 'Դորիանը շրջվեց և կամացուկ ինչ-որ բան ասաց Աղբյուրի Սինգլթոնին։ Կանանցից մեկը հեզնանքով ժպտաց։

- Այսօր շատ հպարտ եք, - ծաղրեց նա։

- Ի սեր աստծո, լռեցեք, - գոչեց 'Դորիանը՝ ոտքը՝ խփելով գետնին, - ինչ եք ուզում, փո՛ղ, ահա, վերցրե՛ք և չհամարձակվե՛ք խոսել ինձ հետ։

Մի պահ կարմիր կայծեր բոցկլտացին կնոջ անփայլ աչքերում, բայց նույն ակնթարթին մարեցին, և աչքերը նորից լարձան սառն ու անկենդան։ Նա ետ գցեց գլուխը և ազահորևն հավաքեց դրամը։

Ընկերուհին նախանձով դիտում էր։

- Անօգուտ է, - հառաչեց Աղբյուրի Սինգլթոնը՝ շարունակելով խոսակցությունը, - ես չեմ ուզում վերադառնալ։

- Ինչո՞ւ։

- Ես այստեղ շատ լավ եմ զգում։

- Կգրեք ինձ, եթե որևէ բանի կարիք ունենաք, լավ, - լռությունից հետո հարցրեց 'Դորիանը։

- Գուցե։

- Դե՛, բարի գիշեր։

- Բարի գիշեր, - պատասխանեց երիտասարդը և թաշկինակով սրբելով տոչորվող շուրթերը՝ բարձրացավ աստիճաններն ի վեր։

'Դորիանը ցավով նայեց նրա ետևից և ուղղվեց դեպի

յոյսով: Երբ նա քաշում էր վարագույրը, այլանդակ քրքիւ-
ւալայթեց այն կնոջ ներկած շուրթերից, որին նա փող էր տվել

- Ահա, հեռանում է այդ գրողի տարածը,- խոպոտ ծայնով
ասաց նա՝ զկոտալով:

- Չհամարձակվես այդպես կոչել ինձ, անիծյալ,- պատաս-
խանեց Դորիանը:

Կինը չրխկացրեց մատները:

- Հապա ի՞նչ կուզեիր, որ Հմայիչ Արքայաճն կոչեի քեզ,
համ,- ծչաց նա Դորիանի ետևից:

Ննջած նավաստին, լսելով այդ խոսքերը, ոտքի ցատկեց,
և խելագարի պես նայեց շուրջը: Նրա ականջին հասավ
միջանցքում փակվող դռան ծայնը: Նա հալածվածի պես
դուրս նետվեց:

Մադոդ անձրևի տակ Դորիան Գրեյը շտապում էր գետափի
երկայնքով: Աղբիան Սինգլթոնի հետ ունեցած հանդիպումը,
չգիտես ինչու, զարմանալիորեն վրդովել էր նրան, և ինքն
իրեն հարց էր տալիս՝ արդյոք ճիշտ էր Բեզիլ Հոլլուորդը, որ
վիրավորող անմիջականությամբ ասաց, թե այդ պատանին
խորտակվել է միայն իր մեղքով: Նա կծեց շրթունքը և մի պահ
թախիծ իջավ աչքերին: Սակայն, ի վերջո, իրեն ի՞նչ: Կյանքը
չափազանց կարճ է, որպեսզի ուսերիդ կրես նաև ուրիշի սխալի
ծանրությունը: Յուրաքանչյուր ոք իր անձնական կյանքն ունի
և դրա համար ինքն է վճարում: Ափսոս միայն, որ մի սխալի
համար հաճախ մարդ ստիպված է լինում վճարել անվերջ:
Մարդու հետ ունեցած իր հաշիվներում ճակատագիրը երբեք
չի համարում նրա պարտքերը մարած:

Լինում են պահեր, ինչպես ասում են հոգեբանները,
երբ մեղքի ծարավը կամ այն, ինչ աշխարհը մեղք է կոչում,
այնպես է իշխում մարդուն, որ մարմնի յուրաքանչյուր
ջիղ, ուղեղի ամեն մի բջիջ ահավոր պոռթկումով բնազդ

Լ. ծնում: Այդպիսի պահերին մարդիկ կորցնում են կամրի-
աւատությունը: Ավտոմատների պես նրանք սլսնում
են իրենց սոսկալի վախճանին ընդառաջ: Նյաւնք այլ
կը չունեն, իսկ նրանց գիտակցությունը մեռնում է, կամ
կոն ապրում է, ապա ընդվզումները դարձնում է: աւելի
զմայլելի, անհնազանդությունն՝ ավելի դյուրիշ: Չէ՛ ուր
աւտվածաբաններն անընդհատ կրկնում են, որ բոլոր
միւլքերից ամենասարսափելին չհնազանդվելու մեղքն է: Մեծ
ուրիշ՝ չարի նախահայրը, չարության լուսաստղը հենց այդ
պատճառով է վտարվել երկնքից:

Անզգա ամեն ինչի նկատմամբ, ծարավի միայն մոլության
սկոփանքներին՝ Դորիան Գրեյը, պղծված մտքերով և
բւղվզող հոգով շտապում էր առաջ՝ անընդհատ արա-
զացնելով քայերը: Երբ նա անհայտացավ կիսամբին
կամարի տակ, որ հաճախ հանդիսացել էր կարծ ուղի՝ դեպի
վատահամբավ որջը, ուր այժմ նա գնում էր, հանկարծ մեկն
ամուր բռնեց նրան և, չթողնելով, որ սթափվի, կոպտորեն
յունեց վզից և պատին սեղմեց:

Դորիանը հուսահատորեն սկսեց պայքարել կյանքի համար:
Նա սարսափելի ճիգով ազատեց վիզը սեղմող մատներից:
Այդ նույն ակնթարթին չրխկաց ատրճանակի շնիկը, և նա
տեսավ գլխին ուղղված ատրճանակի փայլուն փողը: Նրա
յիմաց կանգնած էր ոչ բարձրահասակ, ամրակազմ մարդու
խավար մի կերպարանք:

- Ինչ եք ուզում, - խեղդվելով՝ հարցրեց Դորիան Գրեյը:

- Չշարժվեք, - հրամայեց մարդը, - մի շարժում, և՛ կրա-
կնմ:

- Դուք խելագարվել եք: Ես ինչ եմ արել Ձեզ:

- Դուք խորտակեցիք Սիբիլ Վեյնի կյանքը, - եղավ պա-
տասխանը, - իսկ Սիբիլ Վեյնն իմ քույրն էր: Նա ինքնասպա-

նություն կատարեց: Ես գիտեմ՝ Դուք եք հանցավոր նյութ մահվան համար, և ես երդվել եմ Ձեզ սպանել: Տարինևի շարունակ որոնել եմ Ձեզ, չէ՞ որ ոչ մի հետք, ոչ մի նշան չունեի... Միայն երկու հոգի կարող էին Ձեզ նկարագրել. բայց երկուսն էլ մեռած են: Ես ոչինչ չգիտեի Ձեր մասին, բացի այս փառաբանական անունից, որով նա կոչում էր Ձեզ: Եվ ահա այս գիշեր պատահմամբ լսեցի այդ անունը: Աղոթեցե՛ք աստծուն, որովհետև հիմա մեռնելու եք:

Դորիան Գրեյը քարացել էր սարսափից:

- Ես նրան երբևէ չեմ ճանաչել,- կակազեց Դորիանը. երբեք չեմ լսել նրա մասին: Դուք խելագար եք:

- Ավելի լավ է՝ խոստովանեք Ձեր մեղքը, որովհետև Դուք պետք է մեռնեք. դա նույնքան ճիշտ է, որքան այն, որ ես Ջեյմս Վեյնս եմ:

Սոսկալի պահ էր: Դորիանը չգիտեր՝ ինչ ասել, ինչ անել:

- Ծնկի,- մոռնաց Ջեյմս Վեյնը,- մի թույլ եմ տալիս աղոթելու համար, ոչ ավելին: Այս գիշեր ես նավարկության եմ դուրս գալիս Հնդկաստան, իսկ մինչ այդ պետք է անել լուրջ կատարեմ: Միայն մի թույլ: Վերջ:

Դորիանը կանգնած էր թևաթափ: Սարսափից կաթվածահար, նա չգիտեր ինչ անել: Հանկարծ հույսի մի շող բոցկլտաց ուղեղում:

- Սպասեցե՛ք,- գոչեց նա,- քանի տարի է՝ ինչ մահացել է Ձեր քույրը: Շուտ պատասխանեք:

- Տասնութ տարի,- ասաց նավաստին,- իսկ ինչո՞ւ եր հարցնում: Տարին ինչ նշանակություն ունի:

- Տասնութ տարի,- ծիծաղեց Դորիան Գրեյը՝ հաղթական ծայնով, - տասնութ տարի, տարեք ինձ լապտերի մոտ և նախքան դնեք:

Մի պահ Ջեյմս Վեյնը վարանեց՝ չհասկանալով՝ ինչ էր

ուզում ասել Դորիանը: Հետո բռնեց նրան և բալոյ տակ
կամարից դուրս: Լապտերի լույսը, որքան էլ աղուտ էր և
փշոլ քամուց բեկրեկուն, բայց և այնպես ցույց տվեց տնա-
վոր թյուրիմացությունը, որի մեջ ընկել էր Զեյմա Վեյնը: Այն
մաքուր դեմքը, որին նա ուզում էր սպանել, փթթում էր երկ-
ուսսարոյության անկեղծ պայծառությամբ: Նա քսան զա-
յուսն բոլորած պատանուց մեծ լինել չէր կարող: Գուցե նա մի
րիչ մեծ կամ ամենևին էլ մեծ չլիներ, քան քույրը՝ տարիներ
առաջ: Պարզ էր, որ դա այն մարդը չէր, որ խորտակել էր իր
բոլոր կյանքը:

Զեյմա Վեյնը բաց թողեց Դորիանին և մի քայլ ետ գնաց:

- Աստված իմ, ներիր ինձ,- գոչեց նա,- քիչ էր մնում՝ Ձեզ
սպանել:

Դորիան Գրեյը խոր շունչ քաշեց:

- Այո, Դուք կանգնած էիք սարսափելի ոճրի եզրին,- դա-
մանորեն նրան նայելով՝ ասաց Դորիանը,- թող Ձեզ դաս
լինի, որ մարդ իր ձեռքով չպետք է լուծի վրեժը: Դա իր՝
ուստծո գործն է:

- Ներեցեք, սըր,- քրթմնջաց Վեյնը,- ես խաբված եմ: Այդ
տնիծյալ որջում լսած մի պատահական բառ ինձ բերեց սխալ
հետքով:

- Լավ է տուն գնաք և թաքցնեք Ձեր ատրճանակը, թե չէ
փորձանքի մեջ կընկնեք,- ասաց Դորիանը և, շրջվելով կրուն-
կի վրա, դանդաղ քայլերով հեռացավ:

Զեյմա Վեյնը դեռ սարսափած կանգնել էր սալարկին: Նա
աւերող մարմնով ցնցվում էր:

Քիչ անց մի սովեր, որ սահում էր թաց պատի երկայնքով,
խայտնվեց լապտերի լույսի տակ և համրաքայլ մոտեցավ.
նրան: Ուսին զգալով ինչ-որ մեկի ձեռքը՝ նա ցնցվեց և նայեց
յուրջը: Դա այն կանանցից մեկն էր, որ խմում էր գինևաանր:

- Ինչո՞ւ նրան չսպանեցիր,- շնչաց նա՝ սմբած դեմքը բոլորովին մոտեցնելով նրա երեսին:- Երբ դու փախար Դեյլիից, ես իսկույն կռահեցի, որ նրան ես հետևում: Էհ, հիմա՛ր, պետք է սպանեիր: Նա կույտերով փող ունի և սրիկայի մեկն է...

- Նա իմ փնտրած մարդը չէ,- պատասխանեց նավաստին,- և ինձ պետք չէ ուրիշի փողը: Ինձ պետք է մեկի կյանքը: Մարդը, որի կյանքը ես ուզում եմ, պետք է մոտավորապես հիմա քառասուն տարեկան լինի: Իսկ սա գրեթե պատանի է, Փա՛ռք աստծո, որ ձեռքերս չթաթախվեցին անմեղ արյան մեջ:

Կինը դառնորեն ծիծաղեց:

- Գրեթե պատանի, - ծաղրեց նա, - ղնց չէ: Եթե ուզում ես իմանալ՝ ահա արդեն տասնութ տարի է, ինչ Հմայիչ Արքայազնն ինձ այն է դարձրել, ինչ հիմա կամ:

- Ստույ՞մ ես,- գոչեց Ջեյմս Վեյնը: Կինը ձեռքերը մեկնեց դեպի երկինք:

- Երդվում եմ աստծով՝ ճշմարտությունն եմ ասում:

- Աստծո՞վ:

- Թող լեզուս պապանծվի, եթե սուտ եմ ասում: Նա այստեղ եղողներից ամենասրիկան է: Ասում են՝ նա հոգին սատանային է ծախել գեղեցիկ դեմքի համար: Ահա արդեն տասնութ տարի է, որ ես ճանաչում եմ նրան: Այն ժամանակից ի վեր գրեթե չի փոխվել... Իսկ ես...- թախծոտ քմծիծաղով ավելացրեց նա:

- Ուրեմն երդվո՞ւմ ես:

- Երդվում եմ,- տափակ շուրթերից լսվեց խռպոտ արծազանքը,- բայց ինձ չմատնես,- ասաց նա,- ես նրանից վախենում եմ: Եվ մի քիչ փող տուր, գիշերօթևանի համար:

Կատաղած հայիոյանքով նա նետվեց դեպի փողոցի անկյունը, բայց Դորիան Գրեյն անհայտացել էր: Երբ Ջեյմս Վեյնը ետ նայեց, կինը նույնպես չկար:

Մի շաբաթ անց Դորիան Գրեյը, իր Սելբի-Ռոյալ դաստափակարանի ծաղկաջերմոցում նստած, գրուցում էր սխրոսխիլ Մանուսկրիպտը դքսուհու հետ, որը իր վաթսուհ տարեկան սմբուկամուսնու հետ միասին հյուր էր եկել Գրեյին: Թեյի ժամն էր, ժամայակն լուսամփոփի տակ գտնվող մեծ լամպի մեղմ լույսն ընկել էր նրբագեղ հալսճապակու և դրվագակերտ արծաթե սպասքի վրա: Սեղանի մոտ տնտեսուհու դեր կատարողը դրսուտիկ էր: Նրա սպիտակ ձեռքերը շնորհագեղությամբ յուրժվում էին գավաթների միջև, իսկ լիքը շուրթերը ժպտում էին ինչ-որ խոսքերից, որ շշջացել էր նրան Դորիանը: Լորդ Հենրին, հյուսված բազկաթոռի մետաքսե բարձերին հեկված, նրանց էր դիտում: Դեղձագույն բազմոցին նստել էր լեդի Նարբորոն՝ ձևացնելով, թե լսում է դքսին, որն իր հավաքածուի համար վերջերս ձեռք բերած բրազիլական յգեզի նկարագրությունն էր անում: Սմոկինգ հագած երեք սլոնամոլներ կարկանդակ էին հյուրասիրում կանանց: Դասուակերտ էին եկել տասներկու հյուրեր, իսկ հաջորդ օրն սովելի շատ էին սպասում:

- Այդ ինչի մասին եք գրուցում,- հարցրեց լորդ Հենրին՝ մոտենալով դեպի սեղանը և դնելով ձեռքի գավաթը,- հուսով եմ Դորիանը պատմել է Ձեզ, Գլենդիս, իմ նախագծի մասին՝ նոր անուն տալ ամեն ինչին: Հիանալի միտք է:

- Բայց ես չեմ ուզում փոխել իմ անունը, Հարրի,- առարկեց դրսուտիկն՝ նրան հառելով հրաշալի աչքերը,- ես միանգամայն գոհ եմ իմ անունից, և համոզված եմ, որ միստեր Գրեյն էլ իր անունից է գոհ:

- Սիրելի Գլենդիս, ես աշխարհում ոչ մի բանի հետ չեի փոխի ոչ Ձեռ և ոչ էլ Դորիանի անունը: Դրանք երկուսն էլ հիանալի անուններ են: Ես գլխավորապես ծաղիկները նկատի ունեմ:

Լիրևկ ևս իմ կոճականցքի համար խոլորձ քաղեցի: Չքնաօլ յժավոր ծաղիկ էր՝ յոթ մահացու մեղքերի պես հմայիլ: Անվուրթորեն հարցրեցի պարտիզպանին, թե ինչպես է, կոչվում այդ ծաղիկը: Նա ասաց, որ դա «Ռոբինզոնյանա»-յի տեսակ է, կամ ինչ-որ նման անբարեհնչյուն մի բան: Դառու ճշմարտություն է, բայց մենք կորցրել ենք իրերին գեղեցիկ անուն տալու հատկությունը: Անուններն ամեն ինչ են: Ես երբեք չեմ ընդհարվում արարքների հետ, ես պահանջկոտ եմ միայն բառերի հանդեպ: Ահա թե ինչու զրականության մեջ ես ատում եմ գոեհիկ ռեալիզմը: Մարդուն, որը կարող է բախլիս բառ անվանել, անհրաժեշտ է ստիպել, որ աշխատի դրանով, միայն դյա համար է, որ նա պիտանի է:

- Ուրեմն, ինչպես կոչենք Ձեզ, Հա՛րրի, - հարցրեց դքսուհին:

- Արքայազն Պարադոքս, - ասաց Դորիանը:

- Հոյակապ է, - բացականչեց դքսուհին:

- Լսել անգամ չեմ ուզում այդ անունը, - ծիծաղեց լորդ Հենրիս՝ ընկղմվելով բազկաթոռի մեջ: - Պիտակը, որ կպավ, այլևս նրանից փրկում չկա: Ո՛չ, ես հրաժարվում եմ այդ տիտղոսից:

- Թագավորները հրաժարվելու իրավունք չունեն, - որպես նախազգուշացում՝ հնչեց գեղեցիկ շուրթերից:

- Ուրեմն, Դուք ուզում եք, որ ես գահի պաշտպան լինեմ:

- Այ՛:

- Բայց ես կհռչակեմ վաղվա ճշմարտությունները:

- Ես գերադասում եմ այսօրվա սխալները, - պատասխանեց դքսուհին:

- Դուք ինձ գինաթափում եք, Գլենդիս, - գոչեց նա՝ վարակվելով նրա քմահաճ տրամադրությունից:

- Վերցնում եմ միայն Ձեր վահանը, Հա՛րրի, բայց նիզակը թողնում եմ Ձեզ:

- Ես երբեք չեմ մենամարտում գեղեցկության դեմ, - ասաց

յույլ Հենրին ձեռքի շարժումով:

Դա Ձեր սխալն է, Հարրի, հավատացնք ինձ: Դուք չու-
վազանց լայնոր են գնահատում գեղեցկությունը:

Ինչպես կարող եք այդպես խոսել: Ես ընդունում եմ,
որ ավելի լավ է լինել գեղեցիկ, քան՝ առաքինի: Բայց մյուս
կողմից էլ, ես առաջինն եմ պատրաստ համաձայնել, որ ավելի
լավ լավ է լինել առաքինի, քան՝ տգեղ:

- Ուրեմն, տգեղությունը յոթ մահացու մեղքերից՝ մեկն է,-
բույսականչեց դքսուհին,- իսկ ինչո՞ւ էիք հենց նոր խոլորձը
նրանց հետ համեմատում:

- Տգեղությունը յոթ մահացու առաքինություններից՝ մեկն
է, Իսկ Դուք, որպես կայուն տորի, չպետք է թերագնահատեք
դրանք՝ զարեջուրը, աստվածաշունչը և յոթ մահացու առաքի-
նությունները Անգլիային դարձրել են այնպիսին, ինչպիսին
իմա է:

- Ուրեմն, Դուք չե՞ք սիրում մեր երկիրը,- հարցրեց դքսու-
հին:

- Ես ապրում եմ այնտեղ:

- Որպեսզի ավելի լավ պարսավեք:

- Իսկ Դուք ուզում էիք, որ ես համաձայնվեմ Եվրոպայի
կայսրի հետ:

- Նրանք ի՞նչ են ասում:

- Որ Տարսյուֆը վտարանդվել է Անգլիա և առևտրալսա-
նութ բացել:

- Դա Ձեր սրախոսությունն է, Հարրի:

- Ես դա Ձեզ եմ նվիրում:

- Ձեմ կարող օգտագործել: Դա չափազանց մեծ ճշմար-

1 Տոթ մահացու մեղքերն են՝ հպարտությունը, զայրույթը, նախանձը,
կայրիքը, որկրամոլությունը, ժխտությունը, ծուլությունը:

2 Յոթ մահացու առաքինություններն են՝ հավատը, հույսը, բարեգործությունը,
ուղիմտությունը, արդարությունը, կայունությունը, զսպվածությունը:

սուրբություն է:

- Պետք չէ վախենալ, մեր հայրենակիցները երբեք չեն ճանաչում իրենց դիմանկարները:

- Նրանք ողջամիտ են:

- Ավելի շուտ՝ խորմանակ, քան՝ ողջամիտ: Երբ նրանք ամփոփում են բալանսը, իրենց հիմարությունը ծածկում են հարստությամբ, իսկ արատը՝ շողոքորթությամբ:

- Այնուամենայնիվ, մենք մեծ գործեր ենք կատարել:

- Այդ մեծ գործերը մեր վզին են փաթաթվել, Գլենդիս:

- Բայց մենք կերել ենք նրանց ծանրությունը:

- Միայն մինչև Արժեթղթերի բորսան:

Դքսուհին տարուբերեց գլուխը:

- Ես հավատում եմ ազգի մեծությանը, - բացականչեց նա

- Դա նախաձեռնության վերապրուկն է միայն:

- Դրա մեջ է զարգացման գրավականը:

- Անկումն ինձ ավելի է հրապուրում:

- Իսկ ի՞նչ կասեք արվեստի մասին, - հարցրեց դքսուհին:

- Դա հիվանդություն է:

- Սէրը:

- Պատրանք:

- Կրո՞նք:

- Հավատի շինծու փոխմիջոց:

- Դուք թերահավատ եք:

- Երբեք: Թերահավատությունը հավատի նախասկիզբն է:

- Ո՞վ եք Դուք:

- Բնորոշել՝ նշանակում է սահմանափակել:

- Տվեք ինձ թեկուզ մի թել:

- Թելերը կտրվում են: Եվ դուք կարող եք կորցնել Ձեր ճանապարհը լաբիրինթոսի մեջ:

- Դուք ինձ շփոթեցնում եք: Եկեք ուրիշի մասին խոսենք:

- Մեր տանտերը սքանչելի թեմա է: Տարիներ սուսօք նրան տնվանում էին Հմայիչ Արքայազն:

- Ա՛յս, մի՛ հիշեցրեք,- գոչեց Դորիան Գրեյը:

- Մեր տանտերն այս երեկո բավականին անուանելի է, կուսմբելով՝ ասաց դքսուհին:- Նա, կարծես, ենթադրում է, թե Մոնմաութը ամուսնացել է ինձ հետ զուտ գիտական ինտաքրքրությունից դրդված՝ իմ մեջ տեսնելով ժամանակակից թիթեռի ամենալավ նմուշը:

- Բայց ես հուսով եմ, որ նա Ձեզ գնդասեղին չի ամրացնի, յրքուհի՛,- ծիծաղեց Դորիանը:

- Օ՛հ, դա արդեն իմ սպասուհին է անում, միստեր Գրեյ, կյր բարկանում է ինձ վրա:

- Իսկ ինչո՞ւ է բարկանում, դքսուհի՛:

- Ամենադատարկ բաների համար, միստեր Գրեյ, կհավատա՞ք: Սովորաբար, այն պատճառով, որ ես գալիս եմ տուն իննից տաս պակաս և նրան ասում, որ ինձ հազցնի մոտ ութն անց կես:

- Ինչպիսի՛ բծախնդրություն: Դուք պարզապես նրան պետք է վռնդեք, դքսուհի:

- Չեմ կարող, միստեր Գրեյ: Չէ՞ որ նա ինձ համար գլխարկների ձևեր է հնարում: Հիշո՞ւմ եք այն գլխարկս, որ դրել էի լեդի Հիլսթոնի երեկույթում: Չեք հիշում, բայց քաղաքավարությունից դրդված ձևացնում եք, թե հիշում եք:

Հա, ուրեմն այդ գլխարկը նա պատրաստել էր ոչնչից: Բոլոր լավ գլխարկները ստեղծվում են ոչնչից:

- Ինչպես բոլոր լավ համբավները, Գլենդիս,- ընդհատեց յուրդ Հենրին:- Իսկ եթե մարդ, իսկապես, որևէ բանով հայտնի է, դառնում, թշնամիներ է վաստակում: Հասարակության համակրանքը շահելու համար պետք է միջակություն լինել:

- Բայց ոչ կանանց մոտ,- տարուբերելով գլուխն՝ ասաց

դրսուիին,- կանայք են ղեկավարում աշխարհը: Հավատաց
նում եմ Ձեզ, մենք տանել չենք կարող միջակությունները:
Մենք՝ կանայքս, ինչպես ասել է մեկը, սիրում ենք մեր ականջ-
ներով: Իսկ Դուք՝ Ձեր աչքերով, եթե, ընդհանրապես, երբև,
սիրում եք:

- Ինձ թվում է՝ հենց միայն դա է, որ ամբողջ կյանքում
անում ենք,- կամաց ասաց Դորիանը:

- Էհ, նշանակում է՝ ոչ ոքի չեք սիրում իրականում, միստեր
Գրեյ,- պատասխանեց դքսուհին վշտացած կատակով:

- Իմ սիրելի Գլեդիս,- բացականչեց լորդ Հենրին,- ինչ-
պես կարող եք այդպես խոսել: Սերն ապրում է կրկնությամբ,
իսկ կրկնությունը բաղձանքը դարձնում է արվեստ: Բացի
այդ, ամեն անգամ, երբ սիրում ես, սիրում ես առաջին ան-
գամ: Փոխվում է կրքի առարկան, իսկ կիրքը միշտ մնում է
անկրկնելի: Փոփոխությունը միայն ուժեղացնում է կիրքը:
Կյանքը լավագույն դեպքում մարդուն նվիրում է միայն մի
մեծ ակնթարթ, և երջանկության գաղտնիքը հենց նրանում
է, որ այդ մեծ ակնթարթը որքան կարելի է հաճախ վերա-
կենդանացնել:

- Նույնիսկ եթե Ձեզ ծանր խոցել է, Հարրի,- կարճ
լուրջությամբ հետո հարցրեց դքսուհին:

- Այո, հատկապես, եթե Ձեզ խոցել է,- պատասխանեց
լորդ Հենրին:

Դքսուհին շրջվեց և տարօրինակ հայացքով նայեց Դորիան
Գրեյին:

- Դուք ինչ կասեք այդ մասին, միստեր Գրեյ,-հարցրեց նա:

- Դորիանը մի պահ վարանեց: Ապա ետ գցեց գլուխը և
ծիծաղեց:

- Ես միշտ համաձայն եմ Հարրիի հետ, դքսուհի:

- Նույնիսկ երբ սխալ է:

- Հարրին երբեք չի սխալվում, դքսուհի:
- Իսկ նրա փիլիսոփայությունը Ձեզ օգնել է, երջանկաբույր:
- Ես երբեք երջանկություն չեմ փնտրել: Ո՛րն է, պետք երջանկությունը: Ես հաճույք եմ փնտրել:
- Եվ գտնել եք, միստեր Գրեյ:
- Հաճախ: Չափազանց հաճախ:
- Դքսուհին հառաչեց:
- Իսկ ես անդորր եմ փնտրում, - ասաց նա, - և եթե իմնալիս եմ ու զգեստս չփոխեմ, հանգիստ չեմ լինի այս երեկո:
- Թույլ տվեք Ձեզ համար խոլորձներ բերեմ, դքսուհի, - լուրջականչեց Դորիանը՝ ոտքի ցատկելով և վազելով խողպաշերմոցի խորքը:
- Դուք անամոթաբար կոտրատվում եք նրա հետ, Գլեդին, - ասաց լորդ Հենրին իր զարմուհուն: Զգուշացե՛ք: Նա շատ յուրթիչ է:
- Եթե այդպիսին չլինեք, չէր լինի և ճակատամարտ:
- Նշանակում է՝ հույնը հույնի վրա է գնում¹:
- Ես կողմնակից եմ տրոյացիներին, նրանք պայքարում էին կնոջ համար:
- Եվ պարտվեցին:
- Գերությունից էլ վատ բաներ գոյություն ունեն, - պատասխանեց նա:
- Դուք սլանում եք քառատրոփ՝ սանձերը բաց թողած:
- Կյանքը հենց սլացքի մեջ է, - եղավ պատասխանը:
- Այս գիշեր կգրեմ իմ օրագրում:
- Ի՛նչ:
- Որ այրված երեխան նորից կրակի է ձգտում:

¹ Հույնը հույնի վրա է գնում - արտահայտություն Նատանկյա Լիի (1653-1692) «Հակառակորդ թագուհիները» դրամայից, երբ պայքարում են երկու հավասար իզոթություն ունեցող մարդիկ կամ բանակներ, պայքարի դաժան է լինում: Հասկացվում է Ֆիլիպպիի և Լկեքսանդր Մակեդոնացու պիմադրությունը հունական պետության վրա:

- Կրակն ինձ լի էլ խանձել, Հարրի: Իմ թներն անվնաս են:

- Եվ այդ թները ծառայում են Ձեզ ամեն ինչի համար, բացի՝ թոփքից:

- Խիզախությունը տղամարդկանցից անցել է կանանց Մեզ համար դա նոր զգայություն է:

- Դուք գիտեք, որ հակառակորդ ունեք:

- Ո՞վ է:

Լորդ Հենրին ծիծաղեց:

- Լեդի Նարբորոն,- շշջաց լորդ Հարրին,- նա ուղղակի պաշտում է սրան:

- Դուք ինձ ստիպում եք մոայլ նախազգացումով համակվել: Անտիկ գեղեցկությունը միշտ ճակատագրական է մեզ՝ ռոմանտիկներին համար:

- Կանայք են ռոմանտիկները: Դուք զինված եք գիտության բոլոր մեթոդներով:

- Տղամարդիկ են մեզ սովորեցրել:

- Բայց ձեզ ուսումնասիրել չեն կարողացել:

- Ապա նկարագրեք մեր սեռը,- եղավ դքսուհու մարտահրավերը:

- Դուք սֆինքս եք՝ առանց գաղտնիքի:

Դքսուհին ժպտալով նայեց նրան:

- Որքան ուշացավ միստեր Գրեյը,- ասաց նա,- գնանք օգնենք: Չէ որ ես չեմ ասել, թե ինչ գույնի զգեստ եմ հագնելու:

Դուք պետք է Ձեր շրջազգեստը հարմարեցնեք նրա ընտրած խոլորձներին, Գլենդիս:

- Դա կլինեք վաղաժամ անձնատրություն:

- Ռոմանտիկան արվեստում սկսվում է գազաթնակետային պահից:

- Բայց ես պետք է ինձ համար նահանջի ճանապարհ ապահովեմ:

- Ինչպես պարթևները¹:

- Նրանք փրկություն գտան անապատում: Ես այդ չեմ կարող:

- Կանայք միշտ չէ, որ կարող են ընտրություն կատարել, պատասխանեց լորդ Հենրին: Նա հագիվ վերջացրեց նոստալասությունը, երբ հանկարծ ծախկաջերմոցի հետու ծայրից խուլ տնքոց և ծանր թրմփոց լսվեց: Բոլորն էլ ցնցվեցին: Դքսուհին սարսափից քարացավ տեղում, իսկ լորդ Հենրին, վախվորած աչքերով, արմավենիների տարուբերվող ճյուղերի միջով ներքև սլացավ, որտեղ սալահատակին, կոնսն ի վայր ընկած էր Գրեյը՝ խոր ուշաթափված: *

Նրան անմիջապես տեղափոխեցին երկնագույն հյուրանոնյակը և պառկեցրին բազմոցի վրա: Շուտով ուշքի եկավ և ուսրակուսանքով շուրջը նայեց:

- Ի՞նչ է պատահել,- հարցրեց նա,- ճի, հիշեցի, այստեղ ապահով եմ, Հանրի,- նա սկսեց դողալ:

- Սիրելի Դորիան,- պատասխանեց լորդ Հենրին,- Դուք պարզապես ուշաթափվեցիք, ոչինչ չկա: Հավանաբար գերհոգնածությունից է: Ավելի լավ է՝ ճաշի մի եկեք: Ձեզ կփոխարինեմ:

- Ո՛չ, կգամ,- դժվարությամբ բարձրանալով՝ ասաց Դորիանը,- ավելի լավ է՝ գնամ: Ձեմ ուզում մենակ մնալ:

Նա գնաց իր սենյակը և հագուստը փոխեց:

Ճաշի ժամանակ նա ցույց էր տալիս, թե ինքը անհոգորեն ուրախ է, բայց այդ ուրախության մեջ ինչ-որ վիատություն կար: Նա մերթ ընդ մերթ սարսափից ցնցվում էր, երբ հիշում էր ծաղկաջերմոցի լուսամուտին սեղմված Ջեյմս Վեյնի՝ թաթանի պես սպիտակ դեմքը իրեն դիտելիս:

¹ Հին պարթևները մարտի ժամանակ նետը արծակելուց հետո շրջում էին ձիու ղուլիսը՝ ձնացնելով, թե պատրաստվում են փախչել:

Հաջորդ օրը Դորիանը տնից դուրս չեկավ, ժամանակի մեծ մասն անցկացրեց իր սենյակում՝ մահվան սարսափիլյ ուժասպառ. թեև կյանքի նկատմամբ նա արդեն անտարբեր էր: Այն միտքը, թե իրեն հետապնդում են, դարանակալում, որոգայթ լարում, սկսել էր ծնշել նրան: Բավական էր վարագույրը քամուց շարժվեր, Դորիանը ցնցվում էր: Լուսամուտներին բախվող Նոր հողմահար տերևները հիշեցնում էին նրան իր չիրականացած վճիռների մասին, և նրա մեջ բուռն ափսոսանք էին արթնացում: Հենց որ փակում էր աչքերը, կրկին նավաստու դեմքն էր տեսնում՝ քրտնած ապակուց իրեն նայելիս, և նորից սարսափը ծանր ձեռքով սեղմում էր սիրտը:

Բայց, ով գիտե, գուցե դա իր երևակայությունն էր, որ գիշերվա խավարից դուրս էր կանչել վրիժառուի ուրվականին, և նրան սպասող հատուցման սարսափելի տեսարաններ է պատկերում: Իրականությունը քառս է, բայց մարդկային երևակայության մեջ ինչ-որ սարսափելի տրամաբանություն կա: Երևակայությունն է ստիպում, որ զղջումը կրնակակոխ հետևի մեղքին: Միայն երևակայությանն է մեզ համար պատկերում մեր գործած մեղքերի զարհուրելի հետևանքները: Փաստերի իրական աշխարհում մեղսագործները չեն պատժվում, ոչ էլ՝ անմեղները հատուցվում: Հաջողությունը տրված է ուժեղին, իսկ ձախորդությունը նետված է թույլին: Ահա բոլորը:

Եվ վերջապես, եթե որևէ օտարական թափառեր տան շուրջը, սպասավորները կամ պահապանները կնկատելին: Եթե ծաղկաթմբերին ոտնահեռքեր լինեին, պարտիզպաններն անմիջապես կզեկուցեին Դորիանին: Ո՛չ, դա լոկ իր երևակայությունն էր: Սիրիլ Վենսի եղբայրը չէր վերադարձել

նրան սպանելու համար: Նա գնացել էր նավարկության և մի օր կուլ կգնա ալեկոծ ծովին: Նրանից, այնուամենայնիվ, վտանգ չէր սպառում: Չէ որ այդ մարդը չգիտեր և չէ, և էլ կարող իմանալ, թե ո՞վ է ինքը: Երիտասարդության դիմակը փրկել էր իրեն:

Եվ սակայն, եթե դա լիներ լոկ մտապատրանք, սոսկալի էր մտածել, թե խիղճը կարող է տեսնել տեսանելի կերպարանքով զարհուրելի տեսիլքներ և ստիպել նրանց, որ հայտնվեն մարդու աչքին: Ինչ կլիներ նրա կյանքը, եթե գիշեր ու ցերեկ իր ոճրի տեսիլները նայեն նրան՝ մութ անկյուններից, ծաղրեն թաքստոցներից, շնչան ականջին խնջույքի ժամանակ, արթնացնեն նրան սառցե մատներով, կրթ ինքը քնած է: Ուղեղը սողոսկող այդ մտքից Դորիանը մտնելային գույն ստացավ և սարսափից սառեց: Օհ, ինչո՞ւ խելահեղության մուլեգին պահին նա սպանեց ընկերոջը: Ուրա՞ն գարհուրելի է այդ տեսարանի հիշողությունը: Մոռվի նա կրկին տեսավ այդ ամենը: Յուրաքանչյուր ահարկու մանրամասնություն վերականգանցավ էլ ավելի քստմնելի: Ահա ժամանակի խավարչտին անդունդից արյունաթաթալս հագուստով ելավ իր ոճրագործության տեսիլքը:

Երբ լորդ Հենրիին ժամը վեցին մտավ ննջարան, նա Դո-
րիանին գտավ աղեկտուր արտասվելիս: Միայն երրորդ օրը
նա համարձակվեց դուրս գալ տնից: Ձմռան վաղորդյան, սոճու
լույսով հագեցած օդը վերադարձրեց նրա զվարթությունը և
կյանքի հրավառ տենչը: Բայց փոփոխման պատճառը միայն
դա չէր: Դոքիանի ամբողջ հոգին ըմբոստացել էր տառա-
պանքի անսահմանության դեմ, որ ցականում էր խեղդել և
վրդովել նրա սքանչելի անդորրը: Այդպես է լինում բոլոր
նրբազգաց բնավորությունների հետ: Ուժեղ կրքերը, երև-
չասնձահարվեն, կործանում են այդպիսի մարդկանց: Այդ

կյրերը կամ սպանում են մարդուն, կամ իրենք են մեռնում: Աննշան տրտմություններն ու աննշմար սերերը կենսունակ են: Մեծ սերերն ու մեծ վշտերն են, որ կործանվում են իրենց առատությունից:

Բացի այդ, Դորիանը համոզել էր իրեն, որ ինքը իր սարսափահար երևակայության զոհն է և այժմ հիշում էր այլ սարսափները ինչ-որ ներողամիտ կարեկցանքով, որի մեջ քիչ չէր արհամարհանքի բաժինը:

Նախաճաշից հետո մի ժամ նա դքսուհու հետ զբոսնեց պարտեզում, ապա պուրակի միջով գնաց այն տեղը, որտեղ պետք է հավաքվեին որսորդները: Ճթճթան սառնամանիքը կարծես խոտը աղով էր ծածկել: Երկինքը նման էր կապույտ մետաղե շրջած գավաթի: Հանդարտ լճի ափին եղեգը բոլորապատվել էր սառույցի նեղ շերտով:

Սոճու անտառեզրին Դորիանը տեսավ դքսուհու եղբորը՝ սըր Ջեոֆֆրի Քլաուսթոնին, որը հրացանից գցում էր երկու դատարկ փամփուշտը: Դորիանը ցատկեց կառքից և, հրամայելով հեծյալ սպասավորին տուն տանել իր զամբիկին, չորացած պատերի և խիտ մացառուտի միջով մոտեցավ հյուրին:

- Լավ որս արեցի՞ք, Ջեոֆֆրի,- հարցրեց նա:

- Այնքան էլ ոչ, Դորիան: Ըստ երևույթին թռչունները դաշտ են թռել: Ավելի լավ կլինե՞ր՝ նախաճաշից հետո այլ տեղ գնանք:

Դորիանը սկսեց քայլել նրա հետ: Սուր, անուշաբույր օդը, արևի ալ ոսկեգույն ցուլքն անտառում, որսահալածների՝ ժամանակ առ ժամանակ թնդացող խռպոտ ճիչերը, որոնց հետևում էր հրացանների սուր չխկոցը, հրապուրում էին նրան և համակում չքնաղ ազատության զգացումով: Նա ամբողջովին տրվել էր անհոգ երջանկությանն ու անսահման

անվրդով ուրախությանը:

Հանկարծ նրանց դիմաց՝ մոտ քսան յարդ հեռու, հին խոտի խոշոր դեզի տակից սրածայր ականջներով խլշած մի նաւաւստակ դուրս թռավ և, ետևի երկար ոտներով ձգած, սրընթաց նետվեց մացառուտի խորքը: Ջեռֆֆրին անմիջապէս լարծրացրեց հրացանը, բայց կենդանու վայելչակազմ շարժման մեջ ինչ-որ բան կար, որ զարմանալիորեն գրավեց Դորիան Գրեյին, և նա նույն ականթարթին գոռաց.

- Չկրակեք, Ջեռֆֆրի, թող ապրի:

- Ինչ անհեթեթություն, Դորիան,- ծիծաղեց նա և նապաստակի՝ թավուտը մտնելու պահին կրակեց: Լսվեց երկու ձիւ՝ վիրավոր նապաստակի ահավոր ճիչը և մարդու հոգեվարքի ձիւ, որ ավելի սոսկալի էր:

- Աստված իմ, որսահաւածի վրա եմ կրակել,- բացականչեց Ջեռֆֆրին,- այդ ռոր ավանակը գնդակի տակ մտավ: Էյ, դադարեցրեք կրակելը,- գոռաց նա ձայնի ամբողջ բարձրությամբ,- մարդ է վիրավորվել:

Վազելով մոտեցավ ավագ վարձու որսորդը՝ փայտը ձեռքին:

- Որտեղ, սըր, ո՞ր է նա,- բացականչեց որսորդը:

Նույն րոպեին կրակոցները դադարեցին ամբողջ գծի երկայնքով:

- Այստեղ է,- բարկությամբ պատասխանեց Ջեռֆֆրին՝ շտապելով դեպի թավուտը,- գրողը տանի, ինչո՞ւ Ձեր մարդկանց չէիք հեռացրել: Փչացրիք այսօրվա որսը:

Դորիանը դիտում էր, թե ինչպէս նրանք չբացան մացառուտի մեջ՝ թեքելով ճկուն, օրորվող ճյուղերը: Մի քանի րոպէս անց նրանք հայտնվեցին՝ արևառողով բացատ դուրս բերելով մի դիակ: Դորիանը սարսափահար ետ շրջվեց: Նրան թվաց, թե չար ճակատագիրը հետևում է իրեն ամենուր: Նա լսեց

սյր Զեոֆֆրիի հարցը, թե մարդը մեռնլ է արդյոք և ավազ որսորդի հաստատական պատասխանը: Անտառը հանկայծ կենդանացավ, լցվեց մարդկանցով, լսվեցին բյուրավոր ոտքերի դոփյուններ և ձայների խուլ դժժոց: Պղնձագույն կրծքով մի խոշոր փասիան աղմուկով թափահարեց թևերը և թռավ ճյուղերի վրայով:

Մի քանի րոպե անց, որ վշտացած Դորիանին տառապանքի անսահման ժամեր թվացին, նրա ուսի վրա ծանրացավ մեկի ձեռքը: Նա ցնցվեց և ետ նայեց:

- Դորիան,- ասաց լորդ Հենրին,- ավելի լավ է ասեմ, որ այսօր դադարեցնեն որսը: Անհարմար է շարունակել:

- Ես կուզեի, որ դա ընդմիշտ դադարեր, Հարլի,- դառնորեն ասաց նա,- դա զգվելի և դաժան զբաղմունք է: Միթե մարդը...

Նա չկարողացավ վերջացնել նախադասությունը:

- Դժբախտաբար՝ այո: Մանրագնդակների ամբողջ լիցը կուրծքն է մխրճվել: Պետք է որ մահացած լինի նույն ակնթարթին: Գնանք տուն:

Նրանք մոտ հիսուն յարդ գլխավոր ծառուղիով կողք կողքի լուռ քայլեցին: Ապա Դորիանը նայեց լորդ Հենրիին և խոր հառաչանքով ասաց.

- Վատ նախանշան է, Հարլի, շատ վատ:

- Ինչը, - հարցրեց լորդ Հենրին, - հա՛, դժբախտ պատահարը: Սիրելի բարեկամս, ինչ արած, սպանվածն ինչն է մեղավոր, ինչո՞ւ էր կանգնել գնդակի տակ: Բացի այդ, մեր գործը չէ: Զիշտ է՝ բավականին անախորժ ստացվեց Զեոֆֆրիի համար: Վայել չէ կրակել որսահալածի վրա: Մարդիկ կարող են մտածել, թե նա վատ հրաձիգ է: Մինչդեռ այդպես չէ: Նա շատ դիպուկ է կրակում: Բայց անօգուտ է այդ մասին խոսելը:

Դորիանը տարուբերեց գլուխը:

- Դա վատ նախանշան է, Հարրի: Ջգում եմ, որ մեզանից մեկն ու մեկին սոսկալի բան է պատահելու... Հավանաբար՝ ինձ,- ավելացրեց նա և ձեռքը կսկիծով տարավ դեպի աչքերը:

Լորդ Հենրին ծիծաղեց:

- Աշխարհում միակ սոսկալի բանը ծանծրույթն է, Դորիան, միակ մեղքը, որ ներում չունի... Բայց մենք ծանծրույթից չենք տառապի, եթե մեր մտերիմները ճաշի ժամանակ չսկսեն շատախոսել կատարվածի մասին: Նրանց պետք է զգուշացնամ, որ այդ թեման արգելված է: Իսկ ինչ վերաբերում, և նախանշաններին, ապա նման բաներ գոյություն չունեն: Ճակատագիրը մեզ համար մունեթիկներ չի առաքում: Նա չափազանց խելացի կամ չափազանց դաժան է այդ բանի համար: Բացի այդ, գրողը տանի, ինչ կարող է պատահել Ձեզ, Դորիան: Աշխարհում ամեն բան Դուք ունեք, ինչ ցանկալի է մարդուն: Չկա մեկը, որ հիացմունքով չփոխանակի իր տեղը Ձեզ հետ:

- Իսկ ես, Հարրի, ուզածդ մարդու հետ տեղս կփոխեի: Մի՞ ծիծաղեք: Ճիշտ եմ ասում: Չարաքալստ գյուղացին, որ հենց նոր մեռավ, ինձանից երջանիկ էր: Ես չեմ սոսկում մահից: Զարիուրելի է միայն նրա մերձեցումը: Կարծես արդեն ժվաղային թևերը ծոծում է իմ գլխավերևում կապարե օդի մեջ: Բարի երկինք... Միթե չեք տեսնում, որ մեկը ծառերի ետևում թաքնված ինձ է նայում և սպասում ինձ:

Լորդ Հենրին նայեց այն ուղղությամբ, որ ցույց էր տալիս ձեռնոց հագած դողացող ձեռքը:

- Այո՛, - ասաց նա ժպտալով, - տեսնում եմ պարտիզայանին, որն, իրոք, Ձեզ է սպասում: Հավանաբար, ուզում է հարցնել՝ ինչպիսի ծաղիկներ կուզեք այս գիշեր սեղանի համար: Սիրելի՛ բարեկամս, ինչո՞ւ եք այդպես ջղային դարձել: Լորդ

վերադառնանք քաղաք, անպայման գնացեք իմ բժշկի մոտ:

Դորիանը թեթևացած շունչ քաշեց, երբ տեսավ մոտեցող պարտիզպանին: Մարդը բարձրացրեց գլխարկը, մի պահ վարանած նայեց լորդ Հենրիին և գրպանից մի նամակ հանե լով՝ մեկնեց տիրոջը:

– Նորին պայծառափայլությունը հրամայեց սպասել պատասխանի,– մրմնջաց նա:

Դորիանը նամակը դրեց գրպանը:

– Ասացեք նորին պայծառափայլությանը, որ ես հենց հիմա գալիս եմ,– սառնությամբ վրա բերեց Դորիանը:

Պարտիզպանը շրջվեց և շտապ գնաց տուն:

– Կանայք որքան են սիրում վտանգավոր բաներ անել,– ծիծաղեց լորդ Հենրին,– դա նրանց այն հատկություններից մեկն է, որն ինձ բոլորից շատ է հիացնում: Կինը պատրաստ է սիրախաղ անել ուզածդ մարդու հետ այնքան ժամանակ, քանի դեռ ուրիշները ուշադրություն են դարձնում այդ բանի վրա:

– Ինչքան շատ եք սիրում խոսել վտանգավոր բաների մասին, Հարրի: Տվյալ դեպքում Դուք բոլորովին սխալվում եք: Դքսուհին ինձ շատ է դուր գալիս, բայց ես նրան չեմ սիրում:

– Իսկ դքսուհին Ձեզ շատ է սիրում, սակայն Դուք ավելի քիչ եք դուր գալիս նրան: Այնպես որ, գերազանց զույգ եք կազմում:

– Դուք բամբասում եք, Հարրի, և բամբասում՝ առանց որևէ հիմքի:

– Յուրաքանչյուր բամբասանքի հիմքում ընկած է դեպի անբարոյականությունն ունեցած հավատը,– ասաց լորդ Հենրին՝ գլանակ վառելով:

– Հարրի, Դուք հանուն դիպուկ խոսքի ցանկացած մարդուն կարող եք զոհել:

- Աշխարհն ինքն է բարձրանում զոհասուլանին իր ներդաշնակության համար,- եղավ պատասխանը:

- Երանի՛ կարողանայի սիրել,- բացականչեց Դորիանոս բուռն ոգևորությամբ:- Բայց ինձ թվում է՝ ես կորցրել եմ այդ կիրքը և մոռացել ցանկությունը: Ես միշտ չափազանց շատ եմ ինքս ինձանով զբաղված եղել, և ահա իմ իսկ անձնավորությունն ինձ համար ծանրություն է դարձել: Ուզում եմ փախչել, հեռանալ, մոռանալ... Հիմարություն էր, ընդհանրապես, այստեղ գալս: Թերևս հեռագրեմ Հարվիին, որ պատրաստի զբոսանավը: Զբոսանավի վրա մարդ ապահով է:

Ձեմ կարող Ձեզ ոչինչ պատմել, Հարրի,- թախծոտ պատասխանեց նա,- թերևս այդ ամենն իմ երևակայությունն է: Դժբախտ պատահարը վրդովեց ինձ: Մի սոսկալի նախազգացում ինձ ասում է, որ նման բան էլ ինձ հետ պետք է կատարվի:

- Ինչպիսի՞ անմտություն:

- Գիտեմ, ի՞նչ անեմ, այդպես եմ զգում: Ահա և դքսուհին՝ իսկական Արտեմիս՝ անզլիական շրջազգեստով: Տեսա՞ք, վերադարձանք, դքսուհի՛:

- Ամեն ինչ ես արդեն լսել եմ, միստեր Գրեյ,- պատասխանեց նա,- խեղճ Ջեռֆֆրին սարսափելի վշտացած է: Եվ ասում են՝ Դուք լսնդրել եք, որ չկրակի նապաստակի վրա: Որքան ապշեցուցիչ է:

- Այո՛, շատ ապշեցուցիչ: Չգիտեմ՝ ի՞նչը դրդեց ինձ, թերևս, ինչ-որ քմահաճույք: Այդ նապաստակը բոլոր փոքրիկ կենդանիների մեջ ամենագեղեցիկը թվաց: Բայց ցավում եմ, որ Ձեզ պատմել են սպանվածի մասին: Սարսափելի պատմություն է...

- Ցավալի պատմություն է,- մեջ մտավ լորդ Հենրին,- և

բոլորովին հոգեբանական հետաքրքրություն չի ներկայացնում: Այ, եթե Ջեոֆֆրին դիտավորյալ սպաներ, որքան հետաքրքիր կլիներ: Ես կուզեի ծանոթանալ իսկական մարդասպանի հետ:

- Դուք զարհուրելի մարդ եք, Հարրի,- գոռաց դքսուհին,- ձիշտ չէ, միստեր Գրեյ: Հարրի, միստեր Գրեյը, ինչպես երևում է, կրկին վատ է գգում: Հիմա կուշաթափվի:

Դորիանը մեծ ջանքով տիրապետեց իրեն և ժպտաց:

- Դատարկ բան է, դքսուհի,- կամաց ասաց նա,- ջղերս չափազանց քայքայված են: Ուրիշ ոչինչ: Գուցե նրանից է, որ այս առավոտ երկար քայլեցի.. Ինչ ասաց Հարրին, չլսեցի նորից ինչ-որ բան բարբաջեց: Դուք ինձ հետո կպատմեք: Ես, թերևս, գնամ, պառկեմ: Ինձ կներեք, չէ:

Նրանք հասան ծաղկաջերմոցից պատշգամբ տանող մեծ սանյուղքներին: Երբ ապակե դուռը փակվեց Դորիանի ետևից, լորդ Հենրին շրջվեց և թախծագործվ նայեց դքսուհուն:

- Դուք չափազանց շատ եք սիրահարված նրան,- հարցրեց նա:

Դքսուհին որոշ ժամանակ լուռ հայացքը հառնլ էր մի բնանկարի:

- Ես ինքս կուզեի այդ իմանալ,- ասաց նա վերջապես:

Լորդ Հենրին տարուբերեց գլուխը:

- Իմանալը ճակատագրական է սիրո համար: Միայն անհայտությունն է գերում մեզ: Մշուշի մեջ ամեն ինչ հրաշալի է:

- Բայց մշուշում մարդ կարող է շեղվել ճանապարհից:

- Բոլոր ճանապարհները դեպի նույն տեղն են գնում, սիրելի Գլեդիս:

- Դեպի ուր:

- Հիասթափություն:

- Ես դրանով եմ սկսել իմ կյանքի ուղին,- հառաչեց

դքսուհին:

- Նա առաջ եկավ Ձեզ դքսական թագով:
- Ձանձրացել եմ արդեն մորու տերևներով:
- Բայց Դուք այն կրում եք պատշաճ արժանապատ

վությամբ:

- Միայն հասարակության մեջ:
- Ջգո՛ւյշ, կկորցնեք,- ասաց լորդ Հենրին:
- Չեմ կորցնի ոչ մի ծաղկաթերթն անգամ:
- Բայց մոնմաութը ականջներ ունի:
- Ծնությունը խուլ է:
- Նա երբեք չի խանդել:
- Երանի չէր:

Լորդ Հենրին նայեց շուրջը՝ կարծես ինչ-որ բան փնտրելով:

- Ինչ եք որոնում,- հարցրեց դքսուհին:
- Ձեր սուսերի ելունդը¹,- պատասխանեց նա,- Դուք վայր

եր գցել:

Դքսուհին ծիծաղեց:

- Բայց դիմակը դեռ կրում եմ:
- Նրա տակից Ձեր աչքերն ավելի գեղեցիկ են,- եղավ

պատասխանը:

Դքսուհին նորից ծիծաղեց: Նրա ատամնաշարը նման էր բուսոր մրգի սպիտակ սերմնահատիկների:

Վերնահարկի առանձնասենյակում՝ բազմոցի վրա, սլառկաձ էր Դորիան Գրեյը: Նրա մարմնի յուրաքանչյուր թրթռացող ջիղ սարսափով էր պատած: Կյանքը հանկարծ նրա համար դարձավ չափազանց զգվելի բեռ, որ պետք է կյուր: Տարաբախտ որսահալածի ահավոր մահը, որին սպանել էին թավուտում, ինչպես վայրի կենդանու, նրան թվում

¹ Ելունդը անվտանգ է դարձնում սուսերը: Սուսերից վերցնել ելունդը՝ նշանակում է պատրաստվել մենամարտի:

Լ, որ իր մահվան նախապատկերը: Նա քիչ մնաց՝ կորցնելու գիտակցությունը, երբ լսեց լորդ Հենրիի լկտի կատակով ասած խոսքերը:

Ժամը հինգին զանգահարեց սպասավորին և կարգադրեց, կապել իրերը գիշերվա ծեպընթաց գնացքով Լոնդոն մեկնելու համար և պատրաստել կառքը ութն անց երեսունին: Նա հաստատ վճռեց ոչ մի գիշեր չմնալ Սելբի-Ռոյալում: Այդտեղ չար նախանշան կար: Արևի լույսի տակ շրջում էր մահը: Անտառի խուռը ցողվել էր արյամբ:

Նա մի երկտող գրեց լորդ Հենրիին՝ հայտնելով, որ մեկնում է Լոնդոն՝ բժշկի և խնդրում է զբաղեցնել հյուրերին իր բացակայության ժամանակ: Երբ երկտողը դնում էր ծրարի մեջ, դուռը բախեցին, սպասավորը հայտնեց, որ ավագ վարժու որսորդը ուզում է տեսնել իրեն: Դորիանը մոայլվեց և կծեց շրթունքը:

- Ներս կանչեք,- մի րոպե վարանելուց հետո քրթմնջաց նա:

Հենց որ մարդը ներս մտավ, Դորիանը դարակից հանեց չեկի գրքույկը և դրեց նրա առաջ:

- Հավանաբար, առավոտվա դժբախտ պատահարի կապակցությամբ եք եկել, Թորնթոն,- ասաց նա, վերցնելով գրիչը:

- Այո, սըր - պատասխանեց անտառապահը:

- Այդ թշվառն ամուսնացած էր: Ընտանիք ունե՞ր,- հարցրեց Դորիանն անփութորեն,- եթե այո, ես նրանց կարիքի մեջ չեմ թողնի, անհրաժեշտ գումար կուղարկեմ:

- Մենք չգիտենք, թե ով է նա: Այդ պատճառով համարձակվեցի Ձեզ անհանգստացնել:

- Չգիտեք՝ ո՞վ է,- ասաց Դորիանը անտարբերությամբ,- ինչպե՞ս թե, ձեր մարդկանցից չէ՞ր:

- Ո՛հ, սըր, մենք նրան երբեք չենք տեսել: Ինչ-որ նավաստու նման է, սըր:

Գրիչը ընկավ Դորիան Գրեյի ձեռքից, և սիրտը կարծես հանկարծ դադարեց բաբախելուց:

- Նավաստի՛, - ծչաց նա, - ասացիք նավաստի՛:

- Այո՛, սըր, կարծեք նավաստի լինի: Երկու բազուկներս ի, յ յաջվածքներ ունի... և ինչ-որ նման բան...

- Որևէ բան գտնի եք նրա մոտ, - հարցրեց Դորիանն՝ առաջ թեքված, ակնապիշ նայելով մարդուն, - որևէ բան, որից պարզվի նրա ով լինելը:

- Մի քիչ փող, սըր, և վեց լիցանի մի ատրճանակ, էլ ուրիշ ոչինչ: Վայելուչ, բայց հասարակ տեսք ունի: Կարծում ենք, նավաստի է:

Դորիանը ոտքի ցատկեց: Մտքում սոսկալի հույս փայլատակեց, և խելախեղորեն կառչեց այդ մտքից:

- Որտեղ է դիակը, - բացականչեց նա: - Արագ: Այս րոպեին ես պետք է տեսնեմ:

- Ֆերմայում է, սըր, դատարկ ախոռում: Մարդիկ չեն ուզում իրենց տանը մեռել պահել: Ասում են՝ դիակը դժբախտություն կբերի:

- Ֆերմայում: Անմիջապես գնացե՛ք այնտեղ և սպասեցե՛ք ինձ: Ասացե՛ք ձիապաններից մեկին, որ ձիս բերի: Ո՛հ, պետք չէ: Ինքս կգնամ ախոռ: Այդպես ավելի արագ կլինի:

Քառորդ ժամ էլ չէր անցել, երբ Դորիան Գրեյը երկար ծանուղով սրընթաց սուրում էր քառատրոփ: Ծառերը տեսիլային թափորի նման ետ էին սլանում նրա կողքով, և երկչոտ սովերները ծանապարհից մի կողմ էին նետվում: Մի անգամ զամբիլը շեղվեց սպիտակ ցանկապատի մոտ և քիչ մնաց՝ վայր գցեր հեծյալին: Նա մտրակեց ձիուն: Ձին, նետի պես ճեղքելով օդը, առաջ սուրաց: Մմբակաների տակից թռչում էին

րարերը:

Վերջապես Դորիանը ֆերմա հասավ: Բակում երկու մարդ թրև էին գալիս: Նա ցատկեց թամբից և սանձը նետեց նրանցից մեկին: Ամենածայրի ավտոռում լույս էր առկայծում. Ինչ-որ ներքին ծայն Դորիանին ասաց, որ դիակն այնտեղ է: Նա շտապեց դեպի դուռը, ձեռքը տարավ փականին:

Սակայն մի պահ վարանեց՝ զգալով, որ հիմա ինքը մի հայտնություն է անելու, որը իրեն կամ անդորր կվերադարձնի. կամ կխորտակի կյանքը հավիտյան: Այա կրնկի վրա բացեց դուռը և ներս մտավ:

Հեռու անկյունում՝ պարկերի կույտի վրա, դրված էր դիակը՝ կոշտ վերնաշապիկով և կապույտ շալվարով: Դեմքը ծածկված էր կեղտոտ թաշկինակով: Կողքին՝ շշի մեջ, ճթթում էր հաստ մոմը:

Դորիան Գրեյը ցնցվեց: Նա զգաց, որ ինքը չի կարող ես թաշել թաշկինակը և կանչեց աշխատողներից մեկին:

- Այս շորը ետ տարե՞ք դեմքից: Ես ուզում եմ տեսնել նրան,- ասաց Դորիանը, և իբրև հենարան՝ կառչեց դռան կողափայտից:

Երբ ֆերմայի աշխատողը վերցրեց թաշկինակը, Դորիանն առաջ եկավ: Ուրախության ճիչ թռավ նրա կրծքից:

Անտառում սպանվածը Ջեյմս Վեյնն էր:

Մի քանի րոպե Դորիանը կանգնած նայում էր դիակին: Երբ նա վերադառնում էր տուն, աչքերը լի էին արցունքներով: Նա փրկված էր:

ԳԼՈՒԽ XIX

- Իզուր մի՛ ասացնք, թե որոշել եք լավը լինել,- ասում է,յ յորդ Հենրին՝ սպիտակ մատները թաթախելով կարմիր պղնձե գավաթի վարդաջրի մեջ,- Դուք կատարելություն եք: Խնդրում եմ, մի փոխվեք:

Դորիան Գրեյը տարուբերեց գլուխը:

- Ո՛չ, Հարրի, ես շատ սոսկալի բաներ եմ արել: Իմ խղճի վրա շատ մեղքեր կան ծանրացած: Այլևս չպետք է մեղանչեմ: Երեկ արդեն սկսեցի բարի գործեր անել:

- Որտեղ էիք երևել:

- Գյուղում, Հարրի: Մենակ գնացի գյուղ և իջևանեցի մի փոքրիկ պանդոկում:

- Տղամ,- ասաց յորդ Հենրին՝ ժպտալով,- բոլորն էլ գյուղում կարող են լավը լինել: Այնտեղ գայթակղումներ չկան: Անա թե ինչու գյուղում ապրողները բացարձակապես անքաղաքակիրթ են: Քաղաքակրթությունը հեշտությամբ ձեռք բերվող բան չէ: Նրան մերժենալու երկու միջոց կա: Մեկը կուլտուրան է, մյուսը՝ անառակությունը: Իսկ գյուղի բնակիչները ոչ մեկի պատեհությունն էլ չունեն, ահա այդ պատճառով էլ նրանք լծացել են առաքինության մեջ:

- Կուլտուրա, անառակություն,- արձագանքեց Դորիանը,- ես երկուսին էլ հաղորդակից եմ եղել: Իսկ այժմ սարսափելի է մտածել, որ նրանք գտնվում են կողք կողքի: Ես մի նոր՝ բարձրագույն, իղծ ունեմ, Հարրի: Որոշել եմ փոխվել: Եվ զգում եմ, որ փոխվել եմ:

- Բայց դուք դեռ չեք պատմել Ձեր արած բարության մասին: Թե՛ ասացիք, որ արդեն մի քանիսն եք արել,- հարցրեց յորդ Հենրին, իր ափսեի մեջ դնելով մաքրած ելակի մուգ կարմիր բրդիկը և գդալով շաքարավազ ցանելով վրան:

- Ես դա կպատմեմ Ձեզ, Հարրի: Ուրիշ ոչ մեկին չէի

պատմի, բայց Ձեզ կպատմեն: Ես խնայել եմ մի աղջկա. Հարրի: Այդպիսի հայտարարությունը գուցե պարծենկոտ է հնչում, բայց Դուք ինձ կհասկանաք: Նա շատ գեղեցիկ է և զարմանալիորեն նման է Սիբիլ Վեյնին: Թերևս, նա հենց դրանով հրապուրեց ինձ: Հիշում եք Սիբիլին, չէ: Որքան հեռավոր է թվում այդ ժամանակը... Հա, ուրեմն... Հեթո՛րհ. մեյր դասակարգից չէ, իհարկե: Պարզ, գյուղացի աղջիկ է: Բայց ես նրան անկեղծորեն սիրեցի: Այո՛, ես միանգամայն համոզված եմ, որ դա սեր է: Ամբողջ հրաշալի մայիս ամիսը ես շաբաթը երկու-երեք անգամ գնում էի նրան տեսնելու: Երեկ նա ինձ դիմավորեց փոքրիկ այգում: Խնձորի ծաղիկները թափվում էին մազերին, և նա ծիծաղում էր... Այսօր այգաբացին մենք պետք է մեկնեինք: Հանկարծ ես վճռեցի թողնել նրան այնպես մաքուր ու ծաղկանման, ինչպես գտել էի...

- Հավանաբար այդ զգացմունքի նորությունը մեծ հաճույք է պատճառել Ձեզ.- ընդհատեց Հենրին:- Հիմա ես արդեն կարող եմ Ձեզ համար վերջացնել այդ հովվերգությունը: Դուք նրան բարի խորհուրդ տվեցիք և կոտրեցիք սիրտը: Այդպես սկսեցիք Ձեր վերածնունդը:

- Հարրի, Դուք անտանելի եք: Ինչպես կարող եք այդպիսի սարսափելի բաներ ասել: Հեթո՛րհի սիրտը չի կոտրվել: Իհարկե, նա արտասվեց և այլն: Բայց անարգված չէ: Նա կարող է ապրել, ինչպես Պերդիտան իր պարտեզում՝ անասուխներին և անթառամների մեջ:

- Եվ արտասվել դավաճան Ֆլորիզելի համար, - ծիծաղելով ասաց լորդ Հենրին՝ հենվելով աթոռի մեջքին: - Սիրելի Դոյիան, Դուք դեռ զարմանալի երեխայական միամտություն ունեք: Կարծում եք՝ հիմա այդ աղջիկը կբավարարվի իր դասակարգից որևէ մեկի սիրով: Իհարկե, նրան կամուսնացնեն անտաշ մի սայլապանի կամ ատամները բացած գյուղական

որևէ հողագործի հետ: Մինչդեռ Ձեր հանդիսյումը, Ձեր նկատմամբ տածած նրա սերը նրան արդեն կստիպվի արիւմտաբիել ամուսնուն և թշվառ զգալ իրեն: Բարոյական տեսուկելոց ես չեմ կարող ասել, թե Ձեր ինքնահրաժարումը մեծ վերածնունդ է: Դա նույնիսկ, որպես սկիզբ՝ շատ աննշան է: Բացի այդ, ինչո՞ւ չեք կարծում, որ Հեթթիի մարմինն այժմ արդեն Օֆելյայի պես չի լողում ջրաղացի աստղաճաճանչ լճակում՝ չքնաղ ջրաշուշանների մեջ:

- Վերջացրեք, Հարրի, անտանելի է: Դուք մերթ ամեն ինչ ծաղրում եք, մերթ դարձնում լուրջ ողբերգություններ: Ափսոս, որ ես պատմեցի: Փույթ չէ, թե ինչ եք մտածում իմ մասին: Ես գիտեմ, որ ճիշտ եմ վարվել: Խնդրե՛ք Հեթթի: Երբ ես այս առավոտ հեռանում էի նրանց ագարակից, լուսամուտի մոտ տեսա նրա ճերմակ դեմքը, որ նման էր հասմիկի ցողի... Եկեք չխոսենք այդ մասին, այլևս մի փորձեք համոզել, որ այդքան տարիների ընթացքում իմ կատարած առաջին բարի գործը, առաջին փոքր ինքնահրաժարումը, որ երբևէ արել եմ, իրոք, ինչ-որ մեղք է: Ես ուզում եմ՝ ավելի լավը լինել: Եվ պետք է լինեմ: Այժմ Ձեր մասին պատմեցե՛ք: Ինչ է կատարվում քաղաքում: Վաղուց չեմ եղել ակումբում:

- Մարդիկ դեռ խեղճ Բեզիլի անհայտացման մասին են խոսում:

- Իսկ ես կարծում էի՝ արդեն հոգնել են խոսելուց, - ասաց Դորիանը՝ իր համար գլխի լցնելով և թեթևակի մոայլվեց:

- Ինչ եք ասում, սիրելիս, այդ մասին ընդամենը վեց շաբաթ է, ինչ խոսում են, մինչդեռ բրիտանական հասարակության համար դժվար է փոխել թեման ավելի հաճախ, քան երեք ամիսը մեկ: Այդպիսի մտավոր ճիգի նա անընդունակ է: Ճիշտ է՝ այս սեզոնում մեր հասարակության բախտը բերեց, ահագին դեպքեր եղան՝ իմ ապահարգանք, Ալան

Քննարկելի ինքնասպանությունը, այժմ էլ նկարչի անհետացման առեղծվածը: Սքոթլան-Ցարդը դեռ պնդում է, թե մոխրագույն վերարկուով մարդը, որ նոյեմբերի իննին կես գիշերվա գնացքով Փարիզ մեկնեց, լսեղճ Բեզիլն էր, իսկ ֆրանսիական ոստիկանությունը հայտարարում է, որ Բեզիլն, ընդհանրապես, երբեք չի ժամանել Փարիզ: Հավանաբար մի երկու շաբաթ հետո կլսենք, որ նրան տեսել են Սան-Ֆրանցիսկոյում: Զարմանալի է, հենց որ մեկն անհետանում է, ասում են, որ տեսել են Սան-Ֆրանցիսկոյում: Պետք է, որ այդ Սան-Ֆրանցիսկոն չքնաղ քաղաք լինի՝ աշխարհի բոլոր հրապույրներով օժտված:

- Ինչ պատահած կլինի Բեզիլին, ինչ եք կարծում, հարցրեց Դորիանը՝ լույսի դիմաց պահելով բուրգուդյան գինին և ապշելով, թե ինքն ինչպես կարող էր սառնասրտորեն քննարկել այդ նյութը:

- Գաղափար չունեմ: Եթե Բիզիլն ուզում է թաքնվել, դա իր գործն է: Եթե մեռած է, ես չեմ ուզում այդ մասին մտածել: Մահը միակ բանն է, որ միշտ սարսափեցնում է ինձ: Ես ատում եմ մահը:

- Ինչո՞ւ, - ծուլորեն հարցրեց գրուցողներից կրտսերը:

- Որովհետև,- ասաց լորդ Հենրին՝ քթանցքներին մոտեցնելով քացալսի ոսկեզօծ բաց սրվակը,- մեր օրերում մարդ կարող է վերապրել ամեն ինչ, բացի մահից: Մահը և գոհակությունը XIX դարի միակ երևույթներն են, որ ոչ ոք չի կարող բացատրել: Եկեք սուրճ խմենք երաժշտասենյակում, Դորիան: Դուք ինձ համար կնվագեք Շոպեն: Այն մարդը, որի հետ կիսս փախավ, հոյակապ էր Շոպեն նվագում: Խեղճ Վիկտորիա: Ես նրան շատ-շատ էի ընտելացել, տունը առանց նրա բավականին դատարկվել է: Անշուշտ,

- Օհ, ամեն ինչ կարող է հաճույք դառնալ, եթե սովո-

րություն է: Բայց մարդ ափսոսում է բաժանվել նույնիսկ ամենավատ սովորությունից: Եվ թերևս հենց այդ վառ սովորությունների համար ամենից շատ էինք վշտանում: Դրանք մեր «ես»-ի էական մասն են:

Դորիանը ոչինչ չպատասխանեց, նա ելավ սեղանի մոտից և, անցնելով մյուս սենյակը, նստեց դաշնամուրի առաջ, և մատները սահեցրեց սև ու սպիտակ փղոսկրե ստեղների վրայով: Երբ մատուցեցին սուրճը, նա դադարեց նվագել, և նայելով լորդ Հենրիին՝ ասաց.

- Հարի, երբևէ Ձեր մտքով անցել է, որ Բեզիլին սպանել են:

Լորդ Հենրին հորանջեց.

- Բեզիլը շատ հանրաձանոթ էր և միշտ կրում էր Ուոթերբրի՝ ժամացույց: Ինչո՞ւ պետք է սպանեին նրան: Նա թշնամիներ ունենալու համար բավականաչափ խելացի չէր: Իհարկե, շատ տաղանդավոր նկարիչ էր: Բայց կարելի է նկարել Վելասկեզի պես և լինել չափազանց ծանծրալի մարդ: Նա միայն մի անգամ է ինձ հետաքրքրել, երբ տարիներ առաջ ինձ խոստովանեց, որ խելահեղորեն երկրպագում է Ձեզ, և Դուք նրա արվեստում ամենագոր շարժառիթ եք:

- Ես շատ էի սիրում Բեզիլին, - ասաց Դորիանը՝ տխրությամբ: - Ուրեմն, ոչ ոք չի ենթադրում, որ նա սպանված է:

- Մի քանի լրագրեր: Բայց, ըստ իս, դա բոլորովին անհավանական է: Փառիզում, իհարկե, շատ ահավոր վայրեր կան, բայց Բեզիլն այնպիսի մարդ չէր, որ գնար այնտեղ: Նա հետաքրքրասեր չէր, ահա նրա հիմնական թերությունը:

- Իսկ ի՞նչ կասեիք, Հարի, եթե խոստովանեի Ձեզ, թե ես եմ սպանել Բեզիլին, - ասաց Դորիանը՝ սկեռուն հայացք հառած լորդ Հենրիին:

1 Էժանագին ժամացույց: Ուոթերբրին ֆիրմայի անունն է:

- Կասեի, սիրելի բարեկամ, որ Դուք փորձում եք նկարվելիս այնպիսի կնքվածք ընդունել, որ Ձեզ բնավ չի սագում: Ամեն տեսակի ոճիորը գոեհիկ է, ճիշտ ինչպես գոեհկությունը՝ ոճիր, Իսկ Դուք, Դորիան, չեք կարող մարդասպանություն կատարել: Ներեցեք, որ վիրավորում եմ Ձեր ինքնասիրությունը՝ այդպես մեկնաբանելով, բայց հավատացեք, դա ճիշտ է: Ոճրագործները միշտ ցածր դասի մարդիկ են: Եվ ես մազաչափ անգամ չեմ դատապարտում նրանց: Ինձ թվում է՝ ոճիրը նրանց համար նույնն է, ինչ արվեստը՝ մեզ համար. պարզապես ուժեղ զգայություններ առաջացնելու միջոց է:

- Ուժեղ զգայություններ առաջացնելու միջոց: Ուրեմն, Դուք կարծում եք՝ մարդ, որ կատարում է մարդասպանություն, կարող է կրկին նույն ոճիրը գործել: Բավական է, Հարրի:

- Օհ, ամեն ինչ կարող է հաճույք դառնալ, եթե սովորույթի մեջ է մտնում, - ասաց լորդ Հենրին՝ ծիծաղելով: - Դա կյանքի ամենակարևոր գաղտնիքներից մեկն է: Այնուամենայնիվ, ես կասեի, որ մարդասպանությունը միշտ արատ է: Երբեք պետք չէ անել այն, ինչի մասին չի կարելի խոսել ճաշից հետո... Բայց թողնենք խեղճ Բեզիլին: Երանի հավատայի, որ նրա վախճանն այնպես ողորմատիկ է, ինչպես Դուք եք ենթադրում: Բայց չեմ կարող: Ավելի շուտ ես կպատկերացնեի, որ նա հանրակառքից ընկել է Սենան, բայց հանրակառքն ուղեկցողը թաքցրել է պատահարը տհաճություններից խուսափելու համար: Այո, կարծում եմ, այդպես էլ եղել է նրա վախճանը: Եվ այժմ, տեսնում եմ ես նրան՝ պառկած Սենայի պղտոր կանաչավուն ջրերի տակ, վրայով լողում են լաստանավերը, իսկ մազերի մեջ խճճվել են երկար ջրիմուռները: Գիտե՞ք, Դորիան, ես չեմ կարծում, թե նա կարող էր շատ լավ կտավներ ստեղծել: Վերջին տասը տարվա ընթացքում նրա նկարները շատ վատացել էին:

Դորիանը խոր հառաչեց, իսկ լորդ Հենրին սկսեց ճամկ սննյակում, հետո մոտեցավ և շոյեց սքանչելի թութակի գլուխը։
Ուս վարդագույն փուփուլով և պոչով, մոխրագույն թևերով
հավայական խոշոր թռչուն էր՝ բամբուկի ձողին նստած։
Երբ Հարրիի մատները դիպան թռչունին, նա վայր թողեց
կնճռոտած կուպերի սպիտակ թաղանթը սև ապակենման
աչքերին և սկսեց ետ ու առաջ ճոճվել։

- Այո՛,- շարունակեց նա և, շրջվելով, թաշկինակը հանեց
գրպանից,- նրա նկարները վատացել էին։ Կարծես ինչ-որ բան
էր կորցրել, զրկվել էր իդեալից։ Քանի դեռ Դուք և նա լավ
ընկերներ էիք, Բեզիլը մեծ նկարիչ էր։ Ինչը Ձեզ՝ բաժանեց։
Երևի՝ ծանծրացաք։ Եթե՝ այո, նա երբեք Ձեզ չէր կարող ներել։
Այդպես են բոլոր ծանծրալի մարդիկ։ Ի միջի այլոց, ինչ եղավ
Ձեր դիմանկարը։ Թերևս, չեմ տեսել այն ժամանակից ի վեր,
երբ Բեզիլը վերջացրեց... Հա, հիշեցի, մի քանի տարի առաջ
Դուք ասում էիք, թե ուղարկել եք Սելբի, և ճանապարհին
կորնել, թե՛ գողացել են։ Այդպես էլ չգտնվեց։ Ափսոս։
Իսկական գլուխգործոց էր։ Հիշում եմ՝ ես ուզում էի այն գնել։
Երանի ինձ մոտ լիներ։ Այն պատկանում էր Բեզիլի ծաղկուն
շրջանին։ Դրանից հետո նրա կտավները վատ նկարելու և
լավ մտադրությունների խառնուրդը դարձան. մի լան, որ
միշտ իրավունք է տալիս մարդուն կոչվելու բրիտանական
արվեստի ներկայացուցիչ։ Դուք հայտարարություն տվեցիք
լրագրերում։ Հարկավոր էր։

- Ձեմ հիշում,- պատասխանեց Դորիանը,- կարծեմ՝ այո։
Բայց իրականում ինձ երբեք դուր չի եկել դիմանկարը,
ափսոս, որ նկարվել եմ։ Նրա հիշողությունն ինձ ատելի է։
Ինչո՞ւ սկսեցիք այդ խոսակցությունը։ Դիմանկարն ինչ-որ
դրամայի երկու զարմանալի տողեր են հիշեցնում կարծեմ
«Համլետ»-ից... Ինչպե՞ս էր...

Ինչպես պատկեր թախծի,

Դեմքն այդ անսիրտ էր...

Այո՛, հենց այդպիսի տպավորություն էր նա թուլնում ինձ վրա:

Լորդ Հենրին ծիծաղեց:

- Ով արվեստի տեսանկյունով է կյանքը դիտում, նրա ուղեղը փոխարինում է սրտին,- ասաց Հարրին՝ ընկղմվելով բազկաթոռի մեջ:

Դորիան Գլյենը տարուբերեց գլուխը և մի քանի մեղմ ակորդ վերցրեց դաշնամուրի վրա:

- Ինչպես պատկեր թախծի,- կրկնեց նա,- դեմքն այդ անսիրտ էր:

Լորդ Հենրին, բազկաթոռին հենված, նայում էր նրան կիսախուփ աչքերով:

- Ի միջի այլոց, Դորիան,- ասաց նա փոքր դադարից հետո,- Ինչ է շահում մարդ, եթե ձեռք է բերում ողջ աշխարհը և կորցնում... ինչպե՛ս էր, հա, և կորցնում է իր սեփական հոգին:

Ելած շտապությունը կտրուկ ընդհատվեց: Դորիանը ցնցվեց և աչքերը հառեց ընկերոջը:

- Ինչո՞ւ եք այդպիսի հարց տալիս, Հարրի:

- Միլենլիս,- ասաց լորդ Հենրին՝ զարմացած թարծրացնելով հոնքերը:- Ես Ձեզ եմ հարցնում, որովհետև կարծում էի՝ Դուք կարող եք պատասխանել: Ահա և բոլորը: Անցած կյիւրակի ես անցնում էի Պարկով, այնտեղ Մայմարե կամայլի մոտ խմբվել էին ցնցոտիապատ մարդիկ և լսում էին ինչ-որ փողոցային քարոզչի: Երբ անցնում էի նրանց մոտով, լսեցի այդ արտահայտությունը, որը շատ դրամատիկական հնչեց: Լոնդոնը շատ հարուստ է նման զարմանալի տեսարաններով: Պատկերացրե՛ք՝ անձրևոտ կիրակի, մակինսուոշ հագած անձար քլիստոնյայի մի կերպարանք, կաթկթող հովանոցների տակ

կանգնած հյուծված դեմքերի մի օղակ, այդ ցնցող արտածույ տություները, որ օդ է թռչում՝ որպես սուր, հիստերիկ մի ճիւղ... Որոշ տեսակետից, իրոք, հետաքրքիր է, ազդեցիկ: Եւ ուզում էի ասել այդ մարգարեին, որ միայն արվեստը հոգի ունի, իսկ մարդը՝ ոչ: Բայց վախեցա՝ ինձ հասկանա:

- Մի՛ ասեք, Հայրի: Հոգին սոսկալի իրականություն է: Այն կարելի է գնել, վաճառել, փոխել: Նրան կարելի է թունավորել կամ կատարելություն դարձնել: Մեզանից յուրաքանչյուրը հոգի ունի, գիտեմ:

- Միանգամայն համոզված եք, Դորիան:

- Միանգամայն:

- Ա՛հ, ուրեմն, դա միայն պատրանք է: Այն բաները, որոնց բացարձակապես հավատում ես, իրականության մեջ գոյություն չունեն: Այդպիսին է հավատի ճակատագիրը, և նույնն է սովորեցնում մեզ սերը: Աստված իմ, ուրբան մոայլ եք, Դորիան: Այդպես լուրջ մի եղևք, բավական է: Մեզ ինչ մեր դարաշրջանի սնահավատությունը: Ո՛չ, մենք այլևս չենք հավատում հոգու գոյությանը: Մի բան նվազեք, Դորիան, որն է նոկտյուրն, և նվազելով կամաց-կամաց պատմեք, թե ինչպես եք պահպանել Ձեր երիտասարդությունը: Դուք, երեկ, ինչ-որ գաղտնիք ունեք: Ես ընդունեմը տասը տարով եմ Ձեզանից մեծ, բայց կնճոռտված եմ, հյուծված, դեղնած: Դուք, իրոք, հրաշալի եք, Դորիան: Երբեք այդքան հրապուրիչ չեք եղել, ինչպես այս րեկո: Դուք ինձ հիշեցնում եք այն օրը, երբ առաջին անգամ տեսա Ձեզ: Դուք շատ ամաչկոտ էիք, բայց միևնույն ժամանակ նաև հանդուգն ու հիանալի մի պատանի: Հիմա՝ տարիների հետո, իհարկե, Դուք փոխվել եք, բայց ոչ արտաքինով: Երանի՝ ինձ ասեիք Ձեր գաղտնիքը: Երիտասարդությունս ետ ստանալու համար ես ամեն ինչ կանեմ, լիացի մարմնամարզական վարժություններից, վաղ վեր կլ:

նալուց և առաքինի կյանք վարելուց: Երիտասարդություն...
Ի՞նչը կարող է համեմատվել նրա հետ: Անմտություն է խոսել
երիտասարդության անգիտության մասին: Միակ մարդիկ,
որոնց կարծիքներն այժմ ես ակնածանքով եմ լսում, դա ինձա-
նից երիտասարդներն են: Նրանք մեզանից առաջ են անցել:

Կյանքը նրանց համար բացահայտել է ամենավերջին
հրաշքները: Ինչ վերաբերում է տարեցներին, նրանք միշտ
հակադրվում են: Եվ դա անում են սկզբունքորեն: Եթե մի
բանի մասին հարցնեք նրանց կարծիքը, որ կատարվել է
երեկ, հանդիսավոր ձևով Ձեզ կտան 1820 թվի կարծիքները,
երբ տղամարդիկ հագնում էին երկար գուլպաներ, ամեն
ինչի հավատում էին և բացարձակապես ոչինչ չգիտեին:
Այդ ինչ չքնաղ բան եք նվագում: Հետաքրքիր է, Շոպենը դա
Մայորկայում է գրել, երբ հեծեծում էր ծովը իր ամառանոցի
շուրջը և աղի շիթեր ցայտում լուսամուտների: Ապշեցուցիչ
ռոմանտիկ բան է: Փառք ասած, որ գոնե մեզ համար արվեստն
է մնացել անզուգական: Մի՛ ընդհատեք: Ես երաժշտություն եմ
ուզում այս երեկո: Ինձ թվում է՝ Դուք երիտասարդ Ապոլլոնն
եք, իսկ ես՝ Մարսիեսը, որ ունկնդրում եմ Ձեզ... Ես իմ սրտում
թախսիծ ունեմ, որի մասին նույնիսկ Դուք էլ չգիտեք, Դորիան:
Ծերության ողբերգությունը նրանում չէ, որ մարդ ծերանում
է, այլ նրանում, որ մարդ հոգով երիտասարդ է մնում: Երբեմն
ապշում եմ իմ անկեղծության վրա: Ա՛խ, Դորիան, որքան
կյուսանիկ եք: Որքան հրաշագեղ է Ձեր կյանքը: Դուք ըմպել
եք ամեն ինչ՝ մինչև մրուրը: Ձեր քիմքով ճգմել եք խաղողը և
ըմբռնվել: Կյանքը ոչինչ չի թաքցրել Ձեզանից: Ձեզ համար
ամեն ինչ եղել է ոչ այլ ինչ, եթե ոչ երաժշտական հնչյուն:
Այդ պատճառով էլ կյանքը Ձեզ խնայել է: Դուք միանգամայն
նույնն եք մնացել, Դորիան:

- Նույնը չեմ, Հարրի:

- Այո, նույնն եք: Հետաքրքիր է՝ ինչպիսին պետք է լինի Ձեր մնացած կյանքը: Միայն թե մի փչացուք ինքուս հրաժարումներով: Հիմա Դուք կատարելություն եք: Տեսնո՞ւ, համ, ինքներդ Ձեզ անլիարժեք մի դարձրեք: Այժմ Դուք բուլդոզերի անկեղծ եք: Իզուր մի տարուբերեք Ձեր գլուխը, գիտե՞լ, որ այդպես է: Բացի այդ, Դորիան, ինքներդ Ձեզ մի խարեր: Կյանքը չի առաջնորդվում կամքով և ձգտումներով: Կյանքը ջղերի, ջիլերի և աստիճանաբար հասունացող բջիջների գույն է, որտեղ թաքնվում է միտքն ինքը, և կրքեր ու երագներ են ծնվում: Ձեզ ապահով եք պատկերացում, մտածում եք, թե հզոր եք: Բայց հանկարծ գույնի պատահական երանգը սևնյակում կամ վաղորդյան երկինքը, Ձեր երբեմնի սիրած յուրահատուկ բույրը, որ իր հետ բերում է քաղցր հուշեր, մոռացված բանաստեղծության մի տող, որ կրկին հանդիպում եք, երաժշտական մի կադենցիա, որ վաղուց չեք նվագել, և ահա կանխորոշվում է ամեն ինչ, լսում եք, Դորիան, ահա այդպիսի բաներից է կախված մեր կյանքը: Բրաունինգը ինչ-որ տեղ գրում է այդ մասին: Մեր սեփական զգացումները՝ նույնպես հաստատում են դա: Բավական է, օրինակ, որևէ տեղ ես զգամ «lilas blanc» օծանելիքի բույրը և կրկին ես վերապրում եմ կյանքիս ամենազարմանալի և հետաքրքրի մի ամիսը: Երանի փոխենիք մեր տեղերը, Դորիան: Մարդիկ միշտ բարբաջել են երկուսիս մասին էլ, բայց միշտ Ձեզ երկրպագել են: Եվ միշտ էլ կերկրպագեն: Դուք այն կերպարն եք, որին փնտրում է մեր դարաշրջանը և վախենում, որ գտել է: Ես այնպես ուրախ եմ, որ Դուք երբեք ոչինչ չեք արել, չեք կերտել ուրև, քանդակ, չեք նկարել կամ որևէ բան ստեղծագործել: Ձեր արվեստը եղել է կյանքը: Ձեզ ներդրել եք երաժշտության մեջ: Ձեր կյանքի օրերը Ձեր սոնատներն են:

Դորիանը վեր կացավ դաշնամուրի մոտից և շփեց մալուրը:

- Այո, իմ կյանքը հրաշագեղ է եղել,- կամաց ասաց նա.-
բայց ես այլևս չեմ ուզում այդ կյանքով ապրել, Հարրի: Եվ
այդպիսի խննթ բաներ մի ասեք: Դուք իմ մասին ամեն ինչ
չգիտեք: Իսկ եթե իմանայիք, գուցե նույնիսկ երես թեքեիք
ինձանից: Ծիծաղում եք: Մի ծիծաղեք:

- Ինչո՞ւ չեք նվագում, Դորիան: Նստեցե՞ք և մի անգամ էլ
նվագեք այդ նոկոյուրնը: Նայեք մեղրագույն մեծ լուսնին,
որ կախված է աղջամուղջով պատված երկնքում: Նա Ձեզ
է սպասում, որպեսզի դուրսեք իրեն և, եթե նվագեք, ավելի
կմերձենա երկրին: Ձեք նվագում: Դե, ուրեմն, ակումբ գնանք:
Երեկոն թովիչ է, և թովչանքով էլ թող վերջացնենք:

Ուայթում մի երիտասարդ է լինելու, որը շատ է ուզում
ծանոթանալ Ձեզ հետ: Այդ երիտասարդը լորդ Փուլն է՝ Բորն-
մաաթի ավագ որդին: Նա ընդօրինակում է Ձեր փողկապները
և աղերսում, որ ծանոթացնեմ Ձեզ հետ: Հրաշալի պատանի է
և բավականաչափ Ձեզ է հիշեցնում:

- Հուսով եմ ոչ,- ասաց Դորիանը, և աչքերին թափված
իջավ,- բայց այսօր հոգնած եմ, Հարրի: Ակումբ չեմ գա: Այդքան
մոտ ժամը տասնմեկն է, իսկ ես ուզում եմ վաղ պառկել:

- Մնացե՛ք, Դորիան: Դուք երբեք այդպես լավ չեք նվագել,
ինչպես այս գիշեր: Ինչ-որ բան կար Ձեր հուզված նվագի մեջ,
որ զմայլելի էր: Այդ նոկոյուրնը ավելի տպավորիչ էր, քան
լսել եմ երբևէ:

- Դա նրանից է, որ ես որոշել եմ բարի լինել,- ժպտալով՝
պատասխանեց նա,- արդեն մի քիչ փոխվել եմ:

- Ինձ համար չեք կարող փոխվել, Դորիան,- ասաց լորդ
Հենրին,- մենք միշտ պետք է բարեկամներ մնանք:

- Սակայն մի անգամ Դուք ինձ թունավորել եք գրքով:
Երբեք չեմ ների: Հարրի, խոստացե՛ք, որ այլևս այդ գիրքը ոչ
մեկին չեք տա: Վտանգավոր գիրք է:

- Սիրելի Դորիան, Դուք, իրոք, սկսում եք բարոյախոս դառնալ: Շուտով, ինչպես յուրաքանչյուր նորահավատ, 'Դուք, հայություն առած, կսկսեք շրջել և զգուշացնել մայրկանց չգործել այն բոլոր մեղքերը, որոնցից Դուք հոգնել եք:

Ո՛չ, Դուք այնքան եք լավը, որ այդպիսի դեր չեք կատարի: Բացի այդ՝ միտք էլ չունի: Ինչպիսին մենք եղել ենք, այնպիսին էլ կմնանք, իսկ ինչ վերաբերում է գրքով թունավորվելուն, ապա այդպիսի բան չի լինում: Արվեստը չի ազդում մայրու գոյծունեության վրա, ընդհակառակը, արվեստը ոչնչացնում է գործելու ցանկությունը: Արվեստը միանգամայն անկախ է: Այսպես կոչված «անբարոյական» գրքերը այն զրքերն են, որոնք աշխարհին ցույց են տալիս նրա արատները, միայն այսքանը, ուրիշ ոչինչ: Բայց եկեք հիմա գրականություն չքննարկենք: Վաղը եկեք ինձ մոտ, Դորիան: Ժամը տասնմեկին ես կառքով պետք է գնամ գրոսներու, միասին կգրոսենք: Իսկ հետո ես Ձեզ կտանեմ լեդի Բրենքսամի մոտ նախաճաշելու: Նա հիանալի կին է և ուզում է Ձեզ հետ խորհրդակցել մի քանի պատկերագորգերի մասին, որ ուզում է գնել: Ուրեմն, չմոռանաք, ես Ձեզ սպասելու եմ: Թե՛ մեր փոքրիկ դքսուհու մոտ գնանք նախաճաշելու: Նա ասում է, որ Դուք դադարել եք նյութային աշխարհից: Գուցե ծանծրացել եք Գլեյխից: Ես այդպես էլ գիտեի: Նրա սուր լեզուն ազդում է մարդու ջղերի վրա: Լավ, բոլոր դեպքերում եկեք ժամը տասնմեկին:

- Դուք անպայման եք դա ուզում, Հարրի:

- Անպայման: Պարկն այժմ շատ հաճելի է: Եղբւանին այնպես է փթթել, ինչպես այն տարին, երբ առաջին անգամ հանդիպեցի ձեզ:

- Շատ լավ, ժամը տասնմեկին այստեղ կլինեմ,- քաղց Դորիանը,- բարի գիշեր, Հարրի:

Նա դռան մոտ մի պահ տատանվեց, կարծես ինչ-որ բան էր ուզում ասել: Բայց միայն հառաչեց և դուրս եկավ:



Հաճելի, տաք երեկո էր, այնքան տաք, որ Դորիանը վերարկուն ոչ թե հագել, այլ գցել էր թևին: Նա նույնիսկ վիզը չէր փաթաթել մետաքսե շարֆով: Գլանակ ծխելով՝ դանդաղ տուն էր գնում, երբ նրա կողքով անցան երկու երիտասարդ՝ երեկոյան հագուստով: Դորիանը լսեց, որ նրանցից մեկը շնջաց. «Սա Դորիան Գրեյն է»: Եվ նա հիշեց, թե առաջ ինչքան էր հաճելի, երբ իրեն մատնացույց էին անում, հետաքրքրված նայում կամ իր մասին խոսում:

Այժմ նա հոգնել էր արդեն սեփական անունը լսելուց:

Փոքրիկ գյուղը, որտեղ նա վերջերս հաճախ էր լինում, հմայել էր հենց նրանով, որ այնտեղ ոչ ոք չէր ճանաչում իրեն: Այն աղջկան, որը սիրել էր իրեն, Դորիանն ասել է, որ ինքն աղքատ է, և նա հավատացել էր: Իսկ մի ուրիշ անգամ, երբ Դորիանը նրան հայտարարել էր, որ ինքը անցյալում անառակ կյանք է վարել, աղջիկը ծիծաղել էր և պատասխանել, որ անառակ կյանք վարողները միշտ ծեր և այլանդակ են լինում: Ինչպես էր ծիծաղում այդ աղջիկը... Նրա ծիծաղը կարծես կեռնելիս դալալ լիներ: Եվ որքան էր չքնաղ իր չթե զգեստով ու լայնեզր գլխարկով: Այդ հասարակ, անգետ աղջիկը ուներ այն ամենը, ինչ կորցրել էր Դորիանը:

Երբ նա տուն հասավ, սպասավորն արթուն իրեն էր սպասում: Դորիանն ուղարկեց նրան քնելու, իսկ ինքը պառկեց գրադարանի բազմոցի վրա և սկսեց խորհել լորդ Հենրիի ասածների մասին:

Միթե ծիշտ է, որ մարդ իսկապես չի կարող փոխվել: Նա խելահեղորեն զգաց իր պատանեկության անաղարտ մաքրության կարոտը, «վարդագույն-ձերմակ պատանեկության կարոտը», ինչպես մի անգամ անվանել էր լորդ Հենրին: Դորիանը գիտեր, որ ինքը ապականվել է, կեղծել է հոգին,

Նա անընդհատ ներշնչում է իրեն, որ իր ազդեցությունը կործանարար է եղել ուրիշների վրա, և դա ահավոր հաճույք է, որ պատճառում իրեն: Նա գիտեր, որ իր կյանքի հետ խաչաձևած բոլոր կյանքերից ամենահստակն ու ամենախոստումնալիցը իրենն է եղել, որն, ավաղ, ապականեց ինքը: Բայց միթե այլ բոլորն անուղղելի է: Միթե այլևս հույս չկա:

Այս, գոռոզության ու վրդովմունքի ինչպիսի ծիվաղային պահի նա աղոթեց, որ դիմանկարը կրի իր կյանքի բեռը, իսկ ինքը պահպանի հավիտենական երիտասարդության անկեղծ պայծառությունը: Հենց այդ թուպեին էր, որ նա խորտակեց իր կյանքը: Ավելի լավ չէր լինի, եթե յուրաքանչյուր մեղքն իր հետ անմիջապես արժանի պատիժ բերեր. պատիժը մաքրում է: Ոչ թե՝ «Մեր մեղքերին թողություն տուր» այլ՝ «Պատժիր մեզ մեր անօրենությունների համար». ահա՛ թե ինչպես պետք է լինի մարդու աղոթքը ամենաարդար աստծուն:

Սևդանին դրված էր հմուտ փորաքանդակով հայելին, որ տարիներ առաջ նվիրել էր լորդ Հենրին: Շրջանակի վրա առաջվա նման խայտում էին սպիտակաթաթիկ հրեշտակիկները: Նա վերցրեց հայելին, ծիշտ այնպես ինչպես այն ահավոր գիշերը, երբ առաջին անգամ ծակատագրական դիմանկարի վրա նկատեց փոփոխությունը, և արցունքից մշուշված թափառ աչքերով նայեց հայելու շողշողուն մակերևույթին: Մի անգամ մեկը, որ խելահեղորեն սիրում էր իրեն, կյուրտ նամակ էր գրել և վերջացրել հետևյալ խոսքերով. «Այնպիսի փոխվեց, որովհետև Դուք եկաք այս աշխարհը, Դուք, որ կերտված եք փղոսկրից ու ոսկուց: Ձեր շուրթերի նուրբ կորագծերը վերափոխում են աշխարհի պատկերը»: Դորիանը հիշեց այդ խոսքերը և նորից ու նորից կրկնեց ինքն իրեն: Բայց մի թուպե անց նա խորշկեց իր գեղեցկությունից և, հայելին շարտելով հատակին,

կրունկի տակ փշուր-փշուր արեց: Գեղեցկությունն էր կործանել իրեն, գեղեցկությունն ու երիտասարդությունը, որ նա պահպանել էր աղերսանքի շնորհիվ: Եթե չլինելն այդ երկուսը, նրա կյանքն անկեղծ կմնար: Գեղեցկությունը միայն դիմակ է եղել, իսկ երիտասարդությունը՝ ծաղրանք: Ինչ է երիտասարդությունը, լավագույն դեպքում՝ կանաչ, խակ ժամանակ թեթև տրամադրությունների և հիվանդագին խոհերի պահ: Ինչո՞ւ իզուր ինքը հագավ երիտասարդության զգեստ: Այո՛, երիտասարդությունը խորտակեց նրան:

Ավելի լավ է՝ չմտածել անցյալի մասին: Միննույն է, հիմա ոչինչ չես կարող փոխել: Հարկավոր էր մտածել միայն գալիքի մասին: Զեյմս Վեյնը թաղված էր Սելբիի գերեզմանատան անանուն շիրիմում: Ալան Քեմփբելը գիշերն իր լաբորատորիայում ատրճանակով ինքնասպանություն էր գործել՝ առանց Դորիանի գաղտնիքը հայտնելու, որը նա իմացել էր ակամա: Շուտով Բեզիլ Հոլլուորդի անհետացման հուզմունքն էլ կանցներ: Արդեն խոսակցությունները նվազում էին: Նշանակում է՝ իրեն սպառնացող վտանգ այլևս չկա: Բեզիլ Հոլլուորդի մահը չէր, որ կառչել էր նրա ուսերից և տանջում էր նրան, այլ իր սեփական հոգու մահը, կենդանի մարմնի մեջ գտնվող հոգու մահը: Բեզիլը նկարել էր այնպիսի մի դիմանկար, որը խորտակեց իր կյանքը: Դորիանն այդ բանի համար չէր կարող ներել նրան: Ամեն ինչի հանցավորը դիմանկարն էր: Բեզիլն անտանելի խոսքեր էր ասել իրեն, իսկ ինքը համբերությամբ կուլ էր տվել այդ բոլորը: Իսկ մարդասպանությունը: Մարդասպանությունը պարզապես ակնթարթային խելահեղություն էր: Իսկ Ալան Քեմփբելը... Նրա ինքնասպանությունը իր անձնական գործն էր, այդպես է եղել կամքը: Իրեն՝ ինչ:

Նոր կյանք... ահա, թե ինչ էր նա ուզում: Ահա, թե ինչի էր

ձգտում Դորիանը: Եվ նա համոզված էր, որ սկսել է, արդեն. Համենայն դեպս նա խնայել էր մի անմեղ աղջկա: Դորիանին այլևս անմեղությունը չէր գայթակղի: Սա պետք է, ազնիվ լինել:

Հեթո՛րի Մերթոնի մասին հիշելիս Դորիանը մտածեց, թե արդյոք կողպած սենյակում դիմանկարը չի փոխվել դեպի լավը: Այո՛, այո՛ փոխված կլինի, այլևս այնքան զարհուրելի չի լինի, ինչպես առաջ, եթե Դորիանի կյանքը մարքվեր, գուցե դեմքից չքվեին բոլոր արատների և կրքերի հետքերը: Գուցե այդ հետքերն արդեն անհետացել են: Հարկավոր է ստուգել:

Դորիանը սեղանից վերցրեց լամպը և վերնահանրկ բարձրացավ: Երբ բացեց դուռը, զարմանալի երիտասարդ դեմքին ուրախության ժպիտ խաղաց և կանգ առավ շուրթերի վրա: Այո՛, նա պետք է բարի լինի, և այդ զգվելի նկարը, որ թաքցրել էր բոլորից, այլևս նրա համար սարսափելի չէր լինի: Նրան թվաց, թե բեռն արդեն ընկել է ուսերից:

Նա հուշիկ ներս մտավ, ինչպես միշտ, ներսից կողպեց դուռը և պոկեց, դիմանկարի ալ վարագույնը: Ցավի և զայրույթի ճիչ պոռթկաց նրա կրծքից: Ոչ մի փոփոխություն: Միայն աչքերում խորամանկ արտահայտություն տեսավ և շուրթերի վրա՝ շողոքոք բմծիծաղ: Կտավի արարածը դեռ նույն զարշնչին էր, նույնիսկ ավելի նողկալի, քան առաջ, իսկ բոսորագույն հեղուկը, որ թրջել էր ձեռքը, կարծես ավելի էր պայծառացել և նմանվել նոր հեղված արյան: Դորիանն սկսեց դողալ: Միթե միայն դատարկ փառամոլությունն էր ստիպել նրան կատարել միակ բարի արարքը, թե՛ նոր զգացությունների տենչը, ինչպես ծաղրով ակնարկեց լուրջ Հենրիին, թե՛ բարի երևալու ցանկությանը, որ ստիպում է՝ նեղ երբեմն կատարել ազնիվ գործեր, լինել ավելի լավը, քան իրականում կանք: Կամ գուցե, բոլորը միասին: Իսկ ինչպե՞ս է,

արյան բիծն ավելի մեծացել: Այդ բիծը, սոսկալի վարակիչ հիվանդության նման, կարծես, տարածվել էր կնճռոտ ձեռքի վրայով... Արյուն կար նաև ոտքերի վրա. ձեռքից էր կաթել... Ահա արյուն նաև մյուս ձեռքի վրա, որը դանակ չէր բռնել: Խոստովանե՛լ... նշանակում է, պետք է խոստովանե՛լ: Հանձնվել և մահվան դատապարտվե՛լ:

Նա ծիծաղեց: Զգաց, որ միտքը հրեշավոր է: Եթե նույնիսկ խոստովանե՛ր, ո՞վ կհավատար: Ոչ մի հետք սպանվածից չկար: Նրան պատկանող իրերը ոչնչացված էին, ինքը՝ Դորիանն էր այրել: Աշխարհը պարզապես կասեր, թե նա խելագար է: Եվ կփակեին գժանոցում, եթե համառորեն պնդեր...– Սակայն պարտքի գգացումը նրան ստիպում էր խոստովանել. խոստովանել և հրապարակով պատիժ կրել. խայտառակվել հրապարակորեն: Գոյություն ունի Աստված, և նա պահանջում է, որ մալոյ խոստովանի իր մեղքերը և քննքի առաջ: Ոչինչ չի մաքրի իրեն՝ Դորիանին, եթե նա չխոստովանի իր ոճրագործությունը: Ոճրագործություն... նա թոթվեց ուսերը: Բեզիլ Հոլլուորդի մահը շատ չնչին էր թվում նրան: Նա մտածում էր Հեթթի Մերթոնի մասին: Որովհետև հայելին, իր հոգու այդ հայելին, որին ինքը նայում է, կեղծ է: Փառամոլություն: Հետաքրքրասիրություն: Շողոքորթություն: Միթե իր ինքնահրաժարման մեջ սրանցից բացի ուրիշ ոչինչ չկար: Կար: Կար նույնիսկ ավելին, գոնե ինքն այդպես էր կարծում: Բայց ո՞վ կարող է ասել...

Ո՛չ: Ուրիշ ոչինչ չկար: Նա խնայել էր Հեթթիին միայն փառամոլությունից դրդված: Շողոքորթությանը հագցրել էր առաքինության դիմակ: Հետաքրքրության համար է թույլ տվել այդ ինքնահրաժարումը: Նա հիմա ամեն ինչ պարզ հասկանում էր:

Իսկ մարդասպանությունը... Միթե դա մինչև կյանքի վերջը

պետք է հետապնդեր իրեն: Միթե անցյալը միշտ պետք է, ճշգրիտ իրեն: Գուցե, իսկապես պետք է խոստովանել: Ո՛չ: Երբևրե՛ն: Նրա դեմ միայն մի թույլ հանցանշան կա՝ դիմանկարը. դա է միակ ապացույցը: Ուրեմն, հարկավոր է դիմանկարը ոչնչացնել: Այլևս ինչո՞ւ պահել: Առաջ նա հաճույք էր ստանում՝ դիտելով նրա փոփոխումը, ծերանալը: Հետագայում այդ հաճույքը ալլես չէր զգում: Դիմանկարը նրան նույնիսկ գիշերները հանգիստ չէր տալիս: Հեռանալիս նույնպես սարսափել է՝ չլինի՞ թե հանկարծ մեկն ու մեկը գիտի իր գաղտնիքը: Դիմանկարը հաճախ էր թունավորել նրա տրամադրությունը, թախծով պարուրել նրա կրքերը, տրտմությամբ սքողել նրա բերկրանքի պահերը: Նրա համար այդ նկարը եղել էր խլճի պես մի բան: Այո՛, խիղճ: Եվ հարկավոր էր ոչնչացնել այդ:

Դորիանը նայեց շուրջը և տեսավ այն դանակը, որով սպանել էր Բեգիլ Հոլլուորդին: Նա բազմաթիվ անգամ մաքրել էր, որպեսզի ոչ մի բիծ չմնա վրան, և այժմ շողշողում էր: Այդ դանակն ինչպես սպանել էր նկարչին, այնպես էլ թող սպաներ նկարչի գոյծը և այն ամենը, որ կապված էր նրա հետ: Դանակը կոչնչացներ անցյալը, իսկ երբ մեռներ անցյալը, ինքն արդեն ազատ կլիներ: Դորիանը կսպանի դիմանկարի զերբնական հոգու կյանքը, և երբ դադարեն այդ զարշնչի չարագուշակությունները, նորից կխաղաղվի իր կյանքը:

Նա ծանկեց դանակը և խրեց դիմանկարի մեջ:

Լսվեց ծիչ և ծանր թրմփոց: Ճիչն այնքան զարհուրելի էր, որ արթնացած սպասավորները վախեցած դուրս թռան իրենց սենյակներից, իսկ երկու ջենտլմեն, որ այդ ժամանակ անցնում էին ներքնի հրապարակով, կանգ առան և նայեցին մեծ տան վերին լուսամուտներից: Հետո գնացին ոստիկան փնտրելու և, ոստիկան գտնելով, նրա հետ վերադարձան: Մի քանի անգամ գանգը խփեցին, բայց պատասխան չկար:

Ամբողջ տունը խավարի մեջ էր, միայն մի լույս էր առկայծում վերնահարկի լուսամուտում: Փոքր-ինչ սպասելուց հետո ոստիկանը մոտեցավ կից հարևան տան առմուտքին և այնտեղից սկսեց դիտել:

- Ո՞ւմ տունն է սա, պարենտ,- հարցրեց ավագ ջենտլմենը:

- Պարոն միստեր Գրեյինը, սըր,- պատասխանեց ոստիկանը:

Ջենտլմենները նայեցին միմյանց և արհամարհական քմիծաղով ինքացան: Նրանցից մեկը սըր Հենրի Աշթոնի հորեղբայրն էր:

Իսկ տան ներսի այն մասում, որտեղ քնում էին սպասավորները, բոլորն արթնացել և կիսահագնված փսփսում էին, ծեր տիկին Լիֆը արտասվում էր՝ ձեռքերը կոտրտելով: Ֆրենսիսը մահվան պես գունատ էր:

Քառույղ ժամ հետո նա կանչեց կառապանին ու մի սպասավորի, որոնց հետ ոտքերի ծայրերի վրա վերև բարձրացան: Դուռը բախեցին, բայց պատասխան չկար: Կանչեցին: Ոչ մի ձայն, լռություն էր: Վերջապես, դուռն ուժով բացելու զուր ջանքերից հետո, բարձրացան տանիք և այնտեղից պատշգամբ իջան: Լուսամուտները հեշտությամբ ետ գնացին, սողնակները հին էին:

Մտնելով ներս՝ նրանք տեսան պատից կախված իրենց սիրոջ հոյակապ դիմանկարը՝ երիտասարդության ու գեղեցկության ամբողջ շքեղությամբ: Իսկ հատակին... ընկած էր մի սպանված մարդ՝ ֆրակը հագին, դանակը սրտի մեջ մխրձված: Նրա դեմքը թոշնած էր, կնճռոտված և վանող: Եվ միայն մատանիներից ծանաչեցին, թե ով է նա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ.....	4
ԳՈՐԻԱՆ ԳՐԵՅԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ.....	6
ԳԼՈՒԽ 1.....	6
ԳԼՈՒԽ II.....	26
ԳԼՈՒԽ III.....	48
ԳԼՈՒԽ IV.....	67
ԳԼՈՒԽ V.....	89
ԳԼՈՒԽ VI.....	107
ԳԼՈՒԽ VII.....	118
ԳԼՈՒԽ VIII.....	135
ԳԼՈՒԽ IX.....	154
ԳԼՈՒԽ X.....	168
ԳԼՈՒԽ XI.....	180
ԳԼՈՒԽ XII.....	208
ԳԼՈՒԽ XIII.....	218
ԳԼՈՒԽ XIV.....	227
ԳԼՈՒԽ XV.....	244
ԳԼՈՒԽ XVI.....	257
ԳԼՈՒԽ XVII.....	269
ԳԼՈՒԽ XVIII.....	278
ԳԼՈՒԽ XIX.....	291
ԳԼՈՒԽ XX.....	304



ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ

Կազմող և խմբագիր՝ Լ. Մարգարյան
Համակարգչային ձևաչորումը՝ Հ. Փիլոյանի, Ն. Գևորգյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Օհանջանյանի

ԷԴԻՏ ՊՐԻՆՏ
12, Երևան, Մուխոմբու 12
ԴՀ՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT
12 Tournanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am